



Ltn  
J1470

1099

ՀԱՅՈՑ

ԱՌԱՋԻՆ ԲՆԵԴԱՆՈՒՐ

ՈՒՍՈՒՅՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ



ԱՐՏՎԱՆԳԻՆ

ՅՈՎՀԱՆՆԻԿԱՆ ՍԵՐԵԲՐԵԱՆՑ



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄԱԿԱ ՎԱՐՄԱՆԱԿԱՆԻ ԵՎ ՀԵԿ.

1883




Дозволено цензурою. Тифлисъ, 11-го Февраля 1883 года.

Типографія М. Вартанянца и К-", на Тройц. пер. д. № 11.

28 1444

91470-60



այս հոգի արքայով գևառ աշխարհական տեղու առ մեջ  
մեջ առան մայն ուստի և պարզ ճանաչութեան մաս ուստի  
առաջ առ պարզաբան պարզ մաս ուստի առ այս պարզ մաս ուստի  
առաջ առ պարզ մաս ուստի առ այս պարզ մաս ուստի առ այս պարզ

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Զգալով հայոց դպրոցների ընդհանուր, հիմնա-  
կան բարեկարգութեան կարևորութիւնը, մի քանի ան-  
ձինք ներկայ թուականի Օգոստոսի 6-ին ժողովուեցան  
Տփխիսի Ս. Գալիանեան օրիորդական միջնակարգ դպրո-  
ցը՝ այդ ծանրակշեռ հարցի մասին միմեանց հետ խոր-  
հըրդակցելու: Ժողովը ոչ այլ ինչ էր, բայց եթէ՝ մի  
քանի դպրոցական գործով հետաքրքրուող անձանց գու-  
մարումն, որոնք պէտք է սկզբնաւորութիւն տալին  
այդ մեծ գործի ձեռնարկութեանը: Ժողովին ներկայ  
էին՝ Վրաստանի և Խմերեթի թեմական տեսուչը, մի  
քանի տեսուչներ և տասնաւոր ուսուցիչներ:

Ինչպէս լայտնի է ընթերցողներից շատերին, Վե-  
հափառ Կաթողիկոսը իւր հովանաւորութեան ներքո  
գտնուած հայոց դպրոցների թեմական տեսուչների հա-  
մար մի կանոնադրութիւն է հրատարակել, որի լոգուա-  
ներից մէկն էլ պարտաւորեցնում է թեմական վերա-  
տեսուչներին տարին մի անգամ իւրեանց թեմի ուսու-  
ցիչներից մի ժողով կազմել, ուր խօսուի առհասարակ  
դպրոցների բարեկարգութեան և ուսուցիչներին իւրեանց  
ասպարիզում առաջնորդելու մասին: Այս իսկ հիման  
վերայ գոյն այդ լոգուածի խմաստը մշակելու և արգա-  
սաւորելու նպատակով ևս կազմւում է այս ժողովը, ո-

ըին առ ալժմ մասնակցելու համար հրաւիրուեցան քաղաքումս գտնուած տեղացի և գաւառական տեսուչները և ուսուցիչները: Սոյն ժողովը ժամանակի սղութեան և ժողովականների սակաւաթիւ լինելու պատճառով չէր կարող ալժմից իսկ զբաղուիլ ալդ ծանր խնդրի մշակելովը, ուստի հարկաւոր գատեց միայն և եթ գործին վերաբերուող կարևոր հարցերի առաջարկութեամբ պարապել: Իսկ նոցա մասին լինելու խորհրդակցութիւնը և վճիռներ կայացնելը վերապահուած է եկող 1881 թուի ամարալին արձակուրդին կազմուելիք ընդհանուր ուսուցչական ժողովին:

Սակայն իբրև նախապատրաստութիւն՝ նոր կայացած ժողովը անհրաժեշտ համարեց կազմել Տփխիսում մի տնտեսական և մի ուսումնական յանձնաժողով, որոնց առաջարկելու են մշակման ենթարկուած կարեւոր կետերը: Առհասարակ ալդ յանձնաժողովները պէտք է հոգան ամենահարկաւոր պիտոյքները ապագայ ընդհանուր ուսուցչական ժողովի նպատակն իրագործելու համար: Այսպէս ուրեմն, այս ուսուցչական ժողովին մասնակցելու են՝ բոլոր թեմերի թեմական վերատեսուչները, տեսուչները և ուսուցիչները:

Արդարեւ, ի նկատի ունենալով մեր մէջ դպրոցական գործի մի քանի տեղ նախանձելի, բայց շատ տեղ աննախանձելի վիճակը և այն հանգամանքը, որ գրեթէ ոչ մի կետում մեր գպլոցները իւրեանց էութեամբ և կեանքով չեն նմանւում միմեանց, այլ իրաքանչիւր գպլոց կառավարւում է առանձին խելքով՝ բոլորովին անտեղեակ լինելով միւսի կառավարչական ձեին, տակաւին շատ վաղուց նոցա դեկավարող անձինք կարօտ էին մի այսպիսի ընդհանուր ուսուցչական ժողովի, ո-

ըի նուիրական և միանգամայն վեհ պարտականութիւնը պէտք է լինի մի շօշափելի յեղափոխութիւն մտցնել այդ ի վաղուց հետէ անտարերօւթեան մատնուած կեանքի ու մահուան գործի մէջ:

Եթէ հաւատում ենք, որ ժողովրդի լուսաւորութեան անհերքելի պայմանը նորա մտաւոր յառաջադիմութիւնն է, և թէ հաստատ համոզուած ենք, որ միայն կրթութեան ու դաստիարակութեան մէջ պէտք է որոնենք ալդ յառաջադիմութիւնը, առաջիկայ ընդհանուր ուսուցչական ժողովն անհրաժեշտ է մեզ, որի համար երախտագէտ սրտով շնորհակալութիւն պէտք է յայտնել այն անձանց, որոնք լուցան այս գովելի միտքը և մասնաւանդ նոցա, որոնք աշխատեցին ձեռնամուկս լինել այս մեծ գործի սկզբնաւորութեանը: Յուսով ենք, որ ամէն մարդ թէ բարոյապէս, թէ մտաւորապէս և թէ նիւթապէս իւր ձեռքից եկած աշխատանքը և օժանդակութիւնը չի զանալ այս սուլը գործի համար:

Յ. Ն. Ա. Ա. Բ. Ա. Ա. Ա. Ա.

1880 թ. „Մելու Հայաստանի“ — №62.

## ԿԱՐԳԱԴՐԻ ՅԱՆՉԱՇՈՂՈՎԻ

ԱՆԴԵՄՆԵՐԸ

Միքայէլ Շահպարոնեանց—առէնտաղէտ  
Գէորգ Եւանգուլեանց—իսկ—առէնտաղէտ  
Սրբազնում Յովհաննիսեանց—առէնտաղէտ  
Յովհաննէս Զիգիանեսնց | Սրբէքսանդր Երիշեանց  
Նիկողայոս Խոսրովեանց | Սպանդաշ Սպանդարեանց  
Առաքել Բահաթրեանց | Միքայէլ Սալամբէկեանց  
Խաչտուր Քալանթարեանց | Յովհաննէս Բաբալեանց  
Աղեքսանդր Քիշմիշեանց | Բագրատ Նաւասարդեանց  
Յակոբ Տէր Յովհաննիսեանց

\*

\*

Ա.Ա.Զ.Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ  
ՄԱՍՆԱԿՑՈՂ. Ա.ՆՉԱՆՑ Ա.ՆՈՒԽՆԵՐԸ

Ա. Վըաստանի և Խմերեթի թեմ  
ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑ

Եղինիկ քահ. Երգնկեանց  
Արիսուրմ Յովհաննիսեանց  
Ամիրան Մանդէնեանց  
Արշակ Դեմուրեանց  
Աւետիք Տէր Յակոբեանց  
Գաբրիէլ Միքոյեանց

Սահակ Թանդեանց

Գրիգոր Շահբուրգաղեանց  
Գրիգոր Վարձեկեանց  
Գրիգոր Տէր Յարութիւնեանց  
Միքայէլ Սպանդէկեանց  
Միքայէլ Պալեանց  
Յովհակմ. Գեղամեանց

Սահակ Թանդեանց

## Ա. ԳԵՅԻԱՆԵԱՆ Ուսումնարան

Հազարոս քահ. Յովհէփեանց  
Ստեփանոս քահ. Սամուէլեանց  
Օր. Աննա Սուտանեանց  
» Գայիանէ Արշակունի  
» Գայիանէ Քամանթարեանց  
» Եղիսաբէթ Մանուչարեանց  
» Կատարինէ Սուզանանեանց  
» Մարիամ Շաղինեանց  
» Նատալիա Սկանդանանց  
» Ռուզանի Յովհաննիսեանց  
» Ռունէ Բուզբանեանց  
» Սրբունի Բուզբանեանց  
» Աղեքսանդր Խոսրովեանց  
» Աղեքսանդր Քիշմիշեանց  
Բաղդասար Զարդեղեանց  
Դաւիթ Քալանթարեանց  
Յովհաննէս Նազարեանց  
Յօվհաննէս Քաթանեանց  
Նիկողայոս Խոսրովեանց  
Պօղոս Սահակեանց

## ՄԱՐԻԵՄԵԱՆ—ՅՈՎ.Ն.

### Ուսումնարան

Ո.րսէն քահ. Բագրատունի  
Օր. Գայիանէ Երիշեանց  
» Շուշան Բայսողովեանց  
» Կատարինէ Զամեսանց  
Բարսեղ Կանդուրալեանց  
Յարոյ  
Յովհաննէս Զիգիանեանց

## ԳԷՈՐԳ Բարխուդարեանց

### ՏՓԽԱՆԿԱՆ

#### ԴՊՐԱՑՆԵՐ

Անտոնիկ քահ. Զիւանեանց  
Գաբրիէլ քահ. Մատինեանց

Գրիգոր քահ. Մանդակունի  
Գրիգոր քահ. Շերմազանեանց  
Յովհաննէս քահ. Մարտիրոսեանց  
Ներսէս քահ. Ղամազեանց  
Սարգիս քահ. Իգիթեանց  
Տիկին Սովիա Բարայեանց  
Օր. Գայիանէ Յովհաննիսեանց  
» Կատարինէ Շիոյեանց  
» Մարիամ Մամիկոնեանց  
» Նատալիա Ախշարումեանց  
» Նունէ Սմբատեանց  
» Շուշանիկ Տէր Գրիգորեանց  
» Արքունի Ղազարեանց  
» Արքունի Ղարումեանց  
» Վարդունի Օրոյեանց  
» Վաղարշ Զանեանց  
» Փառանձեմ Նազարեանց  
» Աղեքսանդր Պօղոսեանց  
» Աղեքսանդր Զաշիտեանց  
» Աւետիք Գուլակեանց  
Գէորգ Մովիկնեանց  
Գրիգոր Մատինեանց  
Կամար Տէր Դաւթեանց  
Կարապետ Թեմուրազեանց  
Մեհրաբ Մեհրաբեանց  
Յովհաննէս Գովհամբէկեանց  
Յովհաննէս Խւուժեանց  
Հովհէփ Տէր Պառուածատրեանց  
Ներսէս Մելիքեանց  
Սարգիս Աստուածատրեանց  
Վարդիս Մղիկանեանց  
Սարգիս Տէր Զարարեանց  
Սիմեոն Կուզանեանց  
Վաղարշակ Բելուրէկեանց

### Ա.ԽԱԼ.ՑԽԱՆ

Արահամ քահ. Ղազարեանց  
Գէորգ քահ. Սիսակեանց  
Մկրտիչ քահ. Դարֆանեանց  
Տիկին Եղիսաբէթ Զաթարաշեանց

Օր. Գայիանէ Տէր Խաչատրեանց  
Աղեքսանդր Պաղխնեանց  
Գարրիէլ Տէր Գարրիէլեանց  
Միսար Վարդանեանց  
Միքայէլ Տէր Միքայէլեանց  
Յարութիւն Ազնառութեանց  
Յարութիւն Ղազարեանց  
Յարութիւն Յալորեանց  
Յովհաննէս Գուսեանց  
Պօղոս Վանցեանց  
**ԱԽԱԼ ՔԱԼԱԿ**

Յովհաննէս քահ. Գաջազնունի  
Աղեքսանդր Գիւղալեանց  
Արշակ Մատոյեանց  
Արշակ Նարանդեանց  
Եղիշէ Տէր Մտեփանոսեանց  
Երեմիա Կիւրեղեանց  
Խաչատուր Մառանիորեանց  
Միսար Եօրսիւղեանց  
Յովհաննէս Հայրապետեանց  
Յովհաննէս Միքայէլեանց  
Տիգրան Ղազանչեանց

**ՔՈՒԹԵՑԻՍ**

Գայիթ ա. քահ. Եարալեանց  
Յովսէփ Ամիրադեանց

**ԴՈՒՇԵԹ**

Սամոն Ապրէլեանց

**ԹԵԼԱՄ**

Արէլ քահ. Սուրբասեանց  
Սուփանոս Տէր Սարգսեանց  
Վարդան Եղիազարեանց

**ՍՊԱԾՈԽ**

Եղիշէ քահ. Տէր Աստուածատեանց  
Տիկին Վարդուհի Սուրբասեանց  
Գիրդոր Խիմարեանց  
Գիրդոր Պետրոսեանց  
Գայիթ Տէր Մտեփանոսեանց

**ԳՈՐԻ**

Ստեփ. ա. քահ. Տէր Մտեփանոսեանց  
Մտեփար Բաղդասարեանց

**ՑԽԻՆՈՒԵԼ**

Սահակ քահ. Խախանեանց  
Օր. Աննա Վարդանեանց

**ԳԱՆԶԱԿ**

Դրիգոր քահ. Բաբարեօխեանց  
Արտաշէս մատինեանց  
Շմաւոն քահ. Բորիէ անց  
Մտեփանոս Տէր Միքայէլեանց

**ՃՈՒԼԱԿԻԵՐ**

Սարգիս Գամալեանց

**ԶԱԼԱԼ—ՕՊԱԿ**

Տիկին Վարդուհի Սիմէռնեանց  
Արխտակէս Արօվեանց  
Գէորդ Կուզաննեանց  
Տիգրան Տէր Գայթեանց

**ԳԵԱՐԵԳԱՌ**

Սմբատ Ղարափեօղեանց

**ՃԱՎԲԱՏ**

Յարութիւն Պետրոսեանց

**ՔԵՐՎԱՆԽԵՐԵ**

Յալոր Ռոստոմեանց (Խեմզեանց)

**ԴԻԼԻՋԱՆ**

Ալշակ Սիմէռնեանց

**ԶԱՔԱԹԵԼ**

Գանիէլ Տէր Զաքարեանց

**ՍՈՒՐԵՄ**

Զաքարիա Սարկ. Ալիւծեանց

Օր. Արքունի Ռւմիկեանց

Զաքարիա Ռւմիկեանց

**Բ. ԵՐԿԱՆԻ և ԿԱՐՍԻ ԺԵՄ**

**Ս. ԷՀՄԻԱՌԻՎԻ**

Սեղրար Մանղինեանց

Մտեփանոս Գայասամեանց

**ԵՐԵԿԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ**

**ԴՊՐԱՆՈՅ**

Յակոր Ղազարեանց

Յովհաննէս Գէորգէկէեանց

Սամոն Թաղէսուեանց

Սամոն Խաչատրեանց

Սարգիս Ռէկնազարեանց

Ղանան քահ. Տէր Յոհկաննիսեանց

Տիկին Փլոբենցիա Ղազարեանց

Արամ Մելեանց

Արշակ Տէր Մարուքեանց

**ՊԵՐՃ ՊԱռշեանց**

**ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼ**

Օր. Կատարինէ Միհանզարեանց

Աղարէկ Ամրեանց

Աղեքսանդր Ալաննիկրդեանց

Աղեքսանդր Միհրամբեանց

Գէորդ Բունիածեանց

Գէորդ Յովհաննիսեանց

Մակար Տէր Սարգսեանց

Մկրտիչ Տէր Մարտիրոսեանց

Ներսէս Շահլամեանց

Հայրապետ Պուկասեանց

Խաչատուր քահ. Տէր Գէորգեանց

Կոնստանդին Միիրմանեանց

Մուշեղ Մամիկոնեանց

**ՄԵԾ ՂԱՐԱՔԵԼԻՍ**

Խորէն քահ. Խանզատեանց

**ԿԱՐՍ**

Աղեքսանդր Շաւարչեանց

**ՆՈՐ-ԲԵՑԱԶԻԴԻ**

Գէորգ Շերենց

Տիգրան Բգնումի

**ԻԳԴԻՐ**

Թաղէսոս Տէր Մանուէլեանց

Մկրտիչ Զաքարեանց

Մկրտիչ Մայկնեանց

**ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՄ**

Աբամ Թումանեանց

Լէն Թիւսիկեանց

**ՆԵՐՔԻՆ ԱԳՈՒԼԻՄ**

Աստուածատուր Տէր

Աստուածատրեանց

**ՔԵՐՈՓԱԼՈՒ**

Արշակ Քարտաշեանց

**ԱՇՏԱՐԱԿ**

Մովսէս Բարյեանց

**ՃԽՄԱՀՄՈՒՏ**

Ապրդիս Աւետիքեանց

**Գ. ԱՐցախու ԺԵՄ**

**Բ. ԵՄՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՅ**

Գաբրիէլ Ղուկիփեօխվահանց

Գալուստ Մախմարեանց

Համբրագում Առաքելեանց

Ղազարոս Աղայեանց

Յակոր Խոշամիրեանց

Նիղոդյոս Տէր Աւետիքեանց

Սիմէռն Հախումեանց

ՌԱՅՈՒԹԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Յովհաննէս Տէր Գրիգորեանց

Անդրէաս Արքահամեանց  
Գանիէլ Եղարեանց  
Խաչտուր Փանեանց

ՆՈՒԽԻ

Արշակ Ազապեանց  
Գրիգոր Խոչամիրեանց  
Մարտիրոս Արքահամեանց  
Սարգիս Աւագեանց

Դ. Շամախու թեմ

ԸՆՄԵԽԻ

Աստուածատուր Գայտեանց

ՄԱՏՔԱՍ

Յակոբ Արքաւմանեանց  
Յովհաննէս Միրզարէկեանց

ԴԵԲԵՆԴ

Կոնստանդին Մելիք-Շահնազարեանց  
ԲԱԳՈՒ

Մկրտիչ Գոյսովեանց  
Յակոբ Տէր Մարտիրոսեանց

Ե. ԱԺՄԱՐԽԱՆԻ թեմ

Ա. ՁԼԵՐ

Գարբիէլ Առարեանց  
Եղիշէ Թաւարբէկեանց

ՄՈԶԴՐՈՒ

Յարութիւն Ալխագիեանց  
Սարգիս Մելքոնմեանց

Վ. ՀԻԿԱԿԱԿԱԶ

Պետրոս քահ. Կուսփիեանց

Զ. ԲԵԽԱՐԱԲԻՈՒ թեմ

ՆՈՐ-ՆԵԽԵԽԱՆ

Առաքել Բահամերեանց

ՕԴԵՍՍ

Գրիգոր քահ. Խոհասարեանց

ՆՈՐ ԱՆՍՈւցիչներ

Օր. Ն. Տէր Յովհաննիսեանց

Օլգա Նազարեանց

Բագրատ Ալխագիեանց

Աստուածատուր Սպարապետեանց

Աշոտ Թեմուրազեանց

Գրիգոր Շահնազարեանց

Եղիշէ Երզնկեանց

Զաքարիա Զալինեանց

Ներսէս Համբարձումեանց

Տիգրան Փիրումեանց

Սահակ Էթմերեանց

ՀԻԿՐԵՐ

Համբարձում Իփիքնեանց

Հմայնակ Խուլպուլեանց

Յակոբ Մեղաւորեանց

Սահակ Էթմերեանց

214

## ՅԱՄԱԶԱԲԱՆ

ՀԱՅՈՅ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՃՈ-  
ՂԱՎԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ասելով՝ մենք ո՞չ թէ այն բոլոր  
անցքերն ու եղելութիւններն ենք հասկանում, որոնք  
տեղի են ունեցել այդ մեծ գործի գաղափարը լրանալու  
օրից մինչև Փողովի ցըռուելու օրը, — այլ այն բարձր,  
որ անմիջապէս վերաբերում է Փողովի ամբողջ գործունէու-  
թանը:

Մենք պատւում ենք այդ շրջանում: Եւ այլապէս  
անկարող էինք վարուել. որովհետեւ մնացածը միայն և  
եթ Փողովի նախապատրաստութիւնները տեսնող Կար-  
գագրիչ Յանձնաժողովի գործն է, որ աւելի վարչական  
ու տնտեսական է, քան թէ բուն, էական:

Իսկ միւս կողմից մենք այդ Պատմութիւնը լրա-  
ցըրել ենք նաև ՅԱԴՐԵԿ բազմացած ՄԱՆԱԺՈՂՈՎի նիս-  
տուր մէջ բերելով:

\* \*

Առաջին Ուսուցչական ծոլովը, որ մենք հայերս  
ունեցել ենք, էր մեր տաճկահայ եղբայրներինը Կ.Պոլ-  
սում 1873 թուին: Երկրորդը Վ.րաստանի և Խմերեթի  
թեմինը էր Տիգիսում 1874-ին: Բայց նոքա երկուսն էլ  
մասնաւոր կերպարանք ունէին: Իսկ այս երրորդը, որ  
նոցա վերաբերութեամբ առաջին և ընդհանուր կոչուե-

լու առաջնային ազգային գործ ու առաջնային գործ ու ան-  
դամական ազգային գործ ու առաջնային գործ ու ան-  
դամական ազգային գործ ու առաջնային գործ ու ան-  
դամական ազգային գործ ու առաջնային գործ ու ան-

լու իրաւունք ունի, կալացաւ նոյնպէս Տփխիսում, քայց այս անգամ մի քանի թեմի մասնակցութեամբ:

\* \*

Այս ժողովի հիմքը գրուեցաւ 1880 թ. Օգոստոսի 6-ին. այն օրը, երբ Տփխիսում գտնուած հայ տեսուչների և ուսուցիչների մի փոքրիկ խումբ Ս. Գալիանեան ուսումնարանում ունեցաւ իւր առաջին նիստը՝ Ուսուցչական ժողովի միտքը իրագործելու համար:

Յիրաւի, ոչ ոք չէր կարող հաւատալ, որ Օգոստոսի 6-ին Եւրաց մտածած գործը ճիշտ երկու տարաւց (և 2 շաբաթից) լետոյ կարող է իրականութիւն ստանալ և մեր մտաւոր աշխարհում գործող մշակների մի մեանց հետ շփուելու պատճառ դառնալ:

\* \*

Չպէտք է մոռանալոր՝ այդ նուիրական գաղափարը, որի իրագործումը անխոնջ և անդուլ աշխատանքների էր կարօտ, Կարգադրիչ Յանձնաժողովի տոկուն ջանքերով մարմնացաւ: Սակայն, մեծամեծ պահանջներ անել այդ Յանձնաժողովից նոյնքան անտեղի է, որքան և մեծամեծ լուսեր ունենալ նոյն իսկ այն ժողովից, որի համար կազմուած էր դա: Բայց նա գործեց իւր կարողութեան չափ:

Որքան էլ Յանձնաժողովը թերութիւններ ունենալ, որքան էլ նա սիսալներ արած լինի, ալդուամենախիւ պէտք է խոստովանել, որ նա էր ժողովների բոլոր ծանրութիւնը իւր ուսերի վերայ տանողը, քանի որ իբրև միակ զեկավար այդ պաշտօնական մարմինն էր երեսում հրապարակում:

Էլ չենք խօսում նորա քարտուղար մեծ. Պ. Ա.ԲԻ-ՍՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ մասին, որ ամենից շատ քրտինք թափեց, կրելով իւր վերայ բոլոր աշխատութեանց ծանր լուծը:

ՅՈՒՅՎԱՐԱԾՐԱՅ ՍՊՐ

\* \*

Բայց ժողովը աւելի արդիւնաւոր հետեանքներ կարող էր ունենալ, եթէ ուսուցիչները՝ գործի հետ անմիջական առընչութիւն ունեցող անձինք նախապատրաստուած լինէին: Գործի ընթացքը ապացուցեց որ նոքա առհասարակ անպատրաստ էին եկել. այն էլ երկու ամբողջ տարի պատրաստուելու միջոց ունենալուց յետոյ: Նոցա մեծ մասը ժողովին ներկայացել էին պատրաստի սեղանի շուրջը նստուելու: Մենք հաւաստի ենք որ՝ եթէ հինգ ուսուցչեց մէկը գէթ մի հարց մշակած, մի խընդիր ուսումնասիրած լինէր, և նիստերի տեղութեան ժամանակ ըստ ամենալինի կրաւորական գեր խաղալու չլինէր գատապարտուած, մեծապէս նպաստած կը լինէր ընդհանուր գործին:

Եւ, մինչդեռ այդպէս գործողի ու ներգործողի կարօտութիւնը հետզհետէ զգալի էր դառնում, ահա դարձեալ լոյս էր ընկնում Կ. Յանձնաժողովը և Ընդհանուր ժողովը ձեռնունայն չժողովնելու համար՝ մի պարապմունք էր գտնում, չեղած տեղից մի հարց էր լոյս ձգում, որքան — նորան կարդալու նիւթ էր տալիս. յետոյ մէկը բարձրանում էր ամբիոն, այնտեղից մի քար էր գլորում, ծովի խաղաղ մակերեւութը յուզում և ահագին դղրդիւնների ու որոտմանց գուռը բաց անում:

\* \*

Սակայն երկու հոգի բաւական լաւ նախապատրաստուած և դիմացկուն պաշարով էին եկել ժողովը։ Դոքա էին՝ մեծ Պ. Պ. ԳԱ.ԲՐԻԵԼ ԽՍ.ՏԻԾԵԾՆՅՑ և ՍԱ.Ր.ԳԻԾ ԲԵԿՆԱԶԱ.ՐԵԾՆՅՑ։

Թէ ինչպէս էր Պ. Խատիսեանցը ըմբռնել մի այդպիսի ժողովի խորհուրդը և մինչեւ որ աստիճան ծանր կերպով էր վերաբերուել դէպի նորան, այդ պարզ երեւում էր իւր՝ նախ քան ժողովի կալանալը հրատարակած «Մանկավարժական Խորհրդաժութիւններ» անունով աշխատութիւնից։

Իսկ Պ. ԲԵԿՆԱԶԱ.ՐԵԱՆցի ներկայութիւնը և ամէն հարցի մէջ իւր լուրջ ու խելացի խորհրդաժութիւններով միջամտելլ միանգամայն կարևոր ու օգտակար էր ժողովի համար։ Գաւառը, գիւղը ի դէմս Պ. ԲԵԿՆԱ.ԶԱ.ՐԵԱՆցի բերել էր իւր ընտիր նեկալացուցիչը և խոհուն խորհրդակիցը։

Բայց, պէտք է աւելացնել որ՝ դոցանից ոչ մէկը զերծ չէր մի պակասաւոր կողմ ունենալուց, որ, ի հարկէ, ցանկալի չէր։ Առաջինի անվերջ բայց ունենալու և վերջինի իրեւ համեմ ցանած ձիշաղաշարժ էսունը բաւական նսեմացնում էին այն տպաւորութիւնը, որ իրանք աշխատում էին թողնել ունկնդիրների վերայ։

\*\*\*

Չենք կարող չլիշել այստեղ նաև ժողովին ներկայեղող մեր երկու մանկավարժներին՝ Պ. Պ. ՍԵ.ԴՐ.Ա. ՄԱ.ՆԻՒՆԵԾՆՅՑԻՆ և հանգուցեալ Ա.Ո.Ա.ՔԵԼ Բ.Ա.ՀԱ.Թ.ԲԵԾՆՅՑԻՆ։

Դոքա երկուսն էլ, եթէ կամենալին, աւելի նշանաւոր ծառայութիւն կարող էին անել այդ մեծ գոր-

ծին։ Դոցանից իւրաքանչիւրը, հեռի ամէն անձնական մանր հաշիւներից՝ պէտք է ներկայանար ժողովին միայն նորան իւր օգնութիւնը հասցնելու, թարմ ու կարևոր մանկավարժական մտքեր հաղորդելու, մի խօսքով դեկավարելու և ուսուցանելու նպատակով։

Եւ դա անպատճառ կ'ունենար իւր զգալի ու շօշափելի, եթէ չասենք, մեծամեծ՝ օգուտները։ Ոչ ապաքէն ուսուցիչների մեծամասնութիւնը եկել էր ուսունելու։ Մեր ասածը, մանաւանդ, ապացուցում է այն հանգամանքով որ՝ գաւառական, գիւղական ուսուցիչների մեծ մասը առհասարակ տրտնջում էին, երբ տեսնում էին որ դաս են տալիս ալնալիս անձինք, ուրոնք գեռ դաս պէտք է առնէին և իբրև դասախոս ամբիոն էին բարձրանում ալնալիս մարդիկ, որոնց համար ամբիոնից աւելի քաղցը ու հաճելի պէտք է լինէր իրանց նստարանը։

Նոցա ամենի ցանկութիւնը այն էր, որ միշտ մեր մանկավարժներին, յայտնի, փորձառու անձանց տեսնէին իրանց առաջնորդելիս։

Իսկ մենք, որ այդ երկար ու ձիգ ժամանակամիջոցում, մանաւանդ ժողովի կայացման ամբողջ ամառը մէջ ժանր զբաղմանունէր պատճառուն նոյնպէս հարկագրութեամբ էինք այդ բազմախորհուրդ զործի վերաբերութեամբ անպատճառ գտնուիլ, — մտածեցինք սոսկ հանդիսատես ըլինել։

Ուստի աշխատեցինք մեր թէ մանկավարժական և թէ առհասարակ գրականական գործին մէջ հարողունեան լադ մի թէթե ծառայութիւն մատուցանել, արձանագրելով

այն ամէնը, ինչ որ լինում էր մեր Առաջին Հնդկա-  
նուր Ռւսուցական ժողովում:

\* \*

Թէ մինչեւ ո՞ր աստիճան մեր ներկայ աշխատութեամբ  
կարողանում ենք գոհ կացուցանել ընդհանրապէս հար-  
ցասէր ընթերցողներին և մասնաւորապէս ժողովին մաս-  
նակցող անձանց՝ այդ թողնում ենք ընթերցողների և  
գլխաւորապէս ներկայ եղողների դատաստանին:

Մենք ցանկանում եինք միշտ լաւը տեսնել, ու-  
րախանալ և ուրախակից անել մեզ ամէն հայի, որ նա-  
խանձախնդիր է ազգային գործի յառաջադիմութեանը:  
Մանաւանդ մենք բոլոր սրտով պատրաստ էինք հռչա-  
կել այն անձանց գովելի ընթացքը և ժողովի մէջ ցոյց  
տուած յաջողութիւնները, որոնք միշտ հակառակը կը-  
լինէին սպասելիս մեզնից:

Բայց մենք մեղաւոր չենք, եթէ մեր այդ ցանկու-  
թիւնը լիովին չկատարուեցաւ:

Թողի հաւաստի լինեն մեր յարգելի ու սիրելի պաշ-  
տօնակիցները, որ մեր իւրաքանչիւր տողը անաշառու-  
թեամբ է գրուած: Մենք միշտ աշխատել ենք, որ մեր  
խօսքերից ոչ մէկը չծանրանալ մեր խղճի վերայ:

Անուհետե ով ինչպէս ուզում է, թողի մտածի:  
Մենք ցանկանում եինք, ի հարկէ, որ խօսողներից  
ոչ մէկի ասածը, ոչ մի նախադասութիւն, ոչ մի խօսք  
չվրիպէր մեր գրչից, որ ամէն մարդ հանդէս գար իւր  
մտքերով, իւր խօսքերով, իւր զոյնով: Եւ այդ է պատ-  
ճառը որ մենք առհասարակ հեռի ենք պահել մեզ  
խօսողի լեզուի անկանոնութիւններն ու դար ու փո-  
սէրը հարթելուց, աշխատելով որ՝ ազգ տեղը բերելու

համար, որքան կարելի է, խօսողը երևայ իւր խօսքերի մէջ:  
Եւ թողի ներեն մեզ յարգելի անդամները, եթէ նո-  
ցա մի քանի կարևոր խօսքերը դուրսը լինեն մնացած:  
Ալդպիսի խօսքերը առհասարակ մի քանի անգամ կըր-  
կընուող պատճառաբանութիւնները միայն կարող են  
լինել. ուրիշ ոչինչ:

Եւ դորա մի պատճառն էլ նոյն Ս. Գալիխանեան  
ուսումնարանի աշակերտուհիների քննութիւններն ու  
վերաքննութիւններն էին որոնք բաղտաւորապէս միայն  
Սեպտեմբերի 1-ից կարողացան մի երկու ժամով դուրս  
խլել մեզ նիստերից, թոյլ չտալով մեզ մի քանի դա-  
սատուութեան սկզբից մինչեւ վերջը ներկայ լինել:

\* \*

Թէ ինչ արդիւնքներ, ինչ օգուտներ տուեց այդ  
ժողովը, մենք գորա մասին աւելարդ ենք համարում  
խօսել այստեղ: Այդ պէտք է զգայ ամէն ուսուցիչ, որ  
մասնակցում էր գործին. այդ ցոյց կը տայ ներկայ ար-  
ձանագրութիւնը և ապահոյ ժողովը:

Մանաւանդ պէտք է ի նկատի ունենալ այն հան-  
գամանքը, որ ամէն մարդ միևնույն հայեցքը չունի,  
միևնույն տեսակետից չէ նայում գործին և միևնույն  
կշռով չէ կշռում նորա արդիւնքը:

Միևնույն անտառը մի հասարակ գիւղացու աչքում  
միայն փալտ կտրելու համար է ծառայում. մինչդեռ  
մի բանաստեղծի համար նա իւր ներքին կեանքով մի  
ամբողջ աշխարհ է, ամենայն ինչ է:

ամեն բոպէ ուսուցիչները միմեանց ձեռք սեղմելով ծանօթանում էին միմեանց հետ։ Նորեկները ներկայանալով գրասենեակը, գրւում էին մի մատեանում։ տոմսակ էին գնում, կամ բնակարանի ու սնունդի համար փող էին ստանում Յանձնաժողովի քարտ և ամսի 10-ից նորեկ ուսուցիչներ էին երկում քաղաքում։ Դոքա անհամբերութեամբ նշանակուած օրուան սպասելով և ամեն օր նոյն միակերպ կեանքը անց կացնելով՝ առանց մի նոր բան տեսնելու, թափառում էին քաղաքի փողոցներով։ Ալեքսանդրեան պարտէլը և հայ գրավաճառանոցները այն միակ վայրերն էին, որտեղ նոքա երթեւեկում և երբեմն միմեանց հետ խօսակցում էին։ Ըատ քչերը կային, որոնք վրատահանում էին նաև հայ խմբագրատները դիմելու՝ թէ՛ իրբագրութեան հետ ծանօթանալու և թէ՛ դարձեալ ժամանակը սպանելու համար։ Այդ դէպքում բաղտաւորը նոքա էին, որոնք մի առաջնորդ ունեին իրանց հետ։ Ամառուայ տապն էլ շատերի վերայ իւր ազգեցութիւնն էր թողնում։ Հետեւապէս հիւանդացողներ էլ կային։

Ելդպէս ամեն օր մի մի, երկ երկու նոր ուսուցիչ գալով, հետզհետէ մեծանում էր հիւրերի թիւը։ Իսկ 15-ից սկսած արդէն իմբերով՝ 5—10 ուսուցիչներ էին երկում։

### ՆՈՐԵԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

0գոստոսի 18.

Ամսի 18-ին Արծրունու գալլերէում մի առանձին շարժ մունք կար։ Առաւոտեան 10 ժամն էր, և տեսուչներ ու ուսուցիչներ լցուել էին սյդտեղ։ Յանձնաժողովի զրասենեակում նստելու տեղ չկար։ Ամեն բոպէ նոր դէմք էիք տեսնում։

Պէտք էր տեսնել թէ ինչպիսի մարդիկ էին այդ ուսուցիչները։ Ամէն գոյնի մարդ կար նոցա մէջ, տփիսիցի, գաւառացի, գիւղացի, նոցա մէջ կարելէ էր տեսնել թէ՛ 17 և թէ 50 տարեկան ուսուցիչ։ Ո՞վ կարող էր կարծել որ՝ այն աթոռի վերայ, ուսուցիչների կարգում նստած մեծ, Ճերմակ մազերաւոր մարդն էլ ուսուցիչ։ Գոնէ հագուստը ուսուցիչ հագուստի նման լինէր։ Սիւրտուկի տակը ասիական արխալուխ հագած, վերան էլ արծաթէ գօտի կապած։ Բայց այդ գեռովինչ Տեսէ՛ք, գալիս են այլ ևս չորս, Ճանապարհորդութիւնը նոր վերջացրած ուսուցիչ։ Դոցանից երկուսի հագուստը այն-չափ հնացած է որ տասն անգամ գոյնը փոխելուց յետոյ այժմ սպիտակին ու կանաչին է խփում։ Այդ վեսա չունի, մտածում էք։ Խեղճ գիւղական ուսուցիչներ են։ Թո՛ղ միայն աշխատեն ծառայել իրանց նուրիբական կոչմանը։ Հագուստը մեծ պակասութիւն չէ՛։ Ժամանակի հետ ամէն բան կ'ուղղուի, կարգի կ'ընկնի։ Բայց մի՛թէ այդչափ էլ խեղճ են, աւելացնում էք դուք։ Հապա նայեցէ՛ք միւսին։ Ինքը կարմրաթուշ, առողջ գիւղացի, գեղջկական զլիսարկը վերցրեց ու նստեց։ Դա հագած ունի մի չուխայ, նորա տակը արխալուխ, դորա վերայ կաշուէ գօտի կապած, ոտքերին էլ հասարակ չստեր, Ճանապարհորդական թղթապահն էլ արխալուխի վերայ ուսուցիչ կացրած, կողքին ձգած։ Այս արդէն երեւէք չէիք երկակայում։

Գրասենեակի սեղանի վերայ գրուած են մի քանի, գործին պիտանի գրքեր։ Քարտուղարը կամենալով օգնել նորեկներին, մի մի ՛Ուղեցոյց է տալիս, որ կարդան ու վերագարձընեն։ Բայց, անկասկած նոքա կարդալիս քաղցր քուն կը մտնեն։ Չուխայ ու մեթողիկայ, մտածում էք դուք։

Սեղանի վերայ դարսած և ուսուցչական ժողովի Համար ց երը՝ որ իւր ժամանակին հրատարակուեցան և Արձագանք ում, և որոնք այժմ առանձին տետրերով հրատարակուած դրուած են այստեղ, շատերին անծանօթ են. վեր են առնում ու հարցասիրութեամբ նայում: Գնացէք ու հարցերի մշակումն պահանջեցէք: Լաւ նախապատրաստութիւն է: Բայց չը կարծէք թէ միայն գիւղական ուսուցիչների համար են դոբանոր բան. ո՞չ քաղաքային ուսուցիչներից էլ շատերը դեռ չեն տեսել այդ հարցերը: Է՞է, անտարբերութիւնն էլ այդպէս կը լինի. պողերաւոր հօ չի լինի: — Երկու ուսուցիչ նշանակուած են հիւրընկալու, և եկող, բնակարանի կարօտ ուսուցիչներին տանում տեղէ տեղ են անում կամ Առաջնորդարանի կամ Մէյլանի Ս. Գէրգայ եկեղեցու սենեակներում:

Ժամի 11-ն է և արդէն գրուած են 99 ուսուցիչ: Սաստիկ շոգ է, և մենք շտապում ենք դէպի տուն: Ազաղուանից պէտք է սկսուի առաջին քայլը դէպի գործունէութիւն:

## Ա.

Օգոստոսի 19.

Այսօր երեկոյեան 6 ժամին տեսուչները և ուսուցիչները հրաւիրուած էին ս. Գայիանեան միջնակարգ ուսումնարանում Ընդհանուր ժողովի համար երկու ատենապետ և երկու քարտուղար ընտրելու: Նշանակուած ժամին արդէն ուսուցիչների մի մեծ բաղմութիւն լցուած էր ուսումնարանի պատշգամբում: Մինչեւ ժամի 7-ը եկողների թիւը բաւական մեծացաւ, այնպէս որ պատշգամբի մի ծայրից միւսը անցնելը շատ դժուարութեամբ էր կատարուում: Այստեղ էլ գեռ ևս շարունակուում էր միմեանց հետ ծանօթանալը: Ամենքը անհամբերութեամբ սպասում էին առաջին անդամ բաղմութեամբ իրար կողքի նստելուն և լելու թէ ո՞վ ի՞նչ պէտք է խօսի: Պողանով էլ ի հարկէ, քիչ թէ շատ պէտք է քաղաքար կազ-

մուէր մեր դպրոցական ասպարիզում գործող անձանց վերայ: Պատշգամբի մի անկիւնում եկողները ներկայացնում էին իրանց տոմսակները, որ յայտնի լինէր թէ այս առաջին անգամ ովքեր են մասնակցում և ովքեր յետոյ պէտք է մասնակցեն ժողովին:

Ժողովի համար պատրաստուած էր ուսումնարանի դահլիճը: Երկու, կտաւի վերայ նկարուած նոր մեծադիր պատկեր առանձին կերպով աչքի էին ընկնում իրանց գեղեցկութեամբ, կրելով միանդամայն իրանց վերայ նկարչի տաղանդի կնիքը: Դոքա էին մեր դպրութեան գործին գլուխ կանգնած և մեր այբուբենի գիւտի վերայ քրտինք թափող բազմերախտութագման չաց ս. Սահակայ և ս. Մեսրոպայ պատկերները, որ նկարել էր յայտնի քանդարաւոր նկարիչ մեծ պ. ն. Ներսիսեանցը: Կարգագրից Յանձնաժողովի մեծ գրասեղանի կողքին գրուած էր մի ամբիոն՝ խօսել ցանկացող անձանց համար:

Ծուտով ամենքը ներս մոտան ու տեղաւորուեցան աթոռ ների վերայ: Ի՞նչ բաղտաւոր րոպէ էր, Ուուսաստանի հայոց մտաւոր ոյժերը, թէև ո՞չ ամբողջապէս, նստուած էին աչքիդ առաջը, և Աւսուցիչներ, մտածում էինք մենք, Աստուածուղարկէ Իւր շնորհքը ձեղ վերայ: Արտի Խորքից շնորհաւորում եմ ձեր առաջին նիստը և բոլոր հոգով յաջողութիւն եմ մաղթում մեծ գործի այս առաջին քայլնց:

Արդարէւ, Խորհրդաւոր էր բոպէն: Ի՞նչ բանի բոպէից յետոյ երևեցաւ, բոլոր ներկայ եղողների թիւը, որոնց մէջ կային և 10 օրիորդ, էր ընդամենը 109: Կային երկու թեմական տեսուչ, մի քանի տեսուչ և մի մանկավարժ: Մամուլի ներկայացնուցիչներից միայն «Արձագանք»ի խմբագրին էր երեւում: Ցաւելով պէտք է ատել որ ժողովից բացակայ էր մեր հոգեսորականութեան ներկայացուցիչը: Մի եպիսկոպոսի ներկայութիւնը, մանաւանդ այս պիսի մի ձեռնարկութեան մէջ, որի գլուխ և հովանաւոր է կանգնած Բարձրագոյն Հոգեւոր Խթանութիւնը, Ժողովը շատ պատկառելի պէտք է անէր. և անշուշտ գործի ընթացքի վերայ ունենալու էր իւր ազգեցութիւնը, ներկայ էին մի տաճ-

կահայ վարդապետ և 8 քահանայ տեղական հոգեորականներից: Թէպէտ ներկայ եղողները ամենքն էլ մանկավարժական աշխարհում գործող անձինք չէին, այդուամենայնիւ ոչմասնագէտ հիւրերի թիւն էլ շատ աննշան էր. այնպէս որ եթէ այդպիսիների համար հանենք 19 թիւը, մօտաւորապէս 90 հոգի էին՝ թեմական և մասնաւոր տեսուչներ, ուսուցիչներ և ուսուցչուչիներ:

Նիստը բաց արեց Կարգադրիչ Յանձնաժողովի նախագահ մեծ. Պ. Ա. ՇնչՊԱՐՈՒԵԼՆՅՑԼ: Իւր առաջնորդող ճանի մէջ նա յայտնում էր որ՝ մեր ողորմած Կառավարութեան հովանաւորութեան ներքոյ և ի տէր հանգուցեալ Վեհափառ կաթողիկոսի թոյլտութեամբ ու օրհնութեամբ արդէն նիստը բացուած է, և Կարգադրիչ Յայոց Առաջին Ընդհանուր Ուսուցչական Ժողովի բացումը, Ապա մի համառօտ տեղեկագրի մէջ, որի ընդարձակը խոստացաւ առանձին ներկայացնել երկու խօսքով պատմեց Կարգադրիչ Յանձնաժողովի գործունեութիւնը, Յիշեց և այն անձանց անունները, որոնք կամ նիւթագէտ կամ բարոյագէտ օժանդակել են գործին և Յանձնաժողովին, Յայոնեց վերջապէս, որ Ժողովը պէտք է ունենայ երեք ատենապետ և երկու քարտուղար: «Ատենապետներից մէկը՝ ասաց նա, արդէն կանխապէս ընտրուած և վաւերացած է նորին Օծութեան կոնդակով, որ իւր առաջարկութեամբ կարդաց Կարգադրիչ Յանձնաժողովի քարտուղար մեծ. պ. Արիսողոմ Յովհաննիսեանցը: Ժողովը ոտքի կանգնեց և և պ. քարտուղարը կարդաց կոնդակը որ գործած էր յանուն Արաստանի և Խմերեթի թեմական տեսուչ մեծ. պ. Պ. Բարխուդարեանցի, և որի մէջ նորին Վեհափառութիւնը ու զարկելով իւր ս. օրհնութիւնը բոլոր գլուցական ասպարիզում գործող անձանց վերայ, յայտնում էր իւր ուրախութիւնը այդ վահմ գործի մասին և նորհաւորելով Ժողովի առաջին քայլը, վաւերացնում էր և. Յանձնաժողովի անդամներին և փոխանդամներին իրանց պաշտօնում:

Նախագահի խօսքերին հետևեց բուռն ծափահարութիւն: Ապա Երևանի թեմական տեսուչ մեծ. Պ. Պ. ՊԻՒ-

ՇԵԱՆՅՑԼ, որ տեղական թեմական տեսչից յետոյ միակն էր գաւառականների մէջ՝ ոտքի կանգնելով ասաց. «Ես և իմ թեմի բոլոր ուսուցիչները և. Յանձնաժողովի կրած աշխատութեանց համար յայտնում ենք նորան մեր խորին շնորհակալութիւնը: — Ժողովը նստեց. և սկսուեցաւ ատենապետների ընտրութեան վիճարանութիւնը» որ բաւական երկար տևեց:

Եյստեղ ոմանք աշխատում էին ցոյց տալ ատենապետի ու ղեկավարի տարրերութիւնը, բացատրում էին ատենապետի նշանակութիւնը և այն մեծ պարտականութիւնը որ նա ունէր կատարելու: Յայտնուեցան, և մի քանի անգամ անտեղի կերպով կրկնուեցան շատ տարրական մոքեր: Ակզբումը վիճարանութեան մէջ մի կարգապահչութիւն չէր նշանարւում. ով և որտեղից ուզում էր՝ խօսում էր. յետոյ արդէն խօսողները սկսեցին ամբիոն բարձրանալ: Իսկ խօսողների մէջ կային և այնպիսիքը, որոնք, կարծես, առաջուց նախապատրաստուած էին այսպէս կամ այնպէս խօսելու, իրանց կրքերը հրապարակ հանելու, մեծ կամ որ աւելի ճիշտ է, հարկաւոր մարդիկ շողաբորմելու: Առհասարակ շատ պարզ երեւում էր խօսողների տրամադրութիւնը դէպի ցուցամոլութիւնը: Հազիւմայն 10—15 հոգի էին խօսում:

Ոմանք առաջարկում էին մի ատենապետ ընտրել թոյլ տալով որ նա էլ իւր համար իւր գաղափարակիցը գտնէ. ոմանք՝ շատ ատենապետ, որ ընդհանուր ոյժերով աւելի լաւ կառավարեն գործը: Ոմանք մեծ նշանակութիւն էին տալիս մանկավարժ անձն ընտրելուն. ոմանք դորա հակառակ ցանկանում էին ընտրել այնպիսի անձն, որ մօտիկ ծանօթ լինէր մեր ծխական և մանաւանդ գիւղական գլուցների անցեալ ու ներկայ կեանքի և պատմութեան հետ: Մի քանիսը առաջարկում էին հոգաբարձուներից ևս ընտրել միւսները այդ մերժում էին: Ոմանք անյարմար էին համարում այլ և այլ շկոլաների հետևող անձանց ընտրութիւնը, բացատրելով որ Ժողովների գործունէութիւնը մի քանի օր գերմանական գոյն կունենայ, մի քանի օր Փրանսիական, մի քանի օր էլ ուռսական, և այդպիսով զուրկ կը լինի մի սեպհական որոշ գոյնից:

Ոմանք էլ ընդհակառակն ցցց էին տալիս որ այդ հանդամանքը չէ կարող ճնշող ազդեցութիւն ունենալ ժողովների գործունեութեան վերայ:

Վերջապէս, Նախագահը վիճաբանութիւնները ընդհատելով՝ խնդրեց ժողովին որ ընտրելի անձինք առաջարկէ: Առաջարկութեան շատ շնորհալի և անշնորհ անձինք, թուով՝ 23 հոգի: Բայց դոցանից շատերը հրաժարութեան՝ մեծ մասամբ յարգելի պատճառներով: Այստեղ ժողովականներից մէկը շատ ուղիղ նկատեց, որ ընտրելի անձանց ցանկութիւնը կանխաւ իմանալը անյարմար ձև է ընտրութեան համար, որով հետեւ նա ինքը չէ կարող առաջուց չհրաժարուել քանի որ վերջը կարող են ընտրել իրան: Մնացին միայն երեք հոգի, որոնց վերայ յետոց կրկին աւելացրին երկուսը, և ապա առաջարկութեան այդ հինգ անձինք՝ պ. պ. Սեղբաք Մանդինեանց, Յովհաննէս Զիգֆիանեանց, Աբիսողոմ Յովհաննիսեանց, Վարդան Եղիազարեանց (երեանցի) և Սարդիս Բէկնազարեանց: Զայների մեծամանութեամբ առաջին երկուսը ընտրութեան ատենապետ, երկրորդ երկուսը՝ փոխ-ատենապետ: Իսկ քարտուղարների ընտրութիւնը ժողովի միակամ համաձայնութեամբ յանձնուեցաւ ատենապետների որոշմանը:

Դորանից յետոյ Կ. Յանձնաժողովի նախագահը նիստը փակուած յայտարարելով՝ յայտնեց նոյնպէս որ յաջորդ նիստում Յանձնաժողովի կարգադրութեամբ Ընդհանուր ժողովը պէտք է վեց մասնախմբի (section) բաժանել որոնք և կը վարեն գործը: Մի քանի խօսք էլ հետեւեալ օրը ունենալի գործերի մասին, — և ամէն բան վերջացաւ:

## Բ.


### ԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄԸ

Օգոստոսի 20.

Այսօր պէտք է տեղի ունենար ժողովի հանդիսաւոր բացումը: Առաւոտեան 9 ժամից Վանքի մայր եկեղեցու գաւթիթը լցուած էր ժողովին մասնակցող անձինքներով: Ժամի

10ին սկսուեցաւ նոյն եկեղեցում ս. պատարագը: Ժամերգութեանը մասնակցեցին եկած ուսուցիչներից մի քանի անձինք: Կային երկու վարդապետ: 20-ից աւելի քահանայ: Տեղացի քահանաների անտարբերութիւնը սաստիկ աչքի էր ընկնում: Քաղաքին 70ի շափ քահանաներից՝ բացի նոյն եկեղեցու միաբաններից, ոչոք չէր երևում... «Արձագանքի խըմբագրութիւնը իւր թերթը, որի № 27ը սովորականին հակառագրութիւնը իւր թերթը, որի № 27ը սովորականին հակառագրութիւնը իւր թերթը» պահպանութեան մէջ էր հանել՝ ուղարկել էր հերկայ եղողներին ձրի բաժանելու: Ամէն ցանկացող ստացաւ մի օրինակ:

Ա. Պատարագը աւարտուելիս ս. Երժուարդի միաբան և նուիրակ գեր. ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՊԱՅԵԱՆՑ ԵԿԵՂԵցում, որտեղ այդ միջոցին հաւաքուեցան ներկայ եղողները՝ մի համառօտ, բայց իմաստալի ատենախօսութիւն արեց: Հայր սուրբը ցոյց տալով գործի վսեմութիւնը, ժողովից ակնկալած օգուտները և առ հասարակ ժողովի պատասխանատուութիւնը իւր խզճի, ազգի և նորա զաւակների առաջ՝ ասաց մօտաւորապէս հետեւեալը. «Դուք, ովք ուսուցիչներ, ուրախ էք այսօր, որ մերձաւոր ու հեռաւոր տեղերից գումարուել էք այստեղ այսպիսի մի մեծ գործ սկսելու: Բայց ձեր ուրախութիւնը դեռ ևս կատարեալ չէ, Դուք գործի սկզբում էք. դուք երկունքի մէջ էք: Բայց երկունքը կապուած է զանազան վըշտերի ու ցաւերի հետ: Դուք իսկապէս պէտք է ուրախանաք այն ժամանակը, երբ կը տեսնէք ծնունդը՝ ձեր երկանց պըտուղը: Զպէտք է մոռանաք, որ երկունքից յետոյ շատ անգամ ծնունդը վտանգաւոր էլ է լինում: Էթէ լրջութիւնը, հեռաւտեսութիւնը և խելացի խորհուրդները չեն հասնում իրանց օգնութիւնը: Եւ իւր գեղեցիկ խօսքերը վերջացրեց հետեւեալ օրինակով: «Դիւթագորուուր իւր ճնմարանի ճակատին փորագրել էր այս խօսքերը. «Ովք պէտք եղածը չգիտէ, նա մարդկանց մէջ անասուն է. ովք պէտք եղածը զիտէ, նա անասունց մէջ մարդ է. իսկ ովք աշխատում է պէտք եղածից աւելի գիտենալ՝ նա մարդկանց մէջ աստուած է: Ես ցանկանում եմ, որ դուք էլ մարդկանց մէջ աստուածներ լինեք:» Ատենախօսութիւնը ընդհանրապէս գեղեցիկ ապահովութիւն գրրծեց:



Ա. Պատարագից յետոյ հոգևորականաց դասը շարական երգելով դիմեց դէպի առաջնորդաբանի դաշլիճը: Դահլիճը կից սենեակները և պատշգամբը լի էր ուսուցիչներով և հանուելով: «Մեղուն», «Մշակը» և «Արձագանքը» ունեին իրանց ներկայացուցիչները: Այսօր եկած էր նաև Պարաբաղի թեմական տեսուչը: Ուրեմն ժողովի բացման օրը մեր վեց թեմբրից միայն երեքի տեսուչներն էին ներկայ՝ Արաստանի, Երևանի և Պարաբաղի: Խնչու չպէտք է լինէին նաև Շամախու, Աժտարիսանի և Բեսարաբիոյ թեմական տեսուչները: Թեմական տեսուչների ներկայութիւնը կարևոր էր այն պատճառով, որ գոնէ մենք կ'իմանայինք թէ ո'վքեր են և ինչ մանկալարժական ու կառավարչական հմտութիւններ ունեն այն անձինք, որոնց յանձնուած են մեր բոլոր թեմբր՝ ամբողջ Ռուսահայաստանը:

«Պահպանիչեց յետոյ Արաստանի նախկին թեմական տեսուչ բարձր արժանապատիւ ՍՏԵՓԱՆՈՍ Ա. ՔԱՀԱՆՅԵՑ ՏԵՐ-ՍԵՒՓԱՆՈՍԵԱՆՑԼ մի խրոխտ ձայնով կարդաց նախընթաց օրուայ կոնդակը, Երգողների խումբը երգեց «Տէ՛ր կեցո՞զ կայսրն»: Ապա Արաստանի և Խմբեմի Հոգեոր Ատեանի նախանդամ գեր. ՄԱՄԲԻՇԻ վարդապետը նոյն իմաստով մի ատենախօսութիւն արեց: Դորանից յետոյ թեմական տեսուչ պ. ԲԱՐԻԱՆԻ ԳԱՐԵԱՆՑԼ մի գեղեցիկ ատենաբանութիւն արեց, և ուսուցչական ժողովների անհրաժեշտութիւնը մեր մէջ բացարելու համար ասաց. «Մի օրինակ միայն կը բերեմ: — Եթէ երուպական աերութեան մէջ, որտեղ շատ կան մասնագետ մանկավարժներ, մանկավարժական ամսագրեր, հարուստ դրաբարաններ, և այգուամենայնիւ կարօտութիւն են զգում ուսուցչական ժողովներ կազմելու, ո՞րքան առաւել մէջ են հարկաւոր այդպիսի ժողովներ, մեզ՝ որ զուրկ ենք այդ բոլոր բաղադասարութիւններից: Ես ուրախ եմ: որ մի այսպիսի լայնածաւալ կայսրութեան մէջ, այս հայաբնակ կենդրոնական քաղաքում: ուսուաց բարեմիտ Կառավարութեան հովանաւորունութեան սեղբայ՝ ինձ է վիճակում բանալ ուսուահայոցս մէջ Առաջին Ընդհանուր Ուսուցչական ժողովը: Ուրախ եմ ման-

աւանդ, որ այս վասեմ գործին նպաստաւոր գտնուեցան մեր նորածին՝ Հայուհեաց և Բարեգործական Ընկերութիւնները: Պակաս նպաստաւոր չէր նաև ընդհանրապէս հասարակութեան և մասնաւոր անձանց աջակցութիւնը և քաջալերութիւնը: Յայտնելով վերջապէս իւր շնորհակալութիւը Յանձնափողովի նախագահին և բոլոր անդամներին՝ այդ օրուանից նիստը բացուած յայտարարեց:

Աերջին խօսքերից յետոյ երգեցիկ խումբը երգեց «Բարեկանիշը հրաշափառ» երգը: Ապա պ. Բարխուդարեանցը կարդաց իսկոյն սուացուած մի հեռագիրը: Այդ հեռագիրը ուղարկել էին Մոսկուայի Պետրովսկայեա ակադեմիայի 13 հայ ուսուանողներ, որոնք շնորհաւորելով Ուսուցչական ժողովի բացումը՝ յաջողութիւն էին բարեմաղթում: Հեռագիրը ընդունուեցաւ ծափահարութեամբ: Դորանից յետոյ պ. Ա. ԵԲԻ-ՑԵԱՆՑԼ կարդաց «Վարժարանի» խմբագիր մէծ պ. Ա. ԽԱՍ-ՐՈՎԵՆՑԻ ուղարկած «Ուղերձը», որի մէջ այդ նոր մասնակութիւնը բացատրելով և նոյն բարեմաղթութիւնն անելով յիշեցնում էր ժողովին, որ նա այսօր գումարուել է այն յարկի տակը, որտեղ երրեմն Տփիմիսի նախկին մէծ առաջնորդ՝ Ներսէս Ե.-ը յղանում էր իւր մէջ այս մէծ գործի սկզբնաւորութիւնը՝ Արաստանի և ամբողջ Ռուսաստանի մըտաւոր կրթութիւնը: Ակնարկութիւն էր անում նաև «Արժարանակի մասին», ասելով որ այդ թերթը լցու աշխարհ է եկել հէնց այն գործին ծառայութիւն մատուցանելու համար, որի պատճառով նոքա ժողովուել էին. աւելացնելով որ դա պէտք է թարգման լինի նոցա մտքերի, ուրեմն թո՛ղ այդ թերթը իրանց սեպհականութիւն համարելով՝ աշխատեն նորայառաջադիմութեան մասին: — Այդ «Ուղերձն» էլ ընդունուեցաւ ծափահարութեամբ: Յետոյ պ. Բարխուդարեանցը կարդաց այնտեղեւիթ խմբագրուած՝ նորին Ահեցափառութեանը ուղարկուելիք մի հեռագիր. որի մէջ յայտնելով ժողովի բացումը, ժողովի կողմից խնդրում էր Կաթողիկոսի օրհնութիւնը: Պարոնի առաջարկութիւնը՝ այդ հեռագիրն ուղարկելու մասին ընդունուեցաւ միաձայն հաճութեամբ: — Եղան-

անձինք, որ առաջարկեցին ժողովի կողմից հեռագրով պատասխանել նաև Պետրովսկայեա ակադեմիայի ուսանողներին։ Այդ անսպասելի առաջարկութիւնը չընդունուեցաւ։

Զարմանալի՞ է։ որտեղից հեռագրի յշյս կար, այնտեղից չստացուեցաւ։ Ինչո՞ւ տաճկահայոց կողմից, օրինակ Միացեալ-Ընկերութիւնը և վերջապէս Էջմիածնի Ճեմարանը պէտք է անտարբեր մնային այսպիսի մի վսեմ Ճեռնարկութեան վերաբերութեամբ։

Ժամի 1 ին ժողովը ցրուեցաւ։

Պա.

Օգոստոսի 21

Եռուստ.

Նիստը բացուեցաւ և Պ. ԲԱՐԵՈՒՏԱՄԵԵՆՑԸ կարդաց մինչև այդ միջոցը զանազան տեղերից ստացուած մի քանի հեռագրեր՝ Մոսկուայից, Էջմիածնից՝ Վահրամ եպիսկոպոս Մանկունուց Վեհափառի կողմից, Սխալցխայից՝ Բժ. Ղազաղեանցից, Աւեքսանդրովովից՝ Յուսիկ վարդապետից և Ստալրովովց՝ քահանայ Բէկգուլեանցի, պ.պ. Զախարեանցի, Կաճկաձեանցի, Էնակոլոփիեանցի և Խամբուլեանցի ստորագրութեամբ։ — Յետոյ Նախագահը յայտնեց ժողովին, որ իրանց միակամ համաձայնութեամբ ընտրել են իրանց համար քարտուղարական պաշտօնում Պ. Պ. ՄԱԿԱՐ Տ. ՍԱՐԳՍՅԵԵՆՑԻՆ և ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԴԱՎԵՍՆՑԻՆ, որի բացակայութեան պատճառով առ ժամանակ գործը վարելու նստեց Պ. ԳԱԲՐԵՒԼ ԱԹԵՖԵԼԵԵՆՑԸ։

Այսօրուայ նիստի համար երկու հարց կար դրուած՝ ա.) Ի՞նչպէս կարգաւորել օրինակելի դասատուութիւնները և բ.) Ո՞ւմ յանձնել ծրագրերի քննութիւնը։ — Առաջին հարցի վերաբերութեամբ երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան։

Ոմանք առաջարկում էին, որ՝ ի նկատի ունենալով գաւառներից և գիւղերից եկած ուսուցիչների անվտահութիւնը մի այսպիսի մեծ ժողովում օրինակելի դասատուի դերը իրանց վերայ առնելու մասին՝ առաջ պարապէին մեր յայտնի մասնագէտ մանկալարմները և փորձուած ուսուցիչները, որպէս զի ապա միւսներն էլ սիրտ առնեին նոցա օրինակին հետեւ լու։ Ոմանք դորա փոխանակ առաջարկում էին որ առաջ այն անձինք պարապէին, որոնք իրանց յօժարութեամբ կանխապէս ցանկութիւն են յայտնել պարապելու կարգադրիչ Յանձնագովովն։ Բայց որովհետեւ թէ՝ առաջին և թէ երկրորդ գէպքում դասատուն պէտք է գործ ունենար իրան անձանօթաշակերտների հետ, որոնք քաղաքիս այս և այն ուսումնարնից պէտք է հաւաքուէին, այդ պատճառով հարց զարթեցաւ։ չէ՞ հարկաւոր արդեօք, որ դասատու ուսուցիչը նախապէս լաւ ծանօթանայ աշակերտների հետ որ կարողանայ սպասած արդիւնքները արտադրել։ Սորա մասին երկար վիճաբանելուց յետոյ Խօսողների կարծիքները երկու տեսակի բաժանուեցան։ Ոմանք անհրաժեշտ էին համարում աշակերտների հետ ծանօթանալը։ Ոմանք այդ ո՛չ միայն աւելորդ էին համարում, այլ և հարկաւոր էին համարում աշակերտներին բոլորովին անձանօթ լինելը։

Այդ երկու հակառակ մտքերը միմեանց հետ հաշտեցնելու համար՝ եղաւ առաջարկող, որ առաջ նոքա պարապեն, որոնց համար աշակերտների հետ ծանօթանալը ոչինչ նշանակութիւն չունի, ապա միւսները, որոնք այդ շատ կարեւոր էին համարում։ Բայց որովհետեւ ժողովը այդ միջոցն էլ հաւանական չգտաւ, ուստի նախագահ Պ. Բարխուգարեանցը երկու կարծիքներից միջին ձանապարհը գտնելու համար, առաջարկեց ընտրել հինգ հոգուց բաղկացած մի մասնախումբ, յանձնել նորան օրինակելի դպրոցի համար ա., բ. և գ. տարին նոր սովորող աշակերտների ընտրութիւնը որ նոցա հետ ամեն ցանկացող պարապէր։ Այդ առաջարկութիւնը ընդունուեցաւ և արդէն ցուցակագրուեցան 8 ընտրելի անձինք։ Գործը արդէն հասել էր ընտրութեանը, յանկարծ ատենապետ Պ. ՄԱԿԱՐԻՆԵԱՆՑԸ առաջարկեց ժողովին՝ չի՞ կարելի ար-

գեօք որ Փողովը հաւատայ իրան և աշակերտների ընտրութիւնը իրան յաձնէ: Թէպէտ այդպիսի մի նոր առաջարկութիւն բոլորին անտեղի էր Պ. Մանդինեանցի կողմից, այդուամենայնիւ Ժողովը համաձայնելով՝ խնդրեց և շնորհակալութիւն արեց նորա առաջարկութեան համար: Որոշուեցաւ որ ամսի 23 ին առաւօտը, Պ. Մանդինեանցը՝ այն անձանց ներկայութեամբ որոնք ցանկանում են պարապել օրինակելի գորոգում և իրան օգնել այդ գործում աշակերտներ ընտրի յիշեալ տարիների համար, և նոյն օրը առաւօտեան ժամի 9 ից սկսուի պարապմունքը:

Մի քանի բոպէ միջոց տալուց յետոյ Ժողովը սկսեց զբաղուիլ երկրորդ հարցով: Նախագահ Պ. ԲԱՐԻՍՈՒԴԻՎԱՐԵԱՆ-ՑԼ յայտնեց որ՝ Հարկաւոր է ընտրել մի մեծ մասնաժողով, որ քննէ Կարգադրիչ Յանձնաժողովի մշակած ծրագիրը՝ ապա այն Ընդհանուր Ժողովի քննութեանը ներկայացնելու համար. որ՝ մի փարբիկ մասնախումբ էլ պէտք է ընտրել Կ. Յանձնաժողովի կողմից առաջարկուած հարցերից մի քանի անպատճանաբերը քննելու: Դորա համար առաջարկուեցաւ ընտրել ՅՅ անձն:

Բայց մասնաժողով ընտրելուց առաջ Պ. ՊՈՒՇԽԵՆՑԼ յարձացրեց Ճեմարանի վարչութեան պատրաստելիք ծրագրի խնդիրը. Պարոնը կարծում էր որ՝ եթէ Ճեմարանական վարչութիւնը արդէն պատրաստի ունի մի այդպիսի ծրագիր, անշուշտ Վեհափառ Կաթողիկոսը այն կը հաստատի և Ընդհանուր Ժողովի ջանքերը ծրագիր կաղմելու մասին ապարդիւն կ'անցնեն: Դորա առիթով նախ խնդրեցին Պ. Ս. Մանդինեանցին որ իբրև գործին մասնակցող և Ճեմարանի ուսուցիչ մի որոշ պատրաստան տայ այդ հարցին, Բայց Պ. ՄԱՆԴԻ-ՆԵԱՆՑԼ միայն այն ասաց, որ ինքը Ճեմարանի վարչութիւնից ոչ մի յանձնարարութիւն չունենալով՝ ոչինչ դրական բան չէ կարող ասել: Իսկ Պ. Պոշխենցին պատրաստանեցին որ՝ Ճեմարանական վարչութեան պատրաստած ծրագիրը ոչինչ կապ չունի Աւսուցչական Ժողովի գործունեութեան հետ. Կաթողիկոսը Ժողովին հարմայել է ծխական և միջնակարգ գեղեցիկ օրինակները առեսնելով բան սովորելու և քիչ թէ շատ օգուտ ստանալու այս Ժողովից: Զերմ ծափահարութիւն յաջորդեց պարոնի խօսքերին:

Յաստի այն բոլորովին անկախ Ճեմարանական վարչութեան կազմած ծրագրից:

Առանձին ուշադրութեան արժանի էր և այն խստապահանջանց առաջարկութիւնը որ անում էր ուսուցիչ Պ. ԿԱ-ԲԱ-ՑԼ ՊՈՒՇԽԵՆՑԼ: Պարոնը հաշիւ ու համար էր պահանջում Կ. Յանձնաժողովի գործունեութեան մասին: Նա ասում էր, որ մինչև օրս յայտնի չէ Կ. Յանձնաժողովը ինչ Նախապատրաստութիւններ է տեսել ժողովի համար. ինչ ծրագիր է պատրաստել Ժողովի ընդհանուր պարապմանց համար: Եւ, ցոյց տալով որ եղածները միայն դատարկ ֆրազներ են եղել աշխատում էր գորանով ապացուցանել որ Կ. Յանձնաժողովը ոչ գիտեցել և ոչ կարողացել է իւր գերը կատարել:

Երեւանի գլուխոցի տեսուչ մեծ. Պ. Ս. ԲԵԿԻՆՍ. ԶԱ-ՐԵԱՆՑԼ նորան պատասխանեց, ասելով. «Մենք միշտ սովոր ենք մեծամեծ պահանջներ անել և ինքներս ոչինչ չշինել ու խօսել միայն: Մենք ի՞նչ ենք տուել՝ ո՞րքան ոռչիկ ենք նշանակել Յանձնաժողովի անդամների համար, որ այդպիսի մեծ մեծ պահանջներ էլ անում ենք նորանից: Մենք ամենքս զանազան տեղերից հաւաքուել ենք, ինքներս անփորձ մարզիկ, այս առաջին անգամն է որ այսպիսի մեծ գործ ենք սկսում ընդհանուր ոյժերով: Ի՞նչ վես ունի, եթէ շատ բան արած չլինենք, շատ կետերում էլ սիսալուած լինենք: Դեռ մենք շնորհակալութիւն պէտք է անենք Կ. Յանձնաժողովին, որ նա յանձն է առել մեղ համար այսքան նեղութիւն, մեղ ամենիս հաւաքել է այստեղ հազար ու մի գժուարութեանց տանելով: մեղ համախմբել է միմեանց գեղեցիկ օրինակները առեսնելով բան սովորելու և քիչ թէ շատ օգուտ ստանալու այս Ժողովից: Զերմ ծափահարութիւն յաջորդեց պարոնի խօսքերին:

Յետոյ Պ. ԲԱՐԻՍՈՒԴԻՎԱՐԵԱՆՑԼ ցանկացաւ իմանալ՝ արգեօք ի՞նչպէս կը ցանկայ Ժողովը՝ ծրագրի մշակող անձինք ևս մասնակցեն ծրագրերի քննութեանը՝ թէ ո՞չ: Այս հարցում Ժողովը երկուսի բաժանուեցաւ: Մի մասը առաջարկումէր, որ նորա մասնակցեն միայն խորհրդատու ձայն ունենալով: Իսկ

միւսը առաջարկումէր որ վճռողական ձայն ունենան : Աերջին  
առաջարկութիւնը ընդունուեցաւ և սկսեցին ընտրելի անձինք  
առաջարկել : Բայց որովհետեւ ներկայ եղողներից շատերը ան-  
ձանօթէին միմեանց, ուստի որոշուեցաւ որ թեմական տեսուչ-  
ները իրանք առաջարկեն իրանց թեմերից ընտրելի անձինք :  
Վյդպիսով ցուցակագրուեցան մօտ 60 անձինք : Բացի թեմա-  
կան տեսուչներից առաջարկում էին նաև տեսուչները : Սա-  
կայն, որովհետեւ մի քանի թեմերից ո՛չ թեմական և ո՛չ  
մասնաւոր տեսուչներ կային, այդ պատճառով ներկայ եղող  
ուսուցիչներն էլ սկսեցին առաջարկել իրանց ծանօթ արժա-  
նաւոր անձանց, որոնց թիւը շատ աննշան էր : Տեսնելով, որ  
նիստը գեռ ևս երկար կրտեկի, պ. նախագահը թղթեր բա-  
ժանեց ամենքին, որ ցուցակագրեն առաջարկուած անձանց  
անունները և իրանց տներում նոցանից 35 հոգի ընտրելով՝  
երեկոյեան 6 ժամին բերեն իրանց ընտրողական թերթերը :  
Սորանով նիստը վերջացաւ : Այս միջոցին ուսուցիչներին ձրիա-  
բար բաժանուեցաւ Առաքել Բահամթեանցի՝ յօգուտ ուսուց-  
չական ժողովի կարգացած Շաղկոցը կամ մանկանց  
պարտէ զը և նորանշանակութիւնը անունով հրա-  
պարակական դասախոսութիւնը :

Այսօր ներկայ էին 143 ուսուցիչ:

Դ.

Երեխա:

Երեկոյեան, երբ նիստը բացուեցաւ, ամենքը ներկայա-  
ցըրին իրանց ընտրողական թերթերը, և վեց տեղ երկ երկու  
հոգի սկսեցին հաւաքել առաջարկուած անձանց ձայները :  
Բայց մի կողմից ընտրուելու ջերմ ցանկութիւնը, և միւս կող-  
մից ուսուցիչներից շատերի անփորձութիւնը բաւական անտե-  
ղի արարունքների առիթ էին տուել : Մենք, որ նշյնպէս  
ձև ներ հաւաքողներից մէկն էինք, նկատեցինք հետևալու-

ըլ. — ա) Առհասարակ առաջին տեղը կամ հայր Ստեփանոս  
Տէր Ստեփանոսեանցին կամ բժիշկ Գարբրիէլ Յովհաննիսեան-  
ցին էին գրել . բ) Միւնոյն թերթի մէջ միւնոյն անունը եր-  
կու անդամ էր կրկնուած, և սյդ մօտ 10 թերթում (այն  
էլ միայն մեղ մօտ) . գ) Գրել էին նաև այնպիսի նոր անձանց  
անուններ, որոնք առաւոտը չէին առաջարկուած . դ) Եւ, որ  
ցաւալին է, գրուածների մէջ այնպիսին էլ կար, որպիսին  
իւր անվայելութեամբ հաղիւ թէ մի փաքրիկ աշակերտի նե-  
րելի լինէր : — Այս մի քանի ժամ տեղող սրտամաշ աշխատանքը  
վերջանալուց յետոյ, գրածները միմեանց հետ համեմատեցին  
և վեց թերթից սկսեցին ձայները գումարել : Անցաւ մի քիչ  
ժամանակ էլ և ձայների մեծամասնութեամբ ընտրուած յայ-  
տարարուեցան հետեւեալ 35 անձինքը :

- |                                   |                           |
|-----------------------------------|---------------------------|
| Ա. ա. թ. Ս. Ստեփանեանց — 93. ման. | Լ. Թիւփիկեանց — 63,       |
| Արիստոդ Յովհաննիսեանց — 88.       | Ի. Տամենեանց — 62,        |
| Դ. Ողյեանց — 86.                  | Գ. Շահրուդաղեանց — 60,    |
| Հ. Ղուկասեանց — 85,               | Յ. Գրիգորեանց — 59,       |
| Օ. Բէկնազարեանց — 84,             | Ա. Հախումեանց — 58,       |
| Ս. Պալասանեանց — 84,              | Ա. Քահի Բագրատունի — 57,  |
| Յ. Զիգիանեանց — 84,               | Հ. Առաքելեանց — 57        |
| Ա. Մանդինեանց — 82,               | Գ. Գարբիէլեանց — 55,      |
| Գ. Բարխուդարեանց — 80,            | Մ. Պալեանց — 55,          |
| Ն. Խոսրովեանց — 80,               | Գ. Վարձելեանց — 54,       |
| Ա. Քիշմիշեանց — 79,               | Ա. Գալստեանց — 54,        |
| Պ. Պողիանց — 79,                  | Գ. Քալմնթարեանց — 50,     |
| Վ. Եղիազարեանց (Երեւանցի) — 78    | Կ. Թեմուրազեանց — 48,     |
| Յ. Նազարեանց — 74,                | Ո. Մեքումեանց — 47,       |
| Գ. Յովհաննիսեանց — 70,            | Ա. Բածաթրեանց — 46,       |
| Օր. Գ. Յովհաննիսեանց — 68,        | Օր. Գ. Քալմնթարեանց — 45, |
| Մ. Սալամբէկեանց — 63,             | Գ. Միրզոյեանց — 45,       |
|                                   | Ա. Մանդինեանց — 41.       |

Ընտրութիւններից յետոյ Պ. Բէկնազարեանցը յայտ-  
նեց ժողովին, որ ուսուցիչներին ծրագրերի հետ առաջուց  
ծանօթացնելու համար ինքը խորհրդակցել է Պ. ՍԱԼԱՄ

ԲԵԿԵՑՆՑԻ հետ, որ վիմագրութեամբ երկու օրում տպել այս և բաժանուին ամենքին: Ժողովը ի նկատի ունենալով դորա օգտականութիւնը և ծախսի աննշան լինելը՝ խնդրեց Կ. Յանձնաժողովին որ տպագրել տայ այդպիսով: Դորա համար մօտ 10 անձինք ցանկութիւն յայտնեցին ծրագրերը արտադրելու:

Դորանից յետոյ Պ. ԵՐԻՑԵԱՆՑԼ յայտնեց Ժողովին, որ Կ. Յանձնաժողովը ցանկանալով անջնջելի պահել բոլոր ուսուցիչների մէջ Ուսուցչական ժողովի քաղցր յիշատակը, կամենում է հանել տալ բոլոր ուսուցիչների համախումբը լուսանկարը: «Դորա մասին, ասաց պարոնը, Կ. Յանձնաժողովը արդէն խօսել է քաղաքին յայտնի լուսանկարով Խրմակովի հետ, և վերջինս ուսուցիչների ծախքը թեթևայնելու համար՝ ընդունում է կէս դիւժին պատկերը տպել 1 ռ. 50 կոպէկով: Դորանից իւրաքանչեւր ուսուցիչը հինգը ինքը կը վերցնի, մէկը կը տայ Յանձնաժողովին՝ խմբովին հանելու համար: Այդ աշխատանքը յանձն է առնում Պ. ՍԱԼԱՄ-ԲԵԿԵՑՆՑԼ: Իսկ չքաւոր ուսուցիչներին Կ. Յանձնաժողովը հրաւիրում է իւր ծախքով հանուելու: Համախումբ պատկերի գինը լինելու է 2—3 ռ.: Նոցանից մէկը կ'ուղարկուի Վեհափառ Կաթողիկոսին. մի քանիսն էլ կը բաժանուին բոլոր յայտնի մեծ ուսումնարաններին ձրիաբար»:

Ժողովը ուրախութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը, և երեք նոր ընտրուած անձանց յանձնուեցաւ ցանկացողներից փող ստանալը և լուսանկարչին ներկայացնելը:

«Պարոններ, տեղից վեր կենալով ասաց քարտուղար Պ. ՇԱՀԲՈՒԴՎԱՂԵԱՆՑԼ հանձն էն հոչակաւոր մանկավարժ Պետալոցցու, Դիստերվէգի և Ուշինսկու անունները: Իմ կարծիքով մի խորհրդաւոր բան արած կը լինենք, եթէ մեր համախումբ պատկերի մէջ տեղը զետեղենք նաև այդ նշանաւոր անձանց պատկերը որոնց շնորհիւ մենք առաջ ենք գնում մեր ասպարիզում»:

Ժողովը միայն ծիծաղով պատասխանեց պարոնի առաջարկութեանը: Իսկ պ. Երիցեանցը աւելացրեց որ մանկավարժների և առհասարակ դիտնական անձանց պատկերները ամեն

լուսանկարչի մօտ գտնուում են. ցանկացողները կարող են նոցանից առնել այդ պատկերները: Սորանից յետոյ ժողովը ցրուեցաւ: Ներկայ էին 122 ուսուցիչ:

Ե.

Օգոստոսի 23.

Առաջարկ:

Նիստը բացուեցաւ: Խօսակցութիւնը սկսուեցաւ պարապմունքների մասին և Պ. ՆԱԽԱԳԱՀԱՀԸ կամեցաւ իմանալ թէ ովքեր են ցանկանում պարապել օրինակելի գպրոցում: Առաջարկուեցաւ որ ցանկացողները գրուեն մի ու անձին թղթի վերայ: յիշելով թէ առարկան, որով պէտք է պարապեն և թէ բաժանմունքը որտեղ ուղում են պարապել: Գրուեցան 20 ից աւելի անձինք: Ոմանք գրում էին մի քանի առարկաներից: ոմանք թէ ծիսական և թէ միջնակարգ գպրոցների աշակերտների հետ ևս ցանկութիւն յայտնեցին պարապելու: Ներկայ եղող վարժուհիներին ևս առաջարկուեցաւ յանձն առնել մի որ և իցէ առարկայով պարապել: Բայց պ. Մանղինեանցը ասաց, որ՝ եթէ կազողանյայ, ինքը վերջը կը պարապի: Եղան նաև ուրիշ անձինք: որոնք նոյն ցանկութիւնը յայտնեցին: Ներկայ եղողներից մէկը ասաց որ՝ լաւ կը լինի եթէ պարապել ցանկացող ուսուցիչը նախ և առաջ գրաւոր

ժողովը առաջարկեց ատենապետ Պ. Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆՑԼ 31: որ, եթէ կարելի է, առաջ ինքը պարապի, որպէս գիւմարական, մանաւանդ գիւղական ուսուցիչները աւելի վատահ կերպով առաջ գան պարապելու: Բայց պ. Մանղինեանցը ասաց, որ՝ եթէ կազողանյայ, ինքը վերջը կը պարապի: Եղան նաև ուրիշ անձինք: որոնք նոյն ցանկութիւնը յայտնեցին: Ներկայ եղողներից մէկը ասաց որ՝ լաւ կը լինի եթէ պարապել ցանկացող ուսուցիչը նախ և առաջ գրաւոր

կերպով ներկայացնէ իւր պարապման եղանակը՝ չափու և այլն, որպէս զի իմացուի թէ արգեօք գործնական պարապմունքի մէջ բոլոր խոստացածը կատարեց, թէ մի քանի քան բաց թռողեց: նորան պատասխանեցին որ աւելորդ է այդշափ խոստապահանջ լինելը: Պարապողը առաջուց մի քանի կարեւոր բացարութիւն կը տայ. կամ կը հարցնեն նորան թէ ինչո՞վ պէտք է պարապի. մի գասադիրը կամ ծրագիր ունի՞ կաղմած թէ ոչ: եթէ գասագիրը ունի և փոփոխութիւններ է մացնելու նորա մէջ, ո՞րո՞նք են այդ փոփոխութիւնները և այլն: Եւ այդ բաւական է:

Սորանից յետոյ ուսուցիչներից մէկը՝ Պ. ՄԱԿԱՐ Տ. ՍԱՐԳԱՆԻ ՅԱՅՏՆԵց որ՝ թէպէտ ինքը չգուցակագրեց իւր անունը պարապողների շարքում, բայց կը խօսի վայ ել չագրութեան մասին և կը պարապի ցոյց տալով ու պաշտպանելով իւր մէթոդը, և որ՝ գորա համար արդէն Կ. Յանձնագովին մի գրաւոր տեսութիւն է ներկայացրել: Կ. Յանձնաժողովը ուրախութեամբ ընդունեց թէ՝ նորա և թէ ուրիշ մի երկուսի նմանօրինակ առաջարկութիւնները: Եւ որովհետեւ այստեղ խօսիք ընկաւ գրութեան ձեերի մէջ միատեսակութիւն պահպանելու մասին, որ պէտք է կատարուէր յիշեալ մասնագէտ անձանց մասնակցութեամբը, ուստի այս առիթով ատենապետ Պ. ՄԱՆԴԻՆԵԱՆՑԼ այսպիսի մի հարց առաջարկեց—լաւ չէր լինի որ՝ ի չպէս վայելչագրութեան մէջ ցանկալի է միատեսակութիւն պահպանելը, չայց լեզուի մէջ ևս նոյն միատեսակութիւնը պահպանուի: Պարոնի միտքը բաւական պարզ էր: Եյսքանը միայն հարկաւոր ինք համարում ասել թէ ինչո՞ւ ինչպէս ամէն առարկայի մէջ, այնպէս էլ վայելչագրութեան մէջ, չենք ուզում զանազան մեթոդներ ենթադրել: Թո՞ղ մեր աշակերտները վայելու գրեն, մեզ այդ է հարկաւոր. բայց թէ որը թէ մեթոդի հետեւելով կը գրէ, այդ մեզ համար միւնցն է: Եւ ինչո՞ւ, եթէ որեւիցէ առարկայի մեթոդների մէջ կարելի է միատեսակութիւն պահպանել միայն հայոց լեզուի մէջ ենք ուզում նոյն միատեսակութիւնը պահպանել պահպանել և ո՞չ թէ մասացած բոլո՞ր լեզուների ու առարկաների մէջ:

Եւ շտապով առանց հարցը վիճարանութեան ու քուէարդութեան ենթարկելու՝ պ. Մանդինեանցը դիմելով ժողովին, ասաց. «Ուրեմն պարոնները թէ ծրագրերի մշակելը և թէ այս երկրորդ հարցը՝ հայոց լեզուի մէջ ևս միատեսակութիւն պահպանելը թողնում ենք մեր ընտրած ՅՅ հոգուց բաղկացած մասնաժողովի տնօրինութեանը»: Եւ մի քանի տեղից դրական պատասխան ստանալով՝ այդ հարցն էլ լուծուած ու վճռուած համարեց:

Սյստեղ երբ կրկին նորան ինդրեցին որ առաջին անդամինքը պարապի, նա պարապելու գժուարութիւնները նորանով բացարեց, որ ինքը արդէն շատ պարտականութիւններ ունի կատարելու օրինակելի գպրոցի վերաբերութեամբ:

Այդ խօսքերը մի քանի անգամ կրկնուելուց յետոյ տողերիս գրովը բաղտաւորապէս թէ տարաբաղտարար՝ հարցը պարզելու համար ասաց. «Որքան ինձ յայտնի է, անցեալ նիստում պ. Մանդինեանցի անելիքը օրինակելի գպրոցի վերաբերութեամբ միայն նորանով սահմանափակեցինք, որ նա այդ գպրոցի երեք բաժանման համար ևս՝ իրան այդ գործում մասնակցել և օգնել ցանկացողների հետ աշակերտներ ընտրէ. որովհետեւ, երբ այդ նպատակի համար արդէն որոշուեցաւ հինգ հոգուց բաղկացած մի մասնախումբ ընտրել նոյն իսկ այդ մասնախմբի վերայ էլ ժողովը լոկ աշակերտներ ընտրելու պարտականութիւնը գրեց»:

Պ. ՄԱՆԴԻՆԵԱՆՑԼ պատասխանեց. «Ո՛չ, պարոններ, ընդհակառակը ես կարծում եմ որ ժողովը ինձ զեկալար է ընտրել և լիսկատար իրաւունք է տուել որ ինչպէս ուղենամ ամէն գործ այնպէս կատարեմ օրինակելի գպրոցի վերաբերութեամբ»:

Այս կետում ժողովը երկու մասի բաժանուեցաւ: Մի մասը նորան ուրիշ ո՞չ մի իրաւունք տուած չէր համարում: միւսը նորան զեկալար էր ընդունել. բայց, ինչպէս երկում էր, այդ երկրորդ մասին իրան էլ յայտնի չէր թէ ինչ իրաւունքներ ու պարտականութիւններ էին հասկացուում այդ «զեկալար» խօսքով:

Իսկ պ. Մանդինեանցը կրկնեց. «Ես դարձեալ պնդում

եմ որ ժողովը ինձ լիակատար իրաւունք է տուել և այս էլ կ'ասեմ, որ ես միայն այն պայմանով կը համաձայնեմ զեկավորի պաշտօնը ընդունելու, որ ժողովը ինձ լիակատար իրաւունք տայ. հակառակ գեպքում ես թողնում եմ զեկավարի պաշտօնը: Պարզ նկատում էր որ այդ քաղաքավարութեամբ արտայայտուած սպառնալիքը առաջ էր գալիս ժողովի առ ինքն ունեցած համակրութիւնից և յարգանքից:

Դուրս եկան անձինք, որոնք ցանկանում էին իմանալ թէ պ. Մանդինեանցը ինչ է հասկանում լիակատար իրաւունք ասելով. Իսկ նա ամբողջ  $1\frac{1}{2}$  ժամ՝ յամառութեամբ անդըրդուելի մնաց իւր ասածի մէջ, աւելացնելով որ ինքը երբէք չի ասի թէ ինչ է հասկանում լիակատար իրաւունք խօսքերով. Շատերը իրանց կողմից բացատրեցին թէ ինչ են հասկանում զեկավար կամ լիակատար իրաւունք ասելով. և ցայց էին տալիս, որ նոքա երբէք պ. Մանդինեանցին լիակատար իրաւունք չեն տուել և չեն ել տալիս, որ նա ինչպէս կամենայ՝ ամէն հարց այնպէս վճռէ. այլ որ զեկավար ասելով հասկանում են պարապմանց մէջ կարդ ու կանոն պահպանելու և խօսքի իրաւունք տալու պաշտօնը: Ուրիշ չ'չեն:

Աերջապէս, երբ ժողովը հազար անգամ պահանջեց որ պ. Մանդինեանցը բացատրէ թէ ինչ է հասկանում այդ բազմապարունակ խօսքերով և կամ ո՞րոնք են իւր պահանջնը. — պարոնը կրկին դիմեց ժողովին այսպէս. «Պարոններ, ես խնդրում եմ որ պատասխանէք. ինձ լիակատար իրաւունք տալիս էք, թէ ո՞չ»:

Մեծամասնութիւնը անձարացած, առանց երկար մտածելու, տուեց նորան այդ փափաքելի ու փառաւոր լիակատար իրաւունքը. «Յոյս ունեմ պարոններ, ասաց լիակատար իրաւունքի տէրը, որ ինձ կը հաւատաք որ ես երբէք ի չարը չեմ գործ դնի ժողովի տուած իրաւունքը և չեմ բռնանայ ժողովի վերայ»: Աստուած տաշ, որ սխալուած չլինենք:

«Իստը մի քանի բռպէով ընդհատելուց յետոյ՝ պ. ԲԱՐ-ԽՈՒԹԵՐԵԱՆՑ կարգաց մի նոր ստացուած հեռագիր, որ ուղարկել էր Պ. ՊԵՐՊԵՐԵԱՆՑ կ. Պոլսում մի հացկերութիւն:

Ներկայ եղող ուսուցիչների կողմից: Հեռագիրը ծափահարութեամբ ընդունուեցաւ: — Ապա Պ. ԲԱՐ-ԽՈՒԹԵՐԵԱՆՑ հարցրեց, արգեօք ժողովը կը կամենայ պատասխանել, և մենքը համաձայնութիւն յայտնեցին: Եւ ինչ բանի համաձայնեցան. որ 200 ուսուցչեց բաղկացած մի պատկառելի ժողով պատասխանէ 2—3 հոգուց բաղկացած ուսուցիչների՝ թէ՝ այն պատճառով ի հարկէ, որ նոքա ուսուցիչ և հեռագրելու չափ բարեսիրու մարդիկ են, և թէ այն պատճառով որ հեռագիրը կ. Պոլսից էր ստացուած:

Նիստը վերջացաւ, և որոշուեցաւ, որ երեկոյին կարգացուի կ. Յանձնաժողովի պատրաստած ծրագրերի յառաջարանը:

Ներկայ էին 160 ուսուցիչներ:

Ք.

Երես:

Այս անգամ սաստիկ մեծ բազմութիւն կար: Այս միայն գահին նստելու տեղ չկար, այլ և դուրսը, պատշգամբումը շարժուելն անկարելի էր:

Նախագահ Պ. ԲԱՐ-ԽՈՒԹԵՐԵԱՆՑ յայտնեց որ, ինչ պէս առաւօտը խօստացուել էր, այժմ պէտք է կարգացուեր ծրագրերի յառաջարանը, որի մէջ որոշուած էր թէ՝ մեր զրպոցների, մանաւանդ ծխական—գիւղական գպրոցների ունենալիք ուղղութիւնը և թէ աւանդելի առարկաների չափը: և յետոյ այդ պէտք է վիճարանութեանց ենթարկուեր: «Բայց, աւելացրեց պարոնը, Յառաջարանը կարգալուց առաջ՝ պ. Պ. Մանդինեանցը ցանկանում է կարգալ Ազգայինութեան տարրը ուսումնարանում» բնարանի վերայ»:

Պ. ՄԱՆԴԻՆԵԱՆՑ բարձրացաւ ամբոնը: Բայց փոխանակ պահպանէի, անմիջապէս իւր յանձն առած խնդրի վերայ խօսելու՝ չգիտենք, ինչո՛ւ նա մի քանի կողմանէի և իւր խօսելու առարկայի հետ ամենեին կապ չունեցող կետերի վերայ սկսեց խօսել: — Օրինակ, շնորհակալութիւն էր անում ժողովը:

Ղովին որ իրան ատենապետ ընտրեց և լիակատար իրաւունք տուեց. յայտնում էր, որ առհասարակ ժողովում խօսողների թիւը շատ աննշան է. հաղիւ 4—5 հոգի են խօսում: «Ցանկալի էր, ասում էր, որ ո՛չ թէ լսողների, այլ խօսողների թիւը շատ լինէր»: Բացատրում էր, որ ամենքը ընկերներ են և միմեանց հաւասար. ինչո՞ւ միւսները իրանց ընկերներին իրանցից բարձր են դասում: և իրանց նուաստացնում: Խօսում էր այն բանի մասին, որ այստեղ ուսուցիչները եկել են թէ՝ քննուելու և թէ քննուելու. յայտնում էր որ ինքը ո՛չ մի կերպով չե կարող բոնանալ ժողովի վերայ, և ային և այլն:

Սորանից յետոյ դարձաւ բուն խնդրին. այսինքն թէ՝ մանկավարժութեան ներկայ պահանջներին համապատասխան՝ ազգային տարրը, ազգայինութեան դաշտափարը ինչպէս պէտք է զարդացուի ուսումնարաններում: Նա խօսեց առհասարակ մայրենի լեզուի նշանակութեան և նորա խաղալիք դերի մասին մարդուս զարդացման գործում: Նիւթն ըստ ամենայնի պաշտամուր էր այդպիսի մի ժողովի ձեռնարկած գործին նախարան լինելու համար: Բայց, եթէ իւր երկար ու ձիգ խօսքերով պ. դասախոսը չկարողացաւ մի ամիոփ դաշտափար տալ նորա մասին իւր ուշադիր ունկնդիրներին, դորա պատճառը, մեր կարծիքով, այն էր, որ պ. Մանդինեանցը չե նախապատրաստուել դորա համար: Մտքերի սաստիկ ընդլայնումը և առհասարակ թուիչքներ անելը այն աստիճան արգելք էին լինում նորա իմաստալից դասախոսութեան բուն, էական մասունքը ըմբունելուն, որ լսողը անհամբերութեամբ եղրակացութեանց էր սպասում:

Խօսք չկայ, որ նորա ասածները ընդհանրապէս ճշմարտութիւններ էին. թէպէտ կային և բաւական վիճելի կետեր: Ընդդիմախօսել ցանկացողներ եղան. բայց այդ թողնուեցաւ միւս անդամուան: Պ. Մանդինեանցը շատ երկար խօսեց: Արդէն նա 50 րոպէտ խօսել էր, երբ պ. նախագահը խնդրեց, որ ընդհատէ: Բայց որովհետև լսողների մեծ մասը ցանկութիւն յայտնեցին շարունակութիւնը իմանալու, ուստի և պ. Մանդինեանցը շարունակեց իւր խօսքը: Զպէտք էր մոռանալ, որ նախինթաց երեկոյին Կ. Յանձնաժողովի կողմից ծանուցուե-

ցաւ ժողովին որ այդ օրից միշտ նշանակուած ժամին պէտք է դալ հաւաքուիլ և ճիշդ նշանակուած ժամին ու րոպէին պէտք է փակուի նիստը, թէկուզ խօսքը բերանում կիսատ մնայ: Սակայն, արդէն 7 ժ. 50 րոպէն էր, ուրեմն միայն 10 րոպէտ ժամանակ էր մնում: այդուամենայնիւ գեռ ևս ո՛չ միայն Յառաջարանը չէր կարդացուել այլ և պ. Մանդինեանցը չէր վերջացրել իւր խօսքերը, որ նա ամբողջ երեսներով նշանակած ուներ իւր ձեռքին բռնած յիշատակարանի մէջ: Ի հարկէ, նորա խօսքերի վերայ մի ամիոփ ու որոշ գաղափար կազմելու համար հարկաւոր էր որ նա լրացնէր իւր խօսքերը մնացած 10 րոպէում: ինչպէս և առաջարկուեցաւ մի ժողովականի կողմից: Բայց, արդէն սկսուեցաւ Յառաջարանի ընթերցումը:

Միայն, կարգալուց առաջ Կ. Յանձնաժողովի ՔԱՐՏՈՒ-  
ՂԱՐՄ մանրամասնօրէն նկարագրեց ժողովին այն ամէն գժուա-  
րութիւնները, որոնց հանդիպել էր Յանձնաժողովը: ցցց էր  
տալիս իրանց ծանր դրութիւնը ամէն մասամբ անյաջող հան-  
գամանքների մէջ: Այդ պատճառով էլ պարոնը ինդրում էր  
ժողովին, որ նա այդ ծրագիրը ո՛չ թէ մի ընտիր ու հաւա-  
քական ոյթերով մշակած ծրագիր համարէ, այլ իրեւ Ընդ-  
հանուր ժողովի պարապմանցը օժանդակիւ միջոց, որ կ'ունե-  
նայ իւր պակասաւոր կողմերն էլ:

Նախագահ պ. Բարինուգարեանցը առաջարկեց ժողո-  
վին, որ թղթի կտորների վերայ նշանակեն իրանց նկատողու-  
թիւնները՝ հետևեալ անդամ նոցա մասին վիճարաննելու հա-  
մար: Ապա պ. քարտուղարը կարգաց Յառաջարանը:

Դորանից յետոյ նախագահից իրաւունք խնդրուեցաւ պ.  
Մանդինեանցի ճառի մասին վիճարաննելու համար. բայց նա  
արդէն նիստը փակուած համարելով չուզեց գործը շարունա-  
կել և թողեց հետևեալ անդամուան: Եւ, որովհետև խօսել  
ցանկացողը Պ. Ա. ՍՊԱՆԴԱՐԵՍՆՅԱՆ էր: — ժողովականներից  
ոմանց քաղաքավարութեանը նպյեցէք, — սկսեցին սաստիկ սու-  
լել: Ի՞նչ մեծ բաւականութիւն: Եւ, ո՞ւր պէտք է տանի ար-  
գեօք այդ արարքը մի այսպիսի պատկառելի ժողովի: — Դորա  
առիթով մեծ աղմուկ բարձրացաւ:

Արոշուեցաւ որ հետեւեալ առաւօտը ներկայ լինեն միայն  
պարապելու համար իրանց անունները գրել տուած անձինք:  
Այս անդամ ներկայ էին 143 ուսուցիչ:

## Բ.

Օգոստոսի 24.

Առաջաւ.

Ժողովի դաշլիճում դարսած էին գրասեղաններ աշա-  
կերտների համար: Հաւաքուեցան դասատու ուսուցիչները:  
Սկզբում խօսակցութիւն բացուեցաւ այն բանի մասին թէ՝  
որովհետեւ մի քանի առարկաներից օրինակ՝ թուաբանութիւ-  
նից շատերը կան պարապելու ցանկութիւն յայտնող՝ կամ  
ոմանք ուղում են մի բաժանմունքի ոմանք երկու կամ երեք  
բաժանմունքի հետ միասին, — ի՞նչպէս արդեօք պէտք է կա-  
նոնաւորել այդ գործը: Յետոյ, բանը շատ չերկարացնելու հա-  
մար, առաջարկուեցաւ Պ. ՄԱՆԴԻՆԵՍՆՑԻՆ որ առաջին  
օրինակը ինքը տայ և պարապի: Ժողովը այդ խնդրեց պ. Ման-  
դինեանցից և նա յանձն առնելով իսկոյն բերեց երկու բա-  
ժանմունքի աշակերտներ, և նստեցրեց իրանց տեղերն ու  
սկսեց պարապել:

Աշակերտների մէջ կային նաև 5—6 տարեկան երեխա-  
ներ: Անմեղ մանուկներ, ովք գիտէ, ի՞նչպիսի մարդիկ պէտք է  
դառնաք ժամանակով. դուք, որ Ռուսաստանի Հայոց Առա-  
ջին Ընդհանուր Ուսուցչական ժողովի պարապման առաջին  
օրը նստած էք այդտեղ:

Պ. Մանդինեանցը երկու բաժանմունքի հետ ևս պարա-  
պելուց յետոյ՝ արձակեց աշակերտներին: Յետոյ միջոց տրուե-  
ցաւ: Ուսուցիչները, որոնց պ. Մանդինեանցը կանխապէս ոչինչ  
բացարութիւն չէր տռւել իւր պարապմունքի մասին, շատ  
էին զարմացել և առհասարակ տժողի էին նորա պարապմուն-

քից: Բայց, ի հարկէ, այդ տժողութիւնը անտեղի էր, ո՛չ  
լաւ, ո՛չ վատ կարելի էր ասել քանի որ դեռ նոցա յայտնի  
չէր թէ ինչ էր ուղում ցցց տալ նա իւր պարապմունքով:

Յետոյ ամենքը ներս հրաւիրուեցան: Գրուեցան նոցա  
անունները՝ որոնք ցանկութիւն յայտնեցին նկատողութիւն  
անելու պ. դասատուին: Որովհետեւ խօսողներից ոմանք կար-  
գապահչութեան վերաբերութեամբ ևս մանրակրկիտ նկատո-  
ղութիւններ էին արել ուստի ամենքի նկատողութիւնները  
լսելուց յետոյ՝ հարց առաջարկուեցաւ թէ արդեօք միայն պա-  
րապման ներքին բովանդակութեան վերայ պէտք է ուշադրու-  
թիւն գարձնել թէ ինչպէս ներքին, այնպէս և արտաքին կող-  
մերը պէտք է ի նկատի ունենալ: Դորա մասին երկար վիճա-  
բանելուց յետոյ՝ ձայների առաւելութեամբ վճռուեցաւ, որ  
գլխաւորապէս ներքին բովանդակութեան վերայ ուշադրու-  
թիւն դարձնուի: Սորանից յետոյ պ. Մանդինեանցը տուեց  
իւր պատասխանները նկատողութիւն անողներին և նիստը  
փակուեցաւ առանց որեկից ընդդիմախօսութիւն լսելու:

Ապա պ. Մանդինեանցը յայտնեց, որ հետեւեալ առա-  
ւուը պ. Կարապետ Թեմուրազեանցը պարապելու է թուաբա-  
նութիւնով:

Ներկայ էին 83 ուսուցիչ որոնց մէջ այս անդամ կար  
նաև մանկավարժ Առաքել Բահամերեանցը:

## Բ.

Երեխա.

Այս անդամ աւելի մեծ բազմութիւն, քան թէ նախըն-  
թաց երեկոյին, լցրել էր դաշլիճը, պատշգամբը և գաւիթը:  
Որովհետեւ մի որոշ եղբակացութեան հասնելու համար պէտք  
էր վիճաբաննել ծրագրերի Յառաջարանի էական կետերի մա-  
սին, այսինքն մեր ծխական դպրոցների նպատակի և ուղղու-  
թեան վերայ ուստի նստի սկզբումը Պ. ԽԱԽԱԳԱՀԸ առա-

ջարկեց ժողովին արդեօք ի՞նչպէս կը կամենայ՝ կրկին ամբողջութեամբ կարդալ Յառաջարանը, թէ մաս առ մաս և իւրաքանչեւր մասը առանձնապէս քննութեան ենթարկել:

Ոմանք կրկին կարդալը ձանձրալի էին համարում, ոմանք՝ շատ կարեոր: Որոշուեցաւ, որ կրկին անգամ կարդացուի: Ժողովականներից մէկը՝ Պ. ՀԱՅԻՒՄՌՉՈՒՄ ՍՌԵՔԵԼԵԱՆՑԸ ամբիոն բարձրանալով յայտնեց ժողովին, որ ինքը ծրագրեամբին մի գրուածք (ըեփերատ, référément) է ներկայացրել և. Յանձնաժողովին, որ և  $\frac{1}{4}$  ժամ տալով նորան որոշել է միայն նորամի մասը կարդալ:

Պարոնը իւր խօսքերի մէջ ասաց որ՝ «Ծրագրերի Յառաջարանի մէջ յայտնի սահմաններով չէ որոշուած նպատակը և ուղղութիւնը. և ինքը իւր կողմից առաջարկումէր իւր կարծիքը. նա ասաց որ՝ «Նախ պէտք է քննել ժողովրդի ներկայ դրութիւնը և նորա պահանջները, ապա ըստ այնմ կազմել ծրագիրը»: Խոկ ինքը քննելով մէր ծխական դպրոցների ուղղութիւնը, ասում էր, որ՝ «Աշակերտը ծխական ուսումնարանից մի օտար միջնակարգ կամ բարձր ուսումնարան մտնելուց յետոյ կորած ոյժ է համարեւում իւր գիւղի հասարակութեան համար: Պէտք է դորա առաջն առնել: Նա յայտնեց որ՝ «Գիւղական ուսումնարանները ժողովրդի համար հարստահարիչներ են պատրաստում. որովհետեւ գիւղացի տղան թողնելով գիւղական պարապմունքը՝ ուսում առնելուց յետոյ իւր ձեռք բերած ուսումը գործ է դնում նեղ, շահասիրական նպատակներին նպաստելու համար»: Նա յայտնում էր նոյնպէս որ՝ «Գրագիտութիւնը շատ վեաներ է արտադրում: Եւ, վերջանելով իւր երկար և մի և նոյն միտքը հազար անգամ կրկնող խօսքերը՝ պարոնը իւր կարծիքը այսպէս էր ձեւակերպում. «Աշակերտներին կեանքի համար պէտք է պատրաստել»:

ԲԱՀԱԹԻԵԱՆՑԸ իբրև Յանձնաժողովի անգամ, ասաց որ ընդհակառակն նպատակը շատ պարզ է գրուած Յառաջարանում: Այնտեղ գրուած է որ մէր ծխական դպրոցների նպատակն է «Մանուկին բարոյական-կրօնական կրթութիւն և ընդհանուր զարգացում տալ»: Եւ, որովհետեւ դորա մասին երկար

վիճարանութիւններ տեղի ունեցան, ուստի կրկին Բահամբը բանցը այդ ընդհանուր և, ինչպէս շատերը ասում էին, առածքական խօսքերի իմաստը այսպէս բացատրեց թէ՝ «Ծրագրի մէջ որոշ ասուած է և, երբ ծրագիրը կը կարդացուի: պարզ կ'իմացուի թէ ի՞նչ է ուղղում հասկանալ Յանձնաժողովը վերցիշեալ միթին խօսքերով, ինչպէս ոմանք կարծում են»:

Եյս պատճառով և. Յանձնաժողովի քարտուղարը կը կին անգամ կարդաց Յառաջարանը, ինչ վերաբերում է պ. Առաքելեանցը խօսքերին, նա ո՞չ մի նոր միտք չյայտնեց, ի հարկէ. որովհետեւ Յառաջարանի մի քանի կտորներում պարզապէս որոշուած էր նորա ուղղութիւնը, այն է կեանքի համար մարդիկ պատրաստելու, ինչպէս ցանկանում էր ինքը պ. Առաքելեանցը:

Յառաջարանի ընթերցումից յետոյ ամբիոն բարձրացաւ Պ. ԳԱԲՐԻԵԼ ԽԱՏՏՈՒԵԱՆՑԸ և ասաց որ՝ «Բարոյական կը թութիւն աղգային հոգով և ընդհանուր զարգացում» անհասկանալի բառեր են: Նա յիշեցնելով ժողովին իւր «Մանկավարժական խօսքածութիւններ», անունով նոր լցու տեսած գրքով՝ հարկաւոր համարեց իբրև թէ մի նոր նպատակ դրնել իւր կողմից: Նա ասում էր. «Առաջ պէտք է իմանանք թէ՝ որ գասակարգի երեխաններ են այցելում մէր ծխական դպրոցները, որ շրջանից են գուրս գալիս և ուսումը աւարտելուց յետոյ որ շրջանն են մտնում: Եթէ մենք այդ կ'որոշենք, այն ժամանակ ծրագիրը ինքն ըստ ինքեան որոշուած կը լինի»: Պարոնը ասում էր. «Ուսումնարանի նպատակը պէտք է լինի այնպիսի կրթութիւն տալ մանկանը» որ նա ուսումը աւարտելուց յետոյ որ շրջանից եկել է կրկին նոյն շրջանը վերադառնայ և նորան ծառայէ: Միայն, որ նա իւր հօրից աւելի կրթուած գիւղացի, երկրագործ, այգեպան կամ վաճառական լինի»:

«Նորանից յետոյ խօսեց Յանձնաժողովի անգամ Պ. ՅԱԿՈԲ ՏԵՐ ՅԱՎԱՀԱՆՆԻՍԵԱՆՑԸ և շատ պարզ կերպով մի առ մի բացատրեց թէ ի՞նչ է նշանակում «Բարոյական կրթութիւն», աղգային հոգի և ընդհանուր զարգացում»: Նա ասաց. «Բար ոյ ական կը թութիւն ասելով ես հասկանում եմ»

Քրիստոսի վարդապետած Աւետարանը: Եթէ մեր երեխային դաստիարակենք այն սկզբունքի համաձայն, որի վերայ հիմնուած է աւետարանական վարդապետութիւնը, մենք կ'ունենանք բարյական մարդ: Աղքային հօգով կրթել նշանակում է՝ կրթել նորան այնպէս, ինչպէս ցցց է տալիսմեր աղդային պատմութիւնը. և ընդհանուր զարգացում տալ նշանակում է՝ նորան մարդ շնել ճշմարիտ մարդ, որ՝ ինչ արհեստի մէջ ևս լինի, միշտ լինի ճշմարիտ մարդ:

Պ. ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵՍՆՅԱՅԼ, որ նշյալքս Յանձնաժողովի անդամ էր, ասաց. «Որովհետև մեր ժամանակներում բարյականութիւնը և կրօնն ու ազգութիւնը մէկը այսպէս է հասկանում: միւսը այնպէս, ինչոր մէկի համար աղդային է, այն միւսի համար հակազդային է. ինչոր մէկի համար բարյական է, այն միւսի համար անբարյական է: — և որովհետև այստեղ ժողովուած են մեր գաւառացի ուսուցիչները որոնք տեղական ոյժերն ու մտքերի առաջնորդներն են համարւում ամէն հասարակութեան մէջ, և որոնք միշտ կարդում են մամուլի մէջ արծարծուած այս կամ այն հարցերը: — ուստի հարկաւոր է որ այդ բաների վերայ աւելի խորին կերպով ուշադրութիւն դարձնուի: Դորա համար ես իմ կողմից հարկաւոր եմ՝ համարում աւելացնել պ. Տ. Յովհանիսեանցի բացատրութեանը հետևեալ խօսքերը. «Բարյականութիւն ասելով մենք հայերս հասկանում ենք այն վարդապետութիւնը, որ վարդապետել է Քրիստոս մեր եկեղեցական հարց բերանով, ազգային հօգի, ինչպէս մեր պատմութիւնը մեղ աւանդել է և վերջապէս ընդհանուր զարդացման նպատակը ո՛ւ թէ մեր որդքերանցից ճշմարիտ մարդ պատրաստելն է, այլ հայ մարդ պատրաստելը»:

Պ. ՍԱՐԳԻՍ ԲԵԿԱՆԱԶԱՐԵՍՆՅԱՅԼ ասաց. «Մարդս ունի գլուխ, սիրտ և ստամոքս: Մենք պէտք է աշխատենք նորագլխի մէջը խելք գնել՝ կրթել զարդացնել նորա միտքը: — այդ կը լինի նորա ընդհանուր կրթութիւնը: Մենք կրթելով նորա սիրտը, նորա զգացմունքները՝ նորան շնուրմ ենք բարյական մարդ: Վերջապէս միջոց տալով նորան իւր ստամոքսի պա-

սիրտը, նորա զգացմունքները՝ նորան շինում ենք բարյական մարդ: Վերջապէս միջոց տալով նորան իւր ստամոքսի պահանջներին բաւականութիւն տալու՝ կրթում ենք նորան ֆիզիկապէս: Այսպէս ուրեմն, մենք պէտք է կրթենք նորան ֆիզիկապէս, բարյապէս և մտաւորապէս: Այդ կը լինի նորա ընդհանուր զարդացումը: — Պարոնը բաւական համարելով այդքանը հարցը պարզելու համար՝ իջաւ ամբիոնից:

Այդուամենայնիւ հարցը մնաց անորոշ և յետաձգուեցաւ յաջորդ անգամուան:

Պ. Մանդինեանցը հարցրեց ժողովին. «Երդեօք լաւ չէ՞ր ինի որ գիւղական ուսուցիչների կարծիքները ևս լսուեն այս Ընդհանուր Ժողովում: Ամենքը համաձայնեցան:

Ժամի 9½-ին նիստը փակուեցաւ: Թէպէտ պ. Երիցեանցը երկու օր առաջ յայտնեց, որ այն օրից անպատճառ նիստը ճիշտ ժամի 6ին կը սկսուի և 8ին կը վերջանայ, այնպէս որ ժամանակը լրանալիս խօսողի խօսքերն էլ իսկոյն պէտք է ընդհատուին: — այդուամենայնիւ ամէն անդամ երևում է, որ այդ ժամուցումը ամենենին չէ կատարում: այլ ժամանակից 1-2 ժամ էլ ուշ է վերջանում:

Ներկայ էին 152 ուսուցիչ:

Ժ.

Օգոստոսի 25.

Առաջարկ:

Այսօր Պ. ԿԱՐԵՊԵՏ ԹԵՄՈՒՄԱԶԵԱՆՅԱՅԼ պէտք է պարապէր թուարանութիւնով: Պարոնը գասից առաջ, աշակերտների ներկայութեամբ սկսեց երկար ու բարակ բացատրութիւն տալ իւր պարապման մասին: Նա շատ անտեղի և գործին չվերաբերող մոքեր յայտնեց, բայց պ. Մանդինեանցը և Ժողովը թոյլ չտուին շարունակելու: Միայն հարկաւորը նորա խօսքերից պահանջութէ ու թէ՝ թէպէտ ինքը ցանկալու 4

Նում էր միայն առաջին տարուայ աշակերտների հետ պարապելու բայց որովհետև ցանկանում են որ մի և նոյն ժամանակ ներկայ լինեն նաև երկրորդ տարուայ աշակերտները, ուստի նոցա մի պարապմունք կը տայ և կը պարապի զլիսաւորապէս առաջին տարուայ աշակերտների հետ:

Ապա նա մոտաւ դասատուն, այսինքն դիմեց իւր առաջելը նստոտած աշակերտներին։ Բայց դորանից էլ առաջ նա հարցըրեց այն աշակերտների ուսուցչին թէ արդեօք ինչ աստիճանի զարգացման տէր են նոքա։ Ելդ թոյլ չորուեցաւ նորան, և նա ուղղակի ձեռնամուլի եղաւ գործին։

Պ. Թեմուրազեանցի պարապման ժամանակ ժողովականք  
առհասարակ նորա՝ միևնոյն բանը շատ անդամ կրկնելուց  
ձանձրանալով՝ սրտնելութեան նշաններ էին ցոյց տալիս։ Թէ-  
պէտք զեկավար պ. Մանդինեանցը հանդարտութիւն պահպա-  
նել տուեց Ժողովին, բայց ժողովականք դարձեալ շարունա-  
կեցին իրանց տրտունչը արտայայտել։ Ըստով պ. Մանդի-  
նեանցը յայտնեց դաս պարապողին որ ժամանակ է դասը վեր-  
ջացնել։ Բայց տողերիս գրողը յիշեցնելով նորան և ժո-  
ղովականներին, որ պ. դասատուն Օից 10 ըովէ անց էր սկսել  
դասը, և հետեապէս 50 ըովէ պարապելու համար մնում էր  
դեռ ևս մի քառորդ ժամ։ ասաց որ պ. Թեմուրազեանցը իրա-  
ւունք ունի գեռ էլի մի քառորդ ժամ պարապելու։

Լրացաւ ժամանակը՝ դասը վերջացաւ։ Աշակերտները  
դուրս գնացին և մի քանի րոպէ հանգստանալուց յետոյ՝ կըր-  
փին նիստը բացուեցաւ դասատուութեան մասին նկատողու-  
թիւններ անելու համար։ Պ. ՄԱՆԻՒՆԵՍՆՅՑ յայտնեց, որ  
արդէն 8 հոգի գրել են տուել իրանց անունները, և կամե-  
նում էր իմանալ թէ ելի ո՞վ գրեր են ցանկանում խօսել։ Տո-  
ղերի ս գրողը նկատեց, որ պ. Մանդինեանցը նիստը սկսե-  
լուց առաջ՝ դուրսը չպէտք է ցուցակ ագրէր խօսելու  
ցանկութիւն յայտնող անձանց անունները. այլ ըստ սովորու-  
թեան պէտք է նստի սկզբումը գրէր։ Սորան Պ. ԲԵԿԻՆԸ. ՁԱ-  
ՐԵՆՅՑ պատասխանեց որ՝ ինքը գրուղների մէջ առաջին  
տեղը տալիս է առղերիս գրողին։ Եւ դորան ստացաւ այսպիսի  
պատասխան։ «Ես այս ասելով ոչ թէ մեծ ցանկութիւն եմ»

յայտնում բոլոր ցուցակագրուած անձանց գլխին գրուելու և անպատճառ ամենից առաջ նկատողութիւն անելու — այլ խօսում եմ միայն կարգը պահպանելու համար։ Յետոյ ուրիշ ցանկացողներ էլ որոնց թիւը՝ ինչպէս պ. Դեկավարը յայտնեց, 24-ի էր հասնում — յայտնեցին իրանց անունները։ Ապա սկսուեցան նկատողութիւնները։ Պէտք է ասել որ թէպէտ պ. Դեկավարը միշտ խնդրում էր, որ խօսողները աշխատեն չկրկնել արդէն արուած նկատողութիւնները։ այդուամենայնիւ շատ շատերը կրկնում էին, մի և նոյնը ի հարկէ, մեծ մասամբ մոռանալով որ իրանց ասելիքը, առաջւաց որի հներն ասել են։

Բոլոր խօսղների կարծիքը ընդհանրապէս հետևեալն էր՝  
որ պ. Թէմուրազեանցը իւր դասը աւանդում էր վերացական  
կերպով, այնպէս որ աշակերտները ոչինչ չէին կարողանում  
հասկանալ: Խոկ եթէ նոքա ասում էին, որ հասկացել են, ինքը  
ո՞չ մի միջոց չէր գործ դնում նոյն ասածը ստուգելու: Նա  
ո՞չ մի բանի մէջ հետևողականութիւն չէր պահպանում որ  
ունի իւր վասակար աղղեցութիւնը: Նա այնպիսի գիրք չէր  
բռնում, որ կարողանար ամբողջ դասատան ուշադրութիւնը  
իւր վերայ դարձնել: Նա չէր կարողանում հարցերը ձեակեր-  
պել: Նորա բերած օրինակները մանկանց շրջանից դուրս լի-  
նելով՝ շատ անտեղի էին: Նա մի ժամուայ մէջ սաստիկ մեծ  
պաշար կամեցաւ հաղորդել մանուկներին, որ բոլորովին ան-  
կարելի էր: Նա ո՞չ Գրուբէի և ո՞չ Հենչելի մեթոդը կարո-  
ղացաւ ներկայացնել, ինչպէս ինքը սկզբում ցանկութիւն  
յայտնեց. այլ մի տեսակ խառնուրդ շինեց, որ մէջ ամեն բան  
կար և այլն և այլն: Մի խօսքով նկատողութիւն անողներից  
զրեթէ չկային երկու հօգի, որ նորա պարապման մէջ մի  
երկու արժանաւոր կողմ դասած լինէին:

Իրեւ ապացոյց բերենք այստեղ մի քանի նկատողութիւն, որ առաջին անգամ արեց նորան տողերի ս գրողը՝ «Որևէիցէ զիբը քննադատելիս և առհասարակ ամեն դեպքում; երբ հարկաւորում է մի քննելի նիւթի մասին կարծիք յայտնել ես ամենից առաջ աշխատում եմ նորա արժանաւոր կողմերը գտնել և հրապարակ հանել ապա պահասաւոր կողմերը մատնացոյց անել: Նոյն դիմաւորութեամբ ես քայլ առ քայլ

Հետևում էի պ. Թեմուրավեանցի դասին և ինձ պարտականութիւն էի համարում նախ և առաջ ուրախութեամբ նորա արժանաւոր, օրինակելի կողմերը ցոյց տալ: Բայց, ցաւելով պէտք է ասեմ ո՛բքան աշխատեցի, չկարողացայ այդպիսի կողմեր գտնել: Գուցե պատճառը այն էր, որ դասը շատ խառնիշութ կերպով անցաւ: Ի՞նչ և իցէ, ես դարձեալ կ'անեմ մի քանի նկատողութիւն: —Պ. Թեմուրավեանցը շատ անորոշ հարցեր էր առաջարկում մանուկներին, օրինակ, «Ի՞նչ անասուն դժեքը, որ չորս բան ունենայ»: Կարող էր ասել. «Այս սեղանը քանի՞ ոտք ունի. սայլը քանի՞ անիւ ունի»: —Ասացե՛ք մի անասնի անուն, որ չորս ոտք ունենայ» և այլն: —Թէպէտ անհրաժեշտ պահանջ չէ որ ամէն ուսուցիչ լաւ նկարել գիտենայ) այսուամենայնիւ երբ ուսուցիչը ուզում է մի առարկայի պատկեր նկարել, գոնէ պէտք է աշխատի որ քիչ թէ շատ իւր նկարը ցանկացած առարկայի նմանութիւնը ունենայ: Խսկ պ. Թեմուրավեանցը կամենալով գրատախտակի վերայ մատանիներ նկարել՝ ձուաներ նկարեց: —Պ. Թեմուրավեանցը հարցնում էր, «Ո՞րքան է կ և զ»: Դա շատ վերացական է երեխայի համար: Կարող էր ասել. «Եթէ դու կ խընդոր ունենաս, ես էլ քեզ Զ խնձոր տամ քանի խնձոր կը դառնայ»: —Պարոնը հարցնում էր, «Մէկ անգամ մէկ րլիթ քանի րլիթ կը լինի»: Անհասկանալի է: «Անգամ, խօսքը մի այնպիսի վերացական գաղափար է, որ մանկան մտաւոր ոյժերին անմատչելի է: Որքան էլ ուղարկ էր՝ կրկնեցէք, այդուամենայնիւ առաջին տարուայ, այն էլ թուաբանութեան հետ նոր ծանօթացող երեխային չէք կարող հասկանալի կացուցանել ձեր միտքը: Նա միշտ այն կը մտածի որ «մէկ անգամ մէկ րլիթ» ասելով ուզում էր ասել «մէկ րլիթ և մէկ րլիթ»: —Խօսելով կիսի և չետուերտի վերայ, ի հարկէ, պարոնը ուղղակի առաջին դասում ուզում էր հասկացողութիւն կազմել տալ կոտորակի մասին: Բայց քառորդը դժուար հասկանալի է նորա համար: Նա տանը, կեանքում միայն կիսի վերայ ունի հասկացողութիւն: Ուստի, լաւ կը լինէր միայն կիսով գոյն մեալ: —Քերած օրինակները, պէտք է աշխատել, որ մանկական կեանքից, իրանց շրջանից լինեն: Խսկ պ. Թեմուրավեանցը

Հարցնում էր. «Սի թունդին քանի՞ չարէք ունի»: Կարծես ինքն ըստ ինքեան ենթադրում է, որ երեխայի հայրը նորան գինետնից գինի և առնել տալիս: Միթէ չէր կարելի նշյնը անել մի թղթի, մի փայտի կտորը չըրս հաւասար մասը բաժանելով: Ճողովականներից մէկն էլ ի հարկէ, անտեղի կերպով ձայն տուեց. «Եթէ պ. Թեմուրավեանցը պահանջում է, որ իւր աշակերտը գիտենայ թէ թունդին քանի՞ չարէք ունի»: —ուրեմն թո՞ղ այն էլ հարցնի էլ թէ. «Տրից ե գէ են քանի՞ ստաք ան ունի»: — Բայց որ գիտաւորն է, պ. Թեմուրավեանցը խոստացել էր օրինակելի դաս տալ. այն ինչ ժողովու իսկապէս ոչինչ օրինակելի բան չէր գտնում նորա պարապման մէջ: Ի հարկէ, եղան և շատ սխալ ու անտեղի նկատողութիւնների: Առհասարակ նկատողութիւնների մէջ առանձին աչքի էր ընկնութ Պ. Հ. Ա. Ա. Կ. Ա. Ս. Ե. Ա. Ն. Յ. թէպէտ շատ ընդարձակ, բայց լուրջ ու խելացի նկատողութիւնները որոնք ընդհանուր բնաւորութիւն ունենալով կարող էին ամեն պարապմանքի վերաբերիլ: Մի փոքր հանգստանալուց յետոյ՝ շուտով գործը շարունակուեցաւ: Եւ ուղղակի հարց ծագեցաւ թէ՝ արգեօք նկատողութիւններից յետոյ, երբ դասատուն էլ իւր պատասխանները տայ, ընդդիմախօսները դարձեալ կարող են խօսել թէ վերջին խօսքը դասատուին պէտք է տալ: Ժողովը երկաւսի քաժանուցաւ: Ումանք ցանկանում էին, որ ընդդիմախօսները դարձեալ իրաւունք ունենան պատասխանելու, ումանք ցանկանում էին, որ դասատուն լինէր վերջին պատասխանողը: Խսկ այդ երկու հակասութիւնները հաշտեցնելու համար առաջարկուեցաւ որ ընդդիմախօսները այլ ևս ոչինչ չպատասխանեն, այլ նոցա փօխանակ խօսի պ. Ա. եկավարը իւր եղբակացութիւնը անելով ընդդիմախօսների և դասատուի ասածներից: Այդ ձեւը, որ Պ. Ա. Գ. Ա. Յ. Յ. Ա. Վ. Հ. Ա. Ն. Յ. առաջարկեց, ընդունուեցաւ: թէպէտ շատ ընդդիմախօսների վերայ կարող էր ճնշում արտադրել, որովհետև, կարող էր պատահել որ դասատուն սխալ հասկացած լինէր իրան արուած նկատողութիւնները, և սխալ պատասխաններ տալ: —որ և պատահեցաւ իսկոյն: Սորանից յետոյ պ. Ա. եկավարը ինդրեց



Ոմանք ցանկանում էին, որ իրանց սյնպիսի ծրագիր տան որ կարողանայ բաւականութիւն տալ այդ պահանջներին: Ոմանք բոլորովին համաձայն էին կ. Յանձնաժողովի կազմած ծրագրի նպատակի չետ:

Միայն նոցանից՝ Պ. ՏԻԳՐԱՆ ՏԵՐ ԴԱՒԹԵԱՆՑԼ ակնարկելով նախընթաց գիշերուայ պ. Հ. Առաքելեանցի մի քանի խօսքերի վերայ, ասաց որ՝ «Գիւղական ուսումնարանները ամենին միրզաներ ու կեղեքիչներ չեն պատրաստում: Եթէ գիւղացու որդին գրագիր, վարժապետ, քահանայ չգառնայ, քաղաքացին կը գնայ գիւղը 50 ռուբլով գրագիր, 100 ռուբլով վարժապետ և մի քանի ծխով քահանայ դառնալու: Եթէ որեւէ թուղթ է գալիս լուրջու մօտ, նա գնումէ Զալալօղլի և այնտեղ թարգմանել է տալիս որ միտքը հասկանայ. որովհետեւ իւր տեղում ոռուերէն գիտեցող չկայ:—Մի խօսքով եթէ գիւղական ուսուցիչը մի բան ասաց, այն այս պարոնն ասաց: Առուցիչներից մէկն էլ՝ Պ. ԱՐՑԱԿ ՍԻՄԵՈՆԵԱՆՑԼ ասաց որ՝ «Գիւղական գրոցում պէտք է մոցնել տեղական պահանջներին համապատասխան պարագմունքներ՝ երկրագործութիւն, գիւղատնտեսութիւն, մետքսագործութիւն և այլն»:

Դուրս եկան յետոյ մի քանի գաւառական ուսուցիչներ, որոնք այնուամենայնիւ չփարողացան հարցը պարզել: Նոցանից մէկը՝ «Գործ ամսագրի խմբագիր պ. Ս. ՀԱԽՈՒՄԵԱՆՑԼ ասաց. «Գիւղական—ծխական ուսումնարաններին ոչինչ բարոյական—կրօնական կրթութիւն չէ հարկաւոր. և ո՛չ էլ հարկաւոր է յիշել «ազգային հոգով» բառերը: Այլ բաւական է ասել՝ գիտութիւն և յառաջադիմութիւն: Այստեղ հարկաւոր չէ որեւից մասնաւոր ձգտումն կամ աւելի գորեղ մտքով ասելու համար՝ որեւից տեն գենցի այ ունենալ»:

Ատենապետ Պ. Յ. ՏԻԳՐԱՆԵԱՆՑԼ ցոյց տալով այն գժուարութիւնները, որոնց նոյն իսկ եւրոպացիք հանդիպում են արհեստագիտական գպրոցներ հիմնելիս, և ակնարկելով մեր նիւթական միջոցների սղութեան և պատրաստի ուսուցիչներ չունենալու վերայ՝ բոլորովին անիրագործելի համարեց այդ պարագմունքների մեր գպրոցներում մտցնելը: Առանից յետոյ գարձեալ եղան խօսողներ, որոնցից Պ.

Հետո ԹԻՒՍԻԿԵԱՆՑԼ յայտնեց այն՝ որ ծրագրի մէջ նպատակը արտայայտող բառերը շատ լաւ են որոշուած. որովհետեւ ի՞նչ նոր բառ էլ աւելացնելու լինենք, գարձեալ առաջական կը լինի և այդպիսով չէ կարելի մաթեմաթիկական ճշութիւններին պահանջնել նպատակի սահմանը որոշող բառերից:

Եկրջապէս հարցը երկու նիստի քննութեան առարկայ շինելուց յետոյ բաւական պարզուած համարելով Պ. ՆԱԽՈՒԳԱՆՑԼ այսպիսի հարց գրեց. «Պարոններ, նպատակը պարզապէս որոշուած է թէ ոչ: Երբ ժողովը միաձայն պատասխանեց որ որոշուած է և նա կրկին հարցրեց. «Ուրեմն մնայ այն բառերով, որոնցով որոշուած է, թէ նոր խմբագրուի: Ֆողովը ընդունեց եղած խմբագրութիւնը. և գորանով նպատակի հարցը վերջնականապէս լուծուած համարուցաւ, Յետոյ պ. «Նախագահը հարցրեց. «Ծրագրի գլխաւոր սկզբունքներն էլ ծրագրի հետ միասին Յիհ մասնագողովի՝ քննութեանը յանձնելուն, թէ Ընդհանուր ժողովում քննուեն: Ժողովը վրձուեց Ընդհանուր ժողովում՝ քննել և նիստը վերջացաւ:

Պ. ԵՐԵՑԵԱՆՑԼ կ. Յանձնաժողովի կողմից յայտնեց որ՝ ժողովին մասնակցող օրիորդները համակրելով Ուսուցչական ժողովի նպատակին՝ ուսուցիչներին ձրի մուտք են առաջարկում Կովկասեան Թանգարանում (ՊԱՍԵԱՄ): Ժողովը ծափահարութեամբ ընդունեց, յայտնելով իւր շնորհակալութիւնը յարգելի օրիորդներին:

Պէտք է ասել որ առհասարակ ծափահարութիւնը շատ է աժանացել:

Աերկայ էին 143 ուսուցիչ:

## ԺԱՅ.

Օգոստոսի 26.

Այսօր օրինակելի գպրոցում աշակերտների տեղը նստեցան Յովնանեան Վարիամեան դպրոցի աշակերտուհիները: Պ. ԳՐԻԳՈՐ ԱՆԻԵԱՆՑԼ պարագեց ձեռագործով: — Նկատու

Ղութիւններ արին մի քանի վարժուհիններ և ուսուցիչներ։ Այդ նկատողութիւնները մօտաւորապէս հետեւելներն էին՝ պ. Անիեանցը փոխանակ ուղղակի գործով ցոյց տալու նստելու դիրքը, կտորը բռնելու և կարելու ձևը, պատմում էր միայն թէ ի՞նչպէս պէտք է անել այդ ամենը։ Պարոնը շուտ շուտ պահանջում էր որ աշակերտուհինները կրկնեն իւր պատմածները։ Եղան և շատ մանր մունք նկատողութիւններ։

Փողովականներից մէկը՝ Պ. ԱՂԱՍԻ ՄԵԼԻՔ-ԱՅՎԱ-ԶԵԱՆՑԸ, որ գերձակութեամբ պարապած անձն էր, բաւա-կան երկար խօսակցութեան մէջ ցոյց տուեց պ. դասատուի թերութիւնները։ Բայց, որ գլխաւորն է, պ. ընդդիմախօսը յի-շեց որ պ. դասատուն երեք կարեղոր կետի վերայ ուշադրու-թիւն չդարձրեց, այն է թէ՝ ի՞նչպէս պէտք է մատները ընտե-լացնել վարժել ասել գործ ածելու մէջ, ի՞նչպէս պէտք է սկսել կարը (ԹՈՅԵ)։

Փողովը պ. ՄԵԼԻՔ-ԱՂՎԱզեանցի նկատողութեանց հա-մար չնորհակալութիւն յայտնեց նորան։

Յետոյ սկսեց պատասխանել պ. Անիեանցը։ Իիշելով նախապէս որ ի՞նքը յարգելի վարժուհիններից աղնքան փոքր նկատողութեանց չեր սպասում։ Պարոնը ընդունեց մի քանի նկատողութիւններ։ Խօստովանեց որ սխալներից մի քանիսը առաջ եկան իւր շփոթուելուց։ Բայց չկարողացաւ մի որոշ բան ասել Պ. ԱՂԱՍԻ ՄԵԼԻՔ-ՄԵԼԱՆՑԻ այն հարցին թէ՝ «Ե՞րբ պէտք է սկսել ձեռագործը ուսումնարանում և ո՞րքան ժամանակ պէտք է տեկի»։

Պ. Անիեանցի համեստ և օրինաւոր պատասխանը առ-հասարակ լաւ տպաւորութիւն թողեց ունկնդիրների վերայ։ Էլ աւելորդ ենք համարում խօսել պ. Անիկավարի արած եղբա-կացութեանց մասին։

Դորանից յետոյ ատենապետ Պ. ՁԻԳԻԱՆԵԱՆՑԸ յայտ-նեց Փողովին որ հայ թատրոնական մշտական խմբի կարգա-դրութեամբ գերասան Պ. 2ՄԾԿԵԵՆՑԸ ուղարկել է Կ. Յանձ-նաժողովին այս երեկոյ տալիք ներկայացմանը մասնակցելու համար 50 ձրի տոմսակ։ Փողովը ծափաշարութեամբ յայտնեց իւր չնորհակալութիւնը։

Վերջապէս պ. Անիկավարը յայտնեց որ հետևեալ օրը կը գասախօսի Ա. Բահամբեանցը։ Ներկայ էին 172 ուսուցիչ։

## ԺԲ.

ԵՇԵՐՆ.

Պ. ՆԱԽԵՆԳԱՆՀԵԼ յայտնեց ժողովին, որ այժմ հօսուե-լու է Ծրագրի մի քանի գիխաւոր սկզբունքների մասին։ Յե-տոյ Կ. Յանձնաժողովի ՔԵՐՏՈՒՂԱՐԸ Ծրագրի առաջին կետի մասին հարկաւոր համարեց ծանուցանել ժողովին, որ՝ «Ծրա-գրում որոշուած է ծխական գպրոցների համար չորսամեայ-գրում որոշուած է ծխական գպրոցների համար չորսամեայ-գրում որոշուած է ծխական գպրոցների համար որոշուած է եօթնամեայ գասըն-թակային գպրոցների համար որոշուած է եօթնամեայ գասըն-թաց։ Առաջին երեք տարին տարբական ուսման համար։ Վեր-ջին երեք տարին միջին դասարանի ընթացքի և ամենավերջին՝ Կրդ տարին լրացուցիչ ուսման համար։ Խոկ գպրանցներում լինելու է բացի նախակրթարաններից՝ եօթը դասատուն»։

Հարցը դրուեցաւ ուղղակի ծխական գպրոցների մասին և յիշեցնելով որ ծրագրերում նոցա համար որոշուած է չունեցնելով որ ծրագրերում նոցա համար որոշուած է ծողով չորսամեայ գասընթաց, կամենում էին իմանալ թէ ծողով ի՞նչպէս է գտնում։ Եւ չորսամեայ ասելով պէտք էր այսպէս հասկանալ որ՝ կարող է լինել մի գասատուն մի ուսուցչով չորս։ Երեք կամ երկու բաժանմունքով ի՞նչպէս կը ներեն գիւղական գպրոցի նիւթական միջոցները։

Արդէն մի քանի անձինք համաձայնութիւն էին ցոյց տուել այդ որոշուունքին, երբ Պ. ԲԵԿԱՆԱԶԱՐԵԵՆՑԸ մի այսպիսի կարծիք յայտնեց թէ՝ «Ե՞նկատի ունենալով այն հանգամանքը որ գիւղերում ըստ մեծի մասին ուսումնական վեց ամիս է տևում»։

աշակերտների տնային ու դաշտային զբաղմունքների պատճառով և որ մեծ մասամբ գիւղական ուսումնարանները այն աստիճան չքաւոր են որ մի ուսուցչից աւելի չեն կարող պահել՝ աւելի լաւ կը լինի որ գիւղական ուսումնարանին վեցամետ դասընթաց տրուի. դպրոցը կ'ունենայ մի դասարան, մի ուսուցիչ որ կը պարապի երեք բաժանմունքի հետ ամէն բաժանմունքում երկու տարի մալով։

Երկար վիճաբանութիւնից յետոյ, նկատելով որ ոմանք Կ տարուայ ընթացք են ցանկանում, ոմանք՝ Յ, հարց դրուեցաւ, քուէարկուեցաւ և ընդունուեցաւ չորս տարուայ ընթացք թէ քաղաքային և թէ գիւղական Ծխական դպրոցի համար։

Յետոյ պ. Մանդինեանցը մի անգամ էլ յայտնեց Ժողովին որ հետեւեալ առաւօտը Բահաթրեանցը կը բացատրէ իւր մեթոդիկան և ապա նորա աշակերտներից մէկը կը պարապի հայոց լեզուով։ Արգէն ժամփ 87 էր, նիստը փակուեցաւ և ուսուցիչներից շատերը դիմեցին դէպի թատրոն։

Ներկայ էին 178 ուսուցիչ։

## ԺՊ.

Օգոստոսի 27.

Առաջ.

Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑԸ պէտք է դասախոսէր իւր մեթոդիկայի մասին։ Նա բարձրանալով ամբիոն, ասաց. «Առաջքան թէ կը խօսեմ ես թէ ի՞նչպէս պէտք է ուսուցանել» կը բացատրեմ մի քանի հոգերանական կետեր։ Իմ խօսքերի մէջ դուք յաճախ լսելու էք մտապատկեր կամ դիտողութիւնը բացարձիւն բառը. ուստի ես հարկաւոր եմ համարում բացարձը գորա նշանակութիւնը։

Նա ասաց որ՝ «Մտապատկերները կազմում են մեր զգա-

յարանքների միջնորդութեամբ» և որ՝ «Մտապատկերները միշտ կապուած են ներկայ առարկայի հետ»։ Յետոյ բացատրելով գաղաղական բառը ասաց որ՝ «Գաղափարը զանազան մտապատկերների մէջ եղած համանման յատկութեանց գումարն է»։ որ՝ «Կնեղանիները չեն կարող գաղափարը ունենալ», որ՝ «Գաղափար կազմելու համար բարձր աստիճանի մտաւոր զարգացում պէտք է ունենալ»։ որ՝ «Որքան զօրեղ է գաղափարը, այնքան աւելի կարող է աղդել կամքի վերայ», որ՝ «Զարգացման բարձրանալու հետ գաղափարները սկսում են հարստանալ»։ «Հոգերանութեան մէջ, ասաց, երկու տեսակ գաղափար կայ»։ Հոգեր բանական և տրամաբանական առաջական հանդաւութիւնն է։ Իսկ տրամաբանականը նոյնպէս երկու տեսակ է՝ անհատական կազմում է մի մտապատկերից, իսկ ընդհանուր գաղափարը բազմաթիւ համանման մտապատկերների մէջ եղած յատկութիւնն է։ Ամենաբարձր աստիճանի զարգացման գաղափարը տրամաբանական գաղափարն է։ Մի խօսքով՝ հոգերանական գաղափարը իտախուտ է, նա մեռնում է մարդուս հետ։ իսկ տրամաբանականը յաւիտենական է։

Այդ ընդհանուր առաջնորդող մաքերից յետոյ Բահաթրեանցը սկսեց մասնաւորել իւր խօսքերը, դառնալով այն հարցին թէ՝ ի՞նչպէս պէտք է ուսուցանել։

Նա ասաց որ՝ «Աւսուցման ժամանակ երկու գլխաւոր գործողութիւն է կատարւում։ Ուսուցման առաջին կէսը ի ըացուցումն է. երկրորդ կէսը՝ վերացուցումն։ Նոր նիւթը երեխան առաջ պէտք է իւրացուցանէ», որ յետոյ վերացուցանէ։ Իսկ իւրացուցման ընդունակութիւնը կախուած է երեխայի գիտակցութեան անձկութիւնից։ Որքան շատ նիւթ կարողանայ անդաւորուել նորա ուղեղի մէջ, այնքան նա լաւ կ'իւրացուցանէ։

Այդ բոլորը Բահաթրեանցի մեթոդիկայի բացատրութեան առաջին և գժուարբերունելի մասն էր, որովհետեւ գորանով նա միայն վերացական մոքեր էր հաղորդում իւր ունկնդիրներին։

Հէնց այդ մասումը Բահաթրեանցը բացատրում էր որ  
իւրացուցումն այն գործողութիւնն է, որով երեխան ոչ միայն  
պէտք է սեպհականի, կողնի իրան նոր նիւթը՝ այլ և պէտք է  
իւրացուցանէ: Այդ վերջին բառը աւելի ճիշտ է սահմանում  
գործողութեան չափն ու աստիճանը: Բայց, մեր կարծիքով՝  
Բահաթրեանցը այդ իւր գասախօսած նիւթը, —որ ժողովա-  
կանների ամենասուար բազմութեան, ամենամեծ մասի հա-  
մար բոլոր վեն նոր էր, —չկարողացաւ իւրացուցանել  
տալ: Խօսք չկայ որ՝ եթէ ունկնդիրները չկարողացան իւրա-  
ցուցանել, էլ ի՞նչպէս կարող էին վերացուցանել: Եւ մենք  
միշտ նոցա ստանակը օգուտներն ունենք ի նկատի: Մեր ամե-  
նիս ցանկութիւնն էլ այդ պէտք է լինի: Խսկապէս մանկա-  
վարժութեան իորհուրդն էլ նորա մէջ է կայանում: որ ման-  
կավարժը զիտենայ ում հետ գործ ունի և ի՞նչ միջոցնե-  
րով պէտք է իւրացուցանել տայ իւր մտքերը: Թէ նորա գա-  
սախօսութեան այդ առաջին մասից շատ քչերը բան հասկա-  
ցան: —այդ երւում էր նորանից, որ յետոյ շատ շատերը խոս-  
տովանում էին որ ոչինչ չհասկացան:

Դորանից յետոյ Բահաթրեանցը արդէն բուն խնդրին  
ձեռք տուեց, վերացականից իջաւ դէպի իրականը: Նա ասաց  
որ՝ «Նախ և առաջ երեխային աւանդելի նոր նիւթը բաժան-  
ում է զանազան մեծ ու փոքր մասների՝ հատածների և  
հատուածների: Այդ հատածների մշակումն մանկավար-  
ժ թեան մէջ աւում է յեթոդական միութիւննա: —  
Հասներով այստեղ, մի քանի րոպէ միջոց տրուեցաւ:

Ապա Բահաթրեանցը իւր խօսքը շարունակելով ասաց.  
«Երիխաններին նոր նիւթ տալուց առաջ ուսուցիչը պէտք է  
բացատրի իւր գասի պարապման նպատակը որպէս զի նոքա  
իրանց մտապատկերները հաւաքեն և բոլոր ուշադրութիւնը  
կենդրուացնեն նոր գասի վերայց: «Նպատակը, ասաց, շատ  
ճիշտ պէտք է որոշել. նիւթական ևս և ոչ ձեւականապէս:  
Նպատակը յայտնելուց յետոյ սկսում է ուսուցման առ ա-  
ջին աստիճանը՝ նորը լաւ ըմբռնել տալու համար նա-  
խ ապատք աստիճանը»:

Սորանից յետոյ նա խօսեց այն բանի մասին թէ ուսու-

ցիչը դեռ ևս տանը եղած ժամանակ ինչ նախապատրաստու-  
թիւններ ունի տեսնելու նոր գասի նկատմամբ:

«Նախապատրաստութիւնից յետոյ ասաց նա, գալիս է  
ուսուցման եր կրօրդ աստիճանը՝ յանդիման արա-  
րութիւնը՝ այսինքն նոր նիւթը երեխաններին յանդիման  
կացուցանելը, յանդիման առնելը: Բացատրելով թէ ի՞նչպէս  
պէտք է յանդիման կացուցանել նոր նիւթը, գասախօսը ասաց  
որ՝ «այդպիսով վերջացնելով իւրացուցումն, յետոյ պէտք է  
սկսուի գիս սպուտ ացի ունը աշակերտների մէջ՝ այսինքն  
գիտնական վեճաբանութիւնը՝ Այստեղ միւս աշա-  
կերտները, որոնք մինչև այդ րոպէն, ականջ էին զնում իրանց  
ընկերոջ պատմածին, սկսում են այժմ իրանց նկատողութիւն-  
ներն անել՝ վիճարանել: Ապա նոյն պատմող աշակերտը,  
երբ նոր նիւթը ամբողջ գասախօսնը իւրացրել է, մի անգամ  
էլ նորից անսխալ պատմում է, և գորանով վերջանում է  
գործողութեան առաջին կէսը՝ իւրացուցումն: — Այստեղ դար-  
ձեալ հանգիստ:

Աերջն անգամ իւր խօսքի թելը բունելով գասախօսը  
բացատրեց վերացուցման երկու աստիճանները: «Աերջացուցման  
առաջին աստիճանը՝ ասաց նա, կայանում է կապակցու-  
թեան մէջ, նման առարկաները միմեանց հետ բազգատելու  
մէջ: Խսկ գորանից առաջ են գալիս օրէնքները, կանոնները,  
ընդհանուր գաղափարները — քերականութիւնից՝ կանոնները,  
կրօնքից՝ բարոյական օրէնքներ և ալիք Պալիս է վերջապէս  
հինգ որդական աստիճանը՝ այն է ձեռն բերած գաղափար-  
ները գործ ենք դնում զանազան խնդրների մէջ, որոնք սերտ  
կապուած են կեանքի հետ»:

Դորանով և վերջացաւ գասախօսութիւնն այսպէս ու-  
րեմն, ըստ Բահաթրեանցի ուսուցումն ընկերութիւնն է հինգ  
աստիճանով. ա.) Նախապատրաստութիւնն է ապա գործ ելուն, բ.) Յան-  
դիման արարութիւնն է ապա գործ ելուն, գ.) Կապակցութիւնն է գործ  
կանոնների գործ ելուն, դ.) Ապա գործ ելուն, բ.) Այդ  
գաղափարների գործ ագրութիւնն է:

Գասախօսութիւնը վերջացաւ բուն ծափահարութեամբ.  
և թէ՛ Ժողովի ու թէ նախագահի կողմից չնորհակալութիւն

բայտնուեցաւ դասախոսին։ Անտարակցյա, Բահաթրեանցի գասահօսութեան, երկրորդ մասի, այսինքն ուսուցման եղանակի բացատրութիւնը շատ մոքեր կը լուսաւորէր և զգալի արդիւք կարող էր արտադրել մանաւանդ մեր գիւղական ուսուցիչների մէջ։ Այդ և դոցանման կարեոր բացատրութեանց էր կարօտ ժողովը և, պէտք է ասել որ մեր երկու մանկավարժները՝ պ. Մանդինեանցը և Բահաթրեանցը իրանց դասախոսութիւնով մասամբ բաւականութիւն տուին շատերի ցանկութեանը։

Նիստը փակելուց առաջ նախագահը յայտնեց Ժողովին որ հետևեալ օրը Բահաթրեանցի աշակերտներից մէկը կը պարապի բարոյագիտութիւնով դիտողական ուսումնով և թուաբանութիւնով։

Ներկայ էին 149 ուսուցիչները։

### ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

#### I.

Ընդհանուր Ժողովի նիստը վերջանալուց յետոյ 35 էց մասնաժողովը ունեցաւ իւր առաջին նիստը։ Այստեղ ծագեցաւ նախագահ ընտրելու հարցը։ Ամէն կողմից առաջարկուեցաւ այդ պաշտօնը բարձր արժ. Ա. Ա. ՔԱՀ. Տ. ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆՑԻՆ տալ Բայց որովհետեւ տէր հայրը իրանց անկախ պատճառներով երկու օրից յետոյ թողնելու էր Տփիսիսը, ուստի նա միայն այդ օրուայ համար նախագահ ընտրուեցաւ, թողնելով որ յաջորդ նիստին Մասնաժողովը մի մշտական նախագահ ընտրէ։ Քարտուղարի պաշտօնը վարում էր Ա. Բահաթրեանցը։

Ստանձնելով միօրեայ նախագահի պաշտօնը, տէր հայրը ցանկացաւ իմանալ թէ ի՞նչ զրութեան մէջ է դորձը, ի՞նչ տեղ է կանգ առել Ընդհանուր Ժողովը։ և Մասնաժողովը ինչո՞վ է ուղարկվ զբաղեցնել այդ օրուայ նիստը։ Եղան մի

քանի առաջարկութիւններ։ և ցանկութիւն յայտնուեցաւ Ընդհանուր Ժողովի յետագայ նիստերի համար մի ամբողջ շաբաթուայ պարապմունք ծրագրելու։ Եւ, որովհետեւ Ընդհանուր Ժողովը Ծրագրերի Յառաջաբանում սահմանուած նըպատակն էր որոշել և Ծխական դպրոցների հարցն էր վճռել ու այնտեղ կանգ առել։ ուստի հարկաւոր էր գեռ ևս շաբունակել մնացած սկզբունքների հարցը։ Ընդհանուր համաձայնութեամբ որոշուեցաւ որ այդ հարցերից գլխաւորները Ընդհանուր Ժողովը քննութեանը առաջարկուեն։ իսկ մասնաւորները Մասնաժողովին մասն։

Պ. Ա. ՄԱՆԴԻՆԵԱՆՑԸ յայտնեց որ Յառաջաբանից գուրս բերած ունի 22 հարց։ Այդ հարցերը կարդացուեցան և նոցա միջից ընտրուեցան երեքը. ա.) Պէտք է արդեօք առանձին ծրագրեր ունենալ երկու և երեք տարուայ ընթացք ունեցող Ծխական դպրոցների համար. բ.) Քանի տարեկանից սկսած պէտք է աշակերտ ընդունել և գ.) Ուսուաց լեզուի ուսումը որ տարուանից պէտք է սկսել։

Գորանով նիստը վերջացաւ, Այս անդամ 35 հոգուց ներկայ էին 25 անդամ։ Բայց անդամներից ոմանք քաղաքից էլ բացակայ էին. և նոցանից մի քանիսը մինչ անդամ Ընդհանուր Ժողովի ոչ մի նիստի ներկայ ցնն եղել։

#### Ժամանակակից անդամների պատճեն

Երեխ։

Պ. ՆԱԽԱԺՈՂՈՎ նիստը բաց արեց հետեալ խօսքերով։ «35 հոգուց բաղկացած Մասնաժողովը քննելով Յառաջաբանի մնացած կետերը, նոցանից կարեոր է համարում այս երեք հարցերը. ա.) Երկու և երեք տարուայ ընթացք ունեցող Ծխական դպրոցները արդեօք առանձին տարեկան ծրագրեր ունենան թէ մի ծրագրի. բ.) Քանի տարեկան հասակից պէտք է աշակերտ ընդունել և գ.) Ուսուաց լեզուն որ տա-

րուանից պէտք է սկսել. — Այժմ Ընդհանուր Ժողովը ի՞նչպէտ կը կամենայ. այդ հարցերի քննութիւնն էլ կրկին նոյն Մասնաժողովին յանձնել թէ թողնել Ընդհանուր Ժողովին: — Ժողովը ընդունեց այդ հարցերի մշակումը յանձնել Մասնաժողովին:

Եթոյ Պ. ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՍՏԱԿ ասաց. «Ինչպէս ձեզ յայտնի էր Կ. Յանձնաժողովը առանձին աետրերով հարցեր էր հրատարակել դպրոցական այլ և այլ խնդիրների վերաբերութեամբ. Բայց Յանձնաժողովը մինչեւ օրս նոցանից միայն 20 հարցեապատասխանն է ստացել: Այժմ Ժողովը ի՞նչպէս է կամենում վարուել այդ հարցերի հետ. ցանկանում է այս Ժողովում անել մնացածների ընտրութիւնը թէ դարձեալ Մասնաժողովին յանձնել: Որոշուեցաւ որ այդ ես վերջինին յանձնուի. Ապա շարունակեց Պ. ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՍՏԱԿ Ապա հարցերի պատասխաններին և առհասարակ ըեփերատների ընդունելութեանը այս անգամ վերջ տալու համար՝ խնդրում եմ ժողովականներից, որ ամեն անձն՝ որ կը ցանկանայ դասախոսել. Թող ցուցակագրէ իւր անունը, յայտնելով թէ ի՞նչ նիւթի վերայ է ուղրում կարդալ կամ խօսել:

Եղան մի քանի նոր առաջարկութիւններ, Այսուեղ կար ու ձեի մասնագետ պ. Ա. ՄԵԼՔ-ԱՅՎԱՂԵԱՆՅԵՐ նոյնպէս մի առաջարկութիւն արեց առհասարակ կարի մասին խօսելու: Բայց պ. Նախագահը Ընդհանուր Ժողովի համար անյարմար գըտնելով այդ առաջարկեց յիշեալ պարոնին, որ կարի դաս տայ: Եւ պարոնը յանձն առաւ այդ:

Աերջապէս պ. Նախագահը յայտնեց, որ ՍՏԵՓԱՆՈՍ Ա. ՔԱՀ. Տէր ՍՏԵՓԱՆՈՍԵՎԱՆՑԼ կը դասախոսի «Դպրոցների ապահովութեան» մասին:

Արժանապատիւ հայրը բարձրացաւ ամբիոն և նախագահից՝ Ժողովին մի յորդոր կարդալու թոյլութեան խընդրելով, սկսեց խօսել՝ Քրիստոսի հետեւալ խօսքերը իրան լնաբան առնելով. «Իւր հինգ կամ երկու հաւաքեալ կան՝ անդ եմ և ես: — Իւր ազդու և սրտագրաւ ատենախօսութեան մէջ տէր հայրը յորդորում էր ժողովականներին որ ի նկատի ունենալով գործի վսեմութիւնը՝ դուրս գան իրանց

«Ես» ից, և անձնական կրքերը հասարակական շահերին զոհելով, ձեռք ձեռքի տուած՝ միարանութեամբ և համերաշխութեամբ յառաջ տանեն և արդիւնաւորեն սկսած նուիրական գործը. Մի ծափահարութիւն հետևեց տէր հօր վերջին խօսքերին. և նա դիմեց ընտրած հարցին:

Տէր հայրը դպրոցների ապահովութեան հարցի լուծումը գտնում էր եկեղեցու և դպրոցի միութեան մէջ: Ի նկատի ունենալով հայի բարեսրտութիւնը, առատաձեռնութիւնը և որդեսիրութիւնը՝ տէր հայրը առաջարկում էր մտցնել մըջ պարտադիր ուսումն որի համար մի տեսակ դպրոցական հարկ էր դնում ժողովրդի վերայ: Նա առաջարկում էր կազմել մի ընդհանուր գանձարան, ուր մտնեն քաղաքներում և գիւղերում ժողոված գումարները: Դորա համար նա առհասարակ ժողովուրդը բաժանում էր չորս դասակարգի՝ հարուստ, միջին, քիչ թէ շատ կարողութեան տէր և աղքատ: Առաջինի վերայ տարեկան տուրք էր նշանակում 3 ո., երկրորդի վերայ՝ 2 ո., երրորդի վերայ՝ 1 ո., իսկ չորրորդին ազատ էր կացուցանում: Այդ քաղաքներում իսկ գիւղերում նշնպէս ժողովուրդը չորս կարգի բաժանելով առաջինի վերայ գնում էր 1 ո., երկրորդի վերայ՝ 40 կոպէկ, երրորդի վերայ՝ 20 կոպէկ. չորրորդին ազատ էր թողնում: Եւ այդ գումարները հաւաքելու համար առաջարկում էր եկեղեցիներում ունենալ մի ըրոշեալ արկղ, որի վերայ հսկէ մի փոքրիկ հոգաբարձութիւն, բաղկացած մի քահանայից, երեցփոխանից և մի ժողովրդականից: Հոգաբարձութիւնը պարտաւոր է իւր ստացած մուտքը ներմուծել եկեղեցական մատենի մէջ:

Տէր հայրը հաւատացած էր որ իւր առաջարկութիւնը իրագործելու համար պակասումէ միայն նորին Օծութեան՝ Կաթողիկոսի հաճութիւնը և օրհնութիւնը: Իսկ փողերը տէր հօր կարծիքով կարելի է ժողովել Յունուարի 1—7 և աւագ շաբաթուայ մէջ, երբ առհասարակ մէծ բազմութիւն է եկեղեցի յաճախում: Նա յօյս ունէր, որ այդ բանին քահանաները ամենակին արգելը չեն դնի, քանի որ մի այդպիսի սըրբազան պարտականութիւն կատարելով՝ նոքա իրանց բարցյապէս աւելի բարձրացրած կը լինեն ժողովրդի աչքումը և կը

գրաւեն իրանց վերայ նորա համակրութիւնն ու յարգանքը:  
Բուռն և ոգեզորուած ծափահարութեամբ ատենախօս  
հայրը իջաւ ամբիոնից, ուր շուտով բարձրացան նորա ընդ-  
դիմախօսները: Այս անդամ շատ շատերը խօսեցան և զանա-  
զան միջոցներ առաջարկուեցան: Աչա ինչպիսի միջոցներ: —  
Դպրոցական կալուածների արդիւնքները մի տեղ հաւաքել և  
ընդհանուր գանձարան հիմնել: Մոմի արդիւնքը յատկացնել  
դպրոցներին: Իրանց որդիքը ուսումնարան տուող հարուստ  
ծնողներից առանձին վճար որոշել այդ նպատակի համար: Ժո-  
ղովել տեղական զժերից ստացած գումարները՝ այն է գա-  
սախօսութիւններից, ներկայացումներից և այլն: Եկեղեցական  
մուտքերից մի յայտնի տոկոս յատկացնել: Ուսումը գիւղա-  
կան դպրոցներում ձրի անել: Եկեղեցիներում գանձանակա-  
դրամ սահմանել: Վեհափառ Կաթողիկոսին յայտնել ու-  
սուցաց ցաւերը և նորանից խնդրել մի ապահովութիւն: Հո-  
գեհացը վերացնել և նորա վերայ գործ դնուող ծախսերը  
յատկացնել դպրոցներին: Ամուսնութեան և մկրտութեան ժա-  
մանակ հրաւիրեալներից փող հաւաքել: Գիւղացիների ձեռք  
բերած կենսական անհրաժեշտ պիտոյքների մի մասը յատ-  
կացնել դպրոցներին: Ուխտատեղիների արդիւնքը յատկացնել  
և այլն և այլն:

Այդ առաջարկութիւններ անողներն էին՝ պ. պ. Պոռ-  
շեանց, Հ. Առաքելեանց, Յ. Տ. Յովկանիսեանց, Հ. Դու-  
կասեանց, Ս. Սպանդարեանց, Ա. Մելքոնեանց, Ս. Բէկնա-  
զարեանց, Աբէլ ք. Սուքիասեանց, Ա. Գիւղալեանց, Յ. Մե-  
զաւորեանց, Տ. Տ. Գաւթեանց, Թ. Տ. Մանուկելեանց և Յ.  
Քաթանեանց, որ այն աստիճան զգածուած էր երկում որ  
դժուարութեամբ էր զսպում արտասուքը: — Վերջը կարճ  
կտրելու համար պ. Ս. Ապրելեանցը ձայն տուեց: «Որովհետև  
այդքան դժուարանում է ժողովը, ուստի ես կ'առաջարկեմ  
այսպէս անել: Գիմնք բարեխնամ Կառավարութեանը և փող  
ժողովելու իրաւունք խնդրենք»: Փոթկոյն ու «բրաւոն» մէկ  
եղաւ:

Այսպէս, առանց մի հաստատ ու ապահով աղբիւր որո-  
շել կարողանալու, ամէն կողմից նորանոր միջոցներ էին առա-

ջարկում: Երբ Պ. Լ. Թիւսիես նշանակ խնդրելով ասաց:  
«Այդպէս գործը ձգձգելով երբէք չենք կարող մի որոշ եղբա-  
կացութեան գալ: Աւելի լաւ է ընտրել մի մասնաժողով և  
այս հարցի լուծումը նորան առաջարկել»:

Այստեղ ատենապետ Պ. ՄԱՆԴԻՆԵԼՆՑԼ մի այսպիսի  
նկատողութիւն արեց պ. Թիւսիկեանցին: «Եթէ ես գիտե-  
նայի, որ գուք այդպէս պէտք է խօսէիք, ձեզ հերթ չէի տայ,  
ուրիշին կը տայի»:

Այդ սուր նկատողութիւնը առհասարակ շատերին զար-  
մացրեց. որովհետև պ. Թիւսիկեանցը մի յանցանք չունէր:  
Նա միայն իւր կարծիքը յայտնեց, ինչպէս և իրանից առաջ  
եկող շատ շատերը յատնել էին իրանց առաջարկութիւնները:

Երկու անգամ նիստը ընդհատելուց յետոյ, երբ այլ ևս  
խօսել ցանկացող չկար: Պ. ՄԱՆԴԻՆԵԼՆՑԼ կամցաւ հարցը  
ձեւակերպել: Եւ, որ զարմանալին է, նոյն միտքը յայտնեց,  
ինչ որ մի ժամ առաջ յայտնել էր պ. Թիւսիկեանցը: Այն  
ժամանակ Պ. Թիւսիես նշանակ հարցրեց թէ: «Ել ինչո՞ւ պ.  
Մանդինեանցը ինձ այսպիսի նկատողութիւն արեց, երբ ինքը  
մի և նոյն կերպով է ձեւակերպում հարցը, ինչպէս որ ես  
առաջարկեցի: Այդ նախագահի կողմից մի անքաղաքավարու-  
թիւն է»:

Այդ խօսքերի վերայ ժողովականների մեծ մասը սոքի  
կանցնեցին, սուլեցին, և ոչ միայն առաջարկեցին որ պ. Թիւ-  
սիկեանցը յետ առնէ իւր խօսքերը, այլ և պ. Ս. Բէկնազա-  
րեանցի առաջարկութեամբ ուզում էին գուրս վարել նորան  
ժողովից: Իսկ պ. Մանդինեանցը յօգուտ իւր արուած այդ  
ցոյցերին խօրին կերպով համակրելով վեհանձնութեամբ նե-  
րեց յանցաւորին և գուրս չարեց գահինձից:

Բայց, ժողովը սարսափելի կերպարանք էր ստացել. Նա  
բոլորովին կորցրել էր իւր նշանակութիւնը: Ցիրաւի, ինչ էր  
նշանակում այնպէս սպանել մի մարդու: արդեօք որ յան-  
ցանքի համար: Մեր կարծիքով պ. Թիւսիկեանցը իւր խօս-  
քերով ոչ միայն իրան էր պաշտպանում, այլ և գուցե մեզ  
ամենիս: Զլինի թէ լի ա կ ա տ ա ր ի ր ա ւ ո ւ ն ք ը ա ր դ է ն ս կ ե լ  
էր իւր գործը: Եւ, կարծես այդ լիակատար իրաւունքը աւելի

զըրեղացնելու, նորան թե ու թիկունք տալու համար ժողովականների մեծ մասը գոշում էին բարձրածայն։ Արդարեւ պ. Թիւսիկեանցը սխալուեցաւ որ արտասանեց «անքաղաքավարի» խօսքը։ Բայց այն աստիճան արդարացի յուղմունքից յետոյ մեղնից ո՞րը արդեօք չէր կարող սխալուել։ Մեր կարծիքով։ միւս նախագահները պէտք է աւելի քաղաքավարութիւն գործ գնէին և մի երկու համեստ խօսքով ուղղէին պ. Թիւսիկեանցի անքաղաքավարութիւնը։ Եւ այդ բաւական բարյական պատիժ կը լինէր նորա համար։ Բայց թոյլ տալ որ ամբողջ ժողովը ձայն բարձրացնէ, քարկոծէ ու «իմաչեսցի» աղաղակէ միայն անք աղաք ավարի խօսքը, ի հարկէ, սխալմամբ արտասանելու համար, արդէն այդ չգիտենք ինչ բանի վերաբերել։ Պ. Ա. Մանդինեանցը ունի ժողովում իւր համախոչները, իրան համակրողները։ բայց մի՞թէ յարգանքը դէպի մի անձնաւորութիւն, թէկուզ դէպի ատենապետական կոչումը, պէտք է ոտնակոխ անէ Ճշմարտութիւնը։ Դեռ այդ բաւական չէ։ Պէտք էր տեսնել թէ Բահամբեանցն էլ ի՞նչ պիսի յանդիմանութիւններ էր անում պ. Թիւսիկեանցին, ինչ հայհոյանքներ էր թափում նորա վերայ։ Ամօ՞թ է, ամօ՞թ մեզ, պարոններ, որ մէկի կրքերին յագուրդ տալու, մէկին շողքորթելու համար՝ այդ աստիճան խաղալիկ ենք շինել Ընդհանուր Ուսուցչական Փողովու։ Եւ, որ ցաւալին է, մենք ուսուցիչներ ենք, մանկանց կրթողներ։ — Նոր յետոյ, տուն գնալիս մարդիկ խումբ խումբ հաւաքուած ուսումնարանի բակումը՝ բողոք ու տրտունջ էին բարձրացնում այդ անվայել արարքի մասին։ Բայց, բանը բանից անցել էր, Ճշմարտութեան ձայնը ինեղուել էր, և մի մարդ բոլորովին անտեղի կերպով բարյապէս սպանուած էր։

Նիստը փակելուց առաջ պ. Մանդինեանցը յայտնեց, որ հետեւալ առաւօտը դաս կը տայ Բահամբեանցը։

Ներկայ էին 14օ ուսուցիչ։

~~~~~

## ԺԵ.

Օգոստոսի 28.

Ա———:

Այսօր պէտք է պարապէր Ա. Բահամբեանցը։ Բայց նորա փոխանակ պարապեց նորա՝ ներսիսեան դպրանոցի նորաւարտ աշակերտներից մէկը՝ Պ. Գրիգոր Տէր Պետրոսեանցը։ Կային քնդամենը Զ աշակերտ։ Դոքա, ինչպէս երկում էր, կարդար գիտեցող աշակերտներ էին։ Բայց, որ զարմանալին է, մինչև դասի վերջանալը զրեթէ ոչոք չզիտէր որ դա բարոյակը թութեան դաս էր։ Այս դասում նորաւարտ ուսանողը պէտք է իրագործէր իւր մանկավարժ ուսուցչի արծարծած այն մաքերը, որ նախընթաց օրը ժողովը լսել էր նորանից իւր յօրինած մեթոդիկայի սկզբունքների մասին արած դասախասութեան ժամանակ։ Ի՞նչոր Բահամբեանցը հաղորդել էր ուսուցիչներին տեսականապէս, նոյնը իւր աշակերտը պէտք է իրագործէր գործնականապէս։

Դասի սկզբից մինչև վերջը առհասարակ ներկայ եղող ների կողմից գժգոհութեան նշաններ էին նկատում։ Գրեթէ ո՞չ գոհ չէր, և ո՞չ ոք դորան ամենեին օրինակելի դաս չէր համարում։ Դասատուութիւնն էլ լինում էր Բահամբեանցի օգնութեամբ։

Երբ ժողովականք դասից յետոյ արդէն մի քանի բոպէ հանգստացել էին, ներս մտան դահլիճը և սկսուեցան վիճաբանութիւնները։ Պ. Նախագահը, ինչպէս առաջ կարդ էր դրել նախ վարժուհիներին հրաւիրեց խօսելու, ապա գիւղական ուսուցիչներին և վերջը քաղաքայիններին։ «Բայց, ասաց նա, քանի որ ուսուցիչը նիւթը ամբողջութեամբ աւանդելու ժամանակ չունէր, և ուսուցման միայն առաջին կէսը, այն է իւրացուցումն անցաւ, լաւ չէ՞ր լինի, որ թողնէինք գեռ մի քանի անգամ էլ պարապելու, որ ամբողջապէս լրացնէ ու յետոյ սկսենք վիճաբանութիւնները։ Թէպէտ եղան անձինք, որ կարևոր էին համարում նիւթը ամբողջութեամբ

աւանդուած տեսնելուց յետոյ վիճարանութիւններ սկսելը՝  
քայլ որովհետեւ մեծ մասը, անհամբեր լինելով չեղում  
յետաձգել այլ ըստ սովորութեան առաջարկում էր սկսել  
մանաւանդ որ, ինչպէս յետոյ յայտնեց Բահամբրեանցը, ինքը  
մտադիր էր երկու օրից յետոյ անպատճառ թողնել Տփիսը,—  
ուստի յետաձգմանը համաձայնողներն էլ շամաձայնեցան  
յետաձգել և իսկոյն և եթ սկսուեցան նկատողութիւնները:  
նկատողութիւնները ընդունում էր Բահամբրեանցը. դաստիւ  
ուսուցիչը չեր երեւում և չեր խարուում գործի մէջ:

Ահա զիսաւոր նկատողութիւնները՝ որ եղան պ. Տ.  
Պետրոսեանցի դաստիւութեան վերաբերութեամբ: — Դասը  
ամենեին օրինակելի չեր: Ուսուցիչը սաստիկ սառն էր. կար-  
ծես բնական մարդ չեր: Մի կնյոն բանը չափազանց ձանձ,  
բացնելու չափ կրկնում և կրկնել էր տալիս: Պատասխան-  
ները պահանջում էր բառ առ բառ տառ առ տառ: Արտա-  
սանութեան ուղղութեան վերայ ուշադրութիւն չեր գարձում:  
Խիստ գժուարը մը ունելի զարձուածներ էր գործ ածում: և այլն  
և այլն: Մի խօսքով, ոչ ոք գոհ չմնաց այդ օրինակելի գա-  
սից, որ իսկապէս օրինակելի անշնորհքութիւն էր, եթէ չա-  
սենք իսյտառակութիւն:

Իբրև ապացոյց մի երկու օրինակ բերենք: — Տողերի ս  
գրութեան նկատեց որ՝ «Պ. ուսուցիչը երեխաներին շատ ան-  
քնական կերպով էր արտասանել տալիս նախագասութիւնները:  
Ինչպէս — Այծը մը կը կում է»: սաստիկ շեշտելով էի վերայ:  
Պէտք է պարտութատշաճ ուշադրութիւն դարձնել այն հան-  
գամանքի վերայ որ տարբահան դասարաններում աշակերտները  
լսելիքին անընական լինելու չափ կոչտ չարտասանեն էն և  
էն օժանդակ բայերը: Այլ նախորդ բառի չետ միացնելով մեղմ  
է չնչեն: և, էն էն: Եթէ ոչ բարձր դասարաններում ևս նցնը  
մնում է և շատ գժուարութեամբ է ուղղուում: — Աւերը իրանց  
մօր չետ խօսելիս շատ քաղաքավարի լեզու են բանեցնում:  
Նոքա ասում էն այժին, «Պուքը միք վախենայ, մենք զգոյշ  
էր լինենք, գուք ուր ուզում էք՝ գնացէք»: Բնական է, որ  
գու պէտք է ասեն: Պ. ուսուցիչը գժուարը մը ունելի գար-  
ծուածներ էր գործ ածում: օրինակ ասում էր, «Եթէ գայլը

մտնելու լինի»: Թէ դա անհասկանալի էր մանուկներին, այդ  
նորանից էր երեւում, որ պատմութիւնը կրկնելիս մանուկները  
ասում էին՝ «Եթէ գայլը լինի, ձեզ մտնելու լինի»: Պէտք է  
ասել «Երբ գայլը գայլ ձեզ մոտ»: —

Ուսուցիչներից մէկն էլ՝ Պ. Մ. ԵՌՔՍՈՒԶԵՆՅՑԼ Նը-  
կատեց թէ և աւ կը լինի որ ուսուցիչը դաստիւն մտնելիս  
աշակերտներին ձեռք տալով բարովէ: Իսկ երբ  
Պ. Մ. ԱՊՄԵԼԵՆՆՅՑԼ կամցաւ նկատողութիւն անել մի  
ուսուցիչ նորա խօսքը բերանումը թողնելով ձայն տուեց:  
«Ապրէլեանցը թող ապրէլի Յին խօսի»: Եւ այդպիսի արհա-  
մարհանքը անհետևանք մնաց:

Վերջապէս ԲԱՀԱԹՐԵՆՆՅՑԼ սկսեց պաշտպանել դասը:  
Քայլ նորա պաշտպանութիւնն էլ շատ թոյլ էր: Ինկապէս  
նորա պատասխանները գրեթէ ոչ մի նկատողութիւն չեն կա-  
րողանում չերքել:

«Երկայ էին 168 ուսուցիչ»:

## ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

### II.

Յետոյ կայացաւ Մասնաժողովի նիստը: Ընտրողական  
թերթերով մշտական նախագահ ընտրուեցաւ Պ. ԱԲԻՍՈՂՈՄ  
ՅՈՎՀԱՆՆԻՍԵՆՅՑԼ: իսկ փոխնախագահ՝ Պ. Մ. ՄԵՆԴԻ-  
ՆԵՆՆՅՑԼ: Այստեղ խօսք ընկաւ «Հարցերի» մասին: Եւ Յանձ-  
նաժողովի հրատարակած Հարցերից մի քանիսը, որոնք ար-  
ժեկին որ Ընդհանուր ժողովի քննութեան առարկայ դառ-  
նային, որոշուեցան իբրև զիսաւոր հարցեր: Իսկ միւս հար-  
ցերը երկրորդական ու երրորդական համարուելով մնացին:  
Խօսք ընկաւ բեֆերատների մասին: և, կամենալով ան-  
տեղի ու անօգուտ խօսակցութեանց առաջն առնել եղան  
առաջարկութիւններ որ բեֆերատները կամ գրաւոր ներկայա-  
ցուեն Մասնաժողովին, կամ՝ եթէ բանաւոր լինի: խօսողը իւր

ընտրած նիւթի գլխաւոր կետերը (կոնսպէկտը) ներկայացնէ:  
Որոշուցաւ չբռնանալ դասախոսների վերայ, այլ որ գրաւոր  
պահանջում նոցանից, ինչպէս և առաջարկուեցաւ. իսկ եթէ  
այդ անկարելի լինի, գոնէ մանրամասն կոնսպէկտ պահանջում  
որպէս զի դասախոսը հարցից գուրս ոչինչ չխօսի. Յետոյ որո-  
շուեցաւ մի սեղիայ կազմել բեֆերատները քննելու և Ընդ-  
հանուր ժողովի մի շաբաթուայ պարապմունքը որոշելու հա-  
մար. Այդ նպատակով Մասնաժողովի միջից նշանակուեցան  
հինգ հոգի, որոնցից գրեթէ միշտ հետևալ անձինքն էին ներ-  
կայ լինում՝ պ. պ. Արիս. Յովչանիսեանց, Հ. Ղուկասսեանց  
և Յ. Տ. Գրիգորեանց:

Այս նիստին Մասնաժողովի անդամներից ներկայ էին  
22 հոգի:

## Ժ. Զ.

Երես.

Պ. ՍՏԵՓԱՆ Տ. ՍԵՐԳՈԵՎԻՆՑԸ մի բեֆերատ կարդաց  
«Ուսուցիչների ապահովութեան» մասին. Պարոնը հետևեալ  
առաջարկութիւններն էր անում. — Բոլոր ուսուցիչները իրանց  
տարեկան ոռձկից տասանորդ հանեն այդ նպատակի համար.  
Հաւաքուած գումարը շահեցուի  $5\%$ -ով՝ 25 տարի ժամա-  
նակով և ապա գործադրուի ուսուցիչներին կենսաթոշակ  
(pension—պեհօն) տալու համար. Պ. դասախոսը իւր առա-  
ջարկութեան նպատակայարմար լինելը ապացուցանելու հա-  
մար իրանից էր օրինակ բերում: «Թելաւում ասում էր, եր-  
կու ուսուցիչ կանք, իւրաքանչիւրս տարեկան 500 ռ. ոռձ-  
կով. Եթէ մեր ոռձկից իմ ասածի պէս տարեկան տասա-  
նորդ հանենք, կ'ունենանք տարեկան 200 ռ., որ 25 տարի  
 $5\%$ -ով շահեցնելով՝ կը կազմէ 6600 ռ., չաշուելով եկե-  
ղեցական արդիւնքները, որոնցից նշնպէս մեծ յոյս կայ,  
եթէ Ուսուցչի տարեկան ոռձկիլը ենթադրենք ոչ պակաս  
քան 300 ռ., ուրեմն մենք քանի՛ հարիւր հաղարներ կ'ունե-

նանք 25 տարուայ մէջ, ենթադրելով որ ոռւսահայերս ու.  
նենք մօտ 830 ուսուցիչն:

Դորա մասին երկար վիճաբանութիւններ եղան և շատ  
անձինք ամբիոն բարձրանալով զանազան միջցներ առաջար-  
կեցին: Աչա այդ առաջարկութիւնները. — Եկեղեցիներում  
ուսուցչաց համար գանձանակ շրջեցնել: Ուսուցչական արկղ  
հիմնել: Յայտնի ժամանակ ծառանակ ծառայած ուսուցիչների որդքե-  
րանցը ձրի ուսում տալ: Ուսուցչի տարեկան ոռձկի  $20\%$ -ը  
յատկացնել: Մկրտութեան և պատկի ժամանակ սանահօրից  
ու նորապսակներից մի նուեր հանգանակել: Ուսումնարաննե-  
րում ինայողական գանձարան հիմնել: Նոր ընդունուող աշ-  
կերտի ծնողներից մի առանձին գումար պահանջել: Մի կեն.  
դրոնական խանութ հիմնել ուսումնարանական պիտուֆների  
համար, որտեղից և պարտաւորուած լինեն գնել բոլոր ու-  
սումնարանները. Դիմել Կովկասեան Հայոց Բարեգործական  
Ընկերութեանը: Ուսուցիչների ոռձկից նշանակել 100-ին 1.  
Կտակներից նուեր ինդրել: Մամուլի միջնորդութեամբ արծար-  
ծել այդ հարցը: Հոգեհացը վերջացնել և նորա փոխանակ մի  
գումար նուիրել և այլն և այլն:

Պ. Ա. ԵՐԻՑԵՍՆՑԸ Պ. Յանձնաժողովի կողմից յայտնեց  
Ժողովին, որ Կովկասեան Թանգարանի վարչութեան կողմից  
50 հատ ձրի տոմսակ է ուղարկուած ուսուցիչներին: Ուրեմն  
ուսուցիչները երկու անգամ կարող են մուտք ունենալ:  
Ներկայ էին 209 ուսուցիչ:

## ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԽՑԸԸ

### III.

Ժողովի ցրուելուց յետոյ կայացաւ Մասնաժողովի նիս-  
տը. Պ. ՆԱԽԱԳԱՆՑԸ հարկաւոր էր համարում՝ Ժողովին  
երեքամբի օրը զբաղեցնելու համար մի պարապմունք որոշել:  
Այստեղ կրկին և կրկին անգամ առաջարկուեցաւ Ա. ԲԱ-  
ՀԱԹՐԵՍՆՑԻՆ որ յանձն առնէ դաս տալ: Բայց նա բացէ



ՀԱՅԻ Տ. ՍՏԵՓԱՆՈՍԵՍՆՑԸ կարգաց իւր կաղմած ծրագրի յառաջաբանը, որ նա մշակել էր մի չնակարգ դպրոցների համար, Բայց, ինչպէս տէր հայրը ասաց, ինքը մինչ անգամ ինկատի չէր ունեցել ծխական ու սումնարանների վերջին չորրորդ տարին միջնակարգ դպրոցների առաջին դաստան հետ համաձայնեցնելը, միացնելը, Դա, իհարկէ, զգալի անյարմարութիւն էր, Աւստի, ծրագրի մանրամասնութիւնները լսելուց յետոյ՝ Պ. ՄԱՆԴԻՆԵՍՆՑԸ առաջարկեց յեռագիր միանգամայն տէր հօր ծրագրի քննութիւնը, որով հետև, ասում էր, մինչև ծխական դպրոցների ծրագիրը չմշակուի, տէր հօր ծրագրի մասին վերջնական խօսք չէ կարելի ասել, Պ. Մանդինեանցի առաջարկութիւնը շեշտելով կրկնեց նաև տողերիս գրողը և ընդհանուր համաձայն ւթեամբ գործ յետաձգուեցաւ:

Հետաքրքիր էր լսել ՀԱՅԻ ՍՏԵՆԱՊԵՏԻ կարծիքը, Տէր հայրը ասում էր, «Եւելի լաւ է որ ճեմարանը ինքը մի ծրագիր կազմէ և Էջմիածնի Հոգեոր Իշխանութիւնը մի դասագիրք մատնացոյց անէ, յետոյ մենք ամենքս ընդունենք նոյն ծրագիրը և գործ ածենք նոյն դասագիրքը»: Բարձրացաւ ընդհանուր համեստ ծիծաղ, Ի հարկէ կը բարձրանար:

Ներկայ էին ս. Երուսաղեմի միարան գեր. Սահակ վարդապետը և 18 անձինք, որոնցից մի քանի հոգեորականներ հիւր էին:

## ՄԱՍՆԱԿՆՄԲԻ ՆԽՏԸ

2.

ԵՐԵՒԱՆ.

Կայացաւ դպրոցական ապահովութեան հարցը մշակող Մասնախորի նիստը: Առաջարկուեցաւ ատենապետ ընտրել և ընդհանուր համաձայնութեամբ դարձեալ ընտրուեցաւ Պ. ԱԲԻՍՈՂ. ԱՄ ՅՈՎ. ՀԱՅԱՆԻՍՆԵՍՆՑԸ:

Խօսելով ուսումնարանների ապահովութեան մասին՝ բնականաբար շօշափուեցաւ նաև ուսուցչաց ապահովութեան հարցը. և հարկաւորուեցաւ իմանալ թէ առաջ որի վերայ խօսուի: Առաջարկուեցաւ նախ ուսուցչաց ապահովութեան հարցը մշակել պատճառ բերելով այն հանգամանքը որ գլխաւորը կենսաթոշակի խնդիրն է, Իսկ Հայր Տ. Ստեփանոսեանցը, ուսումնարանների ապահովութեան հարցը աւելի կարեոր համարելով՝ առաջարկում էր առաջ գորա վերայ խօսել: Այդպէս էլ որոշուեցաւ, Ա. Բահամբեանցը քարտուղար նշանակուեցաւ, և կարգացուեցան Ընդհանուր Ժողովում դպրոցական ապահովութեան մասին եղած առաջարկութիւնները: Պ. Մանդինեանցը կարգաց իւր մասնաւոր նկատողութիւնները:

Պ. Ս. ՍՊԱՆԴԻՐԵՍՆՑԸ առաջարկում էր հիմնել ընդհանուր գանձարան, կազմել կանոնադրութեան նախագիծ (project, պրոյեկտ) և առաջարկել Հոգեոր Խշխանութեանը ի հաստատութիւն: Եւ ցանկանալով որ այդ գանձարանը ապագայի համար մնայ, որպէս զի մի նշանաւոր գումար կազմուի ու յետոյ գործ ածուի, պարոնը միւնցն ժամանակ աւելացնումէր որ այդ գումարը մնայ անձեռնմխելի, ոչինչ չծախսուի:

ՀԱՅԻ Տ. ՍՏԵՓԱՆՈՍԵՍՆՑԸ կրկնելով իւր բեֆերատի խօսքերը, առաջարկումէր որ ժողովուած գումարի կեսը յատկացուի այն գիւղերին, որտեղ կարօտութիւն շատ կայ, բայց ուսումնարան չկայ. Իսկ միւս կեսը պահուի՝ ընդհանուր գանձարանը հարստացնելու համար:

Երկար վիճաբանութիւններից յետոյ պ. Ատենապետը սկսեց առաջարկութեանց ամփոփում անել, և երեւմ էր երեք կարծիք, — ա.) Որ ժողովուած գումարի մի՛ մասը գանձարանին մնայ, բ.) Որ ընդհանուր կենդրոնական գանձարան հիմնուի և այնտեղ պահուի ու այնտեղից նպաստներ ուղարկուեն, և գ.) Որ հիմնուին տեղական (գաւառական) կենդրոնական գանձարաններ՝ իւրաքանչիւրը իւր տեղի պիտոյքները լցուցանելու նպատակով ինչպէս Ընդհանուր Ժողովում առաջարկումէր Պ. Ս. ՄԵԼՔՈՒՄԵՍՆՑԸ:

Պ. Տ. ԳԵՂԱՄԵՍՆՑԸ, որ այստեղ կողմանակի անձն

էր, ասաց. «Եթէ պ. Խատիսեանցի առաջարկութիւնը ընդունուի, այն է՝ թեմական հոգաբարձութիւններ հաստատուեն» միւս երկուսը իրանց իրանց ընդունուած կը լինեն. Իսկ եթէ այդ չել ընդունուի, ես էլ իմ կողմից կ'առաջարկեմ՝ կազմակերպել մի մարմին որ քննէ թէ ո՞ր քաջաքումն ու ո՞ր գիւղումը ի՞նչ ուսումնարանապատկան կալուածք կամ փող կայ և խնդրել Կաթողիկոսին, որ այդ ամենը աղատէ հոգեորականների ձեռքից ու ժողովրդին տայ:

Պ. ԱՏԵՆԱՊԵՏԸԼ կրկին կամենումէր առաջարկութեանց ամփոփումն անել բայց պ. Գ. Յովհաննիսեանցը նկատեց որ՝ «Նախ սկզբունքը պէտք է որոշել, ապա նպատակը»:

Պ. Գ. ԱՐԴՐՈՒՆԻՆԻՆ դպրոցական ապահովութեան հարցը լնդհանուր ժողովի իրաւասութիւնից գուրս էր համարում:

Պ. ԱՏԵՆԱՊԵՏԸԼ աւելացեց որ՝ «Ժողովը վճիռներ չետայ, այլ թոյլ տալով որ ուսուցիչները այդտեղ իրանց զանազան ցաւերը յայտնեն, միայն կը քննի առաջարկած հարցերը»:

Պ. ՍՊԱՆԴԵՐԵԱՆՑԸԼ պատասխանելով պ. Արծրունում, ասում էր. «Մեր ուսումնարանները լինելով հոգեոր նշխանութեան իրաւասութեան ներքոյ, ապահով են և մենք միշտ կարող ենք այսպիսի հարցեր վճռել. և մենք կ'առաջարկենք հոգեոր նշխանութեանը որ նա հաստատէ մեր վճիռները. Եթէ ոչ՝ ուսուցիչների համար ել չէինք կարող գանձարան հիմնել....»

Պ. Ա. ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑԸԼ եղած առաջարկութեանց ձևերի մէջ կենդրոնացումը և ապակենդրոնացումը նկատելով հերքում էր կենդրոփացման օգուտները և օգտաւէտ էր համարում ապակենդրոնացումը, որ թոյլ է տալիս ամեն տեղական վարչութեան իւրովսանն զարգանալ և յառաջադիմել. Պարոնը ասում էր. «Մենք ներկայացնենք Կաթողիկոսին մեր դպրոցների ներկայ վիճակը, յայտնենք նորան մեր ցաւերը. և խնդրենք, որ ինքը միջոց տայ այդ ցաւերին դարման տանելու»:

ՀԱՅՐ. Ս. ԱՏԵՓԱՆՈՍԵԱՆՑ—ՆԵՐԿԱՅ ՀՔաւոր ուսում-

նարաններին օգնութիւն հասցնելու համար՝ ես խնդրում եմ որ իմ առաջարկութիւնն անուի:

Պ. ԱՏԵՆԱՊԵՏԸԼ տէր հօրը պատասխանելով ասաց. «Ընդհանուր ժողովը ինձ դպրոցների ապահովութեան հարցն է յանձնել և ես հարցը ուրիշ տեսակ գնել չեմ կարող»:

Պ. ՍՊԱՆԴԵՐԵԱՆՑԸԼ պատասխանելով պ. ԲԷԿՆԱԶԱՐԵանցին, ասաց. «Եթէ կենդրոնացումը չլինի, էլ ի՞նչ հաբկաւորութիւն կայ. Մինչև օրս մեր բոլոր ուսումնարանները կառավարուել են, էլի կը կառավարուեն. Բայց նոցա մէջ միութիւն պէտք է ձգել—ահա գլխաւորը»:

Այսուղ յետոյ երկար ժամանակ շարունակուեցաւ վեճաբանութիւնը պ. պ. Արծրունու և Սպանդարեանցի մէջ:

Հ. Տ. Ս. ԱՏԵՓԱՆՈՍԵԱՆՑ—«Իմ առաջարկութեան միմասը, այն է՝ չքաւոր գիւղական ուսումնարաններին օգնութիւն հասցնելը, յետ եմ առնում. և թողնում եմ միւս մասը միայն»:

Պ. ԱՏԵՆԱՊԵՏԸԼ խօսեց. «Որովհետև Հայր Տ. Ստեփանոսեանցը իւր առաջարկութեամբ միացաւ պ. Խատիսեանցի հետ, ուստի բոլոր հարցերից այժմ միայն երկու առաջարկութիւն է ծագում. մէկը պ. Սպանդարեանցի առաջարկութիւնն է, միւսը պ. Խատիսեանցինը»:

Այդուամենայնիւ երկար խօսելուց յետոյ ել չյաջողեցաւ մի եղբակացութեան դալ և հարցի մշակումը թերի թողած՝ ժողովը ցրուեցաւ:

Ներկայ էին 11 անձը, որոնցից մի քանիսը ֆինանսիստներ, բանկերում պաշտօն վարողներ էին. Կային և կողմակի անձինք:

**ՃԵ.**

Օպոստոսի 31.

Առաջ:

ՄԵծ. Օր. ԳԵՅՑԵՆԻ ՅՈՎՀԵԱՆԻՍԵԱՆՑԸ պէտք է ներկայացնէր «Մանկական Պարտէզը»: Բայց իւր սանիկների հետ պարապմունքն սկսելուց առաջ՝ Օրիորդը բարձրացաւ ամբիոն, որտեղ գարսած էին ֆրեսքելեան խաղալիկները, և սկսեց իւր ունկնդիրներին մի համառօտ գաղափար տալ այդ խաղալիկների մասին, որպէս զի գործի հետ տեսականապէս ծանօթացնելուց յետոյ՝ նոյնը գործնականապէս ցոյց տայ: Խաղալիկները, ասում էր Օրիորդը, մտածողութեան գործեր են միշտ, և սանիկները զննելով՝ այն վարժուհու հարցերով՝ մտաւորապէս զարգանում են: — Մանիկների պատասխանները պէտք է լինեն ճիշտ: Վարժուհին պէտք է ուշադրութիւն գարձնի լեզուի մաքրութեան վերայ, նա կը բացատրէ նոցա թէ զննուող առարկան բնութեան որ թագաւորութեանն է պատկանում: Ինչի՞ համար է գործ ածւում, հարկաւոր է թէ ո՛չ: — Խաղալիկներից զանազան բաներ շինելով երեխայք մրցում են միմանց հետ: Մի և նոյն ձեռքքոյ, որ շինեց, պէտք է քանդի իւր շինածը: և խաղալիկները կրկին ինքը կը դարսէ իրանց տեղերը»:

«Փրեսէլը ունի վեց նուեր: — Ա.) Եօթը բրդէ թելի գընդակներ են, ծիածանի գունով ներկուած: Եյդ գնդակների երկու գլխաւոր յատկութիւնը պէտք է բացատրել: այն է՝ ձեւ և գոյնը: Բ.) Նուերը կամ արկը պարունակում է խորանարդ և գլան: Գ.) Նուերը խորանարդ է, որ բաժանուած է երկայնութեան, խորութեան և լայնութեան վերայ, և այդպիսով ստացում է 8 փոքրիկ խորանարդ: Երեխայքը համարում են այդ խորանարդները և քանակութեան վերայ գաղափար են կազմում: Դ.) Նուեր: — Խորանարդը 8 փոքրիկ մասների բաժանելով, 8 աղիւսակ է ստացւում: —

Դորանից յետոյ մեծ. Օրիորդը աւելացրեց որ Մանկան Պարտիզի պարապմանց մէջ մտնում է նաև երգեցողութիւն, մարմամարզութիւն, հիւսուածք, շարժողական խաղեր, նկարչութիւն, թղթի գուշո կտրելը: ..

Ապա Օրիորդը ձեռք տուեց գործնականին: Դաշլիճի մէջտեղը շարուած էին Մանկական Պարտիզեց բերել տուած առանձին ձեւի նստարաններ, յարմարեցրած մանուկների համար: Օրիորդը շուտով ներս բերեց իւր սանիկները՝ որ թուով 14 հոգի էին, երկու սեռից: բայց միաձեւ հագուստ ունենալու պատճառով նոքա միայն այն ժամանակ որոշուեցան միմանցից, երբ Օրիորդը դիմում էր նոցա՝ անունը տալով:

Սանիկները ներս մտան Օրիորդի առաջնորդութեամբ, երգելով «Արէք ընկերք, կարգով շարուենք» սկսուածքով երգը: Յետոյ եկան և 5—5 նստոտեցին:

Օրիորդը առաջարկեց նոցա նայել իրանց շուրջը՝ տեղի և շրջապատող առարկաների հետ ծանօթանալու համար: Նոքա էլ սկսեցին հարցասիրութեամբ նայել չորս կողմը: Յետոյ վեր կացան և սկսեցին աղօթել «Յանուն Հօրա-ը, խաչ հանելով երեսները: Այս միջոցին Օրիորդը որ նոցա գիմացն էր կանգնած՝ խաչակնելու ձեւը նոցա ցոյց տալու համար՝ ինքը ձախ ձեռքով էր երեսը խաչ հանում: Ապա սոտի կանգնած երգեցին մի մաղթանք «Ո՛վ երկնքի, երկրի Տէրա սկսուածքով: Սանիկները երգում էին իրանց քննուշ թաթիկները կցած: Երգից յետոյ Օրիորդը կրկին նայել տուեց նոցա իրանց շուրջը՝ որ յետոյ ուշագրութիւնը միայն հարկաւոր կետի վերայ կարողանան կենդրոնացնել: Յետոյ ծափ տալով ւելի երկու, երեք ասաց, և սանիկները կանգնեցին ու բռնեցին նստարաններից, բաց արին, ինչպէս հարկն էր և «Հորսա ասեն լիս նստոտեցին:

Սորանից Յետոյ սկսեցին մի երգ (գարնան) և երգելս պարաւում էին իրանց նստարանների շուրջը: Ապա շրջան առած՝ սկսեցին «Գիւղացու երգը»: Տիկին Ս. Բաբայեանցը և Օր. Ա. Զանեանցը օգնութեան համան: Երբ երգի մէջ ասւում էր «Գիւղացին ո՞նց է ցանում», ամենքը պատասխանում էին, ձեռքի օրինակով ցոյց տալով այդ գործողութեան ձեւ:

Յետոյ Օրիորդը բերեց արկղներում գրուած խաղալիկ-ները. հանեց բրդէ թելի գնդակները, ապա՝ խորանարդները, ցոյց տուեց, հարցերով սովորեցրեց նոցա ձեւը, գոյնը՝ թիւը և այլն. Ապա դարձեալ շրջան կաղմեցին և երգելով ու գործով սկսեցին ներկայացնել «Մի գառնուկի պատմութիւն»: Նախ Օր. Յովհաննիսեանցը շնորհալի և կենդանի կերպով պատմեց սանիկներին այդ պատմութիւնը: Յետոյ մանուկներից մէկը գառնուկ ձեւանալով՝ «մէ՛ մէ՛ անելով շրջանի մէջը ընկած՝ սկսեց վաղել կորցրած մօր ետևից նորան զըստնելու: Ըուտով գտաւ մօրը և նոքա միմէանց փաթաթուեցան:

Եյդ խաղը թէ՛ գեղեցիկ էր և թէ ծիծաղաշարժ: Պատմութեան մէջ մտնում էր նաև փայտ սղոցելը, և այդ գործողութիւնն էլ ձեռքերով ցոյց տուին:

Վերջապէս նստոտեցին նախաճաշիկ անելու: Օրիորդը մի մատուցանելիքով բերեց բլիթներ, բաժանեց սանիկներին, որոնք սկսեցին ախորժակով ուտել: Օրիորդը նոցա առաջն էլ բաժակներով ջուր գրեց, որ խմեն: Յետոյ նոցա շաքարեղին բաժանուեցաւ: Բայց այդ, ինչպէս բացատրուեցաւ, ընծայ էր և բայց անուն էր գէպք: Սանիկներից մէկին շաքարեղին պակասեց. բայց ընկերները իրանց մասից նորան մէկ մէկ հատ բաժին հանելով նորան էլ հասցրին իւր բաժինը: Ընկերներից մէկն էլ չէր եկել նորա համար էլ բաժին պահեցին:

Ի հարկէ, գա շատ գովելի կրթութիւն է: Եյդչափ փոքր հասակից դորանով նոցա մէջ արմատանում է կարեկցութեան, ընկերսիրութեան և, որ գլխաւորն է, փոխադարձ օգնութեան նուիրական գաղափարը: Նոցա մէջ, նոցա մատղաշ սրտերի մէջ ցանւում է այն սերմը, որ ապագայում աճելով՝ նոցանից իւրաքանչիւրի անհատական առանձնայատկութիւնը, ապագայ բարյական մարդը պէտք է պատրաստի: Պարապմունքը այդպիսով վերջացաւ ներկայ եղողների բուռն ծափահարութեամբ:

Մի նկատողութիւն միայն կ'անենք այստեղ: Օրիորդի պարապմունքը մի փոքր բնականից գուրս էր գալիս, արուեստական դառնում: Դորանով ի հարկէ, մասամբ էլ վիրաւորում էր Փրեսբելի գաղափարը՝ բնութիւնից առած թռչնիկ-

ներին բնութեան ծոցում և բնական օրէնքներով կրթելը, Սակայն, ընդհանրապէս շնորհակալութիւն մէծ. Օրիորդին որ յանձն առաջ ծանօթացնել հայ ուսուցիչներին այդ նոյն իսկ եւրոպայի մէջ նոր հիմնուած դպրոցի հետ ուսուցիչներին, որոնք ուրիշ ոչ մի առիթ չէին կարող ունենալ երբ և իցէ իրանց տեղերում նոյնը տեսնելու: Երկու անձն են սովորել պարտիզանութիւն, և երկուսն էլ Տփխիսումն են: Տիկին Բարյախանցին որ նա էլ յանձն առնի պարապել: Եւ մէծ տիկինը յօժարութեամբ յանձն առաւ:

Ժողովականներից մի քանիսի խնդրանօք պ. Ս. Մանդինեանցն էլ յանձն առաւ հետևեալ առաւօտը հայոց լեկուով պարապել: Եյդպիսով այս պարապմունքն էլ վերջացաւ:

Ներկայ էին 151 ուսուցիչ:

#### ՄԱՍՆԱԺՈՂՈՎՐԴԻ ՆԻՍՏԸ

#### IV.

Անմիջապէս, ուսուցիչների ցրուելուց յետոյ կայացաւ Մասնաժողովի նիստը: Միենայն ժամանակ Կրօնագիտութեան, Վայելչագրութեան և Զայնագրութեան սեկցիաներ կազմուեցան և առանձին առանձին նիստ կայացրին: \*)

\*) Բայց, ինչպէս յետոյ լուցինք, որովհետեւ Կրօնագիտութեան ծրագիրը քննելու համար՝ ներկայ եղան հոգեւորականների մէծ մասը անյարմար անձինք են եղիւ, ուստի մի քաշանայի առաջարկութեամբ նիստը փակուել էր, այն դժուարութեամբ որ միւս անդամ հրաւիրուեն մի քամի կշիռ ունեցող հսդեւորական եւ աշխարհական անձինք ու նոցա մաժնակ ցութեամբ ձեռք տրուի գործին:



Մասնաժողովի քարտուղարը կարդաց նախորդ նիստի արձանագրութիւնը և ապա ձեռք տրուեցաւ ոռւսաց լեզուի հարցին՝ ո՞ր տարուանից սկսելը որոշելու համար:

Երկար վիճաբանութիւններ եղան դորա առիթով: Ումանք ժողովրդի մեծամեծ պաշանջները առաջ բերելով առաջարկում էին երկրորդ տարուանից սկսել: Ումանք էլ այդ պահանջներին բաւարարութիւն տալու կարեռութիւնը հերքելով՝ հարցին զուտ մանկավարժական կետից էին նայում: և աւելի օգտակար էին համարում որ մանուկները մտաւորապէս ըստ ամենայնի լաւ կազդուրուեն իրանց մայրենի լեզուի ուսման մէջ, որպէս զի ապա օտար լեզուի ուսմունքն էլ աւելի հաստատուն հիմանց վերայ և աւելի յաջող առաջ գնայ, — և առաջարկում էին երրորդ տարուանից սկսել: Այս դէպքում նոցա կարծիքով՝ ոռւսաց լեզուն ոչինչ վիաս չէր ունենայ. այլ երկու տարուայ մէջ մանուկները աւելի դիւրութեամբ կը սովորէին այն ընթացքը՝ ինչոր նշանակուելու էր երեք տարուայ համար:

Հարցը քուէարկուեցաւ և ձայների առաւելութեամբ ընդունուեցաւ երրորդ տարուանից սկսել:

Որոշուեցաւ այս երեկոյ ձեռք տալ Ծխական դպրոցների ծրագրերի քննութեանը:

## ԺԷ

Երես.

Նիստը նշանակուած էր՝ մէր ուսումնարաններում տօնելի օրերը որոշելու համար: Եւ որովհետեւ Կ. Յանձնաժողովը տօների առիթով մի բեֆերատ էր ստացել Բագուից մէծ Բժիշկ Մ. ԱՐԱՄԵՍՆՅԻՑ, — ուստի նորա բացակայութեան պատճառով կարդաց նշնը պ. Արիսողու Յովհաննիսեանցը:

Եւր բեֆերատի մէջ մի քանի ընդհանուր խօսքերով բացատրելով դպրոցական տօների նշանակութիւնը՝ յարգելի բը ժիշկը առաջարկում էր տօնել Ս. Ս. Սահմանական կայ և Մեռուպութ այ տօները իր անց աշակերտների հետ միասին, Վարդանանց, Լուսաւորչի, Էջմիածնի հիմնադրութեան, Մեծին Ներսեսի, Ներսէս Շնորհալուոյ, Ներսէս Ե. ի և Մատթէոս Ե. Կաթողիկոսի տօները:

Վիճաբանութիւնները սկսելուց առաջ պ. Նախագահը կամեցաւ իմանալ մէ գարձեալ ով ի՞նչ տօն է ցանկանում առաջարկել: Ապա եղան նորանոր առաջարկութիւններ:

Պ. Յ. ԽՈԶԱՄԻՐԵՍՆՅԻՑ առաջարկեց Նաւասարդի տօնը. աւելացնելով որ դա բուն հայկական տօն է և տակաւին մինչև օրս էլ տօնւում է զանազան տեղերում, և ամփոփում է իւր մէջ հեթանոս հայերի նոր տարուայ յիշատակը: Պարոնը ասաց որ՝ «Կայ օրը տօնւում է Արաբաղում նոյն ձեռով, ինչ ձեռով որ առհասարակ տօնւում է Նոր-տարին: — Երբ պարոնի առաջարկութիւնը շատերի կողմից համակրութեամբ ընդունուեցաւ, նա փոքր ժամանակից յետոյ աւելացրեց՝ «Պա ո՞չ միայն մի որեւիցէ Խոջամիրեանցի առաջարկութիւնն է, այլ նոյն իսկ Ալիշանի ջերմ ցանկութիւնն է»:

Պ. Գ. ՊԵՏՐՈՍԵՍՆՅԻՑ առաջարկեց ընդունել նաև տեղական տօները, առաջ բերելով այն հիմնոնքը, որ տեղական ժոներին աշակերտները իրանց ծնողաց հետ գնացած լինելով իրանց ուխտատեղիները, այլ ևս շարաթներով ուսումնարան չեն յաձախում: Եւ իրբե օրինակ յիշեց Ղաղախի ու Բորչալուի մէջ ս. ս. նշանի և Գէորգայ ու Սղնախի մէջ Ծմինդայ (սուրբ) նինոյի տօները:

Պ. Մ. Տ. ՄԻՔԱՅԻԼԵՍՆՅԻՑ առաջարկեց ս. ս. Թագէոսի ու Բարդուղիմէոսի և Արգարի տօնը:

Պ. Յ. ՄԻՐԶԱՄԻԿԵՍՆՅԻՑ առաջարկեց տօնել Հոյոց Առաջին Ընդհանուր Ուսուցական Ժողովը: — Եւ բաւական ծիծաղ պատճառեց:

Պ. Գ. ԽԾՏՒՍԵՍՆՅԻՑ առաջարկեց կազմել բոլոր տօների ցուցակը և յանձնել Մասնաժողովին ընտրութիւն անելու:

Պ. Յ. ԳԵՂԱՄԵՍՆՑԸ յատնեց որ՝ «Ո՞չ միայն Ընդհանուր Աւտուցչական ժողովը, այլև նոյն իսկ Կամողիկոսը չեղարող որեւէցէ նոր տօն մտցնել»:

Վիճաբանութիւններից յետոյ ընդունուեցաւ տօնել միայն Ա. Մեսրոպակայ և Ա. Վարդանանց և Նաւասարդի տօները:

Ապա Պ. ԱԲԻՍՈՒՌՈՄ ՅՈՎՀԵԱՆՏՍԵԽՆՑԸ հարց գրեց թէ դոցանից ո՞րը պէտք է հանդիսաւոր կերպով տօնել: Պարոնը ասաց որ՝ արդէն Վարդանանց տօնը հանդիսարար է կատարում: մնում է որ Ա. Մեսրոպակայ տօնն էլ հանդիսարար կատարուի: Եւ աւելացրեց՝ «Ճատ լաւ կը լինի որ ամէն ուսումնարան ս. Վարդանի պատկերի հետ ունենայ և ս. Մեսրոպակայ պատկերը»:

Յետոյ հարց ծագեցաւ թէ ո՞ր օրը կատարուի ս. Մեսրոպակայ տօնը: Զանազան առաջարկութիւններից ընդունուեցաւ Պ. ՊԻՒՇԵԽՆՑԻ առաջարկածը. այն է տօնել հոկտեմբերի 9-ին: «Եյդ այն օրն է, ասաց պարոնը՝ երբ Օշականում օծել են ս. Մեսրոպակայ եկեղեցին»:

Ժողովը հարկաւոր համարեց խնդրել ԱԵՀափառ Կաթողիկոսին որ այդ օրը ուսումնարանական տօնի օր համարէ:

Նիստը վերջանալուց յետոյ Պ. ԵՐԻՑԵԽՆՑԸ Կ. Յանձնաժողովի կողմից յայտնեց որ ուսուցիչները եկող երեքշաբթի երեկոյին կլուր (Ժողովարան) են հրաւիրում:

Մի քանի ըստէ միջոց տալուց յետոյ Ժողովը պատրաստում էր մի նոր բեֆերատ լսելու: Իբերենալ տաճկաստանցի հիւր Պ. Յ. ՄԵԼԵՏԻՍԻՐԵԽՆՑՆ էր: Եյդ գրուածքը իսկապէս մի համառօտ տեղեկագիր էր, որ պ. Դասախոսի ասելով կաղմուած էր երեք տարուայ մէջ:

Պ. Մեղաւորեանցը մի համառօտ հայեացք ձգելով վերջին 50 տարուայ ընթացքում տաճկահայոց կրթական վիճակի վերայ՝ սկսեց հաղորդել Ժողովին իւր հաւաքած և ուսումնասիրած վիճակագրական տեղեկութիւնները:

Պարոնի ասելով՝ կրթութեան գործը առհասարակ գաղատոներում աւելի է ծաղկած ուսուած գեացած: Քան թէ մայրաբաղաբում: Պարոնը յաճախ շեշտելով կրկնում էր, թէ Պոլսյ վարժարանները կարող են օրինակ առնել գաւառական վարժարաններից: Նա յիշեց որ Միացեալ Քնկերութիւնը գաւառներում 30 դպրոց է բաց արել: Միայն Խիզանու ընկերութիւնը Սամնյ լեռներում՝ չկամեցաւ միանալ այդ գործին. և այժմ ունի իւր 3—4 դպրոցները:

Գալով մասնաւորապէս ուսումնարանների և ուսանողների թուին՝ պ. Մեղաւորեանցը ասաց որ Կ. Պոլսում 35 աղդային և 10 մասնաւոր ուսումնարան կայ, որոնց մէջ ուսանում են 8500 ուսանող: Դպրոցների մեծ մասը երկսեռ են. առանձին աղջկանց ուսումնարան ընդամենը 12 հատ է. ուսանում են 3500 աղջկունք:

Ապա սկսեց համեմատական թուանշաններ գուրս բերել ս. Պոլսի, Տրապիզոնի և Տիֆլիսի հայ բնակիչների ուսանողների վերաբերութեամբ: Պարոնի հաշուով Կ. Պոլսում Ժողովրդի 1/30 լ աշակերտ է, Տրապիզոնում 1/18 լ. և Տիֆլիսում 1/16 լ:

Գալով տաճկահայոց դպրոցների շինութեանցը առողջապահական կետի նկատմամբ՝ Ժողովը շատ վաղաժամ ստացաւ պարոնի հաղորդած տեղեկութիւններից: Նա ասում էր որ առհասարակ առողջապահական կետից ոչինչ ուշադրութիւն չեղարձնում և նոյն իսկ Կ. Պոլսում կան ուսումնարաններ, որոնց մէջ մի սենեակում նստոտած են 250 աշակերտ: —

Կէտք է նկատել, որ ընդհանրապէս պ. Մեղաւորեանցի տեղեկագիրը շատ թոյլ և աղօտ տեղեկութիւն հաղորդեց ուսումնահայերիս տաճկահայոց կրթական վիճակի մասին: Երեք տարի շարունակ տեղեկութիւններ ժողովողից աւելի ընդարձակ ու բազմակողմանի կերպով մշակուած տեղեկագրի կարելի էր սպասել:

Դասախոսութեան վերջը ՏԻԿԻՆ Ա. ԵՐԻՑԵԽՆՑԸ նշկատեց պ. Մեղաւորեանցին որ առհասարակ Կ. Պոլսի հայոց դպրոցները, մանաւանդ նոցանից մի քանի նորերը առողջա-

պահական կետից նայելով՝ բաւական յարմարութիւններ ունեն. Են խնդրում եմ ձեզ աշաց տիկինը, որ ցոյց տաք ինձ թէ այն ո՞ր գպրոցն է, որի մէջ մի գահիճում. մի սրահում նստուած են 250 աշակերտ. Ես ի՞նքս նոր եմ եկել Կ. Պոլսից, որտեղ այցելել եմ հայ գպրոցները. բայց ո՞չ մի տեղ մի գահիճում այդքան թուռվ աշակերտ չեմ տեսել:

Թէ՛ Տիկինը և թէ պ. Դասախոսը պնդում էին իրանց ասածը. բայց հարցը այնպէս էլ մնաց.... ունկնդիրների համար անորոշ:

~~~~~

Մի փոքր հանգստանալուց յետոյ Պ. Գ. ԲՈՒԽԻԱ-  
ԹԻՆ ՆՅԼ կարդաց «Մանկական գրադարանի» մասին. Պարոնը  
ասաց որ՝ ինքը երեք տարի Ալեքսանդրոպոլի Արշութեան  
Օրիորդական գպրոցում գրադարանապետի պաշտօն վարած և  
այլ և այլ հանգամանքների վերայ լաւ ուշադրութիւն դարձ-  
րած լինելով գալիս է այն եղրակացութեանը, որ մանուկների  
մտաւոր ծարաւը յագեցնելու և նոցա ընթերցանութեամբ զար-  
գացնելու համար՝ ամեն ուսումնարան պէտք է ունենայ կա-  
նոնաւոր մանկական գրադարան. Եւ թէ՝ գաւառացի ու գիւ-  
ղացի մանկան համար, որ զրկուած է այն ամենայն յարմա-  
րութիւններից, որոնցով շրջապատուած է մայրաքաղաքի մա-  
նուկը՝ ամենալաւ զարգացուցիչ հիմնարկութիւնը գրադարանը  
կարող է լինել.

Մի քանի խօսքով պարոնը յայտնեց այն կարծիքը, որ  
մանկանց ձեռքը առհասարակ այնպիսի գրքեր պէտք է տալ  
որ կարողանան նորան իւր հայրենի հողի վերայ. Հայաստանի  
զանազան անկիւնները պտըտեցնել և խօսեն նորա հետ միշտ  
իւր հայրենիքի մասին. Ինքն ըստ ինքեան, ի հարկէ, հաս-  
կանալի է, որ օտար լեզուներից թարգմանուած և իրանց ներ-  
քին բովանդակութեամբ ըստ մեծի մասին մեր մանուկների  
շրջանից գուրը և նոցա համար անբնական երևոյթներ նկարա-  
գրող մանկական գրքերը երկրորդական տեղ միայն կարող են  
բռնել մանկական գրադարանի մէջ:

Պ. Բունիաթեանցը լուրջ ուշադրութիւն էր հրամիրում  
այն հանգամանքի վերայ, որ աշակերտի ձեռքը տալու գիրքը  
խիստ ընտրողաբար առնուի գրադարանից. Պարոնը ասում էր  
որ՝ այդ ընտրութիւնը առհասարակ մանկավարժական խոր-  
հուրդը պէտք է անի. իսկ գիւղերում, որտեղ միայն մի' ու-  
սուցիչ կայ, այդ վերջինը պէտք է թեմական տեսչի խորհրդով  
անի գրքի ընտրութիւնը:

Պ. Դասախոսը յայտնեց և այն՝ թէպէտ տարրական,  
բայց գուցէ շատերին անծանօթ միտքը, որ գրադարանապետը  
ինքը առաջուց պէտք է կարդացած լինի այն գիրքը որ տա-  
լիս է աշակերտին. և միշտ պէտք է ի նկատի ունենայ կարդա-  
ցողի հասակը. Մանաւանդ պարտաւորեցնում էր գրադարա-  
նապետին, որ նա միշտ հաշեւ պահանջէ աշակերտից իւր կար-  
դացած գրքի մասին. որ նա պատմել տայ զրքի բովանդակու-  
թիւնը, որ յիրաւի կարողանայ հաւաստիանալ թէ աշակերտը  
կարդացել և օգուտ է քաղել.

Պարոնը առաջարկում էր որ ուսումնարանական տարուայ  
սկզբումը և վերջումը աշակերտին գիրք չտրուի, որովհետեւ  
առաջին ամիսներում նա նորանոր առարկաներով ու գասե-  
րով է լինում զբաղուած, իսկ վերջիններում հարցաքննու-  
թիւններով ծանրաբեռնուած:

Եյլ և պ. Դասախոսը աւելորդ էր համարում առաջին և  
երկրորդ տարուայ աշակերտներին գիրք տալը՝ թէ՛ այն պա-  
ճառով որ նոքա գեռ ևս վարժ չեն լնթերցանութեան մէջ և  
թէ՛ այն՝ որ նոքա կը դժուարանան կարդացածի իմաստը ըմ-  
բռնելու:

Իսկ զրադարան ունենալու համար պ. Բունիաթեանցը  
առաջարկում էր հետևեալ միջոցները:

ա.) Գրադարանից գիրք ստացողներից պահանջել մի որոշ  
աշակերտական տուրք:

բ.) Ուսումնարանի հոգաբարձութիւնը կամ վարչու-  
թիւնը պարտաւորուի գպրոցական գումարից տարեկան մի  
յայտնի տուրք վճարել:

գ.) Ուսումնարանում վաճառուող գրքերի ու դասական  
պիտոյքների արդիւնքից գրադարանին յատկացնել 2%:

Դոքա գրադարանի պահպանութեան հաստատուն աղ-  
բիւրներն են: Պահպանութեան գործութեան մասը

Կարելի է նաև իմացութեան մասը պահպանութեան  
ա.) Ըստունել պատահական նույներ:

բ. Աւելորդ գրքերը փոփոխել ուրիշ գրադարանների  
գրքերի հետ:

գ.) Տարիին մի անդամ յօդուտ գրադարանի ներկայա-  
ցում տալ: — Պ. Բունիաթեանցի կարդացածը ընդհանրապէս  
համակրութեամբ ընդունուեցաւ և բուռն ծափահարութեամբ  
վարձատրուեցաւ:

\* \*

Խոկոյն նորանից յետոյ ամբիոն բարձրացաւ Պ. Յ. ՄՈՒ-  
ՐԱԴԵՍՆՑԼ (ԽԻՍՈՒԹԵԱՆՑ), որ՝ ինչպէս ասաց պ. Նախա-  
դահաջր գրուածք ունէր կարդալու նոյն նիւթի վերայ: Սակայն  
պարոնը ընդհանրապէս նոյն մտքերն էր կրկնում: Իսկ իւր կող-  
մից յայտնած մի քանի խօսքերն էլ իսկապէս ոչինչ նոր բան  
չէին պարունակում իրանց մէջ:

Եթէ գորա վերայ աւելացնէք, որ պ. Մուրադեանցը մինչ  
անդամ չէր կարողանում ունինդիրներին հասանելի և հաս-  
կանալի լինելու շափ պարզ ու օրինաւոր կարդալ ապա շատ  
դիւրին կը լինի նորա կարդացածը գնահատել:

Զարմանալի էր միայն թէ ինչպէս կ. Յանձնաժողովը  
թոյլ էր տալիս այդպիսի գրուածքները կարդալ և, Ժողովի  
համբերութիւնը ի շարը գործ դնելով զուր ժամալաձառ  
լինել:

Ի գեա: Պէտք է յիշենք այստեղ, որ պ. Բունիաթեանցն  
էլ բաւական բառեր էր կուլ տալիս... երեխ շտապելուց...:

Այդպիսով նիստը վերջացաւ: — Թէպէտ նախընթաց օրուա-  
նից ազդարարուեցաւ որ հետեւեալ օրը պ. Յ. Մանդինեանցը  
պէտք է պարապէր, այդուամենայնիւ պ. Մանդինեանցը յայտ-  
նեց որ հետեւեալ առաւօտը պ. պ. Կ. Մելիք-Շահնազարեանցը  
և Գ. Նուլեքեռիմիայեանցը կը պարապէն հայոց լեզուով: առա-  
ջինը Զ-րդ, վերջինը Յ-րդ տարուայ աշակերտների հետ:

Ներկայ էին 128 ուսուցիչ:

— անդրուն արքայացաւ: **ԺԹ.** ասք մասն ու անձնանա-

ցայքադու գոր ըմուայն Անդրանիկ Սեպեմբերի 1:

— առ ա մ մասն առ պահանձու Անդրանիկ Սեպեմբերի:

Պ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԼ գասիր սկզբումը  
համեստաբար ասաց, և առ օրինակելի դաս չեմ տալիս. այլ  
ինչոր և ինչ ձեռվ երեք տարուայ մէջ փորձով ստացել եմ:  
նցինը նոյն ձեռվ էլ դաս կը տամ:

Պարոնը որ կամենում էր պարապել պ. Յ. Մանդինեանցի  
երկրորդ տարուայ «Դիւցազնական աշխարհ» անոնով դա-  
սագրքով սկսեց զբաղեցնել աշակերտներին նախապատրաս-  
տութեամբ: Պէտք է խոստովանել որ թէպէտ պարոնը շատ  
ճապաղեցրեց այդ նախապատրաստական աստիճանը: թէպէտ  
շատ աւելորդ կետեր ջաշակեց: այդուամենայնիւ բաւական  
յաջողութեամբ մօտեցաւ գրած նպատակին: Պարոնը յիշեալ  
գրքից ընտրել էր «Բաղդադ» վերտառութիւն կրող յօդուածը:

\* \*

Յետոյ պարապեց Պ. Կ. ՂՈՒԼԻՔԵՍԻՎԱՅԵԱՆՑԼ: Սա  
պարապեց նոյն հեղինակի «Նահապետական և հայրենի աշ-  
խարհ» անոնով երրորդ տարուայ դասագրքով ընտրելով  
նորա միջից «Հովուի ցուպը» վերնագրով յօդուածը: —

Պէտք է ասել, որ սորա դասն էլ բաւական գոհացուցիչ էր:  
Ներկայ էին 146 ուսուցիչ:

### ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

—  
V.

Դասերից յետոյ կայացաւ Մասնաժողովի նիստը: Առա-  
ջարկուեցաւ Ծրագիրը նախ ամրողութեամբ կարդալ ապա

առանձին առանձին դաստուն։ Կարդացուեցաւ ամբողջութեամբ։

Պ. Դ. ՔԱՂԱՔԱՐԵՍՆՅԸ Նկատեց որ՝ «Ծրագիրը շատ հարուստ է»։

Պ. Դ. ԱՂԱՅԵՍՆՅԸ — Նիւթերը շատ խառն են և անպատակայարմար։

Պ. Ս. ԲԵԿԱՆԱԶԱՐԵՍՆՅԸ — Նոյն կարծիքը։

Պ. Կ. ԹԵՄՈՒՐԱԶԵՆՅԸ — Էնդհանուր զարգացման նպատակին չէ կարող հասնել։

Պ. Ս. ՄԵԼՔՈՒՄԵՍՆՅԸ — Ծրագրի մէջ բաղմակողմանի կրթութիւն չէ երևում։

Պ. Պ. ՊՈԽԵՆՅԸ — Գիւղական ուսումնարանների համար բոլորովին անպատակայարմար է։

Պ. Ս. ԲԵԿԱՆԱԶԱՐԵՍՆՅԸ — Ես այստեղ ունեմ մի մըշակած ծրագիր։ Արդեօք լաւ չի՞ որ այս ծրագիրն էլ կարդանք, այդ էլ և համեմատենք միմեանց հետ։

Թէպէտ պարոնի առաջարկած ծրագրից էլ կարդացուեցաւ, բայց մինչեւ վերջը չշարունակուեցաւ։

Պ. Ս. ՄԱՆԴԻՆԵՍՆՅԸ — Ես այս (Յանձնաժողովի կազմած) ծրագիրը գլխէ ի գլուխ անյարմար եմ համարում ծըխական դպրոցների համար և ուսուցիչների համար էլ միանգամայն անդորրագրելի։

Ա. ԲԱՀԱԹՐԵՍՆՅԸ — Ես այս ծրագրի մէջ շատ պահանջմիւններ եմ տեսնում։ և առաջարկում եմ որ ծրագրի ընդհանուր կետերը քննուեն։

Եւ, երբ խօսք ընկաւ դասագրքերի մասին՝ պարոնը աւելացրեց որ՝ «Դասագիրք չպէտք է որոշել. այլ պէտք է որոշել ընդհանուր նպատակը»։

Պ. Ս. ԲԵԿԱՆԱԶԱՐԵՍՆՅԸ — Ամէն դաստանը աւանդելու նիւթերը յականէ յանուանէ պէտք է յիշել։ Ծրագիրը անիրագործելի է, մանաւանդ գիւղական ուսումնարանների համար և սկզբունքին անյարմար։ Թո՛ղ մի քանի պատրաստի ծրագրեր առաջարկուեն և մաս առ մաս համեմատուեն միմեանց հետ։

Եյս կէտը երկար վիճարանութեան առիթ տուեց, սա-

կայն առանց մի որոշ եղբակացութեան գալու ժողովը ցրուեցաւ։

Հետեւեալ առաւօտուայ համար որոշուեցաւ նոյն օրուայ պարապմանց քննադատութիւնը, Խսկ պ. Մանդինեանցը խոստացաւ բացատրել իւր գրել-կարդալու եղանակը։ զանակը ներկայ էին 19 անդամ։

ի.

Ա ԵՃ Պ. ԳՐԻԳՈՐ ԱՐՏՈՒՐԻՆԻՆ պէտք է դասախոսէր «Մայրենի լեզուի նշանակութեան մասին դպրոցում», Պարոնը ամբիոն բարձրանալով, մի դասախոսի, և մանաւանդ մի հրապարակախոսի վայել համեստութեամբ, որ իւր խոնարհութեան մէջ աւելի բարձր է պահում խօսողին՝ ասաց։ Ես բարձրանում եմ այն ամբիոնը, որտեղ ինձանից առաջ շատ հմուտ մանկավարժներ են բարձրացել։ և եթէ ես մանագէտ չլինելով մանկավարժութեան մէջ, սխալներ անեմ իւրնդրում եմ որ ժողովը ներողամիտ աշքով նայի այդ սխալներին։

Պ. Արծրունին խօսելով մանկավարժութեան մասին, ասաց. «Մանկավարժութիւնը ճիշտ գիտութիւն չէ, ինչպէս և բժշկականութիւնը։ Երկուսն էլ հիմնում են ճիշտ գիտութեանց վերայ և ներգործում են, յարմարուելով մանկան անհատականութեանը»։

«Ենչպէս որ բժիշկը հիւանդին բժշկելիս, անպայման գոհ չմնալով գիտութեան մէջ ընդունուած և ընդհանրաց ճշմարտութիւններով ի նկատի է ունենում նաև ուրիշ բազմաթիւ անհատական և արտաքին հանգամանքներ, որոնք կարող են ազդեցութիւն ունենալ նորա առողջութեան խանդարուելու վերայ. այնպէս էլ ուսուցիչը իւր աշակերտի հետ պարապելիս գոհ չէ մնում ընդհանուր, մանկավարժութեան

մէջ յայտնի ճշմարտութիւններով այլ ի նկատի է ունենում շատ արտաքին ու ներքին հանգամանքներ, որոնք կարող են կապ և ազդեցութիւն ունենալ նորա անհատականութեան հետ և նորա զարգացման վերաց:

«Մեր նախնիքը մանկան կրթութեան մասին տարբեր գաղափարներ ունեին: Հին ժամանակուայ մարդիկ Մովսէս մարդարէի վարդապետութեան համաձայն կարծում էին թէ երեխան ի բնէ չար է ծնուռմ: Աւրիշների: օրինակ՝ Ժ. Ժ. Ռուսոյի վարդապետութեամբ մարդս ի բնէ բարի է ծնուռմ: և միայն արտաքին ազդեցութիւններն են, որ նորան հակում տրամադրում են չարը գործելու: Սակայն ժամանակակից մանկավարդութիւնը այդ երկու վարդապետութիւններն ել սիալ համարելով, ասում է որ՝ մանուկը ո՞չ չար է ծնուռմ և ո՞չ բարի: Այլ այդ երկու յատկութիւններն ել կարծես իսկը բանէ կան նորա մէջ միայն քնած, թմրած, լատէն գրութեան մէջ որ յետոյ կեանքի ազդեցութեան ներքյ հակում է գէպի այս կամ այն կողմը և գործելու: Պարզ է, որ միայն գրում է բարին կամ չարը գործելու: Պարզ է, որ միայն կրթութիւնից է կախուած այդ յատկութիւններից մէկը կամ միւսը զարգացնելը»:

Խօսքը բերելով լեզուի վերայ, պ. Դասախոսը ասաց որ՝ «Ի՞նչ լեզու մանուկը լսում է առաջին անգամ այն է նորա մայրենի լեզուն. թէկուզ մանուկը հայ լինի: իսկ առաջին անգամ լսած լեզուն՝ վրացերէն կամ ուսերէն: — Եւ մի ազգ այնքան մայրենի լեզու ունի, որքան նա շփուռմէ զանազան ազգ այնքան մայրենի լեզուն ունի, որ յարմար ազգերի հետ: Բայց բուն մայրենի լեզուն այն է, որ յարմար է նորա փիղուղիական կազմութեանը: — Հայն հայ լեզուով աւելի կարող է զարգանալ: քան որեիցէ ուրիշ լեզուով: — Մարդկային ուղեղի ամենաբարձր կէտը գիտնական աշխատանքն է և մտաւոր ստեղծագործութիւնը: Ստեղծագործութիւնը (օրինակ՝ ուսման, վարդապետութիւն...) չէ կարելի արդիւաբերել ուրիշ լեզուով»:

Մի խօսքով՝ հիմնուելով այն ճշմարտութեան վերայ որ՝ թէպէտ մանկան համար իւր մայրենի լեզուն է, որով նա առաջին անգամ թոթովել է, որով նա խօսել է իւր ծնուած

օրից: այդուամենայնիւ պարոնը գալիս էր այն եղրակացութեանը որ՝ «Սովորեցնելով հային ո՞չ թէ իւր օրօրոցում թոթոված լեզուն, այլ այն՝ որ յարմար է նորա փիղուղիական կազմուածքին, մենք նորան միջոց ենք տալիս կանոնաւոր կերպով մոտաւորապէս զարդանալու և իւր բոլոր մտաւոր ու հոգեկան կարողութիւնները զարդացնելու անսահման կերպով, որքան նա կարող է. նաև ձգտելու մտաւոր ստեղծագործութեանը»:

Եւ իբրև վերջաբան պ. Դասախոսը ասաց որ՝ «Մայրենի լեզուի նշանակութիւնը գալրոցում այն է որ՝ սովորեցնելով հային հայերէն լեզուն, հիմնելով նորա համար հայ գրոցներ, թէպէտ և այդ հայն մոռացած լինի հայերէն լեզուն, կամ ամենակն էլ գիտեցած չլինի, այլ միշտ օտար լեզուով լինի խօսած: — մենք օգուտ ենք տալիս թէ՝ այդ հայ մարդուն և թէ՝ նորա միջնորդութեամբ ամբողջ մարդկութեանը»:

Պ. Արծրունին բուռն ծափահարութեամբ և Ժողովի կողմից իրան յայտնուած առանձին շնորհակալութեամբ՝ իջաւ ամբիոնից:

Այսուեղ թողնելով ընդդիմախօս անձանց յայտնած բոլոր հակառակ մոքերը, կ'ասենք միայն որ՝ Պ. Տէր ՅՈՎԱՆԻՍԻՍԵՆՅՑԼ կամենալով ապացուցանել որ կարելի է նաև օտար լեզուներով մտաւոր բարձր ստեղծագործութիւններ անել՝ օրինակ բերեց Հէյնէին, Առւերբախին, նկարիչ Այվազովսկուն և վերջապէս մեր օտարախօս աշուղներին:

Պ. ՍՊԱՆԴԱՐԵՆՅՑԼ համաձայն էր պ. Տ. ՅՈՎՀԱՆԻՍԻՍԵՆՅՑի հետ և պնդում էր որ պ. Արծրունու յայտնած միտքը սիսաւ է:

Իսկ Պ. Ս. ԲէկնԱԶԱՐԵՆՅՑԼ, չգիտենք ինչո՞ւ, չկամենալով որ այդ հարցի մասին վիճաբանութիւններ լինեն՝ ասաց թէ. «Մեղ գաւառացիներիս համար անօգուտ է այդպիսի բաների վերայ վիճաբանելը: Մենք եկել ենք այստեղ բան սովորելու, ո՞չ թէ այդպիսի խորին մոքերը քննագատելու: Ուստի մեզ մնում է միայն շնորհակալութիւն անել պ. Արծրունուն նորա առաջ բերած նոր ու գեղեցիկ սկզբունքի համար»:

Պ. Դ. ԱՎԱՑԵՍՆՑ—Ըրդեօք այդպիսի մտաւոր ստեղծագործութիւններ անելու վերայ չէ՞ներդործում նաև սէր առ հայրենիս:

Պ. Ա. ՄԱՆԴԻՆԵՍՆՑԸ վերջը աւելացրեց. «Ո՞չ մի հոգեբանութիւն այդպէս համարձակ չէ ասում թէ լեզուի վերայ միայն մեր ֆիզիոլոգիական առանձնայատկութիւնն է ներգործում: Ճիշդ գիտութիւն չէ մանկավարժութիւնը. բայց և կան գիտութիւններ, որոնք ակսիոմաներով չեն սկսում»:

\* \*

Յետոյ Պ. Ա. ԳԱԼՍՏԵՍՆՑԸ դասախոսեց «Հարժական ուսումնարանների մասին»:

Պարոնը յիշեցնելով ժողովին որ շարժական դպրոցները Շվեյցիայում ու Նորվեգիայում շատ մեծ դեր են խաղում և մինչ անգամ աւելի շօշափելի արդիւնքներ են մատակարարում ժողովրդին, քան թէ մշտական հաստատուն դպրոցները—առաջարկում էր նշնպիսի դպրոցներ հիմնել նաև մեղանում:

Պ. Գալստեանցը ասում էր որ՝ դորա համար պէտք է որոշել երեք կենդրոն, այսինքն՝ երեք գիւղ. Մի ուսուցչի կարելի է տարեկան 400 ո. տալ մասնագրելով այդ գումարը այն երեք գիւղերից,—որ նա յանձն առնի շրջող ուսուցչի պաշտօն վարել: Եւ որովհետև շարժական դպրոցներում ուսումնարանական տարին 36 շաբաթ են հաշւում: Ուսուցիչը իւրաքանչիւր կենդրոնական գիւղի կ'ընկնի 12 շաբաթ: Ուսուցիչը իւրաքանչիւր գիւղից հետանալիս աշակերտները յանձնում է մի ընդունակ աշակերտի:

«Բայց, ասում էր պարոնը, որովհետև մենք դեռ ևս լաւ պատրաստուած ուսուցիչներ չունենք, չունենք մի լաբորատորի այս, որտեղ ուսուցիչներ լինեն պատրաստուելիս,—ուստի առ ժամանակ պէտք է շատանալ ունեցածներովս»:—«Աւանդելի առարկանի մէջ, աւելացրեց պարոնը,—Կրօնագիտութիւնը առաջին տեղը պէտք է բռնի, որովհետև ուսումը շարժական դպրոցում երկար չէ շարունակում»:

Պ. ԲԷԿԱՆԱԶԱՐԵՍՆՑԸ—Մենք շվեյցիաների նման ման-

կավարժական դպրոցներ չունենք. ուստի ես վաղաժամ եմ համարում մեղանում այդպիսի դպրոցներ հիմնելու: Այսուամենայնիւ, ես առաջարկում եմ սկզբունքով ընդունել այս հարցը:

Պ. Ա. ՄԱՆԴԻՆԵՍՆՑԸ—Հարժական դպրոցների գաղափարը շատ ցանկալի է մեղ համար: Բայց ես խոստովանում եմ, որ ինքս էլ եմ գժուարանում և չեմ կարողանում այդ ծրագրով և այդպիսի աշակերտների հետ պարապել ինչպէս հարկն է. մանաւանդ երեք ամսում այդքան ուսում աւանդելու անհնարին է:

Պ. Յ. ՏՈՎԱՀԱՆՆԻՍՆՑՆՑԸ—Ես կարծում եմ լաւ և աւելի նպատակայարմար կը լինի: Եթէ մեղնից մէկը գնայ Շվեյցիա կամ Նորվեգիա, աչքով տեսնի այդ դպրոցները, տեղն ի տեղը ուսումնասիրի և դայ մեղ պատմի թէ բանը ինչումն է:

Պ. Գ. ԽԱՏԻՍՆՑՆՑԸ—Հարժական դպրոցներ մեղանում հիմնելու թէպէտ ցանկալի է, բայց գժուար է առ այժմ: Դուրս օգտաւէտութեան մասին աւելրդի է կասկածելն անգամ: Եւրոպայում ո՞չ միայն շրջող ուսուցիչներ, այլև շրջող արհեստաւորներ կան: Ես ինքս իմ աչքով 4—5 տարի առաջ տեսել եմ Դանիայում: որ աշակերտներին տնային թեթև պարապմունքներ են սովորեցնում: Իսկ շրջող վարպետները արհեստ են սովորեցնում: 10 տարեկան երեխաները խողանակներ են շինում:

Պ. Յ. ՄԵՂԱՆԱՐԵՍՆՑԸ—Մեղանում շարժական դպրոցներ հիմնելու համար նախապէս ժողովուրդը պէտք է պատրաստել և պէտք է ի նկատի ունենալ աշակերտի հասակը: Ես կ'առաջարկեմ որ շարժական դպրոցում ընդունուին 10—12 տարեկան տղայք: Ես բոլորովին համաձայն եմ շարժական դպրոցներ ունենալուն:

Պ. Ս. ԲԷԿԱՆԱԶԱՐԵՍՆՑԸ—Որովհետև մեղանում դեռ ևս շատերին անծանօթ են շարժական դպրոցները, ուստի թողի ինքը պ. Գալստեանցը փորձի և հետևանքի մասին յայտնէ լրագրութեան մէջ:

Իսկ. Պ. ՄԱՆԴԻՆԵՍՆՑԸ դպրով քուէարկութեանը

ասաց. «Պարոններ, իմ կարծիքով սա մի այնպիսի հարց է, որի քուէարկելը ոչինչ նշանակութիւն չի կարող ունենալ. ուստի և ես չեմ քուէարկում:—Եւ այնպէս էլ մնաց ներկայ էին 123 ուսուցիչ:

**ԻԱ.**

## Սեպտեմբերի 2.

Առաջ.

Պ. Մանդինեանցը ասաց որ պէտք է սկսել նախընթաց օրուայ գասախօսութեանց վիճաբանութիւնը: Դորա առիթով զասատու Պ. Կ. ՄԵԼԻՔ. ԸՆԴԱԶԱՐԵԱՆՑԼ իւր կողմից բացատրութիւն տուեց: Պարոնը աւելացրեց թէ՝ եթէ կարգապահութիւնը և նախապատրաստութիւնը չկարողացաւ, ինչպէս հարկն էր, առաջ տանել դորա պատճառը այն էր, որ ինքը շփոթուեցաւ պարապելու միջոցին:

Ինչպէս երեւում էր, նկատողութիւն անողները մեծ մասամբ չէին ըմբռնել՝ դասի նիւթը նախապատրաստութեամբ աշակերտին իւրացուցանել տալու խորհուրդը: Այս պատճառով, շատերի կարծիքով նախապատրաստութեամբ զբաղութիւը աւելորդ զիխացաւանք և զուր ժամավաճառութիւն էր:

Պ. Մ. ՄԵԼԻՔՈՒՄԵԱՆՑՆ էր միայն, որ գնահատելով նախապատրաստութեամբ զբաղեցնելը, գոհ էր գասատուութիւնից:

ԲԱՀԱԹԻԵԱՆՑ—Դասից ստացուող բարոյական գաղափարները պատրաստի չպէտք է տալ այլ համանման գաղափարները մանուկներին համեմատել տալով պէտք է հասցնել նոցա այդ եղբակացութեանը:

\*\*

Յետոյ Պ. Ս. ՄԱՆԴԻՒՆԵԱՆՑԼ բացատրել էր իւր գրել կարգալու եղանակը: Մենք բացակայ էինք: Բայց, ինչպէս յետոյ լսեցինք, տաք վիճաբանութիւններ էին տեղի ունեցել:

Գլխաւոր ընդդիմախօսը պ. Աղայեանցն է եղել: Իսկ Պ. ՍԵԼԵԱՆՑԼ ասել է որ՝ ինքը Երևանի գարողում պարապել է նոյն մեթոդով: և: թէպէտ սկզբումը գժուարութեանց է հանդիպել բայց վերջը զգացել է նորա արդիւնաւորութիւնը: Նկատողութիւններին պատասխանելուց յետոյ Պ. ՄԱՆԴԻՒՆԵԱՆՑԼ յայտնեց ժողովին որ ինքը հետևեալ օրը հեռանալու է Տիկիսից, և առաջարկում էր որ իւր տեղը ուրիշը ընտրուի: Ներկայ էին 134 ուսուցիչ:

**ԻԲ.**

Երես.

Պ. Հ. ՊԱՏԿԱՍԵԱՆՑԼ գասախօսեց «Պատժի» մասին: Պարոնը պատժի գլխաւոր շարժառիթները որոնելով աւելի ուրիշ աղբիւրների մէջ՝ քան թէ մինչև օրս առ հասարակ սովորութիւն կար որոնելու, ասում էր. «Արգեօք մենք իրաւունքը ունենք պատիմը գործադրելու, որովհետեւ դա կարող է թէ՛ ֆիլիքապէս և թէ՛ բարոյապէս անդամալուծութիւն պատճառել:—Պէտք է մտածել արդեօք իւր յանցանքի համար երեխան է մեղաւոր. մինչդեռ պարզ է որ երեխայական յանցանքներից մեծ մասը նորանից անկախ է:—Նորա յանցանքների աղբիւրները մեր մէջն են:—Երբ երեխան առաջին աների աղբիւրները մեր մէջն են:—Երբ երեխան պատճին աների աղբիւրներին մեր մէջն են:—Երբ երեխան պատճին աների վերայ՝ մեզ վերայ պարտաւորութիւն կայ՝ որ նորա առաջին տպաւորութիւնները քաղցրացնենք:—Ծուլութիւնը, անուշադրութիւնը, ստախօսութիւնը, կուռարարութիւնը մենք յանցանք ենք. համարում:—Բայց ինքներս ի՞նչ միջոց ենք գործ դնում որ դրա չարմատանան աշակերտի մէջ:—Աւսուցիչը աշակերտին պատժելուց առաջ պէտք է նախ քննի իւր լդասարանը, դասը և իւր անձը: Այսինքն նա պէտք է առաջ ուսումնասիրի իւր աշակերտների անհատականութիւնը.

պէտք է աշխատի որ իւր դասը հարցածիրական ու գրաւիչ լինի. ինչ վերաբերում է իւր անձին՝ իւր գեղեցիկ վարմուն. քով մի կենդանի դիրք պէտք է ներկայանայ իւր աշակերտներին. իւր բոլոր խրատներն ու յորդորները պէտք է մարմացնէ իւր անձով.

Եթէ խրատները չեն օգնում, պէտք է թեթև պատիժներ նշանակել. Արգելք եղողին պէտք է մի կողմ նստեցնել. կոռւարարին չպէտք է թոյլ տալ դասամիջոցին խաղալուն. Այլ պէտք է նորան մի տեղ կանդնեցնել դասատանը»:

Գալով ո զդիչ միջոցներին՝ պարոնը ասաց՝ «Թէպէտ ուղղակի չի կարելի որոշել պատիժների ձեերը, բայց կարելի է մի քանի ընդհանուր սահմաններ դնել. Նախ ուսուցիչը պէտք է ծնողի պէտ խրատի երեխային. յետոյ, եթէ նոյնը կը կրինուի, կարող է դասարանում յանդիմաննել նորան. եթէ այդ էլ ապարդիւն եղաւ, տեսչի կամ դաստիարակի ուշադրութիւնը պէտք է դարձնել տալ նորա վերայ. դորանից էլ յետոյ նորա ծնողին կամ խնամակալին ազդու ծանուցում պէտք է անել. Եղած դէպէտերն էլ պէտք է արձանագրուեն. Աերջապէտ, եթէ ո՞չ մի միջոց չէ օգնում, պէտք է աշակերտին գուրս անել ուսումնարանից, զոհելով մէկին ամենքին. — Մարմի պատիժ ամենկին չպէտք է լինի. բարոյականն էլ այնպիսի պատիժ պէտք է լինի որ չվերատորի աշակերտի արժանաւորութիւնը»:

Պ. ԹԵՌԱՅՐԻԿԵՆՑՆՅՑ—Կոպտութիւնը երեխաները բերում են իրանց տներից. — Աշակերտին հեռացնել՝ դա ամենաբարձր բարոյական պատիժն է, դա ամենավսասակարն է. — Բայց միշտ միայն բարոյական պատիժներին դիմելը չէ օգնում; որովհետև այնպիսի դէպէտեր են լինում, որ անկարելի է չդիմել մարմնական պատիժներին. — Ուսումնարանից աշակերտին դուրս անելը անկարելի է. — Ես իմ կողմից առաջարկում եմ հետեւալ միջոցը. աշակերտին թողնել դասատանը ուսուցչի հսկողութեան ներքոյ».

Պ. ԴԱԼԱՆԹԱՐԵՆՑՆՅՑ— Հատ անդամ ծնողներն են մեղաւոր աշակերտի գործած յանցանքների մէջ. Ուսումնարանի վարչութիւնը առաջ ծնողների սխալները պէտք է ուղղի:

Պ. ԽԱՏԻՄԵՆՑՆՅՑ բոլորովին համաձայն է պ. Դուկասեանցի հետ և իւր ասելիքը աւելի ամփոփ գուրս բերելու համար՝ կարդաց պատիժն վերաբերեալ հատուածը իւր «Մանկավարժական խորհրդածութիւններ» անունով աշխատասիրութիւնից. Պարոնը անդում էր, որ ուսուցչի անձնաւորութիւնը մեծ նշանակութիւն ունի. և շատ անդամ աշակերտական չարութիւնները առաջ են գալիս, ասում էր, ուսուցչի անարդարագատառութեան պատճառով»:

Օր. Գ. ՅՈՎՀԱՅԱՆԻՄԵՆՑՆՅՑ— Աշակերտին կանգնեցնելը, առանձինին նստեցնելը միշտ սովորութիւն է դառնում. Աշակերտին ուղղելու մի հնարն այն է, որ նորան շատ սիրենիք:

Պ. Կ. ԹԵՄՈՒՐԻՆՑՆՅՑ— Այլ պէտք է աշակերտին պէտք է բոլորովին արտաքսել ուսումնարանից, այլ նորան պէտք է ուրիշ ուսումնարան տալ. Պէտք է ուսուցիչը զբաղեցնի նորան. իսկ եթէ ոչինչ չի օգնի, այն ժամանակ պէտք է մի քանի օր զրկի ուսումնարանից:

Պ. ՄԵԼԱՆԻՈՐԵՆՑՆՅՑ— Այդ բոլոր յանցանքները կը լինեն միայն քաղաքային ուսումնարաններում. Գիւղական կեանքը մաքուր է. այնտեղ չեն կարող պատահել բարոյական զեղծութիւններ. միայն կը լինեն կարգապահութեան յանցանքներ, որ և կը վերջանան ուսուցչի հեղինակութեամբ:

Տիկին ԲԱԲԱՅԵՆՑՆՅՑ— Ի՞նչ վերաբերում է աշակերտի ծուլութեանը, ես կ'ասեմ ինձ պատահած բանը. Իմ աշակերտներից մէկը շատ ծոյլ էր. Ես՝ նորան շատ խրատելուց յետոյ, երբ տեսայ որ չէ ուղղուում պահեցի իմ տանը, երբ ուրիշներին արգել էր, ու ճաշեցրի ինձ հետ. Եւ նա հետղետէ ուղղուեցաւ. — Իմ կարծիքով, այդ ամեն չարիքների առաջն առնելու համար պէտք է ուսումնասիրել երեխայի բնաւորութիւնը»:

Պ. ԲԵԿԱՆԱԶԱՐԵՆՑՆՅՑ— Նախ ուսուցիչը, որ ցանկանում է ուղղել աշակերտի մէջ այս կամ այն պակասութիւնը, ինքը պէտք է ճշմարիտ լինի. Ինձ յայտնի են այնպիսի ուսուցիչներ, որոնք աշակերտին ծեծել են, մազեր են պոկել ականջներ են արնոտել բայց մանկավարժական խորհրդում ամենաբարձր բարոյականութեան վերայ են խօսել. և լրեխային

իւր հօր դատաստանին յանձնելը՝ առաջ բերուած միջոցներից աւելի վտանգաւոր է. որովհետև հայրը տանը բարբարոսական ծեծ է ուտեցնում նորան. Ուրիշ ուսումնարան տալն էլ անօգուտ է, այնտեղ ոչինչ չի սովորի:

Գալով ընդհանրապէս պատժի մասին, հարկաւոր եմ համարում ասել, որ պատիժը Եւրոպայում ոմանք ընդունում են, ոմանք չեն ընդունում: Ի հարկէ, մարմարական պատիժը վտանգաւոր է. պէտք է աւելի բարոյական ուղղիչ միջոցներ գործ դնել: Ես ինքս էլ շատ աշակերտի խրատելով, համոզելով, հետը քաղցրութեամբ վարուելով լաւացրել եմ: Բայց շատերն էլ անուղղելի են. այդպիսիներին ես մի լաւ թրը մի ացը բել եմ: Բայց ինդրում եմ որ դուք ընդունէք այս միջոցը. որովհետև դորա համար կան ուրիշ մոմենտ. և ամեն ծեծող մի կերպով չի պատժում:

Այսպէս ուրեմն, իմ կարծիքով մարմարական պատժին պէտք է դիմել կարելի է մի կողմը կանգնեցնել դուրս անել դասատնից, անհաց թողնել: Եթէ աշակերտը դասը չփառէ ծուլութեան պատճառով, պէտք է ուսուցիչը չարչարանք յանձն առնի նորա հետ պարապելու: Որտեղ տեսուչը ուսումնարանում է բնակում, այդպիսի աշակերտին պէտք է ճաշին իւր տանը պահի. պատիժը պէտք է տեսի մինչև դասը սովորելը. և նորանից հաշիւ չառած՝ տուն չպէտք է թողնել: Ուսումնարանում աշակերտին պէտք է պահել ոչ թէ անհաց թողնելու, այլ դասը սովորեցնելու համար: Եթէ անբարյականութեան համար է՝ թող ուսուցիչը պատժէ: Բայց այդ միջոցը բարբարոսական է, ժամանակաւոր է: Պատժելիս պէտք է ի նկատի ունենալ նաև պատժուղի հասակը: Փոքրերին չպէտք է այդպէս պատժել. այլ նոցա պէտք է ուղղել հետները սիրով վարուելով: Ստորին դասատներում ոչ մի մարմարական պատիժ չպէտք է ընդունել:

Պարոնը իւր խօսքերը արդէն վերջացրել էր, երբ յանկարծ կողմանի կերպով կամաց աւելացրեց՝ և Աղջկանց ամենեին չպէտք է պատժել:

Փոքր միջոց տալուց յետոյ, երբ ամենքը կրկին բռնեցին իրանց տեղերը, ցանկութիւն յայտնուեցաւ դարձեալ շարու-

նակելու այդ հարցասիրական վիճաբանութիւնը:

Պ. ՔԱԼԵՆԹԱՐԵԱՆՑ—Ինչ որ շատ տարիների ընթացքում արմատացել է, այն չէ կարելի ուղղել: Ծեծը երբէք չէ կարող ուղղիչ լինել:

Օր. ՅՈՎՀԵՆՆԻՍԻՍՑ—Ես մինչև այս րոպէս աւելի լաւ կարծ ունեի պ. ԲԵԿԱՂՋԱՐԵԱՆՑի մասին: Բայց այսօրուայ նորա բացատրութիւնը ինձ շատ զարմացրեց: Պ. ԲԵԿԱՂՋԱՐԵԱՆՑն ասում է որ ինքը ծեծել է իւր աշակերտին, շատ վատ է արել որ ծեծել է:

Պ. Հ. ԻՓԵՖՃԵԱՆՑ—որ նոր էր եկել Տաճկաստանից, բարձրացաւ ամբիոն և ասաց. «Պարոններ, եթէ ասեմ Տաճկաստանի հայ ուսուցիչների կողմից բարե եմ բերել ձեզ, շատ ձիգ չի լինի. որովհետև այդպիսի պաշտօն ինձ չէ յանձնուել: 14 տարի առաջ ես այսուեղ էի, ձեր այժմեան դրութիւնը առաջուանի հետ համեմատելով՝ տեսնուեմ եմ, որ ձեր գրականութիւնը ուսուաց գրականութեան աղղեցութեամբ խորտապատրութիւն է արել ձեզ վերայ: Խսկ տաճկահայերը այդքան ժամանակամիջոցում ոչ մի քայլ առաջ չեն դրել իրանց գրականութեան ասպարիզում:

Գալով պատժի հարցին՝ քաղաքակրթուած աղգաց գործ գրած միջոցները պէտք է ընդունել: Զուիցերի այսում Անդիայում ամենաբարձր ուսումնարաններում պատիժ գործ են դնում: Բայց մի քանի տեղերում էլ չեն պատժում: Հիմնուելով այն մտքի վերայ: որ՝ իմ հակառակորդը, աշակերտը թոյլ է, տղայ է, ինձ վայել չէ նորան պատժելը: Եմ կարծիքով այս հարցը մի կողմ պէտք է թողնել: որովհետև որոշ եղբակացութեան չէ կարելի գալ: Խսկ պատժողներից աւելի կշիռ ունեցողները ասում են. այնպէս պէտք է պատժել աշակերտին, որ պատիժը վարժապետի կողմից վրէժիսնորութիւն նկատուի: Ես ներկայ էի գերմանացի մանկավարժ Ցիլերի մօտ, երբ նորա աւագ վարժապետը ծեծում էր մի աշակերտի: Բայց նա ծեծեց առանց կրքի նշոյլ ցոյց տալու. կարծես գրիչ առած կը գրէ:

Պ. Ա. ՄԵԼԵՆՑՑ—Գաղափարը և գործողութիւնը այլ և այլ բաներ են: Մենք պէտք է իմանանք. հարկաւոր է

պատմել թէ ոչ Երեխան սիրում է, որ իրան հետ քաղցր վարուեն. և այդպէս էլ պէտք է վարուենք:

Պ. ԽԱՏԽԵՍՆՅՑ-Համաձայն է պ. Թեմուրազեանցի կարծիքին:

Պ. ՄԵԼՍԻՈՐԵԱՆՅՑ-Երեխոյին պատմելով, մենք չենք կարող ուղղել նորան: Պատիքը կրթող միջոց չէ:

Պ. Ն. ԸՆՃԱՎՄԵԱՆՅՑ-Ես առաջարկում եմ որ՝ ինչ որ ասւում է տղայոց ուսումնարանների համար, նոյնը ընդունուի նաև օրիորդաց ուսումնարանների համար:

Պ. ԲԵԿՆԱԶԱՄԵԱՆՅՑ-Ես աւելացնում եմ որ՝ ուր որ հոգաբարձութիւն կայ՝ ուսուցիչը թող ինքը չպատմէ:

Պ. ՍՊԱՆԴԱՐԵԱՆՅՑ-Զպէտք է ընդունել մարմնական պատմէ: Ուսուցիչը՝ որ ինքը չէ գաստիարակուել, չէ կարող ուրիշին դաստիարակել:

Պ. ՄԱՆԴԻԽԵԱՆՅՑ-Ես բոլորովին մերժում եմ մարմնական պատմիքը. և այս եմ իրատում աշակերտներիս:

Որոշուեցաւ չքուէարկել այդ հարցը:

Պ. ԵԲԻՑԵԱՆՅՑ-Ես առաջարկում եմ որ մինչև միւս ուսուցչական ժողովը դուք, ուսուցիչներդ ուշագրութիւն դարձնէք աւելի յարմար միջոնների վերայ: Իմ կարծիքով՝ լաւ կը լինի որ մի մի յիշատակարան կազմէք արած չարութեանց համար, Զանազան տեղերում այլ և այլ չարութիւններ կան: Կան թաղեր ու գիւղեր, որտեղ դողութիւն, կոփու ու յիշոց կայ: Երեխան էլ տրամադրուած է այդ յանցանքները գործելու: Եյս էլ պէտք է նկատել որ գաշտային տեղերում ուրիշ տեսակ՝ յանցանքներ են առաջ դալիս: լեռնային տեղերում՝ ուրիշ տեսակ: Եյս բոլորը պէտք է ինկատի ունենալ:

Ներկայ էին 111 ուսուցիչ:

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՐԴ ԿԻՍԸԼ մ պարզի ուղարկ

Բայց ամեն գրահամար ու մատուցութիւնները առաջ են առաջ գործութիւն ու առաջ գործութիւն:

VI.

Սեպտեմբերի 3:

Առաջարկ:

Կայացաւ Մասնաժողովի նիստը: Կարգացուեցաւ նախընթաց նիստի արձանագրութիւնը և մի երկու նկատողութիւն արուեցաւ: Ապա կարգացուեցաւ Ծնական դպրոցների առաջին տարուայ կրօնագիտութեան ճրագիրը:

Պ. ԹԵՄՈՒՐԱՆՅՑ-Աւելացնում էր «Անկանիմք» աշոմքը, 10 հատ բարյական պատմութիւն և տեղական տներից մի երկուսի բացատրութիւնը:

Պ. ԲԵԿՆԱԶԱՄԵԱՆՅՑ-Հարկաւոր էր համարում բարյական նախապատրաստութիւններ, 15—20 պատմութիւն՝ վեր առած աշակերտական կեանքից, այլև տեղական տօների բացատրութիւնը:

Պ. ԳԱԼՈՒՏԵԱՆՅՑ-Մի քանի աշոմքը և գլխաւոր տները:

Պ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆՅՑ-Տէրունական աշոմքը, և ուսումնարանական արձակ օրերի բացատրութիւնը:

Հայր Ա. ԲԱԳԻՐԱՏՈՒՆԻ-Աստուծոյ մասին խօսակցական ձեռվ տեղեկութիւն տալ. ծանօթացնել ծնողների, բարեկամների, ընկերների յարաբերութեան հետ. և յարաբերութեանը անասունների հետ: Բացատրել միայն աշոմքի նշանակութիւնը, թէ ի՞նչ է աշոմքը և ի՞նչպէս պէտք է աշոմքել: Սրբազան պատմութիւնից առաջին տարին ոչինչ չէ հարկաւոր տալ:

Պ. ՂՈՒԿԱՆՍԵԱՆՅՑ-Նոր առանձին ոչինչ չասաց: Կըրկնեց Հայր Բագրատունու խօսքերը:

Արձաբանութիւնները վերջացան և ընդունուեցաւ միայն տէրունական աշոմքը: աշխարհաբար և գրաբար. գլխաւոր եկեղեցական ու տեղական տօները. Ծնունդը, Մկրտութիւնը,

Յարութիւնը և Համբարձումը՝ Ճաշից առաջ ու յետոյ ասուող աղօթքները չընդունուեցան:

ԲԱՀԱԹԻԵՍՆՅՑ—Բարոյական վէպիկները թողնել հայոց լեզուի հետ։ Բարոյականութիւնը առանձին առարկայ չլինի, կրօնագիտութիւնից չանջատուի։ Կարելի է մանկան ընկերական յարաբերութիւններից վէպիկներ կազմել և նոցանից բարոյականութիւն դուրս բերել։ Ուսուցիչը կարող է նաև սրբազն պատմութիւնից նիւթ ընտրել։

Յետոյ կարդացուեցաւ Հայոց լեզուի ընթացքը։

Պ. Ա. Ա. Ա. ՅԵՍՆՅՑ—Նիւթը պէտք է առնել ազգային, ընտանեկան և տեղական կեանքից։

Պ. ԲԵԿՄԱՆ. ԶԱՐԵՍՆՅՑ—Առաջին տարուանից ուղղակի պէտք է սկսել նիւթերը բազմակողմանի անել և այդ ընտրած տեսակի նիւթերը հետզետէ ընդլայնելով՝ շարունակել մինչև նոյն իսկ կ-ըդ տարին։

ԲԱՀԱԹԻԵՍՆՅՑ—Որովհետև մենք չունենք բարձր բարոյական գաղափար արտայատող և ներքին արժանաւորութիւն ունեցող ազգային հեքաթներ, ուստի նիւթը պէտք է ընտրել օտար կեանքից։

Որոշուեցաւ որ նիւթը լինի ազգային կեանքից վերցրած։ Իսկ գիտողական ուսման նիւթը պէտք է դասաւորել մի որոշ համակարգութեամբ (système), նիւթերի ընտրութեան ժամանակ առաւելութիւն տալով բարոյակրթական նիւթի մէջ եղած առարկաներին։—

Ծրագրի քննութիւնը շտապեցնելու պատճառով այսօր դասաւորութիւն չկար։

## ԽԳԵ.

## ԵՐԵՎԱՆ.

Պ. Ա. ԲԻՍՈՂ. ԱՄ ՅՈՎ. ՀԵՍՆԻՍՆԻՍՆՅՑ կարդաց. «Բնական գիտութեան ազգեցութիւնը անհատականութեան վերայցածաւութեան սկզբումը» Պ. Յովհաննիսնյցը բա-

ցատրեց «բնութիւն», բառի նշանակութիւնը։ Ապա խօսեց բնական գիտութեանց մի քանի տարրական երկոյթների մասին։ Յետոյ մատնացոյց արեց այն օգուտները՝ որ այդ գիտութիւնները տուել են լուսաւորեալ երկրներում երկրագործութեանը՝ արհեստաներին, մարդկանց միմեանց հետ ունեցած հաղորդակցութեանը և այլն։

Բայց, բնութիւնը սիրելու, նորան ուսումնասիրելու և բնական գիտութեանց շատ հարցերին վերաբերեալ պատաժներները բնութեան ծոցում այդ մեծ ու երեսները բաց գրքի մէջ կարդալը՝ դոքա բոլորը այնպիսի մաքեր են, որ դուցէ առաջին անգամը չէր որ հնչում էին ունկնդիրների ականջին։

Արդարև, մենք պ. Յովհաննիսնյցից աւելի լաւ մշակուած և աւելի թարմ մտքեր արտայայտող դասախոսութիւնն լսելու յօյս ունեինք։ Բայց մեր զարմանքը ինքն ըստ ինքեան չափաւորւում է, երբ մտաբերում ենք, որ Պարոնը Կ. Յանձնաժողովի ամենաեռանգուն աշխատողն է և հաղար ու մի կարեղոր զբաղմունքներով ծանրաբեռնուած։

\* \*

Յետոյ Պ. Կ. ԹԵՄՈՒՐԱԶԵԱՆՅՑ կարդաց այն հարցի մասին թէ «Ճաշից յետոյ պէտք է ուսումնարանում պարապմունք լինի թէ ոչ»։

Որովհետև ընտանիքն էլ կողմակի կերպով միջամտում է օրական պարապմունքի ժամերը այսպէս կամ այնպէս գասաւորելու գործում։ Ուստի պ. Դասախոսը նախապէս յիշեց այն հանգամանքը որ առհասարակ այն ծնողներն են ցանկանում ճաշից յետոյ ուսումնաբանում պարապմունք լինելը որոնք երեխային տանը զբաղեցնելու բարոյական ոյժ չըւնենալով։ մի կերպով ռոադ են անում։ Նորան իրանց գլխից, որ ազատ լինեն մանկական ստահակութեամբ իրանց սիրտը մաշելուց։ մի խօսքով, որ իրանց շատ գլխացաւանք չպատճառէ։

Բայց այդ բանի առաջը հեշտ կ'առնուի, եթէ ուսուցիչները մի փոքր նեղութիւն կը են աշակերտների տնային պարապմունքը կանոնաւորելու, որից և կախուած է նոցա ինքնա-

գործունեութիւնը։ Եւ հեց այդ ինքնակրթութիւնն է որի վերայ պէտք է առանձին ուշադրութիւն դարձնեն ուսուցիչները։ Քանի որ մանկավարժութեան վախճանական նպատակը դորա մէջ է ամփոփուած։

Երեխան ուսումնարանում կրաւորական դեր է կատարում ասաց պ. Դասախոսը նորան պէտք է ճաշից յետոյ ազատ թողնել, որ նա ինքնակրթութեամբ զարգանայ։ Ուսուցիչը պէտք է օժանդակի այդ ձգտմանը, նա պէտք է զարգացնի նորա բնածին մտաւոր ոյժը և շնորհը։ Ես մինչեւ անգամ առաջարկում եմ որ ուսման ընթացքը աւարտող աշակերտի վկայականում անպատճառ գրուի թէ նա որքան ընդունակ է կեանքի մէջ ինքնակրթութեամբ աւելի զարգանալու և առաջ գնալու։

«Մի ուրիշ պատճառն էլ այն է որ աշակերտը իւր տան մէջ աշխատող ձեռքն է, որ պիտանի է իւր ընտանիքին։ Դուք համար էլ պէտք է նորան ճաշից յետոյ ազատ թողնել։»

Պարոնի վերջին խօսքերն էին՝ ճաշից յետոյ ուսումնարանում պարապելը միանգամայն վեասակար է. որովհետեւ աշակերտը այլևս միջոց չէ ունենում տանը պարապելու և ինքնակրթութեամբ զարգանալու։

Պէտք է նկատել որ պարոնը այն աստիճան արագ էր կարդում որ ասած խօսքերը դժուար էին հասկացւում. ուստի ընդմիջելով ինդրեցին, որ փոքր ինչ ծանր կարդայ. Յետոյ էլ այնպէս բառերը հատ հատ արտասանելով էր կարդում. որ ամենեին պատիւ չէր բերում մի մարդու, որ այդպիսի մի ժողովում ամբիոն է բարձրացել։ Եւ, որ զարմանալին է, երբ պ. Դասախոսը ասաց թէ՝ ուսումնարանում իւր դասերը աւարտելուց յետոյ ուսուցիչը գնում է տուն իւր օր հնեալ հացը ուտելու, — ունկնդիրների յանկարծակի ծիծաղելու հետ ինքն էլ ամբիոնի վերայ գլուխը կախ ձգելով սկսեց ծիծաղել։

Երբ ասում էք «ինքնակրթութիւն, ինքնօգնութիւն, ինքնագործունեութիւն», — մի խօսքով ամեն ինքնալաւան՝ հասկանալի է. ինքնածաղը լութիւնն ի՞նչ բան է։

Պ. ՍԵԼՔՈՒՄԵԱՆՑ—Ես համաձայն եմ պ. Թեմու-

րազեանցի յայտնած մտքերին, որ ճաշից յետոյ դասեր չլինեն։ Բայց գաւառական քաղաքներում չէ կարելի, մանաւանդ ձեռը, երբ ծաղիկը կարմրուկը շատերին զրկում է ուսուցիչ։ Ինչ վերաբերում է աշակերտին՝ նորա ինքօգնութեան չափը որոշելու համար վկայական տալուն, այդ չէ կարելի և բոլորովին աւելորդ է։

Պ. ՔԱՆԱԿՆԹԱԲԵԱՆՑ—Ես համաձայն եմ պ. Թեմուրազեանցի ասածներին։ Բայց ինկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր գպրոցների՝ մանաւանդ գիւղական ծխական գպրոցների աշակերտները միջոց չընեն տանը դաս պատրաստելու, — ես առաջարկում եմ որ ուսուցիչը ճաշից յետոյ պարապի աշակերտների հետ, նոցա հետևեալ օրուայ դասերը կրկնել տալով, նախապատրաստելով։

Պ. ԽԱԾԻՍԵԱՆՑ—Պ. Թեմուրազեանցը միայն ուսուցիչների գրութիւնը ի նկատի առաւ. բայց պէտք է նաև աշակերտի գրութիւնը ի նկատի ունենալ։ Ծխական գպրոցներում ճաշից յետոյ չպարապելը աւելի վնասակար է. որովհետեւ նոցա հետ ճաշից յետոյ պարապելով՝ ուսուցիչը աւելի կարող է բանեցնել նոցա մտաւոր ոյժերը։

Ես կ'առաջարկէի, որ ճաշից յետոյ ուսուցիչը իւր աշակերտների հետ զբոսանքի դուրս գնար դաշտերի կողմը և գործնականապէս սովորեցներ նոցա բնական գիտութիւնները՝ աշխարհագրութիւն, կենդանաբանութիւն և այլն. գլխաւորապէս գիւղական կեանքին վերաբերեալ երկրաշափութեան հիմունքը։

Իսկ քաղաքներում երեխաներին կարելի է զբոսեցնել արհեստանոցները ցոյց տալու համար, նախապատրաստելով նոցա այն պարապմունքի համար, որոնցով երեխաները պէտք է պարապեն ապագայում — Առաւօտները բաւական է միայն երկու դաս պարապել։

Պ. ՍԵԼՔՈՒՄԱՍՏԱԲԵԱՆՑ—Որովհետեւ շարունակ հինգ դաս պարապելը թէ՝ ուսուցիչ և թէ աշակերտի համար յոդնեցուցիչ է, այդ պատճառով ես առաջարկում եմ առաւօտը պարապել Յ դաս, ճաշից յետոյ Յ դաս։

Պ. ԲԵԿԱՆԱԶԱԲԵԱՆՑ—Եյս հարցը Եւրոպայում վե-

Ճելք հարցերից մէկն է: Լիւբենի վիճակագրական տեղեկութիւններից երեւեցաւ, որ միևնոյն երևոյթները նկատուել են երկու տեսակ դպրոցների մէջ ևս, այսինքն՝ թէ այն դպրոցների մէջ որտեղ ճաշից յետոյ գաս չկայ և թէ այն՝ որտեղ կայ:

Գիւղական ուսումնարաններում անհրաժեշտ է, որ դասերը կիսուեին, ինչպէս առաջարկում էր պ. Խատիսեանցը՝ նայելով տեղական հանդամանքներին: Ես համաձայն եմ պ. Խատիսեանցի այն առաջարկութեանը որ ճաշից յետոյ ուսուցիչը իւր աշակերտներին զբուցնելով գիւղից դուրս նոցա հետ գործնականապէս պարապի: և շատ եմ համակրում այդ մոքին. միայն հարկաւոր է մասնագէտ լինել արհեստների մէջ, որպէս զի ուսուցիչը սիսալ տեղեկութիւն շտայ աշակերտին կամ անպատասխան չմնայ նորա առաջը:

Պ. ԲՈՒՆԻԱԹԵԱՆՑ—Օրիորդաց դպրոցներում անկարելք է ճաշից յետոյ գաս պարապելը:

Պ. Գ. ՇԱՀԲՈՒԴԻԱՆՊ. ԵԱՆՑ—Օրական հինգ գաս ունեցող ուսուցչից չկարելի պահանջել ճաշից յետոյ գասեր տալ:

Հայր ԱԲԷԼ ՍՈՒՔԻԱՍԵԱՆՑ—Զմեռ, գիւղական ուսումնարաններում երեկոյեան ժամի 6 ին պարապելը, ինչպէս պ. Բէկնազարեանցը ասաց, անյարմար է. որովհետեւ գիւղացիները այդ ժամանակ քննած են:

Պ. ՍՊԱՆԴԱՐԵԱՆՑ—Հարցը այսպէս պէտք է գնել. պէտք է բեռնաւորել աշակերտին աշխատանքով, թէ բաժանել աշխատանքը.. յետոյ այդ սկզբունքի հիման վերայ կարելի է լուծել խնդիրը:

Վիճաբանութեանց վերջը պ. Թեմուրազեանցը իւր պատասխանով աշխատեց հերքել ընդդիմախօսութիւնները:

Պ. ՂԱՒԿԱՍԵԱՆՑ—Ես համաձայն եմ պ, Թեմուրազեանցի հետ. և իմ կողմից առաջարկում եմ, որ ուսուցիչը մեծ մտաւոր աշխատանք և առհասարակ լարած ուշադրութիւն պահանջող առարկաներով, բանաւոր դասերով առաւոտը պարապի. յետոյ նոցա դրաւոր աշխատանքները նայի: Իսկ

թեմեւ պարապմունքները, ինչպէս՝ երգեցողութիւն, ձեռագործ և այլն կարելի է ձաշից յետոյ մողնել:

Վերջապէս նախագահ Պ. ԲԱՐԻՍՈՒԹԱՐԵԱՆՑը հարցը պարզուած համարելով՝ ասաց որ ճաշից յետոյ գասեր պարապելը հարկաւոր չէ:

Ներկայ էին 123 ուսուցիչ:

### ՄԱՍՆԱԺԱՊ. ԱՎ. ԿԱՍՏԸ

### VII.

Ժողովի ցրուելուց յետոյ կայացաւ Մասնաժողովի նիստը:

Այս անդամ վիճաբանութիւնը երկար չտևեց: Աննշան փոփոխութիւնով ընդունուեցաւ երկրորդ տարուայ հայոց լեզուի ընթացքը, Որոշուեցաւ որ գրքի բովանդակութիւնը կազմեն բարսակը մական նիւթեր ու՝ բնութեան, մարդու և Աստուծոյ վերաբերութեամբ գրուածներ:

Իսկ գիտողական ուսման նիւթը լինելու է ա.) գասարանը և բ.) գործնական կեանքից վերցրած նիւթեր.—գիւղում և քաղաքում այլ և այլ նիւթեր: Դիտողական ուսման նիւթերը պէտք է համախմբել տարուայ եղանակը ի նկատի ունենալով, և առանձին ուշադրութիւն դարձնելով իրերի ու երեսոյթների վերայ:

Ներկայ էին 21 անդամ:

### ԻՊԱ.

Սեպտեմբերի 4

Ա. Ա. Ա. Ա.

Մեծ. Տիկին Ս. ԲԱԲԱՅԵԱՆՑը բացատրեց «Մանկական Պարտիզի» կարևորութիւնը և կազմակերպութիւնը: Խօսք չկայ որ մեծ, տիկինը մասամբ շօշափում էր իրանից առաջ

նշյն նիւթի մասին յայտնուած մաքերը: Ժողովը խորին մտառութեամբ ունկնդիր էր լինում Տիկնող վստահ կերպով արտայատած և սահուն հոսանքով ընթացող խօսքերին ու մտքերին:

Խօսելով մանկական խաղերի մասին, մեծ. տիկինը ասաց որ՝ խաղերի մէջ երեսում է երեխայի գործունէութեան ձըդտումը. և հետեւապէս երեխան էլ պէտք է ստեղծող լինի:— Պարտէզը պէտք է բաղկացած լինի երկու սենեակից՝ պարապմանց սենեակ և շարժողական խաղերի սենեակ: Խօսելով պարտիզպանուհու յատկութեանց վերայ, Տիկինը ասաց որ՝ Անկական պարտիզպանուհին գոնէ միջնակարգ դպրոցի շրջանը պէտք է անցած լինի, տակտով երգել գիտենայ և մասնագիտութեան հետ փոքր ինչ ծանօթ լինի: Իսկ գալով պարապմանց ժամերին՝ ասաց որ՝ շատ ցանկալի է որ քաղաքներում 2 ժամ առաւօտը պարապենք, 2 ժամ էլ ճաշից յետոյ:

Բուռն ծափահարութիւն հետեւց Տիկնող վերջարանութեանը:

Յետոյ եղան և վիճաբանութիւններ: Մենք ներկայ չենք:

Ներկայ էին 145 ուսուցիչ:



## ԻԵ.

ԵՐԵՎԱՆ.

Պ. Ա. ՄԵԼԵՍՆՅՑ. կարդաց «Հարցաքննութեան» մասին: Իւր խօսքերի մէջ, որ՝ ինչպէս ինքը յայտնեց, օրիորդաց դպրոցներին էին վերաբերում պարոնը ցոյց էր տալիս Հարցաքննութեան վեսասկար հետեւանքները:

Պարոնը զրեց երեք հարց.—Ո՞ւմ համար է Հարցաքննութիւնը, ի՞նչ նպատակ ունի և հասնում ենք նպատակին՝ թէ ո՞չ Այդ Հարցերին պատասխանելով պէտք է ասել որ շատ երկրորդական ու երրորդական հանգամանք նկարագրեց. հան-

գամանքներ, որ տեղի են ունենում Հարցաքննութեան օրը. և այդ բոլորը այնպիսի սկ գոյներով, որ սարսափ էր ձգում լոողի վերայ:

Պ. Դասախոսը բոլորովին վեսասկար Համարելով Հարցաքննութիւնները, առաջարկում էր կամ վերացնել կամ ձեւերը փոխել, չանել հրապարակական, այլ առտնին, դասարաններում:—

Պ. Յ. ԽՈԶԱՄԻՒԵԼՆՅՑ. ցանկութիւն յայտնեց խօսելու: Բայց պէտք էր տեսնել թէ պ. Նախագահը ի՞նչպէս էր բոնադատում նորան անպատճառ ամբիոնից խօսելու: Քանի քանի անգամ պարոնը կրկնեց որ ինքը իւր կանգնած տեղեց ամենքին հասկանալի լինելու շափ բարձր կը խօսի, բայց չեղաւ. բարձրացաւ ամբիոն:

Պ. Խոջամիրեանցը համաձայն էր պ. Դասախոսի հետ. միայն առաջարկում էր, որ ուսուցիչները երեք ամիսը մի անգամ հաշիւ տան տեսչին աշակերտների արած յառաջադիմութեան մասին: Պարոնը Հարցաքննութեանց վերայ գործ դրած մօտ 25 օրը ժամավաճառութիւն էր համարում: և նկարագրելով Հարցաքննութեան հետեւանքները, աւելացրեց որ ինքը Հարցաքննութիւնը ժողովրդի համար գայթակղութեան քար է համարում:

Պ. ԹԵՄՈՒՐԱԶԵԼՆՅՑ.—Հարցաքննութիւնը այդպիսի մի սարսափելի բան էր հին ուսումնարանում: Բայց այդպէս չէ նոր ուսումնարանում:

Պ. Գ. ՊԵՏՐՈՍԵԼՆՅՑ.—Հարցաքննութիւնը այդ աստիճան սարսափելի չէ: Եթէ աշակերտները պէտք է վախենան Հարցաքննութիւնից, էլ ապագայում նոքա ի՞նչպէս պէտք է մտնեն մի որեկցէ դատարան: Ինչպէս տարուայ մէջ կան ընդհանուրիս համար հանդիսաւոր օրեր, այնպէս էլ աշակերտի համար ամբողջ ուսումնարանական տարին մի տեսակ չպէտք է լինի: Հանդիսաւոր օրեր պէտք է ունենայ:

Պ. Յ. ԳԵՂԱՄԻՍԵԼՆՅՑ.—Մեր եկեղեցին միւս եկեղեցիներից զանազանում է իւր ժողովրդականութեամբը: Ուսումնարանն էլ իբրև ժողովրդական հիմնարկութիւն՝ եկեղեցու պէս ամէն տարի հաշիւ պէտք է տայ: Հարցաքննութեան այդ

բարձր սկզբունքի առաջ պատահող մանր դեպքերը ոչինչ են: Մեր ուսումնարանները կառավարում են ազգի կողմէներով: և ազգը պէտք է տեղեկութիւն ունենայ իւր տուած գումարի գործածութեան լաւ ու վատ հետեանքի մասին: Միւս կողմից մեր ժողովուրդը զուրկ լինելով հարցարակական կեանքից հարցաքննութիւնը նորան մտածելու և լաւի ու վատի վերայ դատողութիւն անելու տեղիք կը տայ: Հարցաքննութիւնը կը զարգացնէ նորան:

ՕՐ. Գ. ՅՈՎ. ՀԱՅ. ՆԻՍԵԱՆՑ—Համաձայնելով պ. պ. ՄԵԼիանցի և Խոջամիրեանցի ասածներին, Հարցաքննութեան առաջարկելի ձևի մասին օրինակ բերեց իւր տեսածը Լիցերն քաղաքում: և ասաց որ ուսուցիչները զանազան առարկաներից միանդամայն մի քանի ժամում քննեցին բոլոր աշակերտներին: ԲԱՀԱԹԻԵՑԱՆՑ—Ի՞նչ է Հարցաքննութեան նպատակը: Իմ կարծիքով, Հարցաքննութիւնը երկու նպատակ ունի: Առաջին՝ ուսուցիչները իրանք են ուղում իմանալ թէ իրանց սաները ի՞նչ են սովորել և երկրորդ՝ Հարցաքննութիւնը նորա համար է որ ցոյց տանք ծնողներին թէ իրանց որդիքը ի՞նչ են սովորել: Միայն, ներկայ պարագաներում Հարցաքննութիւնը կարող է վասակար լինել. որովհետեւ դաստանը դասը չէ բաժանում բոլոր աշակերտների մէջ, այլ ամրող ամսում հազիւ մի երկուսին է դաս Հարցնում ուսուցիչը, և այդ պատճառով չէ ել կարող ձանաչել աշակերտին: Եթէ դաստանութեան ձեւ փոխուի, Հարցաքննութիւնն էլ այնչափ վասակար չի լինի:

Ուսուցիչը պէտք է Հարցերը լաւ բաժանի աշակերտների մէջ. այնպէս որ մի դաս միւնցին ժամանակ բոլոր աշակերտներից պահանջում: Ուսուցիչը չպէտք է անընդհատ քայլերով առաջ գնայ. այլ երբեմն պէտք է կանգ առնի, իւր հայեացքը յետ ձգէ, անցած գլխաւոր կետերը Հարցնէ, այն ժամանակ այդ բոլոր արգելեները կը բարձուին: Ուսուցիչը ծոյլերին շուտ շուտ պէտք է Հարցնի. որ մի քանիսը առաջ ըստնան ու բազմութիւնը յետ չմնայ: Տարուայ վերջը ամբողջ նիւթը պէտք է կրկնուի:

Ես համաձայն եմ պ. Գեղամեանցի կարծիքին:

Վիճաբանութեանը միջոց տալուց յետոյ պ. Երիցեանցը խօսեց.—Ա. Յանձնաժողովը պատուիրեց ինձ յայտարարել որ թանգարան գնալու համար 50 տոմակից աւելի կոյ մնացած: ով ցանկանումէ, թող գնայ այդ տոմակով: Երկրորդ՝ պատուիրեց ինձ ինդիկել ձեզ, որ վազը ժամի 2-ին չնորհ բերէ կուկիա, Եւրոպա այգին՝ ձաշի:—

Ժողովականները իրանց տեղը նստելուց յետոյ.

Պ. Ա. ՀԱՅՈՒԹԵԱՆՑ—Հարցաքննութիւնը մի չարիք է, մեր դպրոցների համար. ժամանակ է, որ այդ չարիքը բարձուի:

Պ. ԹԱՒԱՐԲԵԿԵԱՆՑ—Հարցաքննութեան միջոցով մենք հաշիւ ենք տալիս ժողովրդին: Բայց այդ հաշիւը ճիշտ չէ. իսկ եթէ ճիշտ չէ, աւելորդ է: Եթէ Հարցաքննութիւնները միայն նորա համար են, որ իմանանք թէ ուսուցիչը ի՞նչ է արել, բոլորովին վասակար են:

Պ. ԲԵԿՆԱԶԱՐԵԱՆՑ—Հարցաքննութիւնը սկզբունքով չպէտք է ընդունել: Շատ անդամ բազմաթիւ այցելուների առաջ ոչ թէ աշակերտներից՝ այլ և ուսուցիչներից շատերը, որոնց մէջ տարարազտարար և ես, չեմ գիտացել թէ ի՞նչ Հարցնեմ: Մեր ուսումնարանում՝ մի այցելու անպատճառ ուղում էր աշակերտին Հարց առաջարկել: Պարոնը առաջարկեց իւր Հարցը. և աշակերտը՝ որ մի ճարպիկ տղայ էր: 10 րոպէ սուտ ու մուտ բաներ պատմեց: լսողն էլ չնորհ աշակերտին արեց: \*

Եթէ Հարցաքննութիւնը ժողովրդի համար է, ժողովուրդը ամենալին չէ յաճախում: Երբեմն զօրով, ստիպմամբ գալիս են մի քանի հոգի, որոնց մէջ լինում են կանայք: Բայց Հարցաքննութեան միջոցին մեր փափկա ասուն տիկնայքը սիրուն ննջում են: (Ժողովը շարունակ ծիծազումէ:)

Հարց. արդեօք ժողովուրդը միշտ այդպէս պէտք է գնայ Հարցաքննութեանը, և հարկէ, ոչ. ժամանակով նա կը հաս-

\*) Եւ աւելի զարմանալին այն է, որ դուք էլ ձեր ներկայութեամբ իբրեւ դպրոցին տեսուչ՝ թոյլ էք տուել որ մի աշակերտ մի ուրիշ աշակերտի ծնողի այդ աստիճան յիմարացնի:

կանայ իւր պարտքը և յօժարութեամբ կ'այցելէ հարցաքըն-նութեանը:—Իմ կարծիքով՝ սկզբունքը պէտք է մայ: որ ժողովուրդը հսկէ դպրոցի հաշխների վերայ:—Ես իմ կողմից կ'առաջարկեմ Օր. Յովհաննիսեանցի առաջարկած ձեզ: Ոչ թէ աշակերտները մէկ մէկ, երկ երկու կամ երեք երեք քննուին, այլ հարցաքննութիւնը մի ընդհանուր քաղուածք լինի: Ամէն դաստան համար նշանակումեմ երկու ժամ: իսկ վերջին դաստունը հրապարակաւ քննենք:

Պ. ԱԼՆՅԵՍՆՅՅՑ—Այդ ինդիրը բազմակողմանի կերպով պէտք է քննուի: Հարցաքննութեան պայմանները այլ և այլ դպրոցներում և դաստաներում զանազան են: Լեզուն, պատմութիւնը և այլն պէտք է բարոյակրթութիւն տան աշակերտին: բայց հարցաքննելիս, երեխաների զարգացման չափը ճանաչելու համար նորան թութակ են շնում: Այդպիսի առարկաների արդիւնքը պէտք է պահանջել վարքի մէջ:

Ես բոլորովին հակառակ եմ հարցաքննութիւններին: Բարցյակրթական առարկաները չպէտք է հարցաքննուեն:

Պ. ՔԱԼԱՆԹԱՐԵՍՆՅՅՑ— Հարցաքննութիւնները կարենու են: բայց ոչ եղած ձեռով Աւելի լաւ է, որ տնային կերպով լինի, դաստանը, տեսչի ներկայութեամբ. և գրաւոր լինի:

Պ. ԸԱՀԲՈՒԴԱՐԵՍՆՅՅՑ—Բժիշկ Ժուկը իւր մի աշխատասիրութեան մէջ ապացուցանումէ հարցաքննութեան վասակարութիւնը: Համաձայն եմ ընտաներար կատարելուն:

Պ. ՄԱՆԴԻՆԵՍՆՅՅՑ—Գերմանիայում և Շվեյցարիայում հարցաքննութիւնը մի լուրջ մանկական հանդէս է, տօն է: Այդպիսի հարցաքննութիւնը կը բարձրացնէ աշակերտի հոգին: Հաշիւը հարցաքննութիւններով ոչ տալ կարելի է, և ոչ առնել: Պէտք է սովորեցնել ժողովրդին համբերութեամբ լսելու մեր բոլոր պակասութիւնները: Ես պէտք է սրտացաւ լինի և ոչ դատաւոր: Ես տարուայ վերջը մի օր էլ չեմ նըշանակի հարցաքննութեան համար: Խսկ հսկողութիւնը ուսուցչի վերայ տարուայ ընթացքում պէտք է լինի:

Հարցի ձեակերպութիւնը մնաց հետևեալ անգամուան:

Պ. ԵՐԻՑԵՍՆՅՅՑ—Երեկ ես չասացի թէ ո՞վ է ձեզ հրաւի-

րում ճաշի: Այժմ հարկաւոր եմ համարում աւելացնել: որ ձեզ Թիֆլիսի հայ հասարակութիւնն է հրաւիրում:

Որոշուեցաւ որ՝ երկուշաբթի Օր. Ծ. Բայսողոլեանցը պարապի ռուսերէնով: երեքշաբթի՝ Հայր Արէլ Սուքիասեանցը կրօնագիտութիւնով և Հայր Ղազարոս Յովհէփեանցը մանկական երգերով:

Կերկայ էին 120 ռւսուցիչ:

### ՄԱՍՆԱԺՈՂՈՎՐԴ ԴԻՍՏ

#### VIII.

Նիստը փակուելուց յետոյ կայացաւ Մասնաժողովի նիստը: Կարգացուեցաւ Թուաբանութեան ծրագիրը: Առանձին նոր նկատողութիւններ չեղան: Որոշուեցաւ առաջին առգույք ընթացքը սահմանափակել հետևեալ կերպով: 1-100 համարել. 1-20 անցնել չորս գործողութիւնը՝ բանաւոր ու գրաւոր կերպով: Այլ և կոտորակներից հասկացողութիւն  $\frac{1}{2}$ -ի և  $\frac{1}{4}$ -ի վերայ. և այլն:

Մասնաժողովը լսեց, որ Մանկական երգերի համար առանձին ծրագիր է կազմուում: Այդ ծրագիրը կը ներկայացուի Մասնաժողովին, կը քննուեն երգերը և կ'ընտրուեն: Գրութեան և Գծագրութեան համար ծրագիր կը ներկայացուի: Խսկ բալով Մարմարղութեանը, ասուեցաւ որ գորա մասին Բժիշկ Լ. Տիգրան եանցի կարծիքները կը յայտնուեն:

Սեպտեմբերի 5.

Ժ. 2. Տէջէկէց յէտու.

## ՃԱՇ

«Եւրոպա» այգիում Ընդհանուր Աւսուցչական Ժողովի պատուին ձաշ էր պատրաստուած։ Օրը փոքր ինչ ամպամած էր։ Նշանակուած ժամը մօտենում էր և ուսուցիչներ ու հիւրեր ամէն կողմից դիմում էին դէպի ընդհանուր սեղանը, նորա շուրջը բոլորուելու։

Երկայն ու ընդարձակ սրահում շարուած էին երկայն սեղաններ, որոնց վերայ գարսուած էին սպասները։ Սեղանի մի ծայրին առանձին տեղ էր տուած պատգամաւորներին, ներկայացուցիչներին, տեսուչներին ու խմբագիրներին։ Որոնց իւրաքանչիւրի սպասի առաջ զրուած կերակրատոմների վերայ գրուած էր նստողի անունը։ Պատերին կպած էին խոշոր տառերով տպուած մեծ գունաւոր թղթեր, որոնց վերայ կարելի էր կարդալ։ «Հայոց Առաջին Ընդհանուր Աւսուցչական Ժողով Թիֆլիսում—1882» և շրջապատուած էին ծաղկապսակներով ու գշնդպոյն լայն ժապաւէններով։ Միենանը գրուած էր նաև բոլոր կերակրատոմների վերայ։

Սեղանի միւս ծայրին նախաճաշելուց յետոյ, ուսուաշայոց մտաւոր աշխարհի ներկայացուցիչները, հայ մանկանց դաստիարակները նստուցան իրանց տեղերը։

Հոգու և սրտի ուրախ ու զոււարթ տրամադրութիւնը փայլում էր ամենքի երեսին։ Խորհրդաւոր ու վաեմ բոպէ։ Դէմ առ դէմ նստուել են հայի մտաւոր անդաստանի մշակները, որոնք երբեք չեն եղել այդպէս համախմբուած։ Արդեօք, մտածում էր, այս միւնոյն անձինք կրկին պէտք է կարողանան այդպէս գումարուած տեսնել միմեանց։

Առաջին կերակրից յետոյ առաջարկուեցաւ նորին Մեծութեան Կայսր Ալեքսանդր Գ.-ի կենացը։ Նուագեց երաժշտական խումբը և մի անվերջանալի «ուռայ» հետևեց նորան։

Շուտով առաջարկուեցաւ ամենայն հայոց Կաթողիկոս

Գելլիք Գ.-ի կենացը։ Ուսուցիչների երգեցիկ խումբը, որ առ անձին տեղ ուներ բռնած սեղանի մի ծայրին, երգեց «Բարեկ, քանի՛ հրաշափառ»։

Եյդ միջոցին տիկնանց և օրիորդներին բաժանուեցան ինչեր, որոնցից կախուած ժապաւէնների վերայ կարդացւում էր՝ «Աւսուցչաց կողմից»։

Երդէն մի քանի բաժակ զինի վայելել էին։ Ճառախօսութեան ժամը մօտեցէլ էր և խօսել ցանկացողների անունները ցուցակագրուում էին։

Ճառախօսութեանց ճանապարհը բաց արեց և, Յանձնաժողովի նախագահ՝ Բժշկապետ Մեծ. Մ. Շևադարիննելչը։<sup>\*)</sup>

«Երկար ժամանակ չէ, ասաց նա, ինչոր մեզանում սկսուել է գործական գործը։ Դա 40 տարուց չէ անցնում։ Ով 40 տարուց ընթացքում հետեւ է մեր գործական գործին՝ անկառկած զիտել է, որ խալի վայ վարժապետները և տիրացուները իրանց մեթոդներով իրանց բարբարոսական պատիժներով այնպիսի կերպարանք էին տալիս մեր ուսումնարաններին, որ սարսափ էր ձգում աշակերտների վերայ։ Այժմ մեր ուսումնարանները բոլորովին ուրիշ կերպարանք ունեն։ Այժմ ամէն բանի մէջ յառաջադիմութիւն է նկատում։ Վեր ուսումնարանները այժմ հարուստ են զարգացած ուսուցիչներով։ ուսումնական պիտոյքներով։

«Բայց մենք շատ իրաւունք չունենք անցեալը դատապարտելու։ Մեռածի մասին կամ լաւ պէտք է ասել կամ ոչինչ։ Մեր հին ուսուցիչները առհասարակ հոգեորականներ էին, վարդապետներ էին, Ի՞նչ որ իրանք տեսել էին իրանց վանքերում։ այն էին տալիս իրանց աշակերտներին։ աւելի չէր կարելի պահանջել։ Բայց, սկսած Լազարեան ճեմարանի հիմնարկութիւնից մի զգալի փոփոխութիւն է նկատում։ 15 տարի առաջ մեր ուսուցչական գործը արագ քայլերով դէպի լաւն է գնում։ և այդ այն ժամանակն էր, երբ հայկական

\*.) Մենք չկարսպացանք լաւ հետեւեալ անձանց ճառերը, պ. պ. Յ. Հախութեանցի, «Կավազն»-ի խմբագիր իշխան Գ. Երփառվի եւ Երփառվից թէ սորա պատասխանը իշխան Երփառվին եւ թէ վերջին ճառը պ. Բարխուդարեանցի գլխին պատկ դնելիս

լրագրութեան զեկը անցնումէ համալսարանականների ձեռքը Այն ժամանակ գեղեցիկ սեոլ ևս զարմանալի յառաջադիմութիւն է ցցյ տալիս»:

«Բայց մեր դպրոցները, մանաւանդ գիւղական դպրոցները շատ անրարեկարգ դրութեան մէջ են դեռ ևս. Մեր հարուստները պէտք է օգնեն գիւղական ուսուցմաններին. նորա անտէր են. Գիւղական ուսուցիչներն էլ մեծ գեր ունեն կատարելու գիւղական հասարակութեան մէջ՝ նոյն իսկ գիւղերի բարելաւութեան և գիւղացիների բարեկեցութեան ու յառաջադիմութեան վերաբերութեամբ. Գիւղական ուսուցիչները պէտք է ճանապարհ ցցյ տան գիւղացուն. Նորան պէտք է սովորեցնեն տուն և ճանապարհ շինել բժշկութիւն անել. Գիւղական ուսուցիչը քաղաքումը տեսնումէ մի երկրագործական մեքենայ. Եթէ նա համոզէ գիւղացուն որ բերել տայ այդ մեքենան և 40 մարդու գործը մի մեքենայ շինի, մեծ օգուտ կը տայ և դրանով կը գրաւի գիւղացիներին. Ես հաւաստի եմ՝ որ՝ եթէ ուսուցիչները այսպէս փորձեն, 5-10 տարում մեր գիւղացիները կ'ունենան վայելու կեանք: Ուրեմն, կեցցե՞ն ուսուցիչները. ուսուցիչների կենացը»:

Մի բարձրաձայն «Կեցցէ՛ յաջորդեց պ. ատենաբանի խօսքերին. և Փողովը թնդաց:

Ապա, կարձ միջոցից յետոյ վեր կացան կարգով ճառախօսները և սկսեցին իրանց ճառերը, որոնց ժողովը միշտ պատասխանումէր իւր անվերջ «Կեցցէ՛ ներով: Ամենքին տեսանելի լինելու համար վերջին ճառախօսները աթոռների վերայից եին ուղղում իրանց խօսքերը:

Պ. ԲԱՐԻՍՈՒԴԻՄԵՆՑՆՅՑ—Երբ, սորանից երկու տարի առաջ ծնաւ այն միտքը, որ Թէֆլիսում լինի Հայոց Ընդհանուր Ուսուցչական ժողով: Ես հրաւիրեցի քաղաքում գրտնուած ուսուցիչներին և գործին համակրող անձանց, որ աշխատենք այդ մեծ գործը գլուխ հանելու:

Ցաւելով պէտք է ասեմ, որ մեր կազմած ժողովները այնպէս դանդաղ էին առաջ գնում և այնպիսի վշատեցուցիչ կերպարանք էին ստանում: որ անկարել էր հաւատալ թէ սկսուած գործը պէտք է յաջորդութեամբ պսակուի:

Կողմից միայն այն էր լսւում թէ սյդ ժողովը չի կարող կայանալ. թէպէտ աղնիւ գաղափարները չեն մեռնում: Բայց յետոյ կազմուեցաւ կարգադրիչ Յանձնաժողովը, որ արիութեամբ նիստեր էր կայացնում: Արախութեան արտասուք էի թափում ես, երբ տեսնումէի այդ ժողովներում գործ դրուած եռանդը: Վերջապէս հասաւ ժամանակ. և Յանձնաժողովը գործեց, որքան կարողացաւ: Ես առաջարկում եմ Յանձնաժողովի անդամների կենացը:

Պ. Գ.Է.ՈՐԴԻ ԵՒՆԴՈՒԼԵԱՆՑ—Երկու տարի առաջ մի գեղեցիկ միտք ծագեց մի խմբի մէջ՝ ուսուցչական ժողով կազմելու. Կեցցե՞ն այն ուսուցիչները, որոնց ձեռքով պէտք է ազգը առաջ գնայ գեղեցիկ ազգասիրութիւնը: Այս գեղեցիկ ու վսեմ գործի սկզբնաւրութեամբը մենք պարտական ենք այն ուսուցչական խմբին, որ յանձնեց Պ. Բարիուդագրեանցին ուսուցչական ժողովի գործը: Ուստի ես առաջարկութարեանցի կենացը, որպէս ներկու մեմ ըմպել պ. Բարիուդարեանցի կենացը, որպէս ներկայացուցչի այն խմբի, որ յանձնեց նորան այդ գործը:

Պ. ԲԱՐԻՍՈՒԴԻՄԵՆՑՆՅՑ— շնորհական կալութիւն յայտնելով աւելացրեց, որ Ուսուցչական ժողովի ծանրութիւնը մէնակ չէր տանում: այլ ուներ իւր օգնականները. ուստի «Խմենք» ասաց: պ. պ. Ս. Մանգինեանցի և Յ. Զիգիանեանցի կենացը»:

Երգողների խմբից պ. Ն. Շահլամեանցը երգեց «Հայաստան, երկիր գրախտավայր»:

Պ. Մ. ՇԱՀՊԱՐՈՒՆԵԱՆՑ— Մենք մեր ուսուցիչների մէջ ունենք և պատգամաւորներ, որոնք հեռաւոր տեղերից եկել մասնացում են այս ընդհանուր գործին: Խմենք պատգամաւորների կենացը:

Պ. ՎԱՐԴԻՆ ԵԳ.ԻՆ.ԶԱՐԵԱՆՑ (երկանցի) — Պատգամաւորների և սերկայ բոլոր ուսուցիչների կողմից առաջարկում եմ խմել Թէֆլիսի հայ հասարակութեան կենացը:

Դորանից յետոյ զանազան կողմերից ձայներ բարձրացան. «Կեցցե՞ն խմբագիրները»:

Պ. Գ. ԱՐԴՐՈՒՆԻՒՆԻ— Ես խօսում եմ մամուլի կողմից: Զեղ յայտնի է մեր մամուլի մերձաւոր անցեալը: Պ. Սիմոնեանցի խմբագրած թերթով մեղանում լրագրական գործի հիմ-

քը գրուեցաւ: Կորան յաջորդեցին մի քանի ուրիշ լրագրեր: Բայց մամուլը առանց ձեր օգնութեան ոչինչ չէր լինի, անզօր կը լինէր: Մամուլը առաջարկումէ ուսուցիչների կենացը:

Պ. Պ. ՍԻՄԷՒՆԵՍՆՅՑ-ՀԱՅ ուսուցիչներ, մեր ապագայ սերունդի հիմքը դուք էք: Ցանկանում եմ, որ դուք ձեր խնամքին յանձնուած մանուկներից լաւ մարդ պատրաստէք: Ամէն բան, ինչ որ հայութիւն կարող է պահպանել սիրեցէք և նոյնը քարոզեցէք ձեր աշակերտներին:

Պ. ԸԲԴԱՐ ՅՈՒՂԱԾԵՆՆԻՍՆՅՑ-ՄԵՐ լրագրերի մէջ դիտած կը լինէք մի պակասութիւն: Այդ պակասութիւնը գաւառական թղթակցութեանց բացակայութեան մէջ է նկատում: Եւ շատ հասկանալի է: Մինչեւ մեր լրագրերի գլուխաւոր թղթակցներն ու աշխատակիցները ուսուցիչներն են, և նոքա մեծ բազմութեամբ այսօր այսուղ են գումարուած: Ել ով պէտք է թղթակցի մեր թերթերին: ՄԵՐ լրագրերը զուրկ և թղթակցութիւններից: Նոցա սնունդը պակասած է, որովհետեւ այդ սնունդ տուողները դուք էք: Դուք սերտ կապուած էք մեր լրագրական գործի հետ: Եթէ ուսումնարանը պատրաստում է ապագայ սերունդ, ապա ուրեմն այդ կապը բնական և ցանկալի պէտք է լինի:

Էդուարդ Լարուլէի անունը՝ յայտնի է ձեզ: Նա առաջ գրաշար էր մի աշխարհաշանդիսի ժամանակ, որտեղ նա ներկայացրել էր «այրուբենը» մի տախտակի վերայ: Երբ նորանհարյուն թէ ի՞նչ նշանակութիւն, ի՞նչ զօրութիւն ունենայդ տառերը, նաև պատասխանեց: «Սոցա զօրութիւնը սոցա միաւորութեան մէջն է», Եթէ նորա պատասխանը ձիշտ է, եթէ տառերի միաւորութիւնը մի շիշ ու զօրութիւն է կաղմում: Ռըշափ այդ ձիշը պէտք է լինի մարդկանց վերաբերութեամբ: Եթէ ձեր միութեան մէջ է կայանում ձեր զօրութիւնը, ուրեմնես խմում եմ մեր Ուսուցչական ժողովի կենացը:

Պ. ՆԻԿԱՐԱՅՑՅՈՒ ԽՈՍԹՈՎԵՍՆՅՑ-«Վարժարան»-ը գեռ մանուկ է: և որովհետեւ մանուկը չէ խօսում: ուրեմն դուք չէք կարող ինձնից բան պահանջել: «Վարժարան»ը ձեզ հա-

մարէ: Նա ձեր մտքերի թարգման պէտք է լինի: Թումէ որ դուք ԵԼ լինէք նորա համար:

Պ. ՍՊԱՆԴԱՐԵՍՆՅՑ-ԻՆՁՆԻց առաջ շատերը խօսեցին, կենացներ առաջարկեցին: Այսուամենայնիւ կ'ասեմ: մի երկու խօսք: Կան բաներ, որ որչափ ԵԼ փոքր լինեն, միացած ժամանակը մեծ գործ կարող են անել: Որչափ ԵԼ մենք փոքր մարդիկ լինենք, այսուամենայնիւ եթէ միացած գործենք, կարող ենք ամեն բան անել: Թա՞ղ Ուսուցչական ժողովը մի օրինակ լինի միութեան: ԸՆԴՀԱՆՈՒՐ գործի համար ամենքը պէտք է զրհեն իրանց անհատական կրթերը ամենքին, անհատական հաշիւները ընդհանրութեանը՝ թէ խմբագիրները և թէ ուսուցիչները: Խումբը երգեց «Վանեցւոց խրախոյս»:

Բժշկապետ Ա. ԲԱԲԱՅԵՍՆՅՑ-Ես գէպի եւրոպա էի Ճանապարհորդում: Երբ լսեցի որ Թիֆլիսում ԸՆԴՀԱՆՈՒՐ Ուսուցչական ժողովը է կազմում: Ուրախութիւնս արտայայտելու համար երկու անգամ շնորհաւորեցի Ճանապարհոց այդ գեղեցիկ գործի սկզբնաւորութիւնը: Ես հաստատ համոզուած եմ որ այս ժողովը պէտք է պաշարերի ապագայում:

Պ. ՄԱԿԱՐԻՆԵՍՆՅՑ-ՄԵՐ ուրախութեամբ ես մասնակցում էի մինչև օրս մեր ուսուցչական ժողովներին: Յաւում եմ, որ ես մինչև ժողովների վերջանալը չպէտք է կարողանամ ներկայ գտնուիլ: Ես շատ տագնապով էի սպասում ժողովի արդիւնքին: Այսպիսի ժողովներից՝ եթէ վճիռներ պէտք է հաստատէնք, ես հաւատացած եմ որ մենք ձեռընթափ պէտք է գնայինք: Այս ժողովներում մեր գաղափարները պէտք է շօշափէնք, պէտք է կալդուրուէնք: Ըատթոյլ սկսեցինք մեր գործը, բայց ներելի է: որովհետեւ առաջն անգամն էր: Ակրում ճշմարիտ է, շատ լաւ չէր գնում գործը: բայց մեր ժողովները հետզետէ պատկառելի դարձան: Զնայելով որ ուսուցիչները անպահով են, բայց նոքա մեծ գործի են ծառայում: և շատ չի անցնի, երբ այդ վիճակն էլ կը բարոգուի:

ՄԵՆՔ երեք զաղափար իրեւ արդիւնք դուրս ենք բերել մեր ժողովներից՝ մարդասիրութիւն, մայրենի լեզուի նշանա-

կութիւնը և ուսուցչական ապահովութեան խնդիրը\*):

Յտեսութիւն մինչև միւս ժողովը: Յոյս ունենանք, որ մեր սկսած գործը ժամանակով աւելի կը բեղմաւորենք:

(Յետոյ խօսել են իշխան Երիստով և պ. Երիցեանց.)

ԲԺՇԿԱՊԵՏ ՀԱՀՊԱՐՈՒՆԵԱՆՑ—Զեղ ամենիդ յայտնի է Թիֆլիսում հիմուած Հայոց Բարեգործական Ընկերութիւնը: Խմբ՝ պայտ Ընկերութեան յարատեռութեան համար:

Գեր. ՀՄԱՅԵԱԿ Վարդապետ Տէր Սարգսեանցը երգեց Շնձ համար չէ՝ երդը:—Ի՞նչ խորհուրդ ուներ արդեօք:

Պ. ՅԱՐՈՅ—Հայոց մեծ մասը Տաճկաստանում է: Ես պյնտեղ հիւր էի: Իրեւ ուստիացի հայ՝ համրուրեցի սրբազն Պատրիարքի Աջու: Ամենքիդ յայտնի են Ներսէս Սրբազնի գործերը: Առաջարկում եմ Ներսէս Վարժապետեանցի կենացը:

Այդ միջոցին յայտնի թիւրք երգիշ ԱԲԴԻՒԼ-ԲԱԴԻՒ իւր խմբով և Անի քաղաք՝ երգելով անցնում էր հիւրերի միջովը:

Պ. Հ. ԱՅԱՔԵԼԵԱՆՑ—Մենք ուրախութիւն ենք վայելում այստեղ և Ճառախօսում: Բայց մի՞թէ միայն մենք ենք: Մենք այստեղ ունենք Տաճկաստանից եկած երեք հիւր՝ պ. պ. Փորթուգալեանց, Իփէքճեանց և Մեղաւորեանց: Խմբ՝ պայտագալ կենացը:

Պ. Հ. ԻՓէքճեանՑ—Ես տեսայ, որ մատաղ սերնդի կրթութեան համար կը գործէք: Պէտք է ասեմ՝ որ փոքր ինչ նախանձ կայ սրտիս մէջ տաճկահայ լինելով: Կը շնորհաւորեմ ձեզ ձեր սկսած մեծ գործը և կը ցանկամ որ ձեր աշխատութիւնը արդիւնաւոր լինի: Այդպիսի յանձնախմբեր ես շատ տեսած եմ: բայց արդիւնք տեսած չեմ: Յուսում որ այստեղ խօսքին հետեւում է և գործ: Զեր ժողովները տեսնելով ես շատ ուրախ եի: Բայց երբ Տիկին Բարայեանցին և Օրիորդ

\* ) Հապա մեր ծխական դպրոցների համար կաղմուած ծրագիրը Մեր կարծիքով, եթէ Ընդհանուր Ուսուցչական ժողովը մի երկու լաւ բան արել է. այդ նորա կազմած ծրագիրն է՝ լաւ թէ վատ:

Յովհաննիսեանցին տեսայ ամրիոնից դասախոսելիս՝ ես այն աստիճան զգածուեցայ, որ հազիւ արտասուլքներս պահեցի:

Պ. Յ. ՄԵԴԱՏՈՐԵԱՆՑ—Մենք կաղմեցինք ուսուցչական ժողովներ: Բայց այդ ժողովներին կատարելապէս ամբողջ հայութիւն չէր մասնակցում: Ես կը բարեմաղթեմ որ մեր ապագայ ուսուցչական ժողովը հայոց ընդհանուր ուսուցչական ժողով լինի:

Պ. ՄԿՐՏՉՈՒԹՈՒԹԵԱՆՑ—Մենք Տաճկահայաստանի մէջ շատ ձնշուած ենք: Դո՛ք, որ այդ ձնշուածներից աղատ էք, ձեր ձեռքը մեկնեցէք տաճկահայ ժողովրդին, որ իւրեւ մի ազգի որդիք՝ զուգընթաց առաջ գնանք յսուածադիմութեան շաւզին մէջ: Ձեր ձեռքը կը խնդրեն տաճկահայ ժողովուրդները:

Պ. ԲԻԿՆԱՅԱՅԱՐԵԱՆՑ—Ես ցանկանում եմ: որ այս ձաշը վերջին ձաշը չլինի: Ես երբէք իմ ձաշը չեմ մոռանում: Շնորհակալութիւն այն Յանձնաժողովին, որ մեր ստամոքսին բաւականութիւն տուաւ: Թո՛ղ մենք ապացուցանենք, որ մենք գաւառացիներս անքաղաքավարի չենք, և գիտենք շնորհակալութիւն անել Յանձնաժողովին՝ մամուլով Թիֆլիսի հայերով. շնորհակալութիւն:

Պ. Գ. ԱՅՏՐՈՒՆԻ. — Զեղ յայտնի է, ի հարկէ: թէ հայախօս կանայք ի՞նչ գեր են խաղում մեր գպրոցներում և ընտանիքում: Առաջարկում եմ հայախօս կանանց կենացը:

ԲԱՀԱԹՐԵԱՆՑ—Մենք մինչև հիմա խմնւմ ենք պայտագալ այն անձի կենացը: Ես առաջարկում եմ հայոց ազգի կենացը:

ՏԻԿԻՆ ԲԱԲԱՅԵԱՆՑ—Դուք գիտէք, որ հայ լեզուն կանանց մէջ տարածուել է մեր ս. Գայիհանեան ուսումնարանի ուսուցիչների շնորհիւ: Հայ երիտասարդութիւնը շատ բան է արել հայ լեզուն ժողովրդի և մասնաւորապէս հայ կանանց մէջ տարրացնելու մասին: Պէտք է խոստովանեմ: որ և ես մասնաւորապէս պարտական եմ իմ ամուսնուն: որ հայերէն եմ խօսում:

ԻՇԽԱՆ ՆԱՊ. ԱՄԱՅՈՒՆԻ. — Զեղ Վաշակ, լրագրից յայտնի է, որ ես նոր եմ սովորում հայերէն խօսել: Թատ-

ըոնի նշանակութիւնը ձեզ յայտնի է: Ես ձեզ կ'ասեմ թատրոնի առաջին և վերջին ուղարութեան մասին: Երեք տարի առաջ մի փոքրիկ խումբ կաղմուեցաւ թատրոնի գործը ապահովելու նպատակով: Այդ խումբը հետզետէ տուեց իւր ներ կայացու մերը: Առաջին ներկայացումը մեծ ուղարութիւն արաւ, թատրոնը մեջ միևնուն ժամանակ հայերէն լեզու էր սովորեցնում: Առաջին բառը, որ մենք սովորեցինք թատրոնում, էր ապ ար անջան:

Երեք տարուայ մէջ մենք տուինք 150 ներկայացում: Առաջին տարին թատրոնը տուեց 15000 ո., երկրորդ տարին՝ 17000 ո., երրորդ տարին՝ 20000 ուրբի:

Հայոց Ընդհանուր Ուսուցչական ժողովի առիթով ես առաջարկում եմ մի որդեգիր կարգել ո. Գայիհաննեան և Ներսիսեան ուսումնարանում: Ինչ վերաբերում է գումարին, նորա ձեռք բերելը հեշտ է:

Օր. Գ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ—Ես շատ ուրախ եմ, որ միշտ տիկին Բարայեանցի հետ ինձ էր յիշում: Ես շատ բան չունեմ ասելու: Այս միայն կ'ասեմ, որ մենք միշտ տ. Բարայեանցի հետ ձեռք ձեռքի տուած առաջ կ'երթանք. և դուք կ'ունենաք լաւ աշակերտներ:

Պ. ԱԲԻՍՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ—Մեր ընդհանուր ուսուցչական ժողովները կայացան: Հայոց ուսուցիչները առիթ ունեցան միմեանց ձեռք սեղմելու, մոքեր փոխանակելու, սերմեր տանելու, պարարտ հողի մէջ ձգելու: Զմոռանակը, որ մինչեռ մենք հեռացած մեր տեղերից՝ ժողովուած ենք այսակը, մեր բոլոր դասակարգերի աչքը մեղ վերայ և տնկուած. մեղնից են փրկութիւն սպասում: Մատաղ սերնդի փրկութեան հուրը մի անգամ արծարծուել է ձեր մէջ: Ցանկանում եմ որ այդ հուրը անշէջ մնայ ձեր մէջ, որ բարձրանայ հայ ուսուցչի պատիւը: Մի ընտիր հասարակութիւն մեզ այսօր ճաշի է հրաւիրել: Այդ մեծ քայլ է: Ցանկանում եմ աւելի առաջ գնալ:

Պ. Յ. ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ—Բաժակները վեր առէք: Կան մարդիկ, որ համեստութեամբ են գործում: բայց


մեծ գործ են կատարում: Այդպիսիների մէջ մէկն էլ մըր Խրիմեան Հայրիկն է: Կեցցէ՝ Խրիմեան Հայրիկ:

Մի քանի բոպէից յետոյ շատերը իրանց տեղից վեր կացան, որոնց թուում և մենք: Բայց երբ կրկին մօտեցանք սեղանին, տեսանք որ պ. Երիցեանցը պ. Բարիխուգարեանցի առաջն էր կանգնած. վերջինս մի ծաղկապսակ ունէր բոնած և այս խօսքերն էր ասում: «Դուք ինձ պսակում էք այսպիսի մի թանկագին ընծայով. ցանկանում եմ ինձ յաջողութիւն այնքան աշխատելու, որ յիրաւի արժանի համարեմ իմ անձը մի այսպիսի ընծայի»:

Պ. ՔԵԿԱՆԱԶԱՐԵԱՆՑ—Եթէ մէնք այս բոպէիս մի գեղեցիկ կերպով ու ճաշակով զարդարուած սեղանի շուրջն ենք գտնուում: այդ մէր բազմաշխատ պ. Սալամբէկեանցի շնորհիւն է, նա էր, որ այնքան ջանք էր թափել Ընդհանուր ժողովի դահլիճը զարդարելու և մանաւանդ նորա օրինակելի դպրոցի սենեակը կարգաւորելու վերայ: Կեցցէ՝ պ. Սալամբէկեանց:

Պ. ՄԻՔԱՅԵԼ ՍԱԼԱՄԲԷԿԻՆԵԱՆՑ—Քսան տարի է, որ ես ուսուցչութիւն եմ անում և քսան տարուայ մէջ, ինչ քան կարողացել եմ ծառայել եմ յառաջադիմութեան գործին: Ես այսօր անասելի ուրախ եմ, երբ տեսնում եմ, որ ժողովրդին տուել եմ այնպիսի աշակերտներ, որոնք այսօր ինձանց էլ լաւ են: Ընդհակալութիւն:

Արդէն ժամի  $7\frac{1}{2}$  էր և հիւր ուսուցիչները իրանց քայլերը ուղղում էին, ոմանք դէպի տուն, ոմանք դէպի թատրոն:



ի՞Զ.

Ա թագուհու պատուաց անունը մասնաւուած է Ա Սեպտեմբերի 6-

Խոնակարուութիւնը առ պատուաց անունը մասնաւուած է Ա Սեպտեմբերի 6-

Ե

Մէջ. ՕՐԻՈՐԴԻ ՀՅՈՒՃԵՆ ԲԱՑԻՍՈՂՈԼԵԸՆՑԸ պարապեց ոռուսաց լեզուով: Կարկայ էր ոռուսաց ժողովրդական դըպչոցների վերատեսուչը և երկու հիւր՝ նոյն շրջանից: Մէջ. Օրիորդը զրատախտակից կախ արեց մի պատկեր: որ ներկայացնում էր ճաշի նատած մի ընտանիք:

Իւր աշակերտուհիներից, որոնք երկրորդ տարին նոր էին սկսում: ոռուսերէն հարցերի միջնորդութեամբ պատկերը զրուցատրութեան նիւթ շինելով՝ բացատրութիւններ էր պահանջում: Առաջին նախադասութիւնը, որ նոքա կազմեցին: էր՝ «Մամա ձայտ»: Այդ երրորդ դէմքի ստորոգեալով Օրիորդը աշխատում էր հասկացողութիւն կազմել տալ առաջին (ձայ) և երկրորդ (յայտ): դէմքի վերջաւորութեան և առհասարակ գերանուան մասին: Դասի ընթացքում Օրիորդը պատուիրեց իւր աշակերտուհիներին ձեռքերը մի քանի անգամ յետ ու առաջ տանել բերել երևի: մարմինը մարզել և բոպէապէս ու հոգեպէս կազդուրուելու համար: Եթայ շարժական տառերի միջոցով նպաս սկսեցին կարդալ կազմած բառերը: Այս դասին Օրիորդը սովորեցրեց միայն ձ ի զրութեան ձեւը, միւս անգամուան թողնելով: Սակայն կարդում էին «Մամա»:

Մի քանի բոպէ անցնելուց յետոյ եկան նստոտեցին երրորդ տարուայ աշակերտուհիները: Գրատախտակից կախուած էր այդու պատկերը՝ քաղօցի ժամանակ: Հարց ու պատասխանը լինում էր ոռուսաց լեզուով:

Պարապմունքից յետոյ սկսուեցան վիճաբանութիւնները:

Պ. Ա. ՄԵԼՔՈՒՄԵԸՆՑԸ—Ես բոլորովին համակրում եմ Օրիորդի պարապմունքին: բայց կարծեմ առաջին անում աշակերտուհիների հետ, առաջին տարում սովորած պատկերն էր, որ երկրորդ տարին կրկնելով՝ հիմք էր տալիս ոռուսաց լեզուի համար: Գաղափարականը կազմել վաղ

լինէր, եթէ նոր սովորած բառերն ու մոքերը աշակերտուհիներին խմբովին ասել տար:

Պ. ԹԱՒԱՐԲԵԿԵՆՑՆՑ—Քերականական ժամանակները չեն կարող հասկանալ: պէտք է ասեն միայն՝ «Ես գնում եմ գնացի, կը գնամ»: Պատկերը շատ բարդ էր: պէտք է տարրական ու պարզ լինէր:

Պ. ՊՈՂՈՍ ՔԱԹԱՆԵԸՆՑԸ—Հարցերը պէտք է թարգմանուէին: Պատկերը ցցյ տալը իզուր էր: Երկրորդ տարին սովորողներին քերականական սեռերի մասին չի կարելի գաղափար տալ: Հարցերը անորոշ էին: «Я подметаю», բառ չկայ: այդ բայն ներկայ ժամանակ չըմնի:

ԲԱՀԱԹԻՄԵՆՑՆՑ—Նախ պատասխանելով պ. Քաթանեանցին՝ պնդեց որ ՊՈԴՄԵՏԱՏԵ բառ կայ: պատ գալով գասմին ասաց: Ես դասի նպատակը, գաղափարը ՀԱՍԿԱԳԱՅԱ: Բայերի վերջաւորութիւնները մանուկների միշողութեան մէջ տպաւորելու համար՝ բաւու բայից անջատուած պէտք է արտասանեն՝ ձայու, ձայտի: Դասից ոչինչ գաղափար՝ ձեռն չըերուեցաւ: «Я», իմանալու համար պէտք է ասել յ. ես, ունի համար՝ ունի դու, և օհենա: Երեք գերանուան մէջ էլ կան հայոց երեք տառերը: Ուրեմն յայտնի մտապատկերներով կարելի է դիւրութեամբ վերարտադրել տալ:

Պ. ԻՓԵՔՃԵԸՆՑԸ—Ես Օրիորդի դասի մէջ նկատեցի մանկավարժական օրէնքի համաձայն վարմունք: Օրիորդը առաջ լսելն էր վարժեցնում: յետոյ ըմբռնել էր տալիս: Այդ շատ ձիշդ է: Շատ բան չէր կարելի պահանջել մի դասում: Ես կարծում եմ դոքա ուսուերէն վաղ են սկսում սովորել: այդ պատճառով չէ յաջողում:

Պ. Կ. ԹԵՄՈՒՄԵՆՑՆՑ—Պատասխանելով պ. Թաւարբէկեանցին, որ ասում էր թէ՝ առաջ պէտք է բառ եր սովորեցնել, ասաց: «Առաջ ուսուցիչը պէտք է միտք տայ և ոչթէ բառեր»:

Պ. ՏԻԳԻՄԵԸՆՑԸ—Այն պատկերը, որով Օրիորդը զրոյց էր անում աշակերտուհիների հետ, առաջին տարում սովորած պատկերն էր, որ երկրորդ տարին կրկնելով՝ հիմք էր տալիս ոռուսաց լեզուի համար: Գաղափարականը կազմել վաղ

Էւթէ բառերը և թէ նախադասութիւնները եթէ խմբովին  
արտասանեն, շատ լւա կը սովորեն, քան թէ առ անձին առ ան-  
ձին:

Խառ. ԳԵՈՐԳ ԿՈՒԶԱՆԵԱՆՑ—Ես իմ աշակերտներին ոռ-  
ուներէն սովորեցնելիս այսպէս եմ անում.—Առաջ գրում եմ  
հայերէն և, յետոյ կողքին գրում եմ ա. և այդպիսով շատ  
հեշտ են սովորում:

Ծիրառնկատողութիւնները լսելուց յետոյ Օր. Բայիսողոլեան-  
ցը մի առ մի, մեծ մասամբ շատ հաւանականաբար՝ պատաս-  
խանեց ամենքին: Այստեղ պէտք է նկատել, որ յարգելի  
Օրիորդը մի փոքր անտեղի կերպով լիշեց պ. Կամսար Տէր-  
Դաւթեանցի «РУССКОЕ СЛОВО» անունով ոռուսերէն դասա-  
դիքը, ասելով որ ինքը ամենքին չէ հաւանում այդ դասա-  
դիքը:

Գրքի յօրինողն էլ վերաւորուեցաւ Օրիորդի նկատողու-  
թիւնից: Բայց, խօսելու տեղը չէր:

Ըստ ներկայ էին 104 ուսուցիչ:

### ՄԱՍՆԱԺՈՂՈՎՐԴ ԿԻՑԸ

#### IX.

ԵՐԵԿՈՑԻՆ կայացաւ Մասնաժողովի նիստը: Կազմուե-  
ցաւ երկրորդ տարուայ հայոց լեզուի ծրագիրը: Ներկայ էին  
19 անդամ:

ի Ա.

Օնաշերի 7.

Ա—Շ—:

Մենք ներկայ չեինք, Հայր ԱԲԷԼ ՍՈՒՔԻՆՍԵԱՆՑԸ,  
պարապել էր Կրօնագիտութեամբ. և ԲԱՀԱԹՐԵԱՆՑԸ բացա-  
տրել էր իւր մեթոդի կայով գրել-կարգալը տեսականապէս:  
Ներկայ եղողներից մի քանիսի ասածին նայելով՝ առհասա-  
րակ տէր հօր պարապմունքը թոյլ է եղել նա չի ժամում  
վերջացրել էր պարապմունքը: Աստուծոյ գյուղիւնը հասկա-  
ցըրել էր աշակերտներին ըստ Սո Կո Լո վե պատմել էր նոցա  
նակ հետեւեալ օրուայ տօնը՝ «Ծնունդ Աստուածածնայի յըն-  
նայէց»:

Իւր դասին վերաբերեալ նկատողութիւնները լսելուց  
յետոյ տէր հայրը այսպէս էր պատասխանել. «Ես իբրև գա-  
ւառացի ուսուցիչ տեսնելով որ ոչքը չէ սրտապնդւում կրօ-  
նից դաս տալու, վճռեցի դաս տալ: Ես դաս տուի. ով աւե-  
լի լաւ կարող է. թող այժմ նա դաս տայ»: Այդ պատասխա-  
նը լսելով միւս անդամ էլ խօստացել էր պարապել Հայր Ա.  
Ղազաղեանցը:

Ներկայ էին 85 ուսուցիչ:

ի Բ.

Ամենամասն մասնակիցների առաջնական նույն

Պ. ԴԱՆԻԹ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑԸ կարդաց «Գիւղական  
ուսումնաբանների համար ուսուցիչներ պատրաստելու մասին»:

Ղազար անդամ յեղյեղուած մտքերը բառ առ բառ կրկնե-  
լը ոչ այլ ինչ է ապացուցանում: Եթէ ոչ առնուազն այդպիսի  
մի պատկառելի ֆողովի նշանակութիւնը չհասկանալը. Ով իւր

մէջ վճռում է այդպիսի մի ժողովում դասախօսել՝ այսինքն՝ ամբողջ ժողովի ուշադրութիւնը ժամերով իւր վերայ կենդրոնացնելու չափ մի համարձակ քայլ անել — մեր կարծիքով նա իւր ոտքը ամբոն բարձրացնելուց առաջ պէտք է հաշիւ տայ իրան թէ, արդեօք ի՞նչ մտաւոր պաշար ունի այնտեղից գէթ նպատակին յարմար իւրացի ու թարմ մոքեր արտայայտելու համար Բայց, քանի որ իւր չափը չճանաչելը մեղանում արմատացած ախտերից մէկն է, զարմանալի էլ չէ այդպիսի տեսարանների ականատես լինելը:

Իւր դասախօսութեան մէջ պ. Քալանթարեանցը ցոյց էր տալիս գիւղական ուսումնարանների համար վարժապետանոց ունենալու անհրաժեշտութիւնը: Նա ասում էր որ՝ այդ վարժապետանոցները նոյն իսկ գիւղացի պատանիներից պէտք է հաստատել: Պարոնը առաջարկում էր հիմնել մի վարժապետանոց չորս դասարանով Ղարաբաղի թեմի մի կենդրոնական գիւղում: Վարժապետանոցին տալիս էր 5 ուսուցիչ որոնցից մէկը լինելու է մանկավարժ, Կ-ը զարգացած ուսուցիչ: Ծախսը որոշում էր 8000 ռ., որ նորա կարծիքով պէտք է գումարուէր Ղարաբաղի թեմի կալուածներից:

Պ. Դասախօսը յիշեցնելով ժողովին հին խալիքաները և նոցա փոխանակող նոր զարգացած ուսուցիչները, ասում էր որ այդ վերջինները պէտք է օր առաջ իրանց դիսի ճարը տեսնեն՝ համոզուած լինելով որ շուտով կը լցուեն մեզանում մանկավարժներ, և ներկայ թերուս ուսուցիչները: Հորոնց թուում և ես, ասում էր, չկարողանալով պահպանել իրանց գոյութիւնը անհաւասար կոուում: Կ'ընկնեն այնպէս, ինչպէս ընկան հին խալիքաները: —

Ուրեմն, պէտք է շտապել գէպի Գերմանիա: Եթէ ո՛չ շուտով մեր ուսումնարանները կը լցուեն մանկավարժներով ու մասցած ո՛չ — մանկավարժները ոտքի տակ կը ճխլուեն....

Պէտք է ասել՝ որ պարոնը իւր մշակած նիւթը կարդալին կարծես իւր անձի վերայ իւր ունեցած մեծ համարում էր աշխատում ցոյց տալ: Բառերը այնպէս էր կոտրատում որ լսողը մատծում էր թէ: Երեք ուրիշ բան է խօսելը և ուրիշ բան է կարդալը: Ի՞նչ լաւ էր, որ պարոնի նման

դասախօսներ շատ չկային: Դեռ այդ բաւական չէ: Պարոնի գործ ածած խօսքի ձևերի մէջ հակասութիւններ էլ կային: Օրինակ՝ մի տեղ անում է այս բազմա մբուխ ժողովը, միւս տեղ՝ այս պատկանելի ժողովը: Եւս, որ աւելի զարմանալին էր պարոնը սաստիկ սիրահար էր երեսում բանաստեղծութեան: Օրինակ՝ ասում էր. «Ես համարձակ արշաւում էի առաջ» — «Բայց այդմ տեսնում եմ ինձ բարձր սեպացած ժայռի գլխին կանգնած»:

Հարցը վիճաբանութեան ենթարկելուց առաջ նշյն նիւթի մասին կարդաց Պ. ԱՊ. Ա. ԱՄԻՒԵԱՆՑԲ. Հարցը վիճաբանութեան ենթարկելուց առաջ նշյն նիւթի մասին կարդաց Պ. ԱՊ. Ա. ԱՄԻՒԵԱՆՑԲ.

Պարոնը ասաց որ՝ ինքը խօսելու է «Գիւղական ուսումնարանների և թեմական տեսուչների», մասին: «Նա խօսելով ժողովրդի և ուսումնարանի միեւնաց հետ ունենալիք յարարերութեան մասին ասաց որ՝ ուսումնարանի դուռը բաց պէտք է լինի ամենի համար, ինչպէս արքայութեան դռները: Ապա սկսեց խրատներ կարդալ թեմական տեսուչների գլխին: Բայց մի՞թէ ամբիոնը իրատելու տեղ և խրատ կարդալը բիթերատի գործ է: Ինչ և իցեւ, Պարոնը ասում էր որ մեր ուսումնարանները յառաջադիմութիւն անելու համար շատ բանների պէտք ունեն: ա) Թեմական վերատեսչի ընտրութիւնը պէտք է լինի մեծ զգուշութեամբ: բ) Թեմական վերատեսուչը ամէն գաւառում պէտք է օգնական ունենայի իւր համար: Իսկ դա երեք ամիսը մի անգամ հաշիւ պէտք է տայ վերատեսչին: Ինչ վերաբերում է դոցա համանելի ոռձկին: — փողին, կը գտնուի: —

Պ. Մանդինեանցի բացակայութեան պատճառով պ. Բարխուսդարեանցը նորա տեղը Բաշաթթերեանցին հրաւիրեց: Ակսուեցաւ պ. Քալանթարեանցի գլորած հարցի վիճաբանութիւնը:

Պ. ԽԱՏԻՍԵԱՆՑ — Որքան էլ լաւ, օգտակար բան լինի ուսուցանոցը, այս զրութեան մէջ զժուար է մէկ ուսուցչանոց ունենալը: Եթէ մեր գիւղական ուսուցիչը գիւղապետական ուսումնացած լինի, նա շատ բան կարող է անել: Խստաջարկում եմ: ա.) Քանի որ ունենք հոգեորդ դպրոցներ և ելք միաձնի Ճեմարանը, բաւականանք դրանցով բաւականանք

Նրանով՝ որ ունենք գաւառական դպրոցներ։ Այդ դպրոցներում թողլ բացուի մի մասնագիտական դասատուն, որ այնտեղ պատրաստուեն ուսուցիչները. բ.) Գիմազիայի ընթացքը աւարտող աշակերտները չեն գնում մեր գիւղական ուսումնառաներում ծառայելու այլ փառում հալւում են ժողովրդի մէջ։ Խօսքս այնպիսիների վերայ է, որոնք գիմազիական ընթացքը աւարտելուց յետոյ չեն կամ չեն կարողանում մտնել համալսարան։ Ես կարծում եմ որ՝ լաւ կը լինի որ այդպիսի երիտասարդ ուսումնարտները, որոնք չեն կարողանում աւելի բարձր ուսումնարաններում իրանց ուսումը շարունակել գնան այդ գաւառական ուսումնարանները։ Ի՞նչ պատկանում է ոռօճինն, որ պիտի տրուի այդ ուսուցիչներին, երբ լաւ ծրագրով կազմուած կը լինեն մեր ուսումնարանները, նիւթական ապահովութիւն էլ կը լինի։ Ես հաւատացած եմ, որ ժողովուրդը հակակրութիւն չի ցոյց տայ։

Որովհետեւ այստեղ Պ. Խատիսեանցը անտեղի յիշատակութիւն արեց ծրագրերի մասին։ ուստի նախագահ պ. Բարխուդարեանցը ընդհատեց նորան։ և նա վերաւորուած իշաւ ամբոնից ասելով «Ես ձեր ասելով չեմ կարող խօսել համեցէք, գուք խօսեցէք»։

Հայր. Ա. Ա. Ջ. Զ. Ե. Ե. Ն. Յ. Ե. Ա. աջին անգամը չէ որ արծարծուում է ուսուցչանոցի և լաւուսուցիչներ պատրաստելու հարցը։ Այդ հարցը նոր չէ։

Պ. Ի. Ֆ. Ք. Ե. Ե. Ն. Յ. Ե. Ա. ինդիրը մեղ էլ է զբաղեցրել Ս. Ե. Ա. քննադատելով այդ հարցը, կազմել ենք մի ծրագիր որ ես առաջարկել եմ Կ. Յանձնաժողովին։ Մեր վարդապետանոցը կազմուած է կ. ստորին և 6 բարձրագոյն նախակրթարանից։ Այդ ուսումնարանում սովորող լաւ, ընդունակ բարձրագոյն նախակրթարանի աշակերտներից ընտրում ենք ուսուցչացու։ Ես կարծում եմ, որ նպատակին համենելու համար պետք է մանկավարժական դասախոսութիւններ հաստատել ամէն տեղ, ուր որ կարելի է։

Պ. Հ. Ղ. Ա. Կ. Ս. Ե. Ե. Ն. Յ. Ե. Ա. աջանական հանդամանքների հետ կապուած ջարմանալիքի է. երբ խօսքը ընկնում է ապահովութեան վերայ, իսկոյն ամենքը

Վարարաղի կալուածներն են ցոյց տալիս. կարծես այդ կալուածները մի մի անսպառելի շտեմարան են մեզ համար. Իմ կարծիքով, վիճակային եօթնամեայ դասընթացով ուսումնարանները դորա համար բաւական պաշար են տալիս։ Եւելի լաւ է, որ այդպիսի տեղերում գիւղացի մանուկներ մտնէին և աւարտելով ուսումը, ծառայէին իրանց գիւղերին։ Լաւ կը լինէր, որ վիճակային դպրոց ունեցող քաղաքների հօգաբարձութիւնները հօգային հեշտացնել գիւղական մանուկների քաղաքներում բնակելը, այն պայմանով որ՝ այդպիսիքը իրանց ուսումը աւարտելուց զինի պարտաւորուած լինէին մի որոշ ժամանակ ծառայել նոյն ուսումնարանին։ Լաւ կը լինէր, որ գիւղը մնունդ տար այդ մանուկներին։ Հոգեոր իշխանութիւնն էլ կարող էր մասնաւոր աղբեւը որոշել։ Մի մարդ կը պահէր նոցա իւր տանը, մնունդը և շորերը կը պատրաստէր։ Եյդ տեղերում վերջին տարին կարելի էր առանձին մանկավարժութիւն ուսուցանել։

Պ. Թ. Ե. Մ. Ո. Ւ. Ր. Ա. Ե. Ե. Ն. Յ. Ե. Ա. կարծիքով, պետք է իւրաքանչեւր տարի, իւրաքանչեւր թեմում՝ թեմական մանկավարժական կուրսեր (couirs) նշանակել շնորհալի ղեկավարի առաջնորդութեամբ։ Իսկ մասնագիտական դասարանները նոր միտք չէ. մեր մէջ այդպիսի մտքեր բաւական արծարծուել են։

Պ. Խ. Ե. Մ. Ո. Ւ. Ր. Ա. Ե. Ե. Ն. Յ. Ե. Ա. համաձայն չեմ պ. Պ. ու կասեանցի առաջարկութեանը՝ որ գիւղական ուսուցչին պետք է պարտաւորեցնել աւարտելուց յետոյ նոյն ուսումնարանին ծառայել։

Այստեղ նախագահ պ. Բարխուդարեանցը ստիպում էր պարունի որ կարճ կտրէ իւր խօսքը, ասելով «Հինգ րոպէ ժամանակ եմ տալիս ձեզ խօսելու։ Ուստի պ. Խատիսեանցը իւր ժամացցյցը ձեռքին բռնած՝ անդադար նայում էր և աշքը նորա վերայից չեռացնելով էր խօսում։

Նա շարունակեց. — Պէտք է այդպիսի ուսումնարաններում  
ա.) Առողջապահութիւն դաս տալ (բ) Գիւղատնտեսութիւն,  
գ.) Հոգեբանութեան վերայ կարճառօտ տեղեկութիւն, դ.) Գծագրութեան դասեր, — որ իմ գրքի մէջ ցոյց եմ տուել, —  
ե.) Մանկավարժական զանազան մեթոդներ և փորձնական

պարագմունքներ։ Իսկ օրիորդաց դպրոցներում՝ Գծագրութիւն, Տնային տնտեսութիւն։ Բայց ամենազլխաւորը այն է, որ ուսուցչացուի ընտրութիւն պէտք է անել։ Մոռացայ ասել։ Նոյնպէս Գրեործի խաղերի հետ պէտք է ծանօթացնել։ Ապա վերջին անգամ ձեռքի ժամացուցին նայելով՝ աւելացրեց։ «Ցաւում եմ, որ 5 րոպէն անցաւ»։

Պ. 21ԳԻԵՆԵՍՆՅ—Հարցը իսկապէս նիւթական հարց է, միջոցների հարց է։ միջոցները լաւն են, ինչպէս մի գերմանական առած ասում է «Ամէն Ճանապարհները տանում են Հռոմ»։ Ես երկու միջոց եմ գտնում։ ա.) Այցելու տեսութիւն, ինչպէս պ. Խփէքճեանցը ասաց և մեր ծրագրերում կայ շրջող ուսուցիչներ։ որոնք ամբողջ տարին ման գալով գիւղերը պէտք է սովորեցնեն ուսուցիչներին դասատուութեան եղանակները, ժանօթացնեն մանկավարժական մեթոդների հետ։ Նաև պէտք են երկրագործութեան մասնագէտներ։ Դոքա պէտք է լինեն թեմական տեսութիւնների օգնականներ։ բ.) Թեմական ժողովներում մանկավարժական կուրսեր, ուր մի փորձառու մանկավարժ կարող է ուսուցիչներին դաս տալ—ինչպէս ասաց և բացատրեց պ. Թեմուրավեանցը։ Դա հիմուած է փոխադարձ օգնութեան սկզբունքի վերայ։ Դա է ամենաժանապարհը։

Պ. ՄԵԴ. ԱՒՈՐԵԱՆՅ—Այդ երկուսի վերայ ես աւելացնում եմ նաև մանկավարժական մատենադարաններ։ Ես առաջարկում եմ՝ գիւղական աշակերտներից մէկին ուղարկել թեմական դպրանոց, ուր աւարտելուց յետոյ՝ երբ նա միենայն ձգտումները ցոյց կը տայ գէպի ուսուցչութիւնը, զայն ուղարկել էջմիածն ժեմարանը։ կամ ներսիսեան դպրոցը։

Յետոյ պ. Արիս. Յովհաննիսեանցը ասաց որ Թիֆլիսի հայ հասարակութիւնը և նոյնպէս պ. Արգ. Յովհաննիսեանցը վաղը թատրոնում օպերայ (օրե՛րա) լսելու համար ուսուցիչներին տալիս է օթեակներ։ Կարճ միջոց հանգստանալուց յետոյ վիճարանութիւն։ Ները շարունակուեցան։ ԲԱՀԱԹԻԵԱՆՅ—սկսեց ամփոփել վիճարանութեանց էական կետերը. պատասխանեց պ. Խատիսեանցի պահանջնե-

րին, մի անիրագործելի բարի ցանկութիւն համարելով նորա առաջարկութիւնը և ասաց. «Ես գիմազիան աւարտեցի, Կ տարի Մոսկուա մատի Յերմանիս մատի և յետոյ 7 տարի գիշեր ցերեկ չարչարուեցայ և նոր հասկացայ թէ ինչ է մանկավարժութիւնը»։ «Ծառ ուշ էք հասկացել», լսուեցաւ զանազան կողմից։ Ես համակրում եմ պ. Զիգիանեանցի առաջարկութեանը։ Մենք չենք կարող ունենալ բոլոր առաջարկուածները։ Աւելի իրագործելի է ուսուցիչների համար հիմել մանկավարժական ընթացքներ։

Պ. ՍԱՐԳԻՍ ԱՒԱԳԻԵԱՆՅ—Նոր ոչինչ չասելով՝ կը ունեցուրիշների ասածները։

Պ. ԲԵԿԱՆԱԶԱՐԵԱՆՅ—Ժողովի վիճարանութեան ժամանակ եղած առաջարկութիւնները նմանեցին մի ճաշը վերայ նստած խմբի թամադպյութեանը։ որ բարեմաղթութիւններ է անում։ Պ. Բարխուդարեանցը նկատողութիւն արեց։

Պ. ԻՄ կարծիքով՝ ասաց պ. ԲԵԿԱՆԱԶԱՐԵԱՆՑը՝ այս հարցը չպէտք է վճռել. ա.) Որ իրաւունք չունենք այդպիսի դպրոցներ հիմելու. բ.) Որ փող չունենք։ Առաջարկուած միջոցներից ոչինչ չի դուրս գայ։ Բայց որովհետեւ ամէն մարդ մի առաջարկութիւն է անում։ Ես ել կ'առաջարկեմ՝ հաւաքել եղած գրականական աշխատութիւնները։ «Մասիսա-ում Ա. Մանդինեանցի գրութիւնը, Բժիշկ Բարսյեանցի նուերը ներսիսեան դպրանոցին և «Արձագանք»ի մէջ մի անյայտ հեղինակի գրութիւնը, և ուսումնասիրել։ Ինչ վերաբերում է շարժական (շրջող) մանկավարժներին, ես նոցա պարտականութիւնը գնում եմ թեմական տեսութիւնի վերայ։

Հայր Ա. ԴԱԶԱԶԵԱՆՅ—մատնացոյց է անում Գորիում և Խոնիում եղած ուսաց սեմինարիաները, և ցանկութիւն է յայտնում նոյնպիսին ունենալու նաև մեզանում։

Պ. ԲԱԲԱՅԵԱՆՅ—Յիշած գրաւոր աշխատութիւնների վերայ ես աւելացնում եմ նաև հանգուցեալ Միանաւարեանցի աշխատութիւնը։ Բացի գրանից՝ ես առաջարկում եմ առանձին ուշադրութիւն դարձնել գիւղական քահանայի վերայ։ Եթէ գիւղական քահանան ունենայ վարժապետացուի պատրաստութիւն, եթէ նորան մի փոքր ապահովութիւն տրուի

Հոգեոր Խշխանութեան կողմից—այնպիսի քահանան աւելի  
լաւ կարող է յարմարուել այդ պահանջնն։

Պ. ԽԱՏԻՄԵԱՆՑԼ պատասխանելով Բահաթրեանցին ասաց. «Ես մաքում ել չեմ ունեցել և ամենւեին չեմ առաջարկել ուսուցիչներին արհեստներ ուսուցանել»։

Պ. ԹԱՏԻՄԵԱՆՑԼ ՈՐՈՎԾԵՏԿ Թիֆլիսի հայ հասարակութիւնը մեզ գաւառացիներիս այսչափ պատւում է, ուստի ինչպէս ինձ խնդրեցին (շուր գարով և մատնացոց անելով) այս ուսուցիչներից շատերը իմ և բոլոր գաւառացիների կողմից Թիֆլիսի հասարակութեան տուած պատիւների համար հրապարակապէս խորին շնորհակալութիւն ենք յայտնում։

Պ. ԲԱՐԻԱԴԱՐԵԱՆՑ—Ես բաւական համարելով այս հարցի մասին եղած վիճաբանութիւնները, հարկաւոր եմ համարում ասել ա.) Որ օրէնքով չէ ընդունուած վարժապետանոցներ հիմնելը, ուստի և անիրագործելի է. բ.) Մի թեմական տեսուչ չէ կարող մեր եռանահանդ թեմերում եղած բոլոր ուսումնարաններին այցելել—Աւելի յարմար է ոչ միայն թեմական գպրանոցներում այլև վիճակային գպրոցներում բանալ մասնագիտական գասարան մանկավարժութեան համար, որքան հնարաւոր է. գ.) Ունենալ մանկավարժական ժողովներ իւրաքանչիւր թեմում. դ.) Ցանկալի է, իհարկէ որ գիւղական քահանան դւնենայ այնքան ուսում որ կարող նայ միւնցին ժամանակ լաւ ուսուցիչ լինել. և ե.) Շրջող մանկավարժներ։

Ես առաջարկում եմ այս կետերը արձանագրել և առաջարկել ԱԵՀափառին ի տնօրինութիւն։

Պ. ԹԱՏԻՄԵԱՆՑԼ ՈՐՈՎԾԵՏԿ միայն երեք օր է մոռւմ մեր ժողովների վերջանալուն, ուստի ես առաջարկում եմ Մասնաժողովից պահանջել իւր գործունէութեան հաշիւր։

Պ. ԲԱՐԻԱԴԱՐԵԱՆՑ—Զեր ուղած հաշիւր կը ներկայացնեն ձեզ։  
Ներկայ էին 108 ուսուցիչ։

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՐԴ ՆԻՍՏԸ

X.

ՄԵՊՄԵՐԵՐԻ 8.

Առաջարկ.

Թէպէտ չկայացաւ Մասնաժողովի նիստը անդամների փոքրամասնութեան ներկայ լինելու պատճառով, այսուամենայնիւ քննուեցաւ երրորդ տարուայ հայոց լեզուի ընթացքը։ Մենք չկարողացանք ներկայ գտնուիլ մինչև վերջը։ Ներկայ էին 8 անդամ։

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՐԴ ՆԻՍՏԸ

XI.

Երեխ։

Մասնաժողովի նիստ կար ։ Հարունակուեցաւ հայոց լեզուի ծրագրի քննութեանը։ Ներկայ էին 10 անդամ։

ԻՒԹ։

ՄԵՊՄԵՐԵՐԻ 9.

Առաջարկ.

Պ. ՄԱԿԱՐ ՏԵՐ-ԱԱՐԳԱՆՑԼ գասարանց Գեղագրութեան, մասին բացատրելով իւր եղանակը։ Նկատողութիւններ արին պ. պ. Մելքոնմեանց, Մեղաւորեանց, Սալամբէկեանց։

¶. 8. Յարդսեանցը պատասխանում էր իւր ընդդիմա-  
խօսներին: Բայց պ. բարխութարեանցը՝ բանը կարճ կտրելու  
համար թոյլ չէր տալիս նորան օրինաւոր պատասխանելու:—  
Մենք չկարողացանք ներկայ գտնուիլ մինչև վերջը:

\*\*

Ապա ՀԱՅՐ ԱԲՐԱՀԱՄ ՂԱԶԱԶԵԼՆՅՑԼ երկրորդ տա-  
րուայ աշակերտների հետ պարապեց Կրօնագիտութիւնով:  
Նիւթ առնելով կայենի սպանութիւնը, որի պատկերը կախ էր  
տուել գրատախտակից:

Մեր կարծիքով լաւ ընտրութիւն չէր: Բացատրութիւնը  
մի տեսակ սարսափ էր ձգում ոչ միայն մանուկների, այլև  
ունկնդիրների վերայ: Դասի նիւթը մի եղեռնագործութիւն է,  
մի մարդասպանութիւն: Որով մանուկների անմեղ մտքերն ու  
անարատ սրտերը եր կար ժամանակ զբաղեցնելը վտանգա-  
ւոր է: մանաւանդ որ նոքա ոչինչ գաղափար չունեն և չեն  
էլ կարող ունենալ գորա վերայ:

Սակայն, ինչպէս երկում էր, հայր Ղաղաղեանցը գիտէր  
բաւական յաջողութեամբ հասնել դրած նպատակին: Միայն  
տէր հօր զրուցատրութեան առիթով մի նկատողութիւն պէտք  
է անենք:—Աշակերտների հետ խօսելիս նայելով նոցա տա-  
րիքին՝ կամ զուտ տեղական լեզուով պէտք է յայտնենք մեր  
մոռքերը, կամ զուտ գրականական: Խօսք չկայ որ առաջին  
ձևը միայն կարելի է առաջին տարուայ կամ լաւ ևս ասել  
այն աշակերտների հետ գործ դնել որոնք գժուարանում են  
իսկութեամբ ըմբռնելու գրականական լեզուն: Խոկ մեր ասե-  
լիքը հասկանալու չափ պաշար ունեցող աւելի հասակաւոր-  
ների հետ պէտք է գործ դնենք գրականական լեզու: Երկու  
գիտուածում ևս մեր լեզուն զուտ պէտք է լինի, որոշ դրոշմ  
պէտք է կրի իւր վերայ: Խոկ երբ ուսուցիչը միւնցն աշա-  
պէտք է կրի իւր վերայ: Խոկ երկու ուսուցիչը միւնցն աշա-  
պէտք է կրի իւր վերայ: Խոկ երկու ձեն էլ թոյլ է տալիս, դա  
միայն բացատրում է այն հանդամանքով, որ նա շատ փոքր  
նշանակութիւն է տալիս լեզուին: Տարաբաղտարար տէր հայրը  
առաջական առաջանում էր վերջին խառնաշփոթ լեզուով: Մի տեղ նա ա-  
վարւում էր վերջին խառնաշփոթ լեզուով:

սում էր հետևեցնել (եղրակացնել): Միւս տեղ այրուն  
(արիւն): Այս իբրև օրինակ ենք ասում: Պատասխան պատասխան  
Մենք մինչեւ վերջը ներկայ չեինք: Կա ոչ զառա միմէ  
ներկայ էին 106 ուսուցիչ:

Այս պատասխանը պատասխան է պատասխան ամենը: Վեմաք  
ըմբռագույն են այս ուսուցիչները: Այս պատասխանը պատասխան  
է պատասխան ամենը: Վեմաք ըմբռագույն են այս ուսուցիչները:

Լ.

Այս պատասխանը պատասխան է պատասխան ամենը: Վեմաք  
ըմբռագույն են այս ուսուցիչները: Վեմաք ըմբռագույն են այս  
ուսուցիչները:

Պ. ԳՐԻՎՈԾ ՊԵՏՐՈՍԵԱՆՅՑԼ Խօսեց Շանկական խա-  
ղերի մասին»:

Պարոնը ասաց. «Մեր գիւղերում շատ խաղեր կան,  
որոնցով մանուկները պատրաստում են իրանց շրջանը մտնե-  
լու: Խաղը մեծ նշանակութիւն ունի: Խաղերով կարող ենք  
մատանիթանալ մեր փաքրիկ բարեկամների հետ: Խաղերով  
կարելի է չափել երեխայի ընդունակութիւնը: Երեխանց ըն-  
կերութեան վերայ պէտք է ուշագրութիւն դարձնել»:

«Մեր գիւղերում շատ ու շատ խաղեր կան, բայց ես  
նոցանից միայն 30 խաղ կ'առաջարկեմ մեր ուսումնարան-  
ներում մոցնելու համար: Բոլոր խաղերը իրանց տեսակներին  
նայելով՝ կարելի է չօրսի բաժանել: այն է՝ Անոսական սիա-  
նասիրական: Բժշկական և Հանգիստական»:

«Գօտեմարտը Ղաղախում և Բորչալուում հարսա-  
նելիքի ժամանակ հռչակուած խաղ է: Զիթամզուկ խաղը  
գործ են ածում իբրև բժշկական միջոց: Եթէ մարդ տալաղ  
ունի, գնում է գիւղի հմուտ պառաւի մօտ: Պառաւը նորան  
խորհուրդ է տալիս որ մի փթանոց քար վեր առնի տանէ  
մերձակայ, ½ վերսուաշի հեռաւութեան վերայ գտնուող  
բլուրը: Եկտոյ տալիս է երկու փթանոց քար: Այդպիսով  
հիւանդը առողջանում է:»

«Մեր մանկական գրադարաններին կից ես առաջարկում  
եմ ունենալ նաև երկրագործական բաժին: որտեղ կը պա-

Հուեն երկրագործութեան մէջ գործածուող գործիքները՝ թիակներ, փոցխեր և այլն: Աւսուցիչը դասամիջոցին աշակերտների ձեռքը կը տայ բահեր կամ քլունդներ և կը սովորեցնի տակտով փորել հնձել և այլն: Ինչ վերաբերում է այդ գործիքները ձեռք բերելուն՝ գժուար չէ նաև աղբիւներ գտնելը: Աւրեմն, առաջարկում եմ տեղական պարապմանց յարմար գործիքական խաղեր: Որովհետև զանազան տեղերում այլ և այլ պահանջներ կան:

Պ. ԲԱՐԽՈՒԴԻՎԱՆՑ—Պարոն Պետրոսեանց, խընդրեմ բացատրէք՝ ի՞նչ բան է Կենսական ու Բանասիրական խաղը:

Պ. ՊԵՏՐՈՍԵԱՆՑ—Բանասիրական խաղերն են բարձր բարոյական հեքիաթները, առակները և այլն: Կենսականը՝ բարձր աշխարհի պատկերն է, որ ներկայացնում են փոքր ձևով: Օրինակ՝ Զերանուկի խաղը, որ խաղում են փոքր աղջուկերքը՝ հաւաքում են աղջկերքը: Խոցանից մեծը ձայն է հանում՝ «կըրը» և կըրը՝ առոտիկները, և նոցա կալն է հաւաքում: Մայրը առաջ է գնում, ձուտիկները հետք գնում են: Մայրը ձուտիկներին աղատում է ձերայից (ուրուր) որ եկել էր նոցա օրսալու:—Գիշանուկի խաղ, որի մէջ միայն ձայնարկութիւն կայ: Այդ խաղով մանուկները դառնում են ուսում առած հովիւ:—Եյդ բոլոր չորբանական խաղերը տեսնում ենք երեխանց մէջ: Զայնարկութիւնը կանչելու պայմանական նշանն է:—Կան և խաղեր զգայարանքները զարգացնելու համար: Օրինակ՝ լսողութեան համար կայ Զիթահանուկի խաղը: Թագաւորաւորս, որ մեծերը անում են հրացանաձգութեամբ: Զուխտափանական թագուարում են վաղելում: Յորեն—Կորեկի խաղ որ միտքն է զարգացնում: Երեխաներից մէկը մի լախտ է վեր առնում և ասում: «Հա դանգալայ, գանգալայ: Են ի՞նչ է, որ այսքան կտուց ունի, այսպիսի թե ունի...»—և իւր ասածները ցոյց է տալիս լախտի վերայ: և յետոյ երեխաները լուծում են: Ամփամփոյ—բաւական գիմաստիկայ է պարունակում իւր մէջ:—մէկ ութով 7 փայտի մէջ պէտք է անց ու դարձ անի:

Ֆիշեց մանուամասն բացատրութեամբ նաև ուրիշ շատ լաւեր, ճռաթաղը, բորահանուկի, Հատրամպողի, Ճառամարդի, Վահագութեանի, Չեագութեանի, Զիրիթի, Գութան Վարիթի, Եալլի, Տրլուգիթի մականուններ (romance)...: Պ. ԲԵԿԱՆԱԶԵՐԵԼՆՑԵՆՔ պէտք է չնորհակալութիւն յայտնենք Պ. Պետրոսեանցին որ մասել է մեր դպրոցների համար ինազեր հաւաքել:—Խաղերի նշանակութիւնը հատկանալի է: Ես խնդրում եմ պ. Պետրոսեանցին որ նա այդ խաղերը մանրամասն բացատրութեամբ ի լցոյ ընծայէ մամուլի միջոցով: Աղջակի կարելի է աղել «Վարժարանցի մէջ:»

Օր. ՅՈՎՀԱՆՆԻՍԵՆՑ—Ես ամէն խաղում նկատեցի, որ միշտ «ծեծ» խօսքը կօյ: Առանց գրան էլ մը աշակերտները իրար շատ են ծեծում: Եյդ խաղերից շատերը կան զանազան զրբերում: Մի քանիսը ես կորդացել էի գաղլիերէն լեզուով:

Պ. ՅՈՎՀԱՆՆԻՍ ՄԻՐՋԱԲԻԿԵՆՑ—Ես իմ կողմից կաւելացնեմ մի քանի ուրիշ խաղեր՝ ճռընչի, Քեանգրմէջի, Քարարարարի մէջի...:

Պ. ԹԵՄՈՒՄԱՆՑ—Իմ կարծիքով, լաւ կը լինի, որ ամէն զիւզական ըսուցիչ հաւաքէ այդպիսի խաղերը և ըստրութիւն անելով՝ մտցնուեն մեր դպրոցներում:

Պ. ՍԱՐԳԻՍ ՔԱՄԱԼԵՆՑ—Ես ինքս էլ ունեմ հաւաքած 30 խաղերի մի ժողովածու:

Պարոնը պ. Դասախոսի առաջարկած խաղերից մի քանիսի մէջ անյարմարութիւններ նկատելով՝ բաւական կծու կերպով շօշափում էր նորա անձնականութիւնը, անելով թէ՝ այս ի՞նչ խաղը յիշեց: բայց այն ի՞նչ խաղի մասին ոչինչ չասաց: Կարծես թէ նա պարտաւոր էր գիտենալ ամէն կողմի ու ամէն զիւզի խաղերը:

Հայր Պ. ԶՈՒԹԻՓԵՆՑ (որ խօսք էր խնդրել) —Ես այլ ևս ոչինչ չունեմ ասելու, որովհետև սրգէն ու

ւաքէին այդպիսի խաղեր և յետոյ նոտաների (ուոտ) վերածուեին:

Պ. ՇԱՀԲՈՒԴԱՐԵՍՆՅՑ—Ես առաջարկում եմ, ո՞պ պ. պ. Պետրոսեանցն ու Քամալեանցը իրանց հաւաքած մանկական խաղերից մի քանի մասնագէտների քննութեամբ ընտրեն յարմար սորները: առաջարկեն այս Ընդհանուր Ժողովին՝ մեր դպրոցներում մացնելու:

Պ. ՅԵԿԱՄԵՍՆՅՑ—Ես կարծում եմ, որ նախ քան այդ խաղերը լրագրութեամբ հրատարակելը՝ լաւ կը լինի հիմիկուանից մի մասնաժողով նշանակել ու. Իարայեանցի և օր. Յովհաննիսեանցի մասնակցութեամբ: որ նոքա քննեն ու ընտրեն յարմարաւոր խաղերը: Թո՛ղ ուսուցիչները իրանց գաւառներից խաղեր ուղարկեն դոցա ընտրելու: և խմբագրելու:

Պ. ԲԵԿՆԱԶԱՐԵՍՆՅՑ—Ես յարմար չեմ գտնում Թիֆլիսում դորա համար մասնաժողով ընտրելու: Աւելի լաւ եմ համարում ուղղակի լրագրութեան դիմել:

Պ. ԵՎԻՇԵ ԵԲՁՆԿԵՍՆՅՑ—Ես ինքս էլ ունեմ հաւաքած մանկական խաղեր: Եթէ հարկաւորուի կը ներկայացընեմ:

Պ. ԲԱԲՈՒԴԱՐԵՍՆՅՑ—Երկու առաջարկութիւն կայ. երրորդը Պ. Ծահրուդաղեանցի առաջարկութիւնն է: Կարծեմ աւելորդ է քուեարկելը: Աւելի լաւ է բաւականանալ միայն նորանով: որ այդ խաղերը յանձնուեն մամուլին:

\* \*

Մի փոքր միջոց տալուց յետոյ Պ. ԵՎԻՇԵ Բ. ԹԱՒԵԲԵԿԵՍՆՅՑԲ. կարդաց աշակերտներին ։ Թուանշաններ գնելու մասին:

Պարոնը բացարձակապէս մերժում էր թուանշանների գործածութիւնը: ասելով որ՝ թուանշանները բալորովին հարկաւոր չեն: նա աւելացրեց. «Ենձ յայտնի է, քանի ուսուցիչն և տեսուչ է ծեծուել թուանշանների պատճառով հենց ոյս տեղ: Թիֆլիսում: Երբ աշակերտը կը սիրէ ուսումը: կը սիրէ

առարկան և ուսուցչի անձնաւորութիւնը: նա սիրով և ուրախ կը գնայ ուսումնարան:»

Պ. ԲԱԲՈՒԴԱՐԵՍՆՅՑ—Պ. Թաւարբէկեանց խնդրեմ բացատրէք թէ ինչ միջոցներով կարելի է այդ սերը առաջնել:

Պ. ԹԱՒԵԲԵԿԵՍՆՅՑ—Ես չեմ կարող այս բոպէիս ասել: առաջ բերել միջոցները: Այսպար միայն կ'ասեմ: որ քաղցր պէտք է վարուել աշակերտի հետ: և գործը լաւ կը գնայ:

Պ. Յ. ՏԱՊՀԱՆԻՍՆԻՍՆՅՑ—Եյս հարցի մասին կ'ասեմ: որ ես ներկայ էի Պետերբուրգում: որտեղ մանկավարժական նիստերում երկար վիճաբանութիւններ եղան գորա մասին: Բայց մի եզրակացութեան չեկան: Ես համահայն եմ պ. Թաւարբէկեանցի առածներին:—Ես թուանշանները համարում եմ մի ջանկել միջոցներ: Թուանշան դնելով աշակերտին բան սովորեցնել՝ միւնդն է թէ ասել երեխային քեզ միրդ կը տամ: զասդ սովորիր: Թուանշանները անբարյականացուցիչ միջոցներ են: որ պէտք է հեացնել Ար ուսումնարաններից: Ինչտեղ գիտութիւնը սովորում են գիտութեան համար: այստեղ գիտութիւնը առաջ կը գնայ: Այդ պիսի միջոցները նոյն իսկ մեր ազգին էլ վեաս են տուել: Ծատքիչը մեզանից՝ բարձր ուսում աւարտելուց յետոյ պիտանի են լինում հասարակութեանը իրանց ձեռք բերած գիտութիւնով: Մեծ մասը չեն էլ հետաքրքրում կեանքի մէջ մըտնելիս: Սկզբից մեզ թուանշանների են սովորեցրել: և այլ ևս կեանքում գիտութիւնները մեզ չեն հրապօրում: Մի ուսուցիչը որ միայն թուանշաններով է ճանաչում իւր աշակերտներին: նա վա պէտք է ամեն կողմից ուսումնամասիրած լինի իւր սանին:

Պ. ՖԱԼԱՆԹԱՐԵՍՆՅՑ—Ենք գարերավ ամէն ազգի մէջ ընդունուած ձեզ: տեղը պէտք է նոր բան գնենք: Եմ կարծիքով թուանշանները չպէտք է վերցնել: այլ պէտք է թուանշան նշանակել ամիսը մի անգամ: աշակերտներից ծածուկ: Եւ իւր աշակերտներին լաւ յիշելու համար ուսուցիչը պէտք է մի յիշատակարան ունենայ:

Պ. ԱԼԵՎՏԻՔ ԳՈՒԼՅԱՆԻ ԵՎ ՆՅՈՒՑ ԿՐԿՆԵց ՆՈյնը ՀԱՄԱՐՈՒ  
ՎԻՆ ՎԵՐԺՆԵԼ անկարելի է, որովհետեւ հոգաբարձուներ առ վար  
չութիւններ կան, որոնք պէտք է զիտենան թէ ի՞նչ է շնուր  
նում իրանց յանձնուած ուսումնարանում և որ աշակեթող  
ինչպէս է սովորում:

Պ. Ս. ՔԵՄԵԼԻ ԵՎ ՆՅՈՒՑ ԵՎ ՆՅՈՒՑ առաջնորդում եմ, որ քա-  
զաքային ուսումնարանում վարժապետը թուանշան դնէ Դիմի  
գիւղական ուսումնաբանում չդնէ. որովհետեւ քաղաքի ու-  
սումնարանում 500 ի չափ աշակերտ կայ, ուսուցիչը ամենին  
չի կարող իւր յիշողութեան մէջ պահել իսկ զիւղական ու-  
սումնարանում չաղիւ 100 աշակերտ կայ:

Պ. ՄԵՎԱԿԱՐԻ ԵՎ ՆՅՈՒՑ—Հարցը պէտք է դնել այսպէս  
թէ՝ մենք աշակերտի մէջ մասնաւոր հետաքրքրութիւն պէտք  
է զարգացնենք, թէ ընդհանուր հետաքրքրութիւն: Բալերի  
մրցանակների ու գովեստների համար սովորելու մասնաւոր  
հետաքրքրութիւն է . . . .

Բայց Պարօնին երկար թոյլ չուուին խօսելու, որովհետեւ  
խօսեցածը բաւական անտեղի էր և միին:

Պ. ՄԵԼԻ ՔՈՒՄԵՎ ԵՎ ՆՅՈՒՑ—Նոյնպէս հերքում է թուանշան-  
ների գործածութիւնը:—Ես առաջարկում եմ օգուտ քաղել  
ուսուցչի անձնաւորութիւնից: Աւսուցիչու իւր վարմունքով  
աշակերտների հետ ո՛չ քաղցր պէտք է լինի, ո՛չ գառը  
Եյլ պէտքին յարմար պէտք է վարուի, և յաճախ մի ակնարկը  
միայն բաւական է աշակերտին պատճելու համար:

Պ. ՅԵՒՆԱԶԱՐԵՎ ԵՎ ՆՅՈՒՑ—Եւրոպայում թուանշանների վե-  
րաբերութեամբ երկու տեսակ մանկավարժներ կան: սմանք  
ընդունում են թուանշան գործ ածելը ոմանք չեն ընդու-  
նում: Ես ուզում եմ իմանալ այս հարցը պէտք է քուէար-  
կել թէ ո՛չ որովհետեւ, եթէ քուէարկուելուց յետոյ չպէտք  
է ընդունուի թուանշանի գործածութիւնը, իմանանք՝ արդեօք  
պէտք է այդ պարտաւորական լինի ամենքի համար:—Ես ցան-  
կանում եմ իմանալ թէ թուանշաններ հերքողները ի՞նչ վե-  
ճակագրական ապացույցներ են բերում նոյց վետակարու-  
թեան համար, կամ եկեղեցանշանների տեղը լաւ միջակ

ու վատ բառերն են գնում ի՞նչ յառաջադիմութիւն են  
անում նոյց գպարոցները:

Իմ կարծիքով այն գպարոցներում ուր հոգաբարձու-  
թիւն կամ տեսչութիւն կայ, թուանշանը նոյց համար մի  
պայմանական նշան պէտք է լինի, որ իմանան թէ ի՞նչ է լի-  
նում գպարոցում: Թուանշանը պատճի նշան չպէտք է լինի  
այլ մի տեսակ յուշարակը պէտք է լինի: Պ. ՅԵՎԵՆԵՎ  
Անդր պատասխանեցաք, թաւարաբեկանցը՝ առանց մի  
առանձին նոր բան ասելու դաւանան նարեմ մի միջուկը  
Արոշունեցաւ այդ հարցը չքայեարկելու բայց Շ կուն  
մ ներկայ էին 92 գուղթիւններ ու առաջնորդ զնացի  
այդիմայ յմանելու աղջացան\* զնացանու յըմանացքիլ  
ունցալորդ ու համա մանական ու պամազուն մահա  
մաղավը ցըուէլուց յետոյ և Յանձնաժողովի կողմից  
աղջացարուեցաւ որ հոգաբարձուները տեսուշները՝ պատ-  
գամաւորները և աւագ ուսուցիչները մնան: Եւ մացին այդ  
պիսիք:

Դիստը բացուեցաւ:

Պ. ԱՐԵՒ, ՅՈՒՆԱԶԱՐԵՎ ԵՎ ՆՅՈՒՑ—Արովհետեւ առ աջիկայ  
շարաթ օրը մեր ժողովները պէտք է վերջանան, ուստի մենք  
այժմ պէտք է որոշենք երկրորդ Ընդհանուր ժողովը: Իսկ  
երբ այդ օրոշաւիք պէտք է օր Ա. Յանձնաժողովի ըուլը գոր-  
ծերը այդ ժողովի նախապատրասող յանձնաժողին յան  
ձնուին և նա շարունակէ մեր սկսածը: Այժմ ձեզ մնում է  
որոշել թէ որտեղ և ե'րբ պէտք է անել այդ երկրորդ ժողովը:  
Ա. Յանձնաժագովի նախագահի բացակայութեան պատ-  
ճառութ ժաղովը զեկագրելու համար նորա տեղը նստեց  
փոխնախագահաց Պ. Գելիմիք եկեւնգութեւն նՅՈՒՑ:

Պ. ԵԽԵՆԳՈՒԼԵՎ ԵՎ ՆՅՈՒՑ—Ես նախ և առաջ այսպիսի հարց  
կը գնեմ: Հարկաւոր է արդեօք որ մեր սկսածը շարունակուու-  
համար ունենանք այսպիսի պարբերական ժողովներ:

Երբ ժողովը կարևոր համարելով գրական պատասխան  
տուեցաւ պ. Փախնախագահը հարց դրեց՝ «Արգեօք քանի՞  
տարուց յետոյ պէտք է անել երկրորդ ժողովը»:

Լուսեցան ձայներ՝ «Երեք տարուց յետոյ»:

Պ. ԲԵԿԱՍԵՆՅՅՅԻ – Եմ կարծիքով, աւելի լաւ կը լինի,  
որ չորս տարուց յետոյ լինի. որովհետեւ, ինչպէս ներկայ  
ժողովը ապացուցեց, մեղ աւելի երկար նախազատբառու  
թիւն է հարկաւոր:

Զայները շաբունակում էին և ոմանք Յ, ոմանք Կ տարի  
էին ուղում:

Պ. ԲԵԿԱՍՅՅԱՐԵՆՅՅՅԻ – Եմ կարծիքով, լաւ կը լինի որ  
միւս ժողովը լինի 7 տարուց յետոյ, եւ աշա ինչպէս. ամեն  
Յ տարին մի անգամ մասնաւոր թշմական ժողով լինելուց  
յետոյ՝ 7 երօրդ տարին ընդհանուր ժողով լինի. Լաւ կը  
լինէր որ՝ որովհետեւ էլ ժամանակ չէ մնացել ինչպէս պ.  
Հիգիանեանցը առաջարկեց, յարաբերութեանց խնդիրը (այ-  
սինքն՝ ուսուցիչների առ տեսուչն, տեսչի առ հոգաբարձու-  
ները և այլն) մինչեւ շաբաթ մշակուէր և մեր որոշումների  
հետ միասին առաջարկուէր Անեհափառին:

Ներկայ եղաների մեծամասնութիւնը որոշեց երկրորդ  
ժողովը անել Կ տարուց յետոյ:

Մնում էր որոշել տեղը:

Շատ ձայներ ուղում էին որ դարձեալ Թիֆլիսում լինի.

Պ. ԲԵԿԱՍՅՅԱՐԵՆՅՅՅԻ – Ես առաջարկում եմ որ Էջ-  
միսծնուժմ լինի:

Պ. ԱԲԻՍ. ՅՈՎ. ՀԵԽ. ՆՈՎ. ՏԻՄ. ԽԵ. ԵՄ. – Ես համաձայն եմ որ  
այդ տեղը լինի Էջմիածինը. որովհետեւ տանելով ժողովը  
հայարնակ երկրի մէջ տեղը՝ նորան կը մասնակցեն շատ դի-  
զական ուսուցիչներ, որ աւելի կարևոր է.

Պ. ԵՐՒՅԵՆՅՅՅԻ, Հարցին բաղմակողմանի նայելով  
շատ կետերի վերաբերութեամբ ցոյց տալով Էջմիածնի առա-  
ւելութիւնը, պնդում էր որ այնտեղ լինի:

Պ. ԱՌԵՔՅ. ՆԴԻ ՔԻԾ. ԽԵ. ԵՄ. ԽԵ. ԵՄ. – Էջմիածինը լաւ է.  
յարմար է. բայց գուցէ Անեհափառը թոյլ չտայ. Եմ կար-  
ծիքով, աւելի լաւ է մատիկ երեանը որոշել:

Պ. ԵՒԱՆԳԱԼԵՆՅՅՅԻ – Որովհետեւ այդ երկուոր մեղ  
համար իսկապէս մէկ են, մասնաւոր որ այնքան մօտիկ են  
միմանց, աւելի լաւ կը լինի, որ Էջմիածին և երեան մէկ  
շնորհ:

Հարկաւոր համարուեցաւ քուէարկել Թիֆլիս, Երեան  
և Էջմիածին. Զայներ հաւաքելուց երեեցաւ, որ 7 մարտ  
ուղում են Թիֆլիսը, 8ը Երեանը և 15ը Էջմիածինը.

Վերջապէս որոշուեցաւ որ այդ հարցը թողնուի Ընդ-  
հանուր ժողովի վճռին:

Ներկայ էին Յոդի:

Առաջանուր առ այս հարցուն առ այս դաշտուն պատ

մասաւուն պատ առ այս դաշտուն պատ առ այս դաշտուն պատ

Ա.

Սիպահէրի 10.

Ա----ս.

Մենք ներկայ չէինք: Պարապել են Թուաբանութիւնով  
Պ. ԵՒԵՏԻՔ ԳԱՎԱԼԱՍԻԵԼՅՅՅԻ – Երրորդ բաժանման. իսկ Պ.  
ՍԵՐԳԻՍ ԵՒԵԳԵԼՅՅՅԻ – Երկրորդ բաժանման հետ: Եղել են և  
նկատողութիւններ, մասնաւոր, ինչպէս յետոյ լսեցինք, բա-  
ժական շար հոգով:

Ներկայ էին 91 ուսուցիչ:



Ա.

Ե:

Համապահ: Պ. ԱԲՐԻԱՄԻՔԵՐԵՅՅՅԻ – մի համառօտ զե-  
կուցում տալով Յնից Մասնակողովի դործունեութեան մա-  
սին, ասաց:

ա) Ծրագրի քննութեան մասին որոշուեցաւ, որ ամ-  
բողջապէս կարգացուի և նկատողութիւնները վերջա անուին:  
Կարգալուց յետոյ նախագահը առաջարկեց ժողովին,  
որ իրաւունք տայ Մասնաշողովին որ նա շաբունակէ գործը:

Հրաւելիք մասնաւոր անձինք՝ ձայն տալով նոցա ծրագրերի մշակման մեջ, ապա պատրաստել ծրագրերը և ուղարկել՝ ուր հարկն է առաջնահատութեամբ ժողովը տուեց այդ իրաւունքը:

Զ այների առաւելութեամբ ժողովը տուեց այդ իրաւունքը Մասնաժողովին:

Բ) Երկրորդ հարցը ուսումնարանաց և ուսուցչաց ապահովաթեան հարցն է, որ ժամանակի սղութեան պատճառով չեարողացաւ վճռուել: Ուստի ես առաջարկում եմ՝ որ նոյն Մասնաժողովին իրաւունք տրուի այդ հարցերը կանոնաւոր կերպով մշակելու: որ մինչև առաջեկայ Յունուար ամիսը տպուի լրագրութեան մեջ ի գիտութիւն ամենքի:

Ժողովը այդ առաջարկութիւնն էլ ընդունեց:

Գ) Երրորդը յարաբերութեանց հարցն է: Ես դորա մասին առաջարկում եմ մի մասնաժողով ընտրել որ ուսումնասիրի այդ հարցը և իւր որոշմունքը ներկայացնի՝ ուր հարկն է ի տնօրինութիւն: Նշնպէս մինչև Յունուար ամիսը:

Ժաղովը ընդունեց նաև այդ առաջարկութիւնը:

Դարձագ ծխական գաղոցների Ծրագրին պ. Խախագահը ասաց: Եթէ դորա վերաբերութեամբ կան որեիցէ նկատու զութիւններ, թող ցանկացողները գրաւոր առաջարկեն իրանց, նկատողութիւնները:

Պ. ԽԱՍՏԻՍԵԱՆՑ—Ըատ ցանկալի էր որ Ծրագրի քննութիւնը վերջացած լինէր: Բայց որովհետեւ արդէն էլ ժամանակ չկորու ուսփի-ես առաջարկում եմ նախ տպել Ծրագրիը որ նորա հետ կարողանանք ծանօթանալ: Եւ տպուի լրագրում 1 կամ 2 ամսուայ մեջ, որ յետոյ ցանկացողները իրանց կարծիքները ներկայացնեն Մասնաժողովին, որ նա կարող լինե ընդունել կամ մերժել:

Պ. ԳԵՎԱՄԱՍԵԱՆՑ—Որպէս զի Ծրագրիը Կաթողիկոսին ներկայանալու ժամանակ մի վաւերականութիւն ունենայ, եթ առաջարկում եմ որ նորա վերջը 35ից Մասնաժողովի ստորադրութիւնը լինի:

Պ. ԲԱՐԽՈՒԹԵԱՆՑ—Եցի գմուար է: Մինչև Երբ պէտք է ուղարկել զանազան քաղաքներ՝ անդամներն ստորագրել տալու համար: Եւելլ լաւ կը լինի, որ բացակայ ան-

դամների տեղը ընտրուող նոր անդամները ստորագրեն: Այն ժամանակ հետո կը լինի, որովհետեւ ամենքը այստեղ կը լինեն:

Պ. ՆԵԿՈՒԱՅՑԱՍ ՏԵԲ Պ. ԵՇԻՆԴԵԱՆՑ—Պէտք է կրկն քննել պատեղ պէտք Ծրագրը:

Պ. ԲԱՐԽՈՒԹԵԱՆՑ—3—Մասնաժողովը միայն զեկուցումը պէտք է տար իւր արածների մասին ողափհետեւ այսպիսի մի բաղմամարդ ժողովում անկարել: Ծրագրի քննել:

Պ. ԽԱՍՏԻՍԵԱՆՑ—Եթ անկարել դժուլով Ծրագրի քննելու մասին մարդու ժողովում կը լինելով Ծրագրի կումբը լինի մասնակիութիւնը ու առաջարկ կումբի վերաբերութիւնը:

Պ. ԳԵՎԱՄԱՍԵԱՆՑ—35 Հոգուց բաղկացած Մասնաժողովին հաւատարմատարի նշանակութիւն տալու համար թող Ընդհանուր Փողովով մի արձանադրութիւն կազմելու:

Պ. ԲԱՐԽՈՒԹԵԱՆՑ—35 Հոգուց բաղկացած կանուգութիւն կանուգութիւն ինձ է յանձնուած Ընդհանուր Փողով կազմելու ինձնից կը հարցընեն ժողովաբերի արդիւնքի մասին ուստի և միայն եւ պէտք է առաջարկեմ Ծրագրի հաստատութիւնը:

Պ. ՄԵԼԻ. ԽՈՐԵԱՆՑ—Որքան ինձ յայտնի է, մեր անցեալ մի նիստի մեջ կայացրած վճիռներից Ծրագրի քննութիւնը յանձնուեցաւ Մասնաժողովին ոչ թէ այն նպատակով, որ քննէ ու վճիռ տայ, այլ որ դորանով Ընդհանուր Փողով կործը գիւղանայ: Մասնաժողովը պէտք քննի և յետոյ պէտք է առաջարկի Ընդհանուր Փողովին, որ Ընդհանուր Փողով վաւերացնէ: Օրէնսդրական մարմինը Ընդհանուր Փողովին է: իսկ Մասնաժողովը պաշտօնեայ է, որին յանձնուել է մշակել մի յայտնի հարց:

Պ. Ա. ԵՎ. ԽՈՐԵԱՆՑ—(Երեանցի) Ես էլ նոյն կարծիքի եմ: և կ'աւելացնեմ որ մի այդպիսի Ծրագրի: որ Ընդհանուր Փողովի քննութեանը չէ ենթարկուել: Ընդհանուր Փողովի Ծրագրի չէ կարող համարուել:

Այս երկու տարբեր բացարութեանց առաջ գալու պատճառով կարգացուեցաւ արձանադրութիւնը, որտեղից երևեցաւ, որ Մասնաժողովի քննելուց յետով Ծրագրիը Պէտք է Ընդհանուր Փողովին առաջարկուի:

Սորա մասին մենք ոչինչ ասելիք չունենք։ Թող խօսի պրիս 32 րդ էրեսը (12—16 րդ տողը)։

Պ. ՍՊԱՆԴԱՐԵՍՆՅՑ—Ինչքան ես մատաբերում եմ Մասնաժողովին վճիռ կայացնելու իրաւունք չէ տուած։ Ես կարծում եմ եթէ զիտենայինք որ այդ Մասնաժողովը պէտք է և վերջնական վճիռ տայ, մենք աւելի ծանր կը վերաբերուէինք 35 հոգու ընտրութեանը։

Պ. ՅՈՎՀԵԱՆՆԵՑ—Ես կարծում եմ լաւ կը լինի խնդրել կաթողիկոսին հեռագրով որ թոյլ տայ էլի մի քանի օր որ Մասնաժողովի մշակած Ծրագիրը օրինուոր քննութեան ենթարկուի։

Ա. ԵՐԻՍ. ՅՈՎՀԵԱՆՆԵՑՆՑ—Եթէ Էնդէանուր Ժողովը չէ ուղարմ քննել ուրեմն թոյլ իրաւունք տայ Մասնաժողովին Ծրագիրը Աաթողիկոսին ներկայացնելու։

Պ. ՍԵԿԵՔԵՐԻՄ ԱՐԺՐՈՒԽՆԻ (որ նիստի սկզբումը ներկայ չէր)։ Պարոններ, ինչպէս ես նկատում եմ գուք այս նիստի սկզբումը երկու սիալ էք արել՝ ձեր առաջին երկու հարցը վճնելով։ Դա մեծ գործ է. այդպիսի մեծ գործ պէտք է կատարուի ձեր ամենիդ ծիսական դպրոցների ուսուցիչների մասնակցութեամբ։ Ես բոլորովին անյարմար եմ համարում 35 հոգուց բաղկացած Մասնաժողովի մշակած ծրագիրը իրեն հանդիսանուր Ժողովի մշակած ծրագիր ընդունելը։ Ես առաջարկում եմ անպատճառ քննել ներկայ նիստում։ Բացի գորանից՝ հարկաւոր եմ համարում աւելացնել որ ամեն ընդհանուր գիտնական ու հասարակական ժողովներում խօսողին 10 րոպէ ժամանակ է տրուում և նախադաշը 11 երրորդ րոպէին միայն կարող է ընդհատել նորան։

Ժողովը ծափահարեց պ. Արծրունուն և Կիցեցէ ի ձայներ լսուեցան։

Նիստը մի քանի ըոպէով ընդմիջուելուց յետոյ։

Պ. ԲԱՐԻՈՒԽԵՐԵՑՆՑ—Պարոններ, ես առաջարկում եմ որ բացակայ եղող Մասնաժողովի անդամների տեղը նոր անդամները Ժողովը ինքը ընտրէ։

Քուէարկուեցաւ այդ առաջարկութիւնը և մի քանիսի ոտքի կանդնելով ըլնդունուեցաւ։

Պ. ԲԱՐԻՈՒԽԵՐԵՑՆՑ—Կամենում էք որ հէնց այս նիստում քննուի Ծրագիրը։

Մեծամասնութիւնը կանդնելով համաձայնութիւն յայտնեց։

Պ. ՍՊԱՆԴԱՐԵՍՆՑՆՑ—Որովհետեւ երկար վիճարանութիւնները անտեղի կը լինեն հիմա և ժամանակի կորուստ կը լինի ուստի ես առաջարկում եմ լաւ կը լինի ամեն յօդուած կարգալ և առանց վիճարանութեան քուէարկել ապա չո՞նդունուած կետերը բաց թողնել իսկ ընդունուածները իբրև Ընդհանուր Ժողովի վճիռ առաջարկել անօրինելու ում հարկն է։ (Հաւանութեան ձայներ)։

Յետոյ պ. Քարտուղարը սկսեց յօդուած առ յօդուած կարգալ իրաբանչեւր տարուայ ամփոփ ծրագիրը։ և ի՞՛շ կետի մասին որ Ժողովը լուսնութիւն էր պահպանում այն արդէն ընդունուած էր համարում։ Իսկ եթէ մէկը մի նկատողութիւն ունէր անելու իսկցին անում էր և ձայներ հաւաքելով մտցնում էին հարկաւոր համարուած փոփոխութիւնները։

Ա. տարուայ ընթացքի մէջ Թուաբանութիւնը ոմանք անբաւարար համարեցին։ Բայց կրկին կարգալուց յետոյ ընդունուեցու ինչպէս որ կար։

Բ. տարի։ Արօնագիտութիւնից աղօթքների աշխարհաբար և գրաբար լինելու կամ չլինելու մասին խօսողներ եղան։ Թուաբանութեան մասին միայն երեք հոգի չհամաձայնեցան։

Գ. տարի։ Արօնագիտութեան մասին Յիսուսի կեանքը լիօսքերի համար բացատրութիւն ինդրուեցաւ։ Բայց տըրեց Պ. ԵՐԻՍ. ՅՈՎՀԵԱՆՆԵՑՆՑ—Բայց որովհետեւ Ժողովի մեծամասնութեան կողմից այդ խօսքերը ծանր ու առաձգական նկատուեցան ուստի առաջարկուեցաւ փոխել խմբագրութեան ձեր հայոց լեզուի ընթացքի մասին տերմին ների և ընթերցանութեան նիւթի վերաբերութեամբ մի քանիսը չէին համաձայնում։ Թուաբար լեզուի ընթացքը շատերը շատ համարում և մեծամասնութիւնը կանդնելով չհամաձայնեց։



Յետոյ այդ երկու տեսակ գծերը միասին կապելով՝ դարձեալ պէտք է 8 անդամ կրկնել: Ապա միւսնոյնը աւելի բաղադրեալ: Այստեղ նա կարողանում է մատը նաև առաջ տանել: — Այժմ հիմական գծերը: Հիմական գծերը միայն 5 են:

Պ. Սալամբէկեանցը ցոյց տուեց այդ գծերի կազմութիւնը և նոցանով նախ հայերէն, յետոյ նաև առաջին խմբի ռուսերէն բառեր կազմելով: Ըստ ամէնը 16 վարժութեան օրինակ ցոյց տալուց յետոյ ներկայացրեց գլխագրերը: —

Որովհետեւ այս առաւօտուայ համար որոշուած էր երեք դաս պարապել ուստի մեծամասնութեան շանկութեամբ պ: Սալամբէկեանցի դասախոսութեան մասին անելքը նկատողութիւնները թողնուեցան, որ տեսնեն նշանակուած երեք դասերը՝ երկուսը Հայոց լեզուի և մէկը Դիտողական ււսման:

\*\*

Կարճատե ընդմիջումից յետոյ Հայր ՄԿՐՏԻՉ ԳԱՅՓԱ-  
ՃԵԾՆՑԸ երկրորդ տարուայ աշակերտների հետ սկսեց պա-  
րապել մայրենի լեզուի Քերականութիւնից տարրական տեղե-  
կութիւն տալով: Տէր Հայրը ցանկանում էր պարապել երրորդ տարուայ աշակերտների հետ, բայց իւր առաջը երկրորդ տա-  
րուայ աշակերտներ տեսնելով ասաց: «Այժմ ես ստիպուած  
եմ միայն առարկաների և նոցա տեսակների մասին խօսելու»:

Թէպէտ սկզբից շատերին այնպէս էր թուում որ չափէ  
մի այդպիսի գտատրկ բանի համար նստել այդուամբնայնիւ,  
ինչպէս պատմեցին մեզ, յետոյ դասը շատ յաջող էր անցել  
և ծափահարութեամբ վարձատրել էիր հօրը: Ամէն տես-  
նող գովում էր: — Մենք չկարողացանք ներկայ գտնուիլ:

\*\*

Յետոյ պարապեց Պ. ՅԱԿՈԲ ԽՈԶԱՄԻՒԵԼՆՑԸ: Նրա-  
տած էին երրորդ տարուայ 8 աշակերտ, որոնց նա ցանկա-  
նում էր հասկացողութիւն տալ Յատուկ անուանց ուղա-  
գրութեան մասին: Նա աշակերտներին բաց անել տալով « Յա-  
հապետական և հայրենի աշխարհից՝ ասաց. «Մենք կը կար-

դանք Արբահամի պատմութիւնը և կը տեսնենք՝ նորա մէջ անուններ կա՞ն թէ ոչ: —

Պ. Խոջամիրեանցի գասը նշնպէս յաջող վերջացաւ և ծափահարութեամբ վարձատրուեցաւ:

Սկսուեցան նկատողութիւնները: Հայր Գայֆաձեանցին թեթև նկատողութիւններ արին պ, պ: Ն, Համբարձումեանց և Ս. Աստուածատրեանց: Վերջինս ասաց որ՝ տէր հօր դասը մի այնպիսի խառնիշփոթ բան էր, որ ինքը ոչինչ չհասկացաւ:

Ի հարկէ նա կարող էր ոչինչ չհասկանալ տէր հօր պա-  
րապմունքից: Բայց մենք դարմացանք՝ ինչպէս տէր հայրը թշլ տուեց իրան մի այդպիսի ժողովում իւր ընդդիմախօսին պատասխաննել: «Ես մեղաւոր չեմ որ գուք չէր հասկացել: Համեցէք եկէք իմ սենեակը և ես կը հասկացնեմ ձեզ»: —

Իսկ պ. Խոջամիրեանցին միայն տող երիս գրողը  
նկատողութիւն արեց, ասելով: «Պ. Խոջամիրեանցի գասը բա-  
ւական յաշող անց կացաւ: Բայց, իմկարծիքով, այդ յաջո-  
ղութեան զլիսաւոր պատճառներից մէկն էլ այն էր, որ նա  
պարապումէր երրորդ տարուայ աշակերտների հետ: Ընտրուած  
նիւթը այնքան թեթև բան էր, որ շատ գիւրութեամբ նցնը  
կարելի էր նաև երկրորդ տարուայ աշակերտներին մատակա-  
րաբել: Վյնուամենայնիւ ես ուզում եմ մի քանի փոքրիկ  
նկատողութիւն անել թէպէտ: աւելացնում եմ գորա այն-  
չափ աննշան են որ հազիւ թէ ուրիշ որևից ուսուցիչ զերծ  
լինի այդպիսի թշլ կողմերից: »

Պ. Խոջամիրեանցը խօսելով Միջագետքի մասին,  
շատ լաւ կ'անէր և գտուար էլ չէր, եթէ իսկոյն բացատրէր  
որ Միջագետը նշանակում է գետերի մէջ գտնուած եր-  
կիր: — Երբ ասաց որ Տէր խօսքը Աստծուն վերաբերելով  
պէտք է գրենք ուղարկուի: — լաւ կը լինէր, եթէ աւելացնէր,  
«Իսկ եթէ Աստծու անուն չէ, պէտք է գրենք փոքր տա-  
ռով»: Օրինակ «Գրքի տէր: տան տէր և պյլն»: — Պ. Խոջա-  
միրեանցը յատուկ անունները նախագասութեանց մէջ գլո-  
ւնել տալու համար յարմար օրինակներ չէր բերում: Օրինակ՝  
նա ասում էր: «Գրիգորը գնաց ուսումնարան»: և հարցնում  
էր թէ այդ խօսքերից որը պէտք է գրուի մէծ տառով: Աշա-

կերտները պատասխանում էին «Գրիգորը»: Բայց այդ նոցա  
մի տարի՝ գուշե և երկու տարի առաջ է յայտնի, որ նա-  
խադասութեան առաջին բարը գրւում է մեծ տառով: Պարոնը  
այնպիսի օրինակներ պէտք է բերէր, որոնց մէջ յատուկ անու-  
նը նախադասութեան առաջին բարը չլինէր: Օրինակ: «Ա-  
սօր ձեր եղբայր Գէորգը եկաւ գիւղից»: — Պ. Խոջամիքեանցը  
գրատախտակի վերայ գրեց: «Կողորը Թիֆլիսից մօտիկ է: Դա  
ուղիղ է: որովհետեւ այդտեղ կորած է բացառակիան չո-  
լովին նշանակութիւնը: Պէտք է ասել «Կողորը մօտ է կամ  
մօտիկ է Թիֆլիսին»: Կարելի է ասել «Ես վաղը պէտք է  
դուրս գնամ Թիֆլիսից»... Սովորութիւն է բարձել ասելու  
«Ժամի մէկից պակաս է հինգ րոպէ»: Պէտք է ասել «Մէկին  
պակաս է հինգ րոպէ»: Մէկից անց է ասուը րոպէ»: — Ուրիշ  
ոչինչ»:

Այդ նկատողութեանցը պ. Խոջամիքեանցը պատասխան  
նեց: «Ես բոլորովին համաձայն եմ պ. Խաղարեանցի տառ-  
ներին: Բայց այսքանը պէտք է ասեմ որ՝ մենք ուսուցանելիս  
երկու նպատակ իրար հետ չպէտք է խառնենք: Ես այս ան-  
գամ միայն յատուկ անուանյ ուղղագրութիւնն էի սովորե-  
ցնում և Միջագետք բառի վերայ այլևս չպէտք է կանգ-  
նէի»: —

«Ի՞նչ արկէ այդ ճշմարիտ է. բայց...: Բայց վերջին խօս-  
քը միայն դաս պարապողին է տուած», ասացինք ու լուցինք:

Պէտք է ասել որ՝ ինչպէս Պ. Բարխուդարեանցն էլ նկա-  
տեց, այդ օրուայ երկու դասերն էլ բաւական գոհացուցիչ  
էին. և այդպիսի համով պարապմոնք շատ սակաւ էին պա-  
տահում:

Երկայ էին 102 ուսուցիչ:

Դաստիարակութեան ազգային պատասխանական ժողովը կազմու-  
թագութեան ազգային պատասխանական ժողովը կազմու-

— ազգային պատասխանական ժողովը կազմութեան ազգային  
**ԼՂ.** երեսը:

Իժկապետ ԱԻԵՏԻ-Ք ԲԱԲԱՅԵԱՆՑԼ դասախոսեց «Ման-  
կական պարտիզն առողջապահութեան» մասին:

Պարոններ, ասաց մեծապատիւ Բժիշկը, որովհետեւ  
դուք բաւական ուշագրութիւն էք նուիրել Մանկական պար-  
տիզն՝ Ծաղկոցին, ներկայ լինելով երկու օրինակելի պա-  
րապմունքի, — այդ պատճառով ես ուզում իմ խօսել Ծաղ-  
կոցի վերայ: — Առողջապահութեան նշանակութիւնը ուսում-  
նարանների վերաբերութեամբ բաւական գնահատուած է, տարածուած և ընդունուած: Ուսումնարանների գարագլուխը, ըստ իմ խօսին համոզման, այն ժամանակ սկսուեցաւ երր  
մանկավարժները ուշագրութիւն դարձին ուսումնարանի ա-  
ռողջապահութեան վերայ: Շատ հիւանդութեանց պատճառ  
է եղել ուսումնարանը: Կարճատեսութիւնը մէջքի ծոսւիլը,  
թոքախտը, ջղային հիւանդութիւնը առաջ է բերած ուսում-  
նարանը: Բնական է, որ ոչ միայն բժիշկները, այլ և ման-  
կավարժները պէտք է մտածէին դորա վերայ: Եթէ մենք 4—5  
տարեկան մանկան մտաւոր զարգացման վերայ մտածենք ա-  
ռանց նորա առողջապահութեան վերայ մտածելու, — այդ  
հրեշտակը բան կը լինի: —

Թոյլ տուէք այս կարճ յառաջարանից յետոյ քննու-  
թեան ենթարկել Մանկական պարտէզը: Տեսնենք՝ կը դիմա-  
նայ դա քննադատութեանը: Ակսենք, Մանկական պարտէզը  
մտում են փարբահասակ մանուկներ: Այդ հասակի մանու-  
կը ամենաարագ աճեցման մէջ է: Եթէ նորան զրկենք մա-  
քուր օդից, արևի լոից և տաքութիւնից, նյոնքան վնասած  
կը լինենք նորան, որքան և մատաղ տունկին, եթէ նորան  
պահենք նոյն վիճակի մէջ: Եթէ գեղուզգիքական (կենսական)  
կետից քննենք, կը տեսնենք որ՝ այդ համեմատութիւնը մի  
ձիշտորիայ չէ, զուտ և ճիշդ համեմատութիւն է: Եթէ այդ  
ձիշտ է կենդանիների վերաբերութեամբ, որոնց միայն արևի  
լոից զրկուած լինելը սաստիկ վիճակար է, ինչպէս մուլթ

ախոռներում երկար ժամանակ մնացող ձիաները հիւանդացել են: —ուրեմն ո՞քան աւելի ճշտ պէտք է լինի մատաղ սերնդի կազմուածքի վերաբերութեամբ:

Օդը մեծ ազգեցութիւն ունի մանկան առողջութեան վերայ մանաւանդ նստողական խաղերի մէջ: Եւրաքանչիւր աշակերտի համար 15 մետր խորանարդ օդ պէտք է լինի: Սաների թիւը մեծ չպէտք է լինի սենեակում: Քանի որ Փրեորելի միտքն էր մանկանց ինքնուրիցնութիւնը և առանձնայատկութիւնները զարգացնել:

Վանիկական պարտիզի շինութիւնը պէտք է նաև լուսին յարմարեցնել որ վասակար չլինի մանկանց համար: Սենեակները դէպի արևելք կամ հարաւարելք պէտք է նայեն:

Սանիկների թիւը պէտք է լինի 20—25: ամենաշատը 30: Անտի լի ացի ային դարով՝ մի ընդհանուր սկզբունք կլ յայտնեմ: Օդամոքը ութիւնը պէտք է կատարուի առաստաղի բարձրից: ոչ թէ լուսամուտներից կամ յատակից: Օդահանը պէտք է շինել առաստաղում: ինչպէս հայ գիւղացին երդիկ է բաց անում: Եւ այդ շատ հասկանալի է, քանի որ անմաքուր օդը միշտ վեր է բարձրանում: Քիմիկունների կարծիքով, որովհետեւ ածիսաթթուն ծանր է օդից ցած պէտք է նստի: — Ամէն պարապմունք աւարտելուց յետոյ նոյն իսկ ձմեռ ժամանակ լուսամուտները պէտք է բացուին, թէկուզ այդ շատ թանկ նստի: Տախտակամածը պէտք է ներկուած լինի և շարաթը երկու անդամ իւղի և մեղքամումի զանգուածով սրբուած լինի, որ թողը չվասէ թոքերին: Այս որ տների առաջներ պարտէզ կը լինի, այդ պարտէզը բուռ մանկական պարտէզ պէտք է լինի, որտեղ մանուկները ծաղիկների ու թիթեռնիկների չետ մի հրաշալի տեսարան կը ներկայացնեն: Պարտիզ մէջը կակուզ, ծեծուած առաջով ու հարթուած շրջանաձև տեղ պէտք է լինի և մի փոքր դալլերէց ուր մանուկները կը հանգստանան խաղից յետոյ: Այդտեղ ածուններ կ'ունենան, որոնց վերայ իրանք մանուկները կը հսկեն: Ինչպէս արդէն յայտնի է, դաշտում ևս նոքա աննկատելի կերպով ծանօթանում են կենդանիների և րյսերի հետ: Բայց շատ տեղ մանուկները պատշամբում են խաղում: որ լու չէ: Փրեորելի գաղափա-

րով նստարանները այնպէս պէտք է լինեն, ինչպէս սովորաբար երեխանների խաղը կեանքի մէջ պահանջութէ: Պրանչիական սիստեմը իմ կարծիքով այդ նպատակին չամապատասխան չէ: —Միւս մանր հանդամանքների մասին այլիս չեմ ուզում երկարացնել իսկը:

Այժմ տեսնենք ներքին պարապմունքը: —Պարապմունքները օրուայ մէջ միշտ պէտք է փոփոխութեն որովհետեւ միակերպ պարապմունքը շատ ձանձրակի է: Անդադար նկարելու, առեղորմ ձակոտելը աշաց մէծ վիաս կարող է տալ: Այս պարապմունքները ձմեռը առաւ օտղ դէտը է լինեն: որովհետեւ գրքա աւելի լոյս են պահանջում:

Դալով մաքրութեանը, Մանկական ուսութեզը մանկանց մաքրասիրութիւնը զարգացնելով՝ պէտք է առաջն առնէ ծնողաց սինալների: Առանձին վարժուչի պէտք է նշանակուի Ծաղկոց գնացող սանիկին ընգունելու համար, որ մաքրութեան վերայ մեծ ուշադրութիւն պէտք է բարձնի, որովհետեւ անմաքրութիւնը յետոյ վարակիչ կարող է լինել:

Մանուկների արեան շրջանը կանոնաբերելու համար պէտք է տնենալ նաև գի մն ա տի կայ: Նպատակաւոր շարժմունքները կը նիրեն մանուկները: Միասին մի շրջան կաղմած կենդանեաց կազմութիւնների վարացում են տալիս, և այդ պարապմունքը շատ օգտագուշ է: Մանուկներ տակոտվ կատարուող իշղերը շատ օգտագործ են: որովհետեւ աեկի զօւարմացնում են մանուկներին:

Երգերի եղանակներն ել սակաւ ազգեցութիւն չըւնեն նոցա կուրծքի և թոքերի վերայ և առաջնորդութերկներում կանոնաբերուած երգեցողութեանը աւելի նշանակութիւն են տալիս, քան մարմնամարզութեանը: Մանուկներին ասածարկուած երգերը պէտք է նոցա կուրծքի զարգացման համապատասխան եղանակներ ունենան: Պարտիզանուհին էլ քաւական համացողութիւն պէտք է ունենայ առողջապահչութիւնից: Մանկական պարապմը կարող է նաև բուն համարուել հիւանդութեան տարածուելու: Մանկական հիւանդութիւններից աւելի կարմրուկի վերայ կառավարչուհին միշտ պէտք է ուշադրութիւն դարձնի կար-

մըրուկի նշանները տեսնելից նո էլ չպէտք է թոյլ տայ երեխային Ծաղկոց յաճախելու: — Ծատ կ'երկարէր, եթէ միւս հիւանդութիւններն էլ թուէի մի առ մի: Մանկական պարտէզը կարող է մանկական էպիգիմիայի առաջն առնել գերդաստանների մէջ:

Քանի որ մանկական պարտիզպանուհուց այդբան կատարելութիւններ են պահանջւում, մնում է միջնակարգ դըպրոցների բարձր դասատներում մոցնել Մանկական պարտիզի պարապմունքը, մանաւանդ Մանկատածութիւնը. և պէտք է ծանօթացնել աշակերտուհիներին մանկական գլխաւոր հիւանդութիւնների հետ: — որ Աւեննայի Մանկական պարտիզի տուածար օրինակից ազատուենք:

Դուք, պ. ուսուցիչներ, գաւառներում պէտք է նպաստէք այդ իդէալին: (Բարձրաձայն ծափահարութիւններ):

\*\*

Մեծ. Բժշկի դասախոսութեան մասին ընդդիմախօսելը աւելորդ ու անյարմար համարելով՝ պ. Նախագահ Հ. Յայտնեց որ Ընհանուր Փողովի պարապմունքները վերջացան, որի համար վաղը մի համառօտ զեկուցումն կ'անուի: «Իսկ այժմ ասաց նա, քանի որ մենք դեռ ևս չենք հեռացել իրարից՝ պէտք է վերջն խօսքը ասենք Երկրորդ Ուսուցչական Փողովի մասին: Անցեալ գիշերը մի ժողով կայացաւ տեսուշներից՝ պատգամաւորներից և աւագ ուսուցիչներից և որոշուեցան մի քանի էական հարցեր. բայց վճիռ տալը թողնուեցաւ Ընդհանուր Փողովին: Որոշուեցաւ որ Երկրորդ ժողովը լինի 4 տարուց յետոյ և Էջմիածնում: Այժմ ես հարցնում եմ. համաձայն է Փողովը այդ որոշմանը»:

Պ. Տ. ՅՈՎ. ՁԱՆՆԻՍՆԻՍՆՅՑ—Ես առաջարկում եմ երեք տարի: չորս տարին, իմ կարծիքով ուշ է:

Պ. ՄԵԼ. ՔՈՒՄԵՆՆՅՑ բացատրեց թէ ինչո՞ւ նախընթաց ժողովում որոշուեցաւ չորս տարուց յետոյ անել Երկրորդ ժողովը:

Պ. ԹԱԼԻԱՐԻԵԿԵՆՆՅՑ—Ես էլ բաւական եմ համարում երեք տարին:

Պ. ԱԲԻՍ. ՅՈՎ. ՁԱՆՆԻՍՆԻՍՆՅՑ կրկին բացատրեց: Պ. ՅՈՎ. ՁԱՆՆԻՍՆԻՍՆՅՑ ՔԱԹԱՆԵԱՆՑՆՑ—ՄԵՆՔ մի կարեռը հարց մոռացել ենք: Զեզ քաջ յայտնի է, որ մենք օրինաւոր դասագրքեր, չունենք և ունեցածներն էլ մեծ մասմար անյարմար են: Այդ պատճառով ես առաջարկում եմ երկրորդ ժողովը անել հինգ տարուց յետոյ, որպէսզի հեղինակները ինկատի առնեն մեր մշակած Ծրագիրը և ըստ այնմ պատրաստեն հարկաւոր դասագրքերը:

Պ. ՄՊԵՆԴԻԱՐԵՆՑՆՑ—Հարցը շատ չերկարացնելու համար ես առաջարկում եմ քուեարկել:

Պ. ԲԱԼԻԱՌԻԴԱՐԵՆՑՆՑ—Ես դարձեալ բոլոր առաջարկութիւնները կարգով կը քուեարկեմ: Ո՛վ որ համաձայն որ Երկրորդ Ուսուցչական ժողովը լինի Յ տարուց յետոյ, թողի կանգնի:

Մի քանի հոգի միայն կանգնեցին:

Պ. ԲԱԼԻԱՌԻԴԱՐԵՆՑՆՑ—Այժմ թողի կանգնեն նոքա, որոնք ցանկանում են որ Կ տարուց յետոյ լինի:

Մեծամասնութեան կանգնելովը վճռուեցաւ Կ տարուց յետոյ, կազմել Երկրորդ Ընդհանուր Ուսուցչական ժողովը:

Գալով Փողովի գումարօւելու տեղին՝ Պ. ԱԲԻՍ. ՅՈՎ. ՁԱՆՆԻՍՆԻՍՆՅՑ—Բայց թէ ինչո՞ւ անցեալ ժողովը որոշել էլ Էջմիածինը:

Պ. ԵԳԻԱՋԱՐԵՆՑՆՑ (Երևանցի)՝ Էջմիածնում ընակարան չկայ: Ճեմարանական վարչութիւնը չի թոյլ տայ ուսուցիչներին Էջմիածնում բնակելու, Ամեն տարի արձակուր գիտ: Թէպէտ աշակերտները գնում են իրանց տները, բայց շատերն էլ մնում են: Այս տարի 50 աշակերտ մնացին Էջմիածնում: Իսկ Ղազարապատում հեար չկայ բնակելու: Խսառաջամարտիկում եմ Երևանը, որ այդ կողմից ամեն յարմտութիւնն էլ ունի:

Պ. ՄՊԵՆԴԻԱՐԵՆՑՆՑ ցցից տալով թէ՛ Էջմիածնի և թէ՛ Երևանի անյարմարութիւնները, գարձեալ առաջարկում է Թիֆլիսը, որ նորա ասկեզիվ, անվերջ յարմարութիւններ ունի: Ընկ եթէ շաբանակում է պարօնը, ժողովը ցանկանում է որ Թիֆլիսից դուրսը լինի, ես կ'առաջարկեմ Ալեք-



մեր նպատակին. և այժմ իրաւունք ունենք վստահութեամբ  
նայելու ապագային: Երբ զգացինք մեր ուսումնարանների կա-  
րիքները, այն օրից մենք հաստատ հիմք դրինք նոցա բարե-  
լաւութեան:

Ուսուցչական ժողովի պարապմունքները տևեցին ընդ  
ամենը 17 օր: Ժողովին մասնակցեցին Վրաստանի թեմից՝  
109 հոգի, Երցախից՝ 15, Համախուց՝ 5, Երևանի թեմից՝ 36,  
Աժդարիսանից՝ 6, Բեսարաբիայից 3: Պատգամաւորներ եկան  
7, Տաճկահայաստանից 5 հիւր և նոր ուսուցչացուներ 5: Ընդ  
ամենը 193 հոգի՝ բացի մասնաւոր հիւրերից և այցելուներից:

Ժողովի պարապմունքներն էին՝ ա) 14 փորձնական դա-  
սատուութիւններ, որոնք, եթէ օրինակելի չէին, գոնե շատ  
յաջողակ էին. բ.) 19 կարեոր հարցեր քննուեցան ընդհա-  
նուր նիստերում: գ.) 35 հոգուց բաղկացած Մասնաժողովը  
ունեցել է 14 նիստ: Եց Մասնաժողովը կարողացաւ մշակել  
միայն Շխական գպրոցների ծրագիրը: Միջնակարգ դպրոց-  
ների ծրագիրն էլ որ մնաց, կը վերջացնէ նոյն Մասնաժո-  
ղովը:

Որքան էլ խստապահանջ լինենք, պէտք է դո՞ս լինենք  
ստացած արդիւնքով: Մեր ժողովներից մենք ունեցանք բա-  
րոյական օգուտներ. միմեանց չետ ծանօթացանք և մաքերի  
փոխանակութիւն արինք: Մնացին այլ և առ շատ անմշակ  
հարցեր: Մենք չպէտք է այդ հարցերը սցդպէտ անմշակ թող-  
նենք: Զորս տարի ժամանակ ունենք: Մշակենք և ուսումնա-  
սիրենք այդ հարցերը մամուլի միջոցով: որ աւելի լաւ պատ-  
րաստուած լինենք ներկայանալու: Երկրորդ Ընդհանուր ժո-  
ղովներն:

Պարտք եմ համարում բարեմազթել երկար կեանք Օ-  
գոստափառ Կայսր Ալեքսանդր Գ. ին և Անդրէափառ Կաթողի-  
կոս Գէորգ Գ. ին:

(Պահպահ թնդաց ուսուացի և կեցցէ ների ձայ-  
ներով):

Կրկին շնորհակալութիւն Կարգադիր Յանձնաժողովի  
մեծապատիւ անդամներին, որոնք իրագործեցին Հայոց Առա-  
ջին Ընդհանուր Ուսուցչական ժողովը շնորհիւ հայ հասա-

բակութեան, բարեգործական ընկերութեանց և մասնաւոր ան-  
ձանց, որոնք նիւթապէս և բարոյաւէս նպաստեցին գործին:  
Յանձնանում եմ յաջողութիւն: Երթաք բարով Յկրկին տե-  
սութիւն:

Օրէնութեամբ փակուեցաւ Ժողովը:

Պ. ԲԱՐԻԽՈՒԴԱՐԵԱՆՑ Ա. Յանձնաժողովի նախագահ  
Պ. Հայպարոննեանցը իւր որդու տկարութեան պատճառով  
չկարողանալով այսօր ներկայ գտնուիլ այստեղ՝ հեռագրել է  
ինձ Բորժոմից: (Կարգաց) «Ժողովը փակելիս իմ կողմից բարի  
ճանապարհ ցանկացէք յարգելի հիւրերին: Հոգով չափ ցա-  
ւում եմ: որ չեմ կարող մասնակցել ձեր վերջին նիստին»:

ՀՄԱՅԵԵԱԿ Վարդապետի «Պահպանիչ ով ամեն բան  
վերջացաւ: Եւ... Ժողովի անդամները ցրուեցան, որ չորս  
տարուց յետոյ կրկին անդամ միանան ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՈՒՍՈՒՑՅԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԿՈՒՄ»:



# ՎՐԻՊԱԿՆԵՐ

Է. Հ.	Տ. Հ.	Ա Խ Ա Լ	Ո Ւ Ղ Ի Լ
28	11*	տէրութեան	տէրութեանց
37	18*	ա անձին	առանձին
38	16	ողովն	ծողովն
"	13*	ի չպէս	ի չպէս
51	10	ուրիշներ	ուրիշները
101	2*	աւ	լաւ
"	1*	գասարանը	գասարանը
102	10	ողղիչ	ողղիչ
105	6	կարծ	կարծէն
111	4	ինքօգնութեան	ինքնօգնութեան
125	12*	ժողովներից	ժողովներից
130	13*	մարզել	մարզելու
138	9*	եջմածն	եջմածնէ
144	1*	փայ ի	փայտի
146	1	սուե	note
155	3*	շատ համարում:	շատ էն համարում:

Ծանօթ. Ա.—12 երեսում վերջին աղքանունը եւ 49 երեսում առաջին երկու տողը աւելորդ են:  
 Բ.—Մի երկու տեղ պատահած ստորակետի սխալները աւելորդ համարեցինք ուղղել:  
 Գ.—Աստղանիշ թուերը ցոյց են տալիս որ երեսի վերջին տողից պէտք է հաշուել:

# ՄԵՐ ԱՃԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- Անեկդօտներ հատոր I. 1876. . . . . 50 դ.
- Անեկդօտներ հատոր II. 1877. . . . . 50 դ.
- Նախագահական հատոր I. 1878. . . . . 50 դ.
- Պոլսութագերին 1878. . . . . 20 դ.
- ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ Գ. տարի 1881. . . . . 40 դ.
- ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ Գ. տարի 1881. . . . . 60 դ.
- ԵՐԻՈՒ ՏՕՆԱԾԱՌ 1882. . . . . 20 դ.
- ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ Բ. տարի 1882. . . . . 25 դ.
- Անեկդօտներ III. 1883. . . . . 50 դ.
- ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԳՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉՈՒԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ . . . . . 50 դ.

Մի անգամից աւելի տպագրուած.

- ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ Գ. տարի Ե Կ Ռ Ո Ր Գ տպագրութիւն 1883. . . . . 40 դ.

Այս գրքերը ծախւում են կենդրոնական ու կովկասեան գրավաճառանոցներում. մի քանիսը նաև յօրինողի մօտ:

ՄԵՐ ՀԱՅՈՑ

ԵՅ Տիֆլիս.—ԻՆ ԱՅլաբարն.  
Սկիւռու Օվաննես Հազարյան.

1990-1991

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

1991-1992

ՀՀ Ազգային գրադարան



NL0337430

